

Ա.Ա. ԲԱՅՐԱՄՅԱՆ

ԱԼԵԻՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱՔԻ ՀԱՐՑԸ

ԵՎ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

(1936-1939 թթ.)





ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



947.925 " 19 + 327 (091)

Ա.Ա. ԲԱՅՐԱՄՅԱՆ

**ԱՆԵՔԱՆԴԻՆԻ ՍԱԶԱՔԻ ՀԱՐՅԸ
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
(1936-1939 թթ.)**

A II
85028



ԵՐԵՎԱՆ

1998

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Գիտական
խորհրդի որոշմամբ:**

**Խմբագիր՝
ՆԻԿՈԼՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
Պատմական գիտությունների դոկտոր
Պրոֆեսոր
Քայրամյան
F 296 Ալիշան


Աշխատությունում քննության է առնվում Ալեքսանդրետի Սանջաքի ստատուսը Սիրիական պետության կազմում 1918-1937 թթ.: Այնուհետև շարադրվում են միջազգային դիվանագիտական և քաղաքական պայքարի այն փուլերը, որոնք առաջացան Ալեքսանդրետի պորբլեմի շուրջը՝ սկսած Ազգերի Լիգայում (1937) սանջակի մասին որոշում ընդունելուց մինչև «Չաթայ պետության» հռչակումը (սեպտեմբեր, 1938 թ.) և Ալեքսանդրետի սանջակի միացումը Թուրքիային (հունիս, 1939 թ.):

F $\frac{0503020913}{804(01)-98}$ 98

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-8079-1157-X

**Գիրքը հրատարակվում է
«Պեղանի Հայրենակերպան Միություն»
մեկնաստույթանք
և Հեղինակի գոտիակների աջակցությամբ:**




ETATS du LEVANT
SOUS
MANDAT FRANCAIS


LEGENDE

POULES (Symbol) CERCLE MINOR DE PER.
CERCLE MAJOR DE PER.
CERCLE DE 14 KILOM. DE PER.
CERCLE DE 27 KILOM. DE PER.
CERCLE DE 54 KILOM. DE PER.

0 10 20 30 40 50 KILOM.



CARTE LINGUISTIQUE DU SANJAK D'ALEXANDRETTE



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1950-ական թվականների երկրորդ կեսից սկսվեց արևելագիտության բուռն զարգացումը Հայաստանում: 1958 թ. Հայաստանի Գիտությունների ակադեմիայում հիմնվեց Արևելագիտության սեկտորը, որը 1971 թ. վերակազմավորվեց ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի: Շուտով նա դարձավ նախկին Խորհրդային Միության ճանաչված արևելագիտական կենտրոններից մեկը:

Այս կարևոր կենտրոնի գիտահետազոտական դաշտը դարձավ Մերձավոր և Միջին Արևելքը, որը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Հայաստանը աշխարհագրական առումով պատկանում է այդ տարածաշրջանին: Այստեղ է ձևավորվել և զարգացել հայ ժողովուրդը, կերտել իր պետականությունը, հաստատել իր ազգային ինքնությունը, զարգացրել իր բարձրարժեք ու ինքնատիպ մշակույթը: Տարածաշրջանի երկրները եղել են Հայաստանի հարևանները, որոնց հետ սերտորեն միահյուսված է Հայաստանի և հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը: Մերձավոր և Միջին Արևելքում մշտապես եղել են և այսօր էլ գոյություն ունեն ստվարաթիվ հայ համայնքներ, որոնք յուրօրինակ կամուրջի դեր են կատարում Հայաստանի և հյուրընկալ երկրների միջև: Դարերի ընթացքում վիթխարի նյութ է կուտակվել, որը անզնահատելի սկզբնաղբյուր է հանդիսանում Հայաստանի և տարածաշրջանի ժողովուրդների և երկրների պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար: Ահա թե ինչու հայ արևելագետներն իրենց հայացքը հառեցին առաջին հերթին Մերձավոր և Միջին Արևելքին, որը եղել է և մնում է մեր կենսատարածքը:

Ըստ այդմ էլ Արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծվեցին Արաբական երկրների, Թուրքիայի, Իրանի և Քրդագիտության, իսկ ապա նաև Հին Արևելքի, Կովկասի ու Բյուզանդիայի և Արևելյան աղբյուրագիտության բաժիններ:

Արաբական երկրների բաժինը ինստիտուտի ամենակարևոր բաժիններից մեկն է, որի գիտական գործունեությունը և գիտահետազոտական աշխատանքները մեծապես նպաստել են Արևելագիտության ինստիտուտի առջև կանգնած կարևոր և պատասխանատու խնդիրների կենսագործմանը: Այդ շատ

դժվարին և պատվավոր առաքելության ամբողջ ծանրությունն իր ուսերի վրա վերցրեց հայ արաբագետների առաջին սերունդը. որի կորիզը կազմում էին Ալիշան Բայրամյանը, Օննիկ Թուփուլյանը, Հակոբ Թուրյանցը, Եղիա Նաջարյանը, Սվին Չուլջյանը և Հարություն Սարգսյանը: Նրանք կազմում էին հետազոտողների մի համերաշխ կոլեկտիվ, միավորված Արաբական երկրների բաժնում, որը ղեկավարելու պատիվն ուներ տողերիս հեղինակը:

Շատ կարճ ժամանակամիջոցում հայ արաբագետները ընթերցողի սեղանի վրա դրեցին Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եգիպտոսի պատմությանը, հայ-արաբական պատմամշակութային կապերին, միջազգային հարաբերություններին և բառարանագիտությանը նվիրված մի շարք ուշագրավ ուսումնասիրություններ: Այդ շարքին է պատկանում Ալիշան Բայրամյանի «Ալեքսանդրետի Սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939թթ.)» արժեքավոր մենագրությունը:

Այս հետաքրքիր ուսումնասիրությունը նվիրված է մի կնճռոտ տերիտորիալ հարցի, որը շոշափում էր անմիջապես Սիրիայի և Թուրքիայի, իսկ ավելի լայն առումով Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի քաղաքական շահերը:

Հեղինակը, հիմնվելով առաջնակարգ սկզբնաղբյուրների վրա, համոզիչ կերպով ապացուցում է, որ Ալեքսանդրետի Սանջաքը սիրիական տերիտորիա է, որը հանիրավի խլվեց Սիրիայից և բռնակցվեց Թուրքիային: Ա.Բայրամյանը, մեղադրելով հիմնական դերակատարներին՝ Թուրքիային, Ֆրանսիային և Անգլիային, հանգում է միանգամայն ճիշտ եզրահանգման, որ դա նախադեպ հանդիսացավ մի գործարքի համար, որը հետագայում միջազգային հարաբերություններում ստացավ «մյունխենյան գործարք» անվանումը: Այս պարագան, նյութի լավ իմացությունը, սկզբնաղբյուրից հմտորեն օգտվելու ունակությունը սույն գիրքը դարձնում են խիստ այժմեական:

Դրան պետք է ավելացնել աշխատության այն էջերը, որոնք նվիրված են սիրիահայության դիրքորոշման լուսաբանմանը:

Հենվելով բազմաթիվ աղբյուրների վրա, հեղինակը ցույց է տալիս, որ հայությունը կանգնած էր արաբների կողքին՝ ի պաշտպանություն Սիրիայի անկախության և տարածքային ամբողջականության: Աշխատության այդ մասերը նորություն են և ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ:

Կարելի ենք ասել, որ սույն գրքի հրատարակումով.

ընթերցող լայն հասարակությունը, պատմաբանները, արևելագետները և միջազգայնագետների հնարավորություն են ստանում ծանոթանալու 30-ական թվականների վերջերին միջազգային դիվանագիտությանը զբաղեցրաց՝ Ալեքսանդրեոսի Սանջաքի հարցին նվիրված, միանգամայն հաջողված ուսումնասիրության հետ:

Գրքի հաջողությանը մեծապես նպաստել է հեղինակի մի շարք լեզուների լավ իմացությունը, որի շնորհիվ գիտական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ աղբյուրներ և նյութեր, հարցերի լուսաբանության նկատմամբ վերլուծական մոտեցումը, օբյեկտիվությունը և սկզբունքայնությունը:

Հավատացած ենք, որ այս հետաքրքիր աշխատությունը ըստ արժանվույն կգնահատվի մասնագետների և ընթերցողների կողմից:

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի

Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտությունների միջազգային «Արարատ» ակադեմիայի (Փարիզ)

և Սիրիայի գիտական ընկերության անդամ:

24 հուլիսի 1998թ. Երևան

«Ալեքսանտրեթի Սանճաթի Հարցը եւ Միջազգային Դիւանագիտութիւնը-1918-1939» ուսումնասիրութիւնս որպէս պատմագիտական ատարածառ ներկայացուած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի համապատասխան գիտական խորհուրդին, պաշտպանուած եւ բարձր գնահատականով ընդունուած է շուրջ երեսուն տարիներ առաջ...եւ միայն այժմ լոյս ընծայուելու արժանացաւ շնորհիւ նախաձեռնութեան եւ միջոցներուն՝ Ալեքսանտրեթի Սանճաթի պատմական հայկական աւան՝ Պէլյանի Հայրենակցական Միութեան, Լոս Անճելէս:

Կեանքի անհասանելի առեղծուածներու բերումով հայերէնէն առաջ երկիս արաբերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ 1993ին, Գամասկոս, («Սպլէմ» հրատարակչութիւն) եւ արժանացաւ աննախընթաց գնահատանքին Սուրիոյ գիտական եւ քաղաքական շրջանակներուն:

1994ին Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ.Վեհափառ Կաթողիկոսի (այժմ՝ Ամենայն Հայոց Գարեգին Ա.Կաթողիկոս) առաջարկով երկիս արեւմտահայերէնի ու դասական ուղղագրութեան փոխադրուած եւ բարեփոխուած տարբերակը յանձնուած է Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Տպարանը, Անթիլիաս, 1995 Փետրուարին եւ լոյս ընծայման կապատ:

Հարկ կը համարեմ այստեղ արձանագրել, որ երկասիրութեանս գիտա-հետազոտական աշխատանքները տարուած են մօտ տասը տարիներու ընթացքին Հայաստանի Գիտութիւններու Արեւելագիտութեան Սեկտորի (այժմ՝ Ինստիտուտ) Արաբական Երկիրներու Բաժանմունքէն ներս (Սեկտորի միւս բաժիններու գործընկերներուս մասնակցութեամբ) անմիջական ղեկավարութեամբ Դոկտ. Պրոֆեսոր Նիկոլայ Յովհաննիսեանի, որոնց բոլորին արժանին կը հատուցանեմ այսու:

«Ալեքսանտրեթի Սանճաթի Հարցը» թեմայի ընտրութիւնը կատարուած է Սանճաթի պաշտպանութեան շարժման իմ անմիջական մասնակցութեան փաստական հիման վրայ՝ անմիջական անձնական խրախուսանքովն ու աջակցութեամբը Արեւելագիտութեան Սեկտորի Դիրեկտոր, ազնիւ ղեկավար, իրաւ բարեկամ՝ Յովհաննէս (Օննիկ) Ինճիկեանի:

Յունիս, 1998
Glendale, Calif. U.S.A.

Ալեքսանդրետի Սանջաքի հարցը միջազգային դիվանագիտությանը զբաղեցրել է 1920-ական թվականներից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակը: Հետպատերազմյան ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև մեր օրերը, այդ հարցը մտահոգում է Միջին Արևելքի երկրների հասարակայնությանն ու պետական գործիչներին, որովհետև Ալեքսանդրետի հարցին տրված միակողմանի «լուծումը» երբեք չի ընդունվել շրջանի ազգաբնակչության ճնշող մեծամասնության և հարցի բուն իրավատեր՝ սիրիական ժողովրդի ու պետության կողմից: Արաբական ոչ մի երկիր չի ճանաչել Ալեքսանդրետի Սանջաքի կցումը Թուրքիային: Ահա ինչու այսօր էլ առկախ մնացած այդ հարցը հանդիսանում է Սիրիայի ու արաբական մյուս երկրների և Թուրքիայի միջև բարեկամական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող գլխավոր արգելքներից մեկը: Այս կարևոր հանգամանքը և Ալեքսանդրետի դատի քաղաքական հրատապությունը ընդունվել և ընդգծվել է Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության կազմակերպության խորհրդի 1964 թ. մարտին Ալժիրում գումարված 6-րդ սեսիայի կողմից, որտեղ Ալեքսանդրետի հարցի կապակցությամբ ընդունվել է հատուկ բանաձև՝

Ալեքսանդրետի հարցի ուսումնասիրությունը ունի միջազգային խոշոր նշանակություն, որովհետև Ալեքսանդրետի դատը կարող է վերստին դրվել միջազգային դիվանագիտության սեղանի վրա:

Այդ հարցի վերաբերյալ գոյություն ունի օտար լեզուներով հարուստ գրականություն: Դրանք՝ հարցի այս կամ այն կողմը լուսաբանող առանձին աշխատություններ են, ծավալուն հոդվածներ կամ առանձին գլուխներ՝ Սիրիայի ու արաբական երկրների ժամանակակից պատմությանը նվիրված աշխատություններում: Այդ աշխատություններում կարելի է գտնել փաստական հարուստ տվյալներ, ակամատեսի վկայություններ, ընդհանրացումներ ու եզրահանգումներ: Սակայն, մեր ուսումնասիրության հիմնական առարկան՝ Ալեքսանդրետի կոնֆլիկտի հիմքում ընկած միջազգային դիվանագիտական սուր ու երկարատև պայքարը, որը հանգեց Ալեքսանդրետի Սանջաքը Թուրքիային հանձնելու իմպերիալիստական գործարքին,

գիտական անհրաժեշտ խորությամբ ու անկողմնակալությամբ չի լուսաբանված այդ աշխատություններում:

Սիրիական պետության միասնության ու անկախության դեմ ուղղված այդ գործարքը, ինչպես նշվեց, երբեք չի ընդունվել սիրիական ժողովրդի ու կառավարության կողմից, որոնք երկարատև պայքար են մղել Սիրիայի անբաժան այդ մասը պետության սահմանների մեջ պահելու համար: Իսկ այդ համաժողովրդական պայքարը, որին մասնակցել են Սանջաքի ու ամբողջ Սիրիայի ժողովրդական բոլոր խավերը ու հայրենասիրական բոլոր խմբավորումները անխտիր, գրեթե միշտ անտեսվել է և չի ուսումնասիրվել վերոհիշյալ երկերում: Վերջապես, անհրաժեշտ է նշել, որ Ալեքսանդրետի հարցին նվիրված աշխատություններում կամ առանձին հոդվածներում ըստ արժանավույն չի գնահատվել այն կարևոր դերը, որ խաղացել են հայերը շրջանի տնտեսական ու հասարակական կյանքում՝ հատկապես Սանջաքի պաշտպանության համաժողովրդական պայքարի տարիներին (1936-1939 թթ.):

Ժամանակագրական տեսակետից աշխատությունը հիմնականում ընդգրկում է Ալեքսանդրետի դատի շուրջ միջազգային դիվանագիտական բացահայտ ու սուր պայքարի ժամանակաշրջանը (1936-1939): Աշխատությունը չի ընդգրկում հետապատերազմյան ժամանակաշրջանը, որն առանձին ուսումնասիրության է արժանացել Ա.Սանջյանի կողմից²:

Աշխատությունը շարադրելիս օգտվել ենք հետևյալ աղբյուրներից ու գրականությունից.

Պաշտոնական հրատարակություններ ու վավերագրեր.

Ազգերի լիգայի պաշտոնական ամսագիրը, Մանդատների մշտական հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, Լիգայի գործունեության ամսական ու տարեկան զեկուցագրերը, պայմանագրերի ժողովածուներ և այլ պաշտոնաթղթեր, որոնք պարունակում են Ազգերի Լիգայի տարբեր հանձնաժողովներում 1936-1939 թվականներին Ալեքսանդրետի հարցի քննարկման արձանագրությունները, ընդունված բանաձևերն ու որոշումները և հարակից վավերագրերը:

«Ալեքսանդրետի ինքնավար Սանջաքի» ստեղծման, վարչա-ֆինանսական «հատուկ ռեժիմի» և իրավական ստատուսի հետ կապված հարցերի ուսումնասիրության համար օգտվել ենք հետևյալ պաշտոնական հրատարակություններից.

Միրիայում ու Լիբանանում ֆրանսիական Բարձր կոմիսարության վարչական ակտերի ժողովածու, ֆրանսիական մանդատին ենթակա պետությունների ղիվանագիտական ակտերի ժողովածու, տարեկան զեկուցագրքեր՝ ուղղված Ֆրանսիական հանրապետության արտաքին գործերի մինիստրության կողմից Ազգերի Լիգային՝ Միրիայում ու Լիբանանում տիրող դրության վերաբերյալ, Միրիական հանրապետության ինֆորմացիայի գլխավոր տնօրինության տեղեկագրեր, Միրիայի ու Լիբանանի՝ Ֆրանսիային հանձնված Մանդատի խարտիան⁵: Օգտվել ենք նաև «Իզվեստիա» թերթի 1937-1939 թթ. համարներից, Զ.Աթաթյուրբի «Ճառերից և ելույթներից»⁴, ինչպես նաև Յու.Վ.Կյուչնիկովի և Ա.Վ.Սաբանինի «Նորագույն ժամանակների միջազգային քաղաքականությունը պայմանագրերում, հուշագրերում և դեկլարացիաներում» և Զ.Ս.Հուրևիցի «Դիվանագիտությունը Մերձավոր և Միջին Արևելքում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուներից⁵:

Մեր թեմայի վերաբերյալ հայերեն լեզվով հրատարակված առանձին գիրք կամ հոդված մեզ հայտնի չէ: Սակայն, Ալեքսանդրետի շրջանի՝ որպես հայկական Կիլիկիայի մեկ մասի հայերի առաջացման, տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի և Սանջաքի կոնֆլիկտի ժամանակաշրջանում հայերի հայրենասիրական դիրքավորման մասին հարուստ տվյալներ կան սփյուռքահայ մամուլում և հայ հեղինակների մի շարք աշխատություններում, որոնք դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Օգտվել ենք հատկապես Գ.Ալիշանի «Միտուան», Տ.Անդրեսայանի «Սուեդիո ապստամբությունը», Ա.Թեմիրյանի «Քեսապ» և Ա.Սյուրմեյանի «Մուրիա» աշխատություններից⁶: Ալեքսանդրետի Սանջաքի պաշտպանության համաժողովրդական պայքարին հայերի բերած գործուն մասնակցության վերաբերյալ շատ արժեքավոր տվյալներ մենք քաղել ենք բնիկ սանջաքցի հասարակական-քաղաքական գործիչների հուշերից ու վկայություններից, որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվում:

Խորհրդային պատմագրության մեջ Ալեքսանդրետի հարցի կամ կոնֆլիկտի վերաբերյալ հրատարակված հատուկ ուսումնասիրություններ չկան:

«Ալեքսանդրետի Սանջաքի վերաբերյալ ֆրանս-թուրքական համաձայնագիրը և Թուրքիայի միացումը անգլո-

Ֆրանսիական բլոկին (1936-1939 թթ.)» քեմայով քեկնածուական դիսերտացիա է պաշտպանել Պ.Կ.Տարասովը: Հրապարակված ավտոռեֆերատից երևում է, որ հեղինակը նպատակ է ունեցել ուսումնասիրել անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորմանը Թուրքիայի միացման հարցը՝ կապված Ալեքսանդրետի կոնֆլիկտի հետ. հետևաբար նա շրջանցել է Սանջաքի հարցի հետ կապված մի շարք կարևոր խնդիրներ⁷: Խորհրդային մի շարք արևելագետներ Մերձավոր Արևելքի երկրների պատմությանը նվիրված իրենց աշխատություններում հակիրճ ակնարկներով կամ փոքր բաժիններով անդրադարձել են Ալեքսանդրետի հարցին: Այդ մասին ճիշտ ընդհանրացումներ ու արժեքավոր տվյալներ կան «Արտասահմանյան Արևելքի երկրների նորագույն պատմություն - 1929-1939 թթ.», «Ժամանակակից Սիրիա», «Արաբական երկրների նորագույն պատմություն» և այլ աշխատություններում⁸: Այդ երկերում Ալեքսանդրետի հարցի մասին տրվում է պատմական ակնարկ, որոշ վերլուծություն և հետևություններ: Սակայն, դրանցում չի ընդգծվում, որ Ալեքսանդրետի կոնֆլիկտի «լուծումը» ըստ էության միջազգային իրավունքի խախտում էր, գրեթե ոչինչ չի ասվում Ալեքսանդրետի շրջանի անջատման դեմ Սիրիայի Ժողովրդի երկարամյա աննկուն պայքարի մասին: Ավելին. վերոհիշյալ աշխատություններում անտեսվում է Ալեքսանդրետի Սանջաքի ազգաբնակչության 18 տոկոսը կազմող և հասարակական-քաղաքական կյանքում վճռական դեր խաղացած հայ զանգվածների գոյությունն իսկ: Այսպես, Ե.Ֆ.Լուդշովյուրը գրում է. «Մինչև երկրորդ անգամ Թուրքիային անցնելը (1939 թ.), Հաթայը (Ալեքսանդրետի Սանջաքը - Ա.Բ.) բազմազգ մի շրջան էր, որի բնակչությունը բաղկացած էր սիրիացի-արաբներից, թուրքերից և քրդերից»⁹: Նույն ձևով են վարվում Վ.Մ.Ալեքսեևը և Մ.Ա.Քերիմովը՝ գրելով «Ալեքսանդրետի Սանջաքի ազգաբնակչությունը կազմված էր առավելապես թուրքերից և արաբներից»¹⁰:

Սիրիացի, լիբանանցի և այլ արաբ բազմաթիվ հեղինակներ Սիրիայի կամ արաբական երկրների ժամանակակից պատմության հարցերին նվիրված իրենց աշխատություններում անդրադարձել են մեր ուսումնասիրած քեմային, ոմանք առանձին աշխատություններով են հանդես եկել: Վերջիններից ամենաարժեքավորը սիրիացի իրավագետ Ադնան Այթայի «Ալեքսանդրետի կոնֆլիկտը և Ազգերի Լիգան» աշխատությունն է¹¹: Արժեքավոր տվյալներով, վերլուծություններով ու եզրահանգումներով հարուստ սույն երկի գլխավոր

արժանիքը այն է, որ հեղինակը, հիմնվելով Մանդատի խարտիայի և Սիրիայի (նաև Մանջաքի) հետ առնչվող միջազգային դիվանագիտական ակտերի և միջազգային իրավունքի հանրահայտ նորմերի վրա, հանգում է այն ճիշտ եզրակացության, որ իրավական ոչ մի հիմք չկար «Ալեքսանդրետի հարցը» բարձրացնելու, և Թուրքիայի կողմից Ալեքսանդրետի շրջանի զավթումը հանդիսանում է «իրավականորեն զրոյի հավասար մի քայլ այն պարզ պատճառով, որ Ալեքսանդրետի Մանջաքի հանձնման վերաբերյալ 1939 թ. հունիսի ֆրանս-թուրքական պայմանագիրը դուրս է գալիս մանդատային տերության իրավասության սահմաններից, այն միջազգային իրավունքի հիմնական սկզբունքի խախտում է... և դեմ է Ազգերի Լիգայի խորհրդի 1937 թ. մայիսի 29-ին ընդունած «ունաձևերին»¹²: Միայն պետք է նշել, որ հեղինակը երբեմն կրկնում է Իրֆան Ջաբրիի¹³ ու մի շարք այլ հեղինակների՝ Ալեքսանդրետի հարցի վերաբերյալ արտահայտած մտքերն ու դատողությունները:

Մեր ուսումնասիրած թեմային է վերաբերում նաև իրաքցի պրոֆեսոր Մաջիդ Խադդուրիի «Ալեքսանդրետի վեճը» ծավալուն հոդվածը¹⁴: Զննարկելով Ալեքսանդրետի կոնֆլիկտի ծագումն ու զարգացումը անգլո-ֆրանս-թուրքական հակամարտ շահերի ու նվաճողական ծրագրերի և դիվանագիտական սուր պայքարի ֆոնի վրա, հեղինակը եզրակացնում է, որ կոնֆլիկտի ծանոթ «լուծումը» իրավականորեն անվավեր է նախ այն պատճառով, որ այն իրագործվել է Ազգերի Լիգայի խորհրդի գլխի վրայով ու առանց նրա պաշտոնական թույլտվության, նաև այն պատճառով, որ կցումը կատարվել է հակառակ իրավատիրոջ՝ Մանջաքի ու Սիրիայի ժողովրդի և կառավարության բացահայտ արտահայտված կամքի: Հոդվածում կան նաև հետաքրքիր տվյալներ ու վկայություններ՝ Ալեքսանդրետը բաժանելու վերաբերյալ թուրք-իրաքյան-սիրիական գաղտնի բանակցությունների և այլ հարցերի մասին¹⁵:

Սիրիացի պետական գործիչ Նաջիբ ալ-Արմանազին, որը եղել է Ալեքսանդրետի հարցով Եվրոպա ուղևորված սիրիական կառավարական պատվիրակությունների կազմում, Արաբական երկրների Լիգային առընթեր պատմական ուսումնասիրությունների ակադեմիայի ունկնդիրներին կարդացած իր դասախոսություններում հատուկ բաժին է հատկացրել Ալեքսանդրետի հարցին¹⁶: Մասամբ մեմուարային բնույթի այս աշխատության մեջ գտնում ենք շահեկան տվյալներ ու վկայություններ Մանջաքի պաշտպանության ուղղությամբ սիրիական ազգային կառավարության ու

հասարակայնության գործադրած ջանքերի ու մղած պայքարի մասին: Ալ-Արմանագին Սիրիական կառավարության ղեկավարներին արդարացի կերպով քննադատում է, որ նրանք, հետևելով մանդատային տերության ներկայացուցիչների «խորհուրդներին», ձեռքից բաց էին թողել թուրքական կառավարության հետ Ալեքսանդրետի հարցի շուրջ ուղղակի բանակցությունների մեջ մտնելու մեկից ավելի առիթները: Որովհետև, եզրակացնում է հեղինակը, «...երկու հարևան ժողովուրդների համար շատ ավելի լավ կլիներ համաձայնության և խաղաղ կարգավորման հասնել, քան... հանգել բռնության ու ուժի վրա ապավինող լուծման»¹⁷:

Բնիկ սանջաքցի քաղաքական գործիչ Ջեքի ալ-Արսուզիի «Մեր ազգային խնդիրները...»¹⁸ աշխատության մեջ մեր թեմային հատկացված բաժինը կրում է շատ ավելի պամֆլետի և տեղեկագրության բնույթ: Այսուհանդերձ, այնտեղ կան հետաքրքիր (թեև երբեմն էլ հակասական և սխալ) տեղեկություններ, փաստեր շրջանի ազգաբնակչության տարբեր խավերի դրության ու պայքարի և մանդատային իշխանությունների թուրքանպաստ քաղաքականության մասին: Տարօրինակ է սակայն, որ շրջանի քաղաքական կյանքին ու ազգամիջյան հարաբերություններին լավատեղյակ այս հեղինակը, պատմության հայտնի փաստերին հակառակ, պնդում է, թե իբր «Մանջաքի հայերը կողմնակից էին մանդատային իշխանություններին և նրանց բախտը կապված էր... ֆրանսիացիների բախտի հետ»¹⁹:

Արաբ պատմաբաններ Մ.Բեյհումը, Ն.Ջեյնը, Ն.Ջիադեհը, Է.Թուման, Ա.Հաուրանին, Ջ.Հադդադը, Ֆ.Հիթթին, Հ.Շարաբին, Ա.Շաքերը, Ս.Քուզբարին, Ն.Ուարդը և ուրիշներ իրենց համապատասխան աշխատություններում առավել կամ նվազ հանգամանորեն անդրադարձել են Ալեքսանդրետի հարցին: Նրանք բոլորն էլ ընդգծում են, որ «Ալեքսանդրետը զոհաբերվեց միջազգային քաղաքականությանը», որ Անգլիան ու Ֆրանսիան «Մանջաքը ծախեցին իրենց մաշկը փրկելու համար»: Վերոհիշյալ գրեթե բոլոր հեղինակների եզրակացությունն այն է, որ Ալեքսանդրետի հարցը այսօր էլ խոչնդոտում է արաբ-թուրքական լավ հարաբերությունների հաստատմանը, որովհետև «Ալեքսանդրետի գործարքը» կատարվել է հակառակ Սիրիայի բողոքների, իրավականորեն այդ ակտը անվավեր է և «... այդ հիման վրա Սիրիան այսօր պահանջում է իրեն վերադարձնել Ալեքսանդրետի Մանջաքը, որովհետև այն Սիրիայի անբաժան մասն է»²⁰: Մյուս կողմից, մի քանի

հետադիմական ու պատեհապաշտ արաբ հեղինակներ, ինչպես Հ.Դարուազան, Մ.Ա. ալ-Ջարբան և Ս.Էյյուբը, տարվելով հակակոմունիստական մոլուցքով, հարցի քննարկումը տանում են բոլորովին սխալ ու ոչ-գիտական ուղղությամբ:

Ժամանակակից Սիրիայի քաղաքական կյանքում Ալեքսանդրետի հարցը ամենօրյա մտահոգության առարկա է: Այդ մասին են վկայում սիրիական պարբերական մամուլում ու հրատարակություններում վերջին ժամանակներս իրար հետևից լույս տեսնող հոդվածները՝ «Խլված Մանջաք»-ի, «Չոհաբերված Ալեքսանդրետ»-ի մասին: Դրանցում միշտ ընդգծվում է շրջանը Սիրիային վերադարձնելու անհրաժեշտությունը և այն հիմնավորվում է պատմական անվիճելի փաստերով, իրավական անառարկելի փաստարկումներով²¹:

Ֆրանսիացի բազմաթիվ պետական գործիչներ ու հեղինակներ, հասկանալի պատճառներով, մոտիկից հետաքրքրվել են Ալեքսանդրետի հարցով և ուսումնասիրել այն: Արժեքավոր մենագրությունների շարքից նախ պետք է հիշատակենք քաղաքական գործիչ ու պատմաբան Պոլ Դյու Վեուի «Ալեքսանդրետի աղետը (1934-1939 թթ.)»²² գիրքը: Ինչպես հեղինակն է նշում, այս երկը հանդիսանում է սենատոր Գ.Գոթթոռոյի կողմից գլխավորած «Միջերկրականի կոմիտե»-ի ֆրանսիա-Սիրիա բաժանմունքին ներկայացված «զեկուցագրի տեքստը՝ 1937 թ. մայիսի 29-ի ակտի (Սանջաքի Նոր ստատուսի - Ա.Բ.) պատճառների, նախապայամանների և հետևանքների մասին»: Աշխատությունը պարունակում է չափազանց հարուստ փաստական նյութ՝ Ալեքսանդրետի շրջանի պատմա-տնտեսական ու ռազմական խոշոր նշանակության, ներքաղաքական կյանքի, Մանջաքում ֆրանսիացիների վարած թուրքանպաստ քաղաքականության, կոնֆլիկտի առաջացման ներքին ծալքերի ու դրդապատճառների, հրապարակված կամ գաղտնի վավերագրերի և վերջապես Ազգերի Լիգայում վեճի քննարկման ընթացքի ու տրված հայտնի «լուծման» մասին: Հիմնվելով Սիրիային (նաև Մանջաքին) վերաբերող քաղաքական ու դիվանագիտական մի շարք ակտերի վրա, հեղինակը տրամաբանորեն զարգացնում է այն միտքը, որ Ֆրանսիան, հակառակ իր ունեցած «շատ ամուր իրավական դիրքերի», քաղաքական դրդապատճառներով նահանջեց թուրքական շանտաժի, բրիտանական ճնշման և գերմանա-իտալական առաջխաղացման սպառնալիքների առջև: Դյու Վեուն շատ տեղին

դիտել է տալիս, որ Ֆրանսիայի կողմից Սանջաքի զիջումը քենալական Թուրքիային՝ միջազգային նախադեպ կարող էր ծառայել հիտլերյան Գերմանիայի համար:

Նույն հեղինակի մյուս աշխատությունը՝ «Քրիստոնյաները վտանգի տակ Մուսա լեռան վրա»²³ հանդիսանում է ֆրանսիական պառլամենտի երկու ուրիշ անդամների հետ Պոլ Դյու Վեուի դեպի Ալեքսանդրետի շրջանը կատարած ճանապարհորդության (1939 թ. ապրիլի 14-ից 17-ը) մասին «Միջերկրականի կոմիտեին» ներկայացված հաշվետվությունը: Աշխատության գլխավոր արժանիքն այն է, որ այնտեղ բերված են ականատեսի հավաստի վկայություններ ու փաստական տվյալներ թուրքական զորքերի մուտքից հետո շրջանում բացահայտ «թուրքացման» քաղաքականության մասին: Բացի այդ, այս գիրքը հրատարակված միակ աղբյուրն է Սիրիայից ու աշխարհից գրեթե բոլորովին կտրված «Հաթայի պետության» ներքաղաքական կյանքի, ոչ-թուրք, դեմոկրատական տարրերի, հատկապես հայերի հանդեպ տարվող սիստեմատիկ հալածանքների ու ճնշման վերաբերյալ: Այս հեղինակի աշխատությունների արժանիքներից է նաև այն խիզախ քննադատությունը, որն ուղղված է Ալեքսանդրետի Սանջաքում մանդատային իշխանությունների հետևողականորեն թուրքանպաստ քաղաքականության և Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի մյուսխեսնյան թողտվության քաղաքականության դեմ: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ Պ.Դյու Վեուի վերոհիշյալ աշխատություններում (որոնք առանձին տեղերում քաղաքական պամֆլետի բնույթ ունեն) լուրջ վերլուծությունների ու եզրահանգումների կողքին կան մի շարք պատմական անճշտություններ և անընդունելի տեսակետներ:

«Ալեքսանդրետի Սանջաքի հարցը» աշխատության մեջ էլի Բարբարոն²⁴ տալիս է Ալեքսանդրետի վեճի առաջացման ու զարգացման պատմությունը՝ մինչև շրջանի կցումը Թուրքիային: Աշխատության մեջ կան հետաքրքիր տվյալներ, բայց ոչ ինքնուրույն եզրահանգումներ կամ վերլուծություններ, որովհետև գիրքը հիմնականում բանաբաղված աշխատություն է՝ կրկնությունը Դյու Վեուի, Մ.Պեռնոյի և Է.Մոնոյի համապատասխան աշխատություններում շարադրված մտքերի: Հեղինակը հաճախ ընկնում է հակասությունների մեջ: Այսպես՝ նա պնդում է, որ անգլիացիները ֆրանսիացիներին քաջալերում էին, որ դիմադրեն թուրքական պահանջներին, իսկ այնուհետև, դրան հակառակ, այն ճիշտ կարծիքն է հայտնում, որ թուրքական զորքերը Սանջաք մտցնելու

մասին 1938 թ. ֆրանս-թուրքական պայմանագիրը ստորագրվեց «Մեծ Բրիտանիայի օրհնությամբ»²⁵:

Ժ.Ժ.Մորզանը «Ֆրանսիական մանդատի վերջը Սիրիայում ու Լիբանանում» աշխատության մեկ բաժինը հատկացրել է «Ալեքսանդրետի Սանջաքի հարցին»²⁶: Հեղինակը քննում է հիմնականում կոնֆլիկտի իրավական կողմը՝ մինչև Ազգերի Լիգայի կողմից Սանջաքի համար նոր Ստատուսի ընդունումը: նա ընդգծում է, որ «...Ֆրանսիան ուներ իրավական ամուր հիմքեր» շրջանը Սիրիայի սահմանների մեջ պահելու համար²⁷:

Մերձավոր Արևելքի հարցերի ֆրանսիական հայտնի մասնագետներ Ժ.Պիշոնը, Է.Մոնոռն, Մ.Օմեն, Պ.Ռոնդոն և ուրիշներ իրենց աշխատություններում նույնպես անդրադարձել են մեր ուսումնասիրած թեմային: Ալեքսանդրետի հարցի «լուծման» հետ առավել կամ նվազ չափով կապ ունեցող ֆրանսիացի պետական գործիչները, ինչպես մինիստրներ Պոլ Վիենոն, Ժորժ Բոննեն, Ռոբեր դը Քեն, բարձր կոմիսարներ՝ գեներալ Կատրուց, Գաբրիել Պյուտոն և դեսպաններ՝ Ռ.Մասիգլին, Ա.Սառոն, Պ.Բուրժեն իրենց հուշերում անդրադարձել են Ալեքսանդրետի հարցին: Միաժամանակ, ֆրանսիական համապատասխան հանդեսներում՝ Մ.Պեռնոյի, Ա.Լառուսի, Ա.Ալեքսանդրի, Պ.Ռոնդոյի, Մ.Կոլոմբի, Ժ.Դելբեքի և ուրիշների ստորագրությամբ ժամանակին լույս են տեսել մի շարք ծավալուն ու հետաքրքիր հոդվածներ մեր թեմայի շուրջ: Մենք ուշադրությամբ ուսումնասիրել ենք վերոհիշյալ բոլոր աշխատություններն ու հոդվածները և քննադատաբար օգտվել դրանցից:

Թուրքական աղբյուրներից օգտվել ենք Ա.Շ.Էսմերի «Դիվանագիտական պատմություն (1919-1939)», Ա.Ֆ.Թյուրքմենի «Հաթայի մանրամասն պատմություն» և Ա.Զըլըջի «Թուրքիան և աշխարհը» աշխատություններից²⁸: Հայտնի է, որ ժամանակակից թուրքական պատմագրությունը կիսապաշտոնական բնույթ է կրում և հեռու է գիտական անաչառությունից: Այսպես, Ա.Զըլըջը պնդում է, որ «Ալեքսանդրետի Սանջաքի տերիտորիան գտնվում էր Ազգային ուխտի գծած սահմաններից ներս»²⁹, մինչդեռ 1919 թ. սեպտեմբերի 11-ին Սվազի համաժողովում ընդունված բանաձևի 3-րդ կետում պարզ ասված էր, որ «Մոսուլից մինչև Ալեքսանդրետ քաշված ուղիղ գծից հարավ ընկած տերիտորիաները ոչ-թուրքական են»³⁰: Ա.Ֆ.Թյուրքմենը այսփի դավանանքի արաբներին համարում է «արաբների կողմնակից այսփի քուրքեր»³¹:

Այսուհանդերձ, նույն հեղինակների մոտ գտնում ենք առանձին խոստովանություններ Ալեքսանդրետի հարցի կապակցությամբ: Այսպես, Ա.Շ.Էսմերը ընդունում է (հակառակ թուրքական պաշտոնական տեսակետի), որ Սանջաքում հաստատված «վարչական ինքնավարությունը» 1921 թ. Անկարայի պայմանագրից էլ առաջ գոյություն ուներ և դրանով իսկ հաստատում է մանդատային իշխանությունների Ալեքսանդրետում վարած թուրքանպաստ քաղաքականության գոյությունը³²: Ա.Ֆ.Թուրքմենը ընդունում է, որ Սանջաքում իսկապես կային «սխալ ճանապարհով գնացող» բազմաթիվ հակա-քեմալիստ թուրքեր, որոնք Սիրիայի հետ Սանջաքի միասնությունը պահպանելու կողմնակից էին³³: Ա.Քըլըջը խոստովանում է, որ փաստորեն Սանջաքը Թուրքիայի կողմից պահանջվում էր ոչ այլ ինչի, քան շրջանի ներկայացրած ռազմագիտական խոշոր նշանակության պատճառով, թե Ֆրանսիան, իրավական ամուր հիմքեր ունենալով հանդերձ, «Անգլիայի ճնշման և ...գերմանա-իտալական առաջխաղացումների հարկադրանքի տակ ստիպված էր լռել» և Ալեքսանդրետը զիջել Թուրքիային³⁴:

Անգլիացի ու ամերիկացի մի շարք արևելագետներ նույնպես ուսումնասիրել են Ալեքսանդրետի հարցը: Ա.Ջ.Թոյնբին, Ս.Հ.Լոնգրիգը և Հ.Կ.Գորդոնը հանգամանորեն անդրադարձել են այս հարցին³⁵: Նրանց աշխատությունները պարունակում են մի շարք արժեքավոր տվյալներ մեր թեմայի շուրջ: Այսպես, Ա.Թոյնբին խոստովանում է, որ Անգլիան Ֆրանսիայի վրա ճնշում էր գործադրել Ալեքսանդրետը Թուրքիային զիջելու համար: «Եվրոպական մամուլում ընդհանրապես հասկացվում էր, - գրում է հեղինակը, - որ բրիտանական կառավարությունը քաջալերել է իր դաշնակից Ֆրանսիային՝ Հաթայում բարեկամական կարգավորման հասնելու ուղղությամբ»³⁶: Ս.Լոնգրիգը խոստովանում է, որ 1937 թ. Դամասկոսում «...սիրիացի մինիստրները շարունակ դիմում էին իրեն, որպեսզի ինչ-որ բան անի» Սանջաքը փրկելու համար: Արդարև, սիրիացիները համոզված էին, որ Ալեքսանդրետի գործարքի գլխավոր դերակատարը Անգլիան է, չնայած նույն Ս.Լոնգրիգը փորձում է «երևակայական ենթադրություն» համարել բարձր կոմիսար Գ.Պյուոյի մեղադրանքը, թե «Մեծ Բրիտանիան գորավիզ էր կանգնում թուրքերին, որպեսզի Ֆրանսիան ռազմածովային խարխիս չունենա Ալեքսանդրետում»³⁷: Հ.Գորդոնի հաղորդած տվյալները շատ արժեքավոր են որպես չեզոք և

անկողմնակալ ականատեսի կենդանի վկայություններ (նա Սանջարում եղել է 1938 թ. գարնանը՝ հանրաքվեի օրերին): Ռ.Ֆեդոկևը իրավամբ դատապարտում է մանդատային տերության «անջատողական քաղաքականությունը» և Ալեքսանդրետի հարցում նրա հաճոյակատար կեցվածքը թուրքական պահանջների նկատմամբ³⁸: Ամերիկացի հեղինակ Ջ.Լ.Կոնգովսկին շրդարկելով իր թուրքամոլությունը և խեղաթյուրելով պատմական փաստերը, Ալեքսանդրետի Սանջարում «63 տոկոս կազմող թուրքական մեծամասնություն» է տեսնում և շրջանը համարում է «Թուրքական միակ չվերադարձված հողը - Terra irredenta»³⁹: Ծավալուն հողվածներով, համապատասխան հանդեսներում, մեր թեմային են անդրադարձել Պ.Գրեյվզը, Ս.Հիլզը, Հ.Լատիմորը, Ի.Կերշին և Ուալտեր Յեյլինը («Բեռլինը Մոնաքսիստ»-ում):

Ֆաշիստական Իտալիան միշտ էլ նվաճողական երազներ է սնուցել արևելյան Միջերկրականի երկրների, հատկապես Միդիայի նկատմամբ: Սանջարի հարցը հարմարագույն առիթը համարվեց իտալական դիվանագիտության համար կոնֆլիկտը հնարավոր չափով սրելու միջոցով այդ երկրում Ֆրանսիայի տեղը գրավել փորձելու համար: Ֆաշիստական մամուլը բացահայտ պայքար տարավ այդ ուղղությամբ և մի շարք իտալացի արևելագետներ, ինչպես Ն.Սանթին, Ֆ.Կատալուչիոն, Ա.Աուսիելլոն, Ա.Ֆոլքին, Դ.Չենսոնին իրենց աշխատություններում հանգամանորեն ուսումնասիրեցին հարցը: Ս.Սփերդուփին իր «Ալեքսանդրետի Սանջարի հարցի իրավական կողմերը»⁴⁰ մենագրությունը նվիրեց կոնֆլիկտի ու դրա «լուծման» ուղիների ուսումնասիրությանը:

Իտալական աղբյուրները շահեկան տեղեկություններ են հաղորդում Սանջարի հարցում թուրք-ֆրանս-բրիտանական հակամարտությունների ներքին ծայրերի և գաղտնի գործարքի մասին: Մակայն, իտալացի հեղինակների հիմնական նպատակն է կարծես ապացուցել, որ «այն, ինչ տեղի է ունենում Միջերկրականում, էապես շահագրգռում է Իտալիային..., որը իրավունք ունի պահանջելու, որ հաշվի նստեն իր հետ»⁴¹:

Մեր ուսումնասիրության ընթացքում շարունակ դիմել ենք խորհրդային մամուլի տարբեր օրգանների հարուստ ու բազմազան նյութերին: Ըստ հնարավորի, ըննադատաբար օգտվել ենք նաև սփյուռքահայ, սիրիա-լիբանանյան, արաբական, արևմտաեվրոպական և թուրքական պարբերամամուլի հարուստ և բազմազան նյութերին:



A. U.
85028

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՍԱՆՁԱՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԳՈՅԱՎԻՃԱԿԸ

Ալեքսանդրետի Սանջաքը՝ հյուսիսային Սիրիայի ծովափնյա այն շրջանն է, որը կցվեց Թուրքիային 1939 թ. հունիսին՝ ֆրանս-թուրքական համաձայնագրերի հիման վրա: Այն ընկած է Հալեպի մուհաֆազայի (նահանգի) արևմուտքում, Լաթաքիայի մուհաֆազայի հյուսիսում, ձգվելով մոտ 150 կմ. երկարությամբ՝ Ալեքսանդրետի ծոցի արևելյան ափի, Ամանոսյան լեռնաշղթայի երկու կողմերը և ընդգրկելով Ռոռնդեսի (Նահր էլ-Ասի) ստորին վտակներ՝ Աֆրինի և Կարասուի ավազանը, Ամուք դաշտավայրով, մինչև Անտիոք քաղաքն ու Ռոռնդեսի գետաբերանը: Ռոռնդեսից հարավ գտնվում են Քուսեյրի ու Քեսապի լեռնային գավառները՝ Ջեբել-Աքրայի (Կասիոս) լանջերին, իսկ գետաբերանից հյուսիս՝ գտնվում է Ամանոսի լեռնաշղթայի հարավային ծայրամասը, Ջեբել-Մուսան (Մուսա լեռը): Հայտնի է, որ շրջանի ծովափնյա ու լեռնային մասը եղել է Կիլիկիայի հայկական պետության սահմանների մեջ՝:

Ալեքսանդրետի Սանջաքը զբաղեցնում էր 4805 քառ.կմ տարածություն և ուներ բազմազգ բնակչություն, որի ընդհանուր թիվը 1937 թ. հասնում էր 240 հազարի: Դրա մոտ 49 տոկոսը (115.000 մարդ) կազմում էին արաբները, թուրքերը՝ մոտ 23 տոկոսը (55.000), հայերը՝ 18 տոկոսը (43.000), թուրքմենները՝ 8 տոկոսը (20.000), մնացածը՝ քրդեր, չերքեզներ ու այլ փոքրամասնություններ²⁰:

Ալեքսանդրետի և Անտիոքի շրջանը, ինչպես ամբողջ Սիրիան, օսմանյան լծի տակ մնաց 1516 թ. մինչև առաջին համաշխարհային պատերազմի վերջը, երբ 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուղրոսի զինադադարի պայմանագրով Անտանտի զորքերը գրավեցին ամբողջ Սիրիան՝ մինչև Ալեքսանդրետ և Կիլիկիա:

Մուղրոսի զինադադարից անմիջապես հետո, անգլո-ֆրանսիական ռազմական իշխանությունները ձեռնամուխ եղան Մերձավոր Արևելքի բաժանմանը: Կիլիկիան՝ Ադանայի վիլայեթը (Հյուսիսային գոտին), ինչպես նաև առափնյա շրջանները,

Աքքայից մինչև Ալեքսանդրետ (Արևմտյան գոտին), պետք է գրավեին ֆրանսիական զորքերը:

Ձեռնարկելով իրենց գրաված տերիտորիաների վարչական կազմավարմանը, ֆրանսիական իշխանությունները 1918 թ. նոյեմբերի 27-ին արդեն ստեղծել էին «Ալեքսանդրետի Ինքնավար Սանջաքը», վարչա-քաղաքական նոր միավորի մեջ ընդգրկելով Հալեպի վիլայեթի մաս կազմող Ալեքսանդրետի, Անտիոքի, Բեյլանի ու Հարիմի գավառները: Քաղաքական այս ակտը Ալեքսանդրետի Սանջաքի, որպես վարչա-քաղաքական ինքնուրույն միավորի, իրավական գոյավիճակը հաստատող ու կարգավորող առաջին քայլն էր: Սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ «Ալեքսանդրետի Սանջաք» որպես ինքնուրույն վարչա-տերիտորիալ միավոր, երբեք գոյություն չի ունեցել նախկինում՝ օսմանյան տիրապետության ժամանակ:

1920 թվականի սեպտեմբերի 1-ի հրամանագրերով բարձր-կոմիսար Գուրոն ստեղծեց Հալեպի, Դամասկոսի, Մեծ Լիբանանի, Ալավիների, (հետագայում նաև Ջեբել-Դրուզի) «պետությունները»: Ալեքսանդրետի Ինքնավար Սանջաքը 1920 թ. սեպտեմբերի 1-ի հրամանագրով ընդգրկվեց «Հալեպի պետության» կազմի մեջ, ըստ հետևյալ հոդվածների.

«Հոդ. 2 - Ալեքսանդրետի Ինքնավար Սանջաքը ենթակա կլինի Հալեպի կառավարությանը, պահպանելով հանդերձ, այս կառավարության մեջ, իր վարչական ինքնավարությունը...»:

«Հոդ. 10 - Վարչական հատուկ սահմանում կտրվի այն որոշումներին, որ հետագայում Ալեքսանդրետի մութասարիֆը կարող է ընդունել...»:

Նույն հրամանագրով Ալեքսանդրետի Սանջաքը մեծացվում էր. նրա կազմի մեջ առնվեցին Ջիսր-ալՇուղուրի՝ Հարիմի և Քինսիքա-Բահեր-Բուջաքի գավառակները:

1921 թ. օգոստոսի 8-ին հրապարակվեց վերոհիշյալ 10-րդ հոդվածով նախատեսված «Վարչական կանոնադրությունը»: Դրանով օրենքի ուժ էին ստանում Սանջաքի համար նախատեսված «Վարչական հատուկ ռեժիմի» այն դրույթները, որոնց մասին խոսվում էր 1921 թ. մարտի 9-ին Լոնդոնում Անկարայի կառավարության արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի բեյի և Բրիանի կողմից ստորագրված ֆրանս-թուրքական անջատ համաձայնագրում: Ա.Աթան իրավամբ ընդգծում է, որ «այդ հատուկ ռեժիմը լուրջ կերպով թուլացնում էր ս.յ. կապերը,

որոնք Ալեքսանդրետի Սանջաքը միացնում էին Հալեպի կառավարության հետ»⁷: Արդարև, այդ հրամանագրով Ալեքսանդրետի Սանջաքի կառավարչին էին փոխանցվում Հալեպի կառավարության պետի Սանջաքի հետ առնչվող լիազորությունների մեծ մասը: Թուրքական համայնքի դերն ու նշանակությունը Սանջաքում առանձնապես շեշտվում էր, իսկ թուրքերենը դառնում էր պաշտոնական լեզու արաբերենին հավասար:

Բարձր-կոմիսարի 1921 թ. սեպտեմբերի 21-ի հրամանագրով տերիտորիալ փոփոխություններ մտցվեցին Սանջաքի կազմում, նրանից անջատվեցին մեկ տարի առաջ կցված Հարիմ-Ջիսր-ալ-Շուդուր և Բահեր-Բուջաք ու Զինսիբա գավառները, որոնք իբր թե «տնտեսական դրդապատճառներով» կցվում էին Հալեպի կամ Լաթաքիայի նահանգներին⁸: Իրֆան Ջաբրին նշում է, որ տերիտորիալ այս նոր փոփոխությունը կատարվեց ի վնաս Սանջաքի արաբ ազգաբնակչության, որովհետև «այս միջոցառումներով թուրքական տարրերի տոկոսը Սանջաքում 28,52%-ից բարձրացավ 38,9%: Անջատված գավառները հիմնականում արաբներով էին բնակեցված, իսկ այդ միջոցառումով Սանջաքը դառնում էր «նվազ արաբական»⁹:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-թուրքական համաձայնագրի 7-րդ հոդվածը¹⁰ հաստատում էր Ալեքսանդրետի Սանջաքում արդեն կենսագործվող «հատուկ ռեժիմը» և թուրքերին խոստանում էր նոր առանձնաշնորհումներ:

1922 թ. հունիսի 28-ին կազմակերպվեց «Սիրիական պետությունների ֆեդերացիա»: Ալեքսանդրետի Սանջաքը, որպես Հալեպի պետության մի մասը, վերջինիս հետ մտավ ֆեդերացիայի կազմի մեջ: Հալեպում ֆեդերացիան պաշտոնապես հռչակվեց 1922 թ. օգոստոսին: Հատկանշական է այն փաստը, որ ֆեդերացիայի նախագահ նշանակվեց սանջաքցի թուրքացած-արաբ խոշոր ֆեոդալ Մուբիի բեկ Բարաքաթը:

1922 թ. հուլիսի 24-ին Լոնդոնում ընդունվեց Մանդատի խարտիան, որը ուժի մեջ պետք է մտներ 1923 թ. սեպտեմբերի 29-ին:

Լոզանի դաշնագիրը (1923 թ. հուլիս 24), ուրիշ հարցերի հետ, իր 16-րդ հոդվածով վերջնականապես կարգավորում և միջազգային հաստատում էր տալիս Անկարայի համաձայնագրով որոշված Կուրք-սիրիական սահմանագծին: Լոզանի դաշնագրով

Թուրքիան հրաժարվում էր իրենից անջատված բոլոր տերիտորիաների նկատմամբ գերիշխանության իրավունքներից:

1924 թ. դեկտեմբերի 5-ի հրամանագրով բարձր կոմիսարը վերացրեց «Սիրիական ֆեդերացիան» և ստեղծեց «Սիրիայի պետություն»՝ Հալեպի և Դամասկոսի պետությունների միավորումով¹²: Նույն հրամանագրի 2-րդ հոդվածով Սանջաքը մտնում էր «Սիրիայի պետության» կազմի մեջ՝ պահպանելով հանդերձ իր «հատուկ ռեժիմը»:

1926 թ. մայիսի 30-ին Անկարայում ստորագրվեց «Թուրք-սիրիական բարեկամության և բարի դրացիության» կոնվենցիան՝ թուրք-սիրիական սահմանագծի վերջնական ճշգրտման վերաբերյալ¹³: Քաղաքական իրադրությունը շատ նպաստավոր էր թուրքերի համար. նրանք բրդական ապստամբությունը խեղդել էին արյան մեջ և այդ սահմանագծման հարցում ևս եղան անզիջող¹⁴: Իսկ ֆրանսիացիները պետք է հաշվի նստեին ամբողջ երկրում տարածվող սիրիական ապստամբության հետ: Մյուս կողմից, Մոսուլի հարցում տանուլ տված թուրքերը վճռել էին անպայման ինչ-որ օգուտ քաղել ֆրանս-թուրքական այս բանակցություններից: Ֆրանսիացիները այս անգամ ևս Անկարային զիջեցին կարևոր տարածություններ Փայաս-Քիլիս սահմանային հատվածում: Փայասի կայարանը հանձնվեց Թուրքիային, որը իրավունք ստացավ նաև զինվորական փոխադրումներ կատարելու սիրիական տերիտորիայով¹⁵: Մեյդան-Էքբեզ և Չոբան-Բեյ կայարանների միջև: Նա ձեռք էր բերում ռազմական առավելություն՝ Ալեքսանդրետն ու Հալեպը դրվում էին անմիջականորեն իր քնդանոթների սպառնալիքի տակ: Ֆրանսիացիների կողմից թուրքերին արված այս զիջումները դժգոհության և բողոքի ալիք բարձրացրին ոչ միայն Սանջաքում, Սիրիայում ու Ֆրանսիայի առաջադիմական շրջաններում, այլև Անգլիայում¹⁶, որտեղ Մոսուլի ուղղությամբ հավանական պատերազմական գործողությունների վախ կար և անզու-թուրքական հարաբերությունները լարված էին¹⁶:

Անկարայի կոնվենցիային կից արձանագրության մեջ հետևյալ նշումը կար Սանջաքի մասին. «Ինչպիսիք էլ լինեն Սիրիայում հաստատվելիք ստատուսը կամ ձեռք առնվելիք վարչական միջոցառումները, միշտ հաշվի կառնվի այն հատուկ ռեժիմը, որ Անկարայի համաձայնագրի 7-րդ հոդվածը հաստատել է . Հլեքսանդրետի Սանջաքի համար»¹⁷:

1930 թ. մայիսի 14-ին, բարձր կոմիսար Հ.Պոնսոն հրապարակեց մի շարք «սահմանադրական կանոնադրություններ» ֆրանսիական մանդատին ենթակա յուրաքանչյուր երկրամասի համար առանձին: Մանջաքի «Մահմանադրական կանոնադրությունը» նոր ճշգրտումներ ու մանր փոփոխություններ էր մտցնում Մանջաքի վարչական ու ֆինանսական «հատուկ ռեժիմի» մեջ¹⁸:

Անհրաժեշտ է նշել, որ Սիրիայի քաղաքական և իրավական ստատուսը կարգավորող բոլոր հրամանագրերը ենթարկվել են Ազգերի Լիգայի մանդատային հանձնաժողովի, ինչպես նաև Լիգայի խորհրդի քննարկմանն ու պաշտոնական հաստատմանը: Երբ Թուրքիան ընդունվեց Ազգերի Լիգա (1932 թ. հուլիս 18) նա *ipso facto* ճանաչեց ֆրանսիական մանդատի ենթակա երկրամասերի, այդ թվում նաև Մանջաքի, իրավական գոյավիճակը՝ Սիրիայի պետության կազմում:

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Բրիանին ուղղված իր զեկուցագրում¹⁹ բարձր կոմիսար Հ.Պոնսոն տալիս է Մանջաքի «Մահմանադրական կանոնադրության» հետևյալ բնութագրումը. «...3 - Ալեքսանդրետի Մանջաքի Մահմանադրական կանոնադրությունը սահմանում և ճշգրտում է, վարչական և ֆինանսական տեսակետից, սիրիական այս նահանգի²⁰ յուրահատուկ գոյավիճակը և միավորում է միայն մեկ վավերագրի մեջ այն զանազան ակտերը, որոնցով կառավարվում էր Մանջաքը մինչև այժմ: Գոյություն ունեցող միջազգային պարտավորությունների շրջանակում Մանջաքի հատուկ ռեժիմը հարգում է նրա ազգաբնակչության բազմիցս արտահայտված ցանկությունը»:

Հարկ է նշել, որ Հ.Պոնսոյի այս վերջին հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը և չի հիմնված պատմական ոչ մի փաստի, «Մանջաքի ազգաբնակչության» դեմոկրատականորեն արտահայտված ոչ մի ցանկության վրա:

«Մահմանադրական կանոնադրության» առաջին հոդվածում ասվում է, որ Սիրիայի պետության կազմում վարչական և ֆինանսական բնագավառներում Ալեքսանդրետի Մանջաքին տրված «հատուկ ռեժիմը» կարգավորվում է հաջորդ հոդվածներով՝ մութասարիֆին²¹ և Վարչական խորհրդին տրված հատուկ լիազորություններով:

2-րդ հոդվածում ասվում է, որ պետության (Սիրիայի) ղեկավարը նշանակում է պետական գործիչներին: Մութասարիֆին

ներկայացրած ցուցակի հիման վրա, նա նշանակում է Ալեքսանդրետի Սանջաքի կայնականներին և կենտրոնական վարչությունների (ծառայությունների) պետերին: Իսկ մութասարիֆը, պետության ղեկավարի անունից, նշանակում է պետության մյուս աստիճանավորներին ու մուդիրներին և գործադրում է ներկա կանոնադրությամբ իրեն վերապահված իշխանությունը:

3-րդ հոդվածը վերաբերում է Վարչական խորհրդի կազմին և ընտրության եղանակներին՝ 9 ընտրված անդամներ (տարբեր համայնքների ներկայացուցիչներից) և 3 նշանակովի անդամներ Առևտրի և Երկրագործության պալատների նախագահների և ուրիշ երևելիների այն ցուցակից, որը մութասարիֆը ներկայացնում է պետության ղեկավարին: Խորհրդի անդամները ընտրվում են «Պետության մեջ գործող քվերակության ձևի համաձայն»: Ոչ մի խոսք չկա ժողովրդական, դեմոկրատական ներկայացուցչության մասին: Խորհրդի իրավասությունները սահմանափակվում են 6-րդ և 7-րդ հոդվածների այն դրույթներով, որոնց համաձայն մութասարիֆի կողմից նիստի հրավիրված խորհուրդը պետք է քննարկի և քվեարկի Սանջաքի բյուջեի, փոխառությունների կամ տրվող կոնցեսիաների նախագծերը:

4-րդ հոդվածը վերաբերում է Սանջաքի բյուջեի եկամտի աղբյուրներին և ծախսերին, ընդ որում Սիրիայի պետական ծախսերին մասնակցություն՝ Սանջաքի ընդհանուր եկամտի հինգ տոկոսի չափով:

5-րդ հոդվածում խոսվում է բյուջեի նախագիծը կազմելու կարգի մասին: Այն կազմվում է մութասարիֆի կողմից, կենտրոնական պետական վարչությունների պետերի մասնակցությամբ և ներկայացվում Սիրիայի կենտրոնական կառավարության ֆինանսների մինիստրի քննարկմանը: Վերջինս մեկ ամսվա ընթացքում պետք է այն վերադարձնի՝ իր դիտողություններով ու առաջարկություններով: Բյուջեն օրենքի ուժ է ստանում պետության ղեկավարի կողմից հրապարակվելուց հետո:

Կանոնադրության 8-րդ ու վերջին հոդվածը վերաբերում է Ընդհանուր շահերի տնօրինության²² ֆունդից Սանջաքին հասնող հատկացումներին և այլն:

Ահա սրանք են գլխավոր դրույթները 1930 թ. «Սահմանադրական կանոնադրության», որը կարգավորում էր Ալեքսանդրետի Ինքնավավար Սանջաքի յուրահատուկ գոյավիճակը Սիրիայի պետության կազմում, մինչև 1937 թ. նոյեմբերի 29-ը,

երբ ուժի մեջ մտավ «Նոր ստատուսը»:

Մենք նշեցինք «Ալեքսանդրետի Ինքնավար Սանջաքի» իրավական յուրահատուկ գոյավիճակը՝ «հատուկ ռեժիմը» կարգավորող քաղաքական ու դիվանագիտական բոլոր ակտերը: Իսկ այդ «հատուկ ռեժիմը» դրսևորում էր երկու առանձնահատկություններով.

ա) ֆրանսիական ուղղակի կառավարում՝ ի տարբերություն Հալեպի կամ Դամասկոսի վիլայեթների.

բ) Վարչա-ֆինանսական ու մշակութային ինքնավարություն:

«Հատուկ ռեժիմը» Սանջաքին երբեք չէր տալիս ինքնուրույն պետական-քաղաքական միավորի (Entité politique) բնույթ՝ սիրիական պետության սահմաններից դուրս, այլ միայն վերջինիս կազմում վարչա-ֆինանսական ինքնավարության արտոնություններ: Այդ արտոնություններին ավելանում էին նաև Սանջաքի «թուրք ցեղին պատկանող բնակիչներին» տրված լեզվական-մշակութային արտոնությունները:

Ազգերի Լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածի և Մանդատի դրույթների համաձայն, մանդատային պետությունը պետք է հանդես գար միայն «որպես խնամակալ՝ ղեկավարելու և ուղղություն տալու համար մանդատի ենթակա պետությունների ղեկավարներին և նրանց կառավարական վարչությունների դիրեկտորներին՝ մինչև այն օրը, երբ նրանք կարող կլինեն իրենք իրենց կառավարել»²³:

Սրանում միայն պետք է կայանար մանդատային իշխանության ներկայացուցիչների «խնամակալությունը» Սիրիայում: Սակայն այդ «խնամակալությունը» բոլորովին տարբեր ձևով էր արտահայտվում «Ալեքսանդրետի Ինքնավար Սանջաքում»: Այնտեղ մանդատային իշխանության ներկայացուցիչը՝ Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի բարձր կոմիսարի փոխպատվիրակը (Délégué-adjoint) անձամբ և ուղղակի իրեն ենթակա տեսուչների, վերահսկիչների կամ խորհրդականների միջոցով գործադրում էր փաստորեն պետական-կառավարական իշխանության բոլոր ֆունկցիաները, չնայած ձևականորեն գոյություն ունեին Սանջաքի կառավարման տեղական մարմիններ: Ս.Հ.Լոնգրիգը ճիշտ կերպով նշում է, որ Ալեքսանդրետի «Հատուկ ռեժիմում ոչ միայն դավանական սկզբունքով ստեղծված ներկայացուցչական (վարչական) խորհուրդը, այլև ամբողջ կառավարումը դրված էր Ֆրանսիայի պատվիրակի գերիշխանության տակ»²⁴:

Գործադիր իշխանության կարևորագույն մարմինների փաստական, երբեմն նույնիսկ պաշտոնական ղեկավարները Սանջաքում հանդիսանում էին ֆրանսիացի քաղաքացիական կամ զինվորական պաշտոնատարներ, որոնց ենթակա էին մութասարիֆության պետական վարչությունների պետերը: Հատկանշական է, որ արաբական Սանջաքում այդ վարչությունների ղեկավար նշանակվում էին ոչ թե արաբներ, այլ ճնշող մեծամասնությամբ թուրք երևելիներ, այն ղեպքում, երբ թուրքերը կազմում էին փոքրամասնություն:

Փոխ-պատվիրակի լիազորությունները սահմանվել են բարձր կոմիսարի 1924 թ. դեկտեմբերի 12-ի և 1930 թ. մայիսի 14-ի հրամանագրերով²⁵, որոնցով նրան իրավունք էր վերապահվում վերահսկել և ղեկավարել Սանջաքի բոլոր պետական վարչությունների և ներքին ու պետական անվտանգության մարմինների գործունեությունը: Նա ցուցումներ էր տալիս Սանջաքի մութասարիֆին ու նրա միջոցով՝ ենթակա աստիճանավորներին:

Փոխ-պատվիրակի մակագրությունն անհրաժեշտ էր մութասարիֆի տված բոլոր որոշումներին ու հրամաններին օրենքի ուժ տալու համար²⁶: Նա հանդիսանում էր Սանջաքի կարևորագույն՝ ֆինանսների պետական վարչության ղեկավարի «խորհրդականը» և «ծախսերի վերահսկիչը»: Անմիջականորեն փոխ-պատվիրակին էին ենթակա ոստիկանությունը, ժանդարմերիան, ներքին և պետական-սահմանային անվտանգության մարմինները, մաքսային վարչությունը, օտար կոնցեսիոն ընկերությունների և բարձր-կոմիսարության զանազան ծառայությունների Սանջաքի ճյուղերի վերահսկողությունը, հեռախոսացանցը: Նա հանդիսանում էր միաժամանակ ֆրանսիայի հյուպատոս և բարձր-կոմիսարության արտաքին գործերի բաժնի ներկայացուցիչը: Այսպիսով, փոխ-պատվիրակը անմիջականորեն ղեկավարում և վերահսկում էր Սանջաքի տնտեսական-հասարակական և քաղաքական կյանքի բոլոր բնագավառները: Դրանումն էր Ալեքսանդրեոտի Սանջաքի «ուղղակի կառավարման» բուն էությունը:

Փոխ-պատվիրակի պաշտոնը Սանջաքում 1924-ից մինչև 1937 թվականի վերջը վարում էր Պիեռ Դյուրիոն, որը երկար տարիներ Թուրքիայում եղել էր Ֆրանսիայի հյուպատոս: Նա իմպերիալիզմի ամենահետադիմական շրջանների բնորոշ ներկայացուցիչներից էր, «թուրքական հարցերի» մասնագետ: 1927 թ. Սանջաքի «անկախության հռչակման» ժամանակ անջատողա-

զանները նրան «Սանջաքի պրեզիդենտ» էին նշանակել²⁷: Ա.Թեմիրյանը նրա մասին գրում է. «Դյուրիոն քրքավայել շատ գործեր տեսավ: ... Ան եղավ հղացողը Սանջաքը Թուրքիո կցելու ծրագրին: ... Ան շատ դրամասեր մեկն էր և թուրքե մը ավելի կաշառակեր»²⁸: Այնուհետև, հայտնելով, որ Դյուրիոն 1937 թ. Ֆրանսիա վերադառնալիս իր հետ տարել է «ահագին հարստություն արժող գորգեր, «անթիքաներ» (հնագիտական իրեր), Թեմիրյանը եզրակացնում է. «Պոլսեն անցած ժամանակ Դյուրիոն իրեն դիմող թուրք լրագրողներուն այսպես պատասխաներ է. Չեզի զգայացունց բան մը չունիմ հայտնելիք Սանջաքի մասին... Միայն սա չափը կրնամ ըսել, որ իմ ցանած հունդերս տարի մը ետք կրնան պտուղ տալ»²⁹:

Միրիայի ու Սանջաքի մամուլն ու հասարակական կարծիքը միշտ էլ քննադատել են Պ.Դյուրիոյի հակասիրիական ու թուրքամոլ քաղաքականությունը: Այդ մասին Դյուրիոն ասել է.

«... Զննադատությունը ինձ չի խնայել: ... Աջից թե ձախից, հյուսիսից թե հարավից ես ենթարկված եմ եղել ամենաստոր, կասեի նույնիսկ երբեք չարժանացված զրպարտությունների, ... էժանագին բամբասանքների»³⁰:

Մակայն ո՛չ զրպարտություն, ո՛չ ևս էժանագին բամբասանք է այն փաստը, որ Դյուրոյին 14 տարիներ շարունակ «ցանած հունդերը» իսկապես որ տվեցին իրենց պտուղները, երբ Սանջաքից նրա մեկնումից մեկ տարի էլ չանցած, 1938 թ. հուլիսի 5-ին, թուրքական զորքերը մուտք գործեցին Ալեքսանդրետի Սանջաք:

Մանդատային իշխանությունները փոքր Սանջաքում պահում էին շուրջ 25 ֆրանսիացի պաշտոնյաներ (չհաշված փոխպատմիրակության ղեկավար և օժանդակ անձնակազմը՝ շուրջ 10 մարդ): Այսպես, 1936 թ. պետական տարբեր վարչություններում ու ծառայություններում ղեկավար պաշտոններ էին զրավում ֆրանսիացի հետևյալ աստիճանավորները³¹. հանրային կրթության՝ 1 տեսուչ, 4 ուսուցիչ. առողջապահության, երկրագործության, անտառ-տնտեսության՝ մեկական տեսուչ, հանրային աշխատանքների՝ 1 տեսուչ, 5 ծառայող, ֆինանսական և մաքսային ծառայության՝ մեկական վերահսկիչ և ներքին, սահմանային անվտանգության, ոստիկանության ու ժանդարմերիայի՝ 8 սպա՝ տեսուչ կամ խորհրդական:

Վերոհիշյալ տեսուչներն ու խորհրդականները փաստորեն իրենք էին ղեկավարում Սանջաքի մութասարիֆության պետական վարչությունները, կազաների, նահիենների ամբողջ կյանքը: Առանց

Ֆրանսիացի վերահսկիչների հավանության ու հաստատման տեղացի (բնիկ) պաշտոնատարների ոչ մի գործողություն կամ որոշում չէր կարող ուժի մեջ մտնել: Կայմակամի «վարչական խորհրդականը» իրավունք ուներ «բոլոր աստիճաններում վերահսկողության ենթարկելու նրա գործողությունները»:

Վարչական խորհրդականների՝ պետական անվտանգության սպաների գործունեությունը ղեկավարում էր փոխ-պատվիրակության քաղաքական բյուրոյի կողմից, որը որոշ հարցերում ենթակա էր բանակի հրամանատարությանը: Յուրաքանչյուր կազայում պետական անվտանգության սպայի տրամադրության տակ դրված էր հեծյալ պահակայինների մեկ դասակ՝ սահմանի հատուկ հսկողության համար³²: Սանջաքի ներքին ճնշման ուժերը՝ ոստիկանությունը, գաղտնի ոստիկանությունը (ընդհանուր անվտանգությունը) և ժանդարմերիան նույնպես անմիջականորեն ենթակա էին փոխ-պատվիրակությանը: Ֆրանսիացի մեկ սպա և մեկ ենթասպա ղեկավարում էին նրանց: Ոստիկանությունը բաղկացած էր տեղացի 40 ոստիկաններից, որից 5-ը ոստիկանության կոմիսարներ էին: Ֆրանսիացի 1 տեսուչ-կոմիսար ղեկավարում էր նրանց³³: Հասկանալի պատճառներով տվյալներ չեն հրապարակվում անվտանգության մարմինների անձնակազմի թվի մասին:

Գնդապետ Ժաքոն բերում է հետևյալ համեմատական թվերը: Սանջաքի ժանդարմերիայի, ոստիկանության և հեծյալ պահակայինների անձնակազմի մասին, ըստ ազգությունների, 1929 թ. դրությամբ³⁴:

Տոկոսը ըստ ազգությունների

	թուրքեր	արաբներ	հայեր	քրդեր
Ժանդարմերիա	62%	28%	4%	6%
Ոստիկանություն	55%	31%	14%	-
Հեծյալ պահակայիններ	28%	17%	30%	25%

Վերևի թվերից պարզ երևում է, որ պետական-սահմանային պահպանության ուժերում հարաբերական մեծամասնությամբ հավաքագրված էին հայեր, արաբներ ու քրդեր՝ միասին վերցրած: Իսկ ներքին ճնշման ուժերում՝ թուրքերը կազմում էին ճնշող մեծամասնություն. դա հետապնդում էր որոշակի նպատակ: Այս

հանգամանքը նույնպես հատկանշական արտահայտություններից մեկն է Սանջաբում մանդատային իշխանությունների վարած ապակենտրոնացման և թուրքանպաստ քաղաքականության:

Բացի մանդատային իշխանության մարմիններից, Սանջաբում կային նաև տեղական իշխանության մարմիններ՝ «Մութասարիֆություն» ու նրան ենթակա պետական վարչություններ, որոնք, ինչպես նշվեց, բացարձակապես ենթակա էին ֆրանսիացի խորհրդականների հրամաններին:

Ալեքսանդրետի Սանջաբի մութասարիֆը, ըստ Հիննական օրենքի, պետք է նշանակվեր Սիրիայի պետության ղեկավարի կողմից: Պարզ է, որ այն պետք է լիներ մանդատային իշխանության թեկնածուն: Սանջաբի մութասարիֆի պաշտոնը 1923-1935 թթ. զբաղեցնում էր օսմանյան նախկին աստիճանավոր՝ թուրք Իբրահիմ Էդիեմ Մումենը, որը Դյուրոյի կամակատարն էր: Միայն 1936 թ. Ալեքսանդրետի մութասարիֆ (մուհաֆեզ) նշանակվեց արաբ Ահմեդ Բարազին: Հատկանշական է նաև այն փաստը, որ սկզբից մինչև 1938 թ. վերջերը Սանջաբի մութասարիֆության ընդհանուր քարտուղարն էր պոլսեցի մի թուրք՝ Ալաեդդին բեկը, բազմամյա փորձ ունեցող օսմանյան նախկին պաշտոնյա, որը փաստորեն անձամբ ղեկավարում էր մութասարիֆության բոլոր գործերը:

Մութասարիֆի իրավասությունների մեջ մտնում էին.

Վերահսկել օրենքների ու կանոնադրության ճշգրիտ գործադրությունը, վարել Սանջաբի բյուջետային-ֆինանսական ու վարչական ինքնավարության գործերը և ղեկավարել իրեն ենթակա պետական վարչությունների գործունեությունը: Մութասարիֆի բոլոր որոշումներն ու հրամանները պարտադիր կարգով ենթակա էին փոխ-պատվիրակի գրավոր հաստատմանը⁶⁶:

Մութասարիֆությանը կից ստեղծված էր Սանջաբի վարչական խորհուրդ: Այն օրենսդիր կամ գործադիր իշխանություն չէր, այլ «Հիննական կանոնադրության» դրույթների համապատասխան քննարկում էր բյուջետային-ֆինանսական հարցեր: Խորհրդի 9 ընտրովի անդամները պետք է ներկայացնեին Սանջաբի տարբեր համայնքները՝ 3 թուրք, 2 արաբ-ալավի, 1 արաբ սուննի (որը հաճախ լինում էր թրքացած արաբ), 1 հայ, 1 հույն-ուղղափառ, 1 անղամ մնացած փոքրամասնություններից: Խորհրդի 3

նշանակովի անդամները, ըստ Հիմնական կանոնադրության, պետք է վերցվեին «Սանջաքի երևելիներ»-ից³⁷: Խորհրդի ընտրովի թե նշանակովի բոլոր անդամները որպես կանոն լինում էին խոշոր կալվածատիրական կամ առևտրական խավերի ներկայացուցիչներ:

Սանջաքի երեք կազաներից յուրաքանչյուրում տեղական իշխանության ներկայացուցիչն էր կայմականը, որը «կատարում էր իր անմիջական պետից՝ մութասարիֆից ստացած հրամանները և նրան հաստատման համար ներկայացնում կազային վերաբերող ամեն բնույթի առաջարկություններ: Կայմականի որոշումները ենթակա էին ֆրանսիացի խորհրդականի գրավոր հաստատմանը³⁸: Կազաներում իշխանության փաստական ներկայացուցիչները խորհրդականներն էին, ինչպես փոխ-պատվիրակը՝ ամբողջ Սանջաքում: Ալեքսանդրետի Սանջաքում կազաների կայմականները միշտ եղել են թուրք խոշոր կալվածատերեր: Այսպես, վերջին տարիներին, Անտիոքի կազայի կայմականն էր Ալաեդդին Բեկ Քուսեյրիզադեն (խոշոր ֆեոդալ ու երեսփոխան Մուստաֆա Քուսեյրիզադեի եղբայրը): Կըրըկ-Խանի կազայի կայմականը նույնպես թուրք էր՝ Սըղկի Բեկը: Սանջաքի մութասարիֆը համարվում էր միաժամանակ Ալեքսանդրետի կայմականը:

Մուդիրը Նահիեում իրագործում էր նույն իշխանությունը, ինչ որ կայմականը կազայում: Մուդիրի բոլոր գործողությունները ենթակա էին խորհրդականի հաստատմանը: Մուդիրին ենթակա էին Նահիեի բոլոր գյուղերի «մուխթարները» (ավագները), որոնք կատարում էին թաղային-տնային կամ գյուղական լիազորի պարտականությունները: Քաղաքներում մուխթարները ենթակա էին քաղաքապետությանը:

Քաղաքապետություններ (Բելեդիյե) կային Ալեքսանդրետում, Անտիոքում, Կըրըկ-Խանում, Ռիհանիեում, Մուդիեում և ամառանոցային ավաններում: Ալեքսանդրետի ու Անտիոքի քաղաքապետությունները ունեին իրենց ֆրանսիացի տեխնիկական և վարչական «խորհրդականները» համապատասխան լիազորություններով³⁹:

1936-37 թթ. Անտիոքի քաղաքագլուխն էր թուրք Մուրեյե Բեկը, Ալեքսանդրետինը՝ հույն-ուղղափառ խոշոր առևտրական Նիկոլա Ֆիլիփիին, իսկ Կըրըկ-Խանինը՝ բժիշկ Ստեփան Ֆարաջյանը: Հայկական ամառանոցային ավաններում նույնպես

քաղաքագլուխները հայեր էին:

Ինչ վերաբերում է մութասարիֆության ենթակա պետական վարչությունների ազգային պատկանելությանը, նրանք ևս ճնշող մեծամասնությամբ թուրքեր էին լինում, իհարկե, մեծահարուստ կալվածատերեր կամ օսմանյան նախկին պաշտոնատարներ: Այսպես, հանրային շինարարությունների վարչության պետն էր իզմիրցի թուրք Ռասիմ բեկը, հանրային կրթությանը՝ անտիոքցի թուրք կալվածատեր Քուսեյրիզադե Միդհատ բեկը, երկրագործությանն ու տնտեսությանը՝ անտիոքցի թուրք խոշոր ֆեոդալ Շեքիր բեկը և այլն: Արաբներ էին միայն Առողջապահության վարչության պետը՝ բժիշկ Չեքի, հետո բժ. Սելիմ, իսկ ֆինանսներինը՝ Հասան ալ-Չաբբարան, որը հետագայում (1957 թ.) դարձավ Սիրիայի ֆինանսների ու ազգային տնտեսության մինիստր:

Սանջաքի «հատուկ ռեժիմի» հիմքերից մեկն էլ նրա բյուջետային-ֆինանսական ինքնավարությունն էր: 1936 թ. Սանջաքի բյուջեն կազմում էր 15.212.000 ֆրանկ (Սիրիական հանրապետությանը՝ 150.647.520 ֆր.) որից հանրային կրթության ծախսերը կազմում էին 1.807.200 ֆր., հանրային շինարարություններինը՝ 3.140.00 ֆր., քաղաքապետություններինը՝ 3.176.000 ֆր., առողջապահությանը՝ 795.140 ֆր.⁴⁰:

Սանջաքում կապի ծառայությունները վարչականորեն ուղղակի կապված էին սիրիական կենտրոնական համապատասխան օրգանների հետ, սակայն ֆինանսապես ենթակա էին Սանջաքի տեղական բյուջեին: Իսկ հեռախոսային ցանցը, ինչպես ամբողջ Սիրիայում, ամեն ինչով ենթակա էր զինվորական իշխանություններին:

Արդարադատությունը նույնպես ուղղակի կապված էր Սիրիայի արդարադատության մինիստրության հետ: Հաշտարար և առաջին կարգի դատարաններ կային Ալեքսանդրետում, Անտիոքում, Կըրըկ-Խանում, իսկ դատական հաջորդ ինստանցիաների՝ բողոքարկման, վճռաբեկ և խառն դատարանների գործերը թողնված էին Հալեպի կամ Դամասկոսի համապատասխան դատական մարմինների իրավասությանը⁴¹: Սանջաքում դատավարությունը կարող էր տեղի ունենալ արաբերեն կամ թուրքերեն: Դատավորները, օսմանյան նախկին դատական պաշտոնյաներ, մեծ մասամբ թուրքեր էին կամ բրբաքած արաբներ: Սանջաքի ընդհանուր դատախազը անտիոքցի թուրք Չինչինզադե-բեկն էր:

Ալեքսանդրետի Սանջաքի կառավարական կիսապաշտոնական օրգանն էր համարվում 1925 թվականից Ալեքսանդրետում ֆրանսերեն լեզվով⁴² լույս տեսնող «Լ'Էքո դ'Ալեքսանդրետ» (L'Echo d'Alexandrette) շաբաթաթերթը: Թերթի արտոնատար-տնօրենն էր Աբդալլահ Սալեմը, իսկ խմբագիրը վերջին տարիներին՝ Հարություն Վարդանյանը: Արաբները՝ 1937 թվականից հրատարակում էին «Ալ-Ուրուբա» թերթը, իսկ թուրքերը՝ «Ենի գյուն» թերթը: 1937-38 թթ. լույս էին տեսնում նաև ուրիշ թերթեր:

Ալեքսանդրետի Սանջաքում ֆրանսիացիները վարում էին Սիրիայի նկատմամբ անջատողական և ապակենտրոնացման քաղաքականություն՝ հենված լինելով կալվածատիրա-առևտրական վերնախավի, հատկապես թուրք ներկայացուցիչների վրա: Նրանք ձգտում էին շարունակ իշխանությունից հեռու պահել բնակչության արաբական մեծամասնությանը և հայերին:

Մանդատային իշխանությունների «հոգատարությունը» Ալեքսանդրետի Սանջաքում արտահայտվում էր բացառապես հօգուտ թուրքական տարրերի, ի վնաս արաբական ու հայկական ճնշող մեծամասնության շահերի: Արևմտյան հեղինակները ևս խոստովանում են այդ իրողությունը: Չենսոնին գրում է, որ «Ֆրանսիայի բարի կամեցողությունը թուրքական տարրերին հնարավորություն էր տալիս, հաջողության հույսով շարունակելու պայքարը սեփական (անջատողական - Ա.Բ.) պահանջների համար»⁴³:

Մանդատային իշխանության այդ քաղաքականության մասին են վկայում հետևյալ փաստերը.

1. Սանջաքում կառավարական տեղական մարմիններում ղեկավար պաշտոնները ճնշող մեծամասնությանը գտնվում էին թուրքերի ձեռքում: Մարսել Օմեն, հիմնվելով Սիրիայի ներքին գործերի մինիստրության վիճակագրական տվյալների վրա, գրում է, որ «Մուհաֆազայի (Ալեքսանդրետի Սանջաքի) թուրքերը ներկայացնում են բնակչության միայն 23%-ը, մինչդեռ զբաղեցնում են պետական պաշտոնների 65%-ը»⁴⁴:

2. Ալեքսանդրետի Սանջաքում հաճախ կատարվում էին տերիտորիալ փոփոխություններ ու զիջումներ ի վնաս արաբների: Այսպես, 1921 թ. սեպտեմբերի 21-ի հրամանագրով բարձր-կոմիսարը Սանջաքից անջատեց մեկ տարի առաջ նրան կցված

Հարիմ-Ջիսր-ալ-Շուդուրի կազան և երեք նահիեներ, որոնք բնակեցված էին արաբներով ու հայերով: 1926 թ. մայիսի 30-ի Անկարայի կոնվեցիայով և 1930 թ. հունիսի 3-ին նորից տերիտորիալ և ստրատեգիական բնույթի զիջումներ արվեցին Թուրքիային:

3. Դպրոցական-ուսումնական և մշակութային ասպարեզներում Սանջաքի թուրքական փոքրամասնությունը միշտ արժանանում էր «հատուկ ուշադրության» և նրան տրվում էին բնակչության համապատասխան տոկոսից ավելի շատ բյուջետային հատկացումներ, ի վնաս արաբների ու հայերի:

Այսպես, «Ալեքսանդրետի պաշտպանության կոմիտեի» տվյալներով⁴⁵ 1935-36 ուսումնական տարում Սանջաքի 63 պետական դպրոցներից 35-ը թուրքական դպրոցներ էին: Այս թվերը հաստատվում են նաև մանդատային իշխանությունների հրապարակած պաշտոնական տվյալներով⁴⁶, որոնց համաձայն 1937 թ Ալեքսանդրետի Սանջաքում գործող պետական դպրոցների պատկերը եղել է հետևյալը.

Թուրքական 33 դպրոցներ՝ 3406 աշակերտներով.

արաբական 27 դպրոցներ՝ 2534 աշակերտներով.

հայկական 10 դպրոցներ՝ 518 աշակերտներով:

Եթե աշակերտական տեղերի բաշխումը կատարվեր հավասարության սկզբունքի հիման վրա՝ ըստ ազգաբնակչության թվի, ապա արաբ աշակերտներին պետք է հատկացվեր շուրջ 7000 տեղ, հայ աշակերտներին՝ 2500 տեղ: Չ.ալ-Արսուդին արդար կերպով բողոքելով այս խտրականության դեմ, գրում է. «Ամուքի արաբական շրջանի մեջ կար միայն մեկ նախակրթարան, միայն մեկ ուսուցչով, երբ շրջանի (արաբ) բնակչությունը կազմում էր 24.000 մարդ»⁴⁷:

Ուսման ասպարեզում մանդատային իշխանությունների թուրքանպաստող քաղաքականության հետևանքով առաջացած բացը հայ և արաբ համայնքները լրացնում էին իրենց սեփական միջոցներով՝ բացելով ազգային-համայնքային մասնավոր դպրոցներ: Այսպես, 1937 թվականին Ալեքսանդրետի Սանջաքի հայերը իրենց միջոցներով պահում էին 34 ազգային վարժարաններ՝ 3378 աշակերտներով, 104 ուսուցիչներով⁴⁸: Հայերը պահում էին նաև մի քանի տասնյակ մանկապարտեզներ⁴⁹: Կային 7 արաբական մասնավոր դպրոցներ՝ շուրջ 650 աշակերտներով: Թուրքական ոչ մի մասնավոր դպրոց չկար⁵⁰: Շրջանում գործում էին նաև օտար

դպրոցներ. 1936 թ. կային 33 այդպիսի դպրոցներ, որոնցից 21-ը ֆրանսիական՝ 1796 աշակերտներով⁵¹: Հատկանշական է, որ 1937 թ. Ալեքսանդրետի Մանջաքի 13.342 սովորողների ավելի քան 33 տոկոսը՝ մոտ 4.500 աշակերտ (պետական, ազգային-համայնքային և օտար դպրոցներում) հայ երեխաներ էին, երբ շրջանի ազգաբնակչության 18 տոկոսն էին կազմում հայերը: Պետության ծախսերով պահվող բոլոր թուրքական դպրոցներում ուսուցումը տարվում էր ամբողջովին թուրքերեն, Անկարայից ուղարկված դասագրքերով ու ծրագրով: Բացահայտ կերպով արհամարհելով սիրիական պետական ուսումնական ծրագրի պահանջները, թուրքական դպրոցների ղեկավարները արգելում էին արաբերենի դասավանդումը: Նույնիսկ պաշտոնական աղբյուրները ընդունում են այդ և գրում. «Արաբերեն լեզվի դասավանդումը դադարեցվեց թուրքերեն լեզվով տարվող դպրոցներում, քանի որ բավականին ուժեղ դիմադրություն ցուցաբերվեց արաբերենի լրացուցիչ դասընթացների դեմ»⁵²:

Ուսման ասպարեզում ֆրանսիացիների թուրքանպաստ քաղաքականության մասին խոսում են նաև հենց ֆրանսիացի հեղինակները: Այսպես, Մ.Օմեն գրում է. «Նրանց (թուրքերի) դպրոցները շատ ավելի էին արաբականներից և հատկապես Անտոիքում կային թուրքական 4 նախակրթարաններ, բացի տղաների և աղջիկների լիցեյներից՝ արաբական երկու փոքր դպրոցի և 2 վեցամյա դասընթացների դիմաց»⁵³:

Պոլ դյու Վեուն հայտնում է, որ Անտիոքի լիցեյի նոր շենքի կառուցման համար ծախսվել է Մանջաքի ժողկրթության ամբողջ մեկ տարվա բյուջեին հավասար գումար: Նույն լիցեյի համար մասնագետներ էին պատրաստվում Թուրքիայի բուհերում և «այդ լիցեյում թուրքերենի ուսուցումը հավասար էր Ստամբուլի լիցեյներում տրվող ուսուցման»: Նույն հեղինակը հայտնում է, որ ամեն տարի սանջաքքի 12 ուսանողի տրվում էր պետական կրթական թոշակ, որոնցից 8-ը՝ թուրքերի, 4-ը՝ արաբների. իսկ ոչ մի հայ ուսանողի կրթաթոշակ չէր տրվում: Դյու Վեուն շեշտում է նաև, որ Ֆրանսիան նպաստում էր թուրքական ազդեցության տարածմանը Մանջաքում՝ հեշտացնելով թուրք երեխաների մեկնումը դեպի Անատոլիայի դպրոցները: Դրա նպատակն էր Մանջաքում թուրք-շովինիստական-անջատողական շարժման համար ակտիվ գործիչներ պատրաստել: 1936-ին Թուրքիայի բուհերում հաշվվում էր սանջաքքի թուրք 65 թոշակառու ուսանող (որոնցից 13-ը

զինվորական դպրոցներում)⁵⁴:

Անկարայի կրթական բոլոր բարենորոգումները (տառերի փոփոխումը և այլն) հենց նույն տարին կիրառվում էին Սանջաքի թուրքական դպրոցներում: Չ. ալ-Արսուզին հայտնում է, որ «թուրք աշակերտները ամեն տարի մասնակցում էին թուրքական հանրապետության տոներին: ...Թուրքիան ու Ֆրանսիան ապահովում էին հարյուրավոր սովորողների ծախսերը Թուրքիայի դպրոցներում»⁵⁵:

Սանջաքում ֆրանսիացիների թուրքանպաստ քաղաքականությունը արտահայտվում էր նաև մեկ ուրիշ կարևոր բնագավառում: Այսպես, ֆրանսիական մանդատային իշխանությունները, հակառակ իրենց բուրժուա-դեմոկրատական և աշխարհիկ սկզբունքներին, Սանջաքում (ինչպես և Սիրիայում) պահպանեցին և խորացրին օսմանյան տիրապետությունից ժառանգած ֆեոդալական ազգային-դավանական համայնքների՝ «միլլետ»-ների իրավական վիճակը: Այսպես, արաբական մեծամասնությունը բաժանվեց արաբ-ալավի, արաբ-սուննի, արաբ-հույն ուղղափառ, հույն-կաթոլիկ, մարոնի, ասորի, քաղղեացի, բողոքական և այլ «համայնքների»: Իսկ բնակչության փոքրամասնությունը (23%) կազմող թուրքերին միացնելով թուրքմենների, թրքացած կամ թրքախոս ուրիշ տարրերի հետ ստեղծվեց «թուրք ցեղին պատկանող բնակիչների»⁵⁶ կամ «թուրքերի» միասնական «համայնքը» որին տրվեց իրավական ինքնուրույն և առանձնաշնորհյալ գոյավիճակ:

Հայերին բաժանեցին հայ-գրիգորյան (առաքելական), հայկաթոլիկ, հայ-լատին, հայ-բողոքական «համայնքների» ընդ որում, բացի առաքելականներից, մնացած «համայնքները» պաշտոնական վիճակագրական տվյալներում հայ չէին հաշվվում և չէին մտցվում հայերի թվի մեջ: Այս ձևով, արաբների և հայերի իրական թվի արհեստական նվազեցումով «թուրք ցեղին պատկանող բնակիչների» նորաստեղծ «համայնքը» դարձնում էին Սանջաքի ամենախոշոր միաձույլ փոքրամասնությունը: Դա որպես «օրինական հիմք» պետք է ծառայեր Սիրիայի անբաժան այս մարզին՝ Սանջաքին պարտադրելու միայն թուրքերին նպաստավոր այն «հատուկ ռեժիմը», որը ռոնակոխ էր անում Սանջաքի արաբ և հայ բնակիչների հավասարության իրավունքները և խոչընդոտում Սիրիայի միասնականությանն ու անկախությանը:

Այսպես, 1936 թ. մարդահամարի պաշտոնական տվյալնե-

րում⁵⁷ Սանջաքի 225.000 բնակչությունը բաժանվում էր ազգային-դավանական հետևյալ խմբերի:

թուրքեր - 85.242-բնակչության 38%-ը

ալավի-արաբներ - 62.026- բնակչության 27%-ը

սուննի-արաբներ - 22.461-բնակչության 10%-ը

հայեր - 28.857 բնակչության 13%-ը

հուն ուղղափառ և այլ քրիստոն. - 21.474- բնակչության 9,5%-ը

քրդեր - 4.891-բնակչության 2% -ը

չերքեզներ - 954- բնակչության 0,5%-ը:

Ինչպես տեսնում ենք «թուրքերի» համայնքը ներկայացնում էր որպես Սանջաքի ազգաբնակչության համեմատաբար ամենախոշոր խումբը և այդ կատարվում էր արաբ ազգաբնակչության քաղաքական դերն ու կշիռը նվազեցնելու համար, որի ազգային կուռ միասնություն լինելը անուղղակի կերպով ընդունում են նաև մանդատային իշխանությունները. «Սանջաքի բնակչության մեծամասնությունը, շուրջ 108.000, արաբախոս է»⁵⁸: Շրջանի ազգաբնակչությունը, ըստ լեզվական խմբերի, 1936 թ. պաշտոնական տվյալներում ներկայացնում էր հետևյալ պատկերը. արաբախոսներ՝ բնակչության 47,07%, քրքախոսներ՝ 37,00%, հայախոսներ՝ 13,37%, ուրիշ լեզուներով խոսողներ՝ 2,56%-ը⁵⁹:

Սանջաքի «թուրք համայնքը» կազմված էր փաստորեն բուն (օսմանցի) թուրքերից, թուրքմեններից և քրքացած կամ քրքախոս արաբներից և այլ ազգության մարդկանցից: Թուրքմենները հանդիսանում են այդ «համայնքի» մի զգալի մասը, շուրջ 25%-ը (մոտ 20.000 մարդ). նրանք ապրում են Ամուքի հարթավայրի արևելյան մասում՝ Կարա-սուի հովտում և Ամանոսյան լեռներում՝ մինչև Հաջիլեր (և սահմանից հյուսիս), ինչպես նաև Քեսապից հարավ՝ Բեհեր-Բուջաք գավառակում⁶⁰: Սանջաքի թուրքմենները խոսում են ոչ թե (օսմանյան) թուրքերեն, այլ թուրքմեներեն: Նրանք ունեն շրջանի թուրքերից տարբեր կացութաձև, կենցաղ ու բարքեր, տարբեր տարագ ու դավանանք (մեծ մասամբ շիիթներ են): Այդ մասին կան բնիկ սանջաքցիների⁶¹ և օտար հեղինակների վկայություններ: Ֆ.Գ.րեյվզը խոսելով Ալեքսանդրետի «թյուրքական» ազգաբնակչության կազմավորման մասին գրում է. «Նրանց նախնիները պետք է համարենք սելջուք, ոչ թե օսմանցիներին, այլ

սելջուկ թուրքմեններին, քանի որ այդ «թյուրքերը» շրջանում հաստատվել են սուլթան Մելիմի կողմից Սիրիայի գրավումից ուղիղ չորս դար առաջ»⁶²: Ս.Հ.Լոնգրիգը հաստատում է, որ «որոշ թվով թյուրքական (թուրքմեն) գյուղեր կան, մասամբ ցեղախմբային կացութաձևով, Սիրիայի հյուսիսային սահմանամերձ շրջաններում»⁶³: Այս մասին կան նաև այլ վկայություններ⁶⁴: Պոլ ժաքոն հաստատում է, որ «Տավրոսի ու Ամանոսի (Սանջաքի - Ա.Բ.) թուրքմենները, շփվելով հայերի ու քրդերի հետ, կրել են էթնիկական խորը այլափոխումներ»⁶⁵: Պոլ դյու Վեուս Սանջաքի «թուրք ցեղին պատկանող բնակիչների» մասին խոսելիս միշտ գործ է ածում «թրքախոսներ» (turcophones) տերմինը⁶⁶: Արդարև, այդ «թրքախոսներ»-ի մեջ կան զգալի թվով արաբներ, չերքեզներ, թուրքմեններ, քրդեր: «Մոտ 20.000 թուրքմեններ, քրդեր Ալեքսանդրետի Սանջաքում խոսում են թուրքերեն»⁶⁷: Սանջաքի «թուրք համայնքի» ոչ-միատարր լինելու մասին են վկայում նաև սիրիական պաշտոնական աղբյուրները⁶⁸: Չեքի ալ-Արսուզին հաստատում է, որ Սանջաքում կային թրքացած արաբներ. «... Սիրիայի մյուս շրջաններից դեպի Անտիոքի-Ալեքսանդրետի շրջանը եկած արաբները սուննի դավանանքի ազդեցության տակ միախառնվում էին սուննի-թուրք պաշտոնատարների հետ և առաջացնում էին թուրքական կորիզ»⁶⁹: Նույնիսկ թուրք հեղինակ Ա.Ֆ.Թյուրքմենը ընդունում է, որ Սանջաքի «թուրքերի» մեկ մասը թրքացած արաբներ են և նրանց անվանում է «արաբների կողմնակից երևելիներ», որոնք իբր թե «արաբականության հետ ոչ մի կապ չունեն, բայց արաբերեն են խոսում»⁷⁰:

Ալեքսանդրետի Սանջաքում թուրքերի թիվն ու կշիռը արհեստականորեն բարձրացնելով, մյուս կողմից մանդատային իշխանությունները պաշտոնական տվյալներում, արաբների թվի նման, հայ ազգաբնակչության թիվն էլ փաստական իրողությունից զգալի չափով ցածր էին ցույց տալիս: 1936-1937 թթ. Սանջաքում ապրում էր ոչ թե շուրջ 29 հազար հայ, ինչպես այդ ցույց էր տրվում պաշտոնական հաղորդագրություններում, այլ ավելի քան 43.000 հայ, որից (մոտավոր թվերով) 10.000 Ալեքսանդրետում, 6.000 Բեյլանում ու շրջակա հայկական գյուղերում, 10.000 Մուսա լեռան գյուղերում, 8.000 Քեսապի շրջանում, 5.000 Կըրըկ-Խանում, 3.000 Ռ-իհանիե ու շրջակայքում, 1000 Անտոնիքում⁷¹: Սանջաքի նախաբնիկներից հանդիսացող հայերի թիվը իսկականից ցածր ցույց տալով, օտար հեղինակները⁷² միաժամանակ փորձում են

հավատացնել, թե իբր Սանջաքի բոլոր հայերը անխտիր «գաղթական են» ու «օտարական»⁷³ և հետևաբար չպետք է զբաղվեն երկրի քաղաքական հարցերով, առավել ևս՝ չպետք է մասնակցեն ազգային ազատագրական պայքարին:

Քաղաքական իրադրությունը Ալեքսանդրետի հնքնավար Սանջաքում՝ ֆրանսիական գաղութային կառավարման դր թուրքերին արտոնություններ տվող «հատուկ ռեժիմի» պայմաններում, պարզ է, որ միշտ պետք է լինել լարված ու խառնակ: Դրությունը ավելի էր բարդանում մի կողմից՝ Սիրիայի կենտրոնական իշխանության Սանջաքում ունեցած սահմանափակ իրավունքների, մյուս կողմից՝ Անկարայից թելադրված հարատև սահմանային խախտումների, զինված ավազակային խառնակչությունների, քաղաքական դավերի և բացահայտ տերիտորիալ ու քաղաքական պահանջների հետևանքով: Մուստաֆա Էմնալը Ադանայում, 1923 թ. մարտի 15-ի իր հրապարակային ելույթում, ակնարկելով Ալեքսանդրետի-Անտիոքի շրջանը, հայտարարել է. «Քառասուն դարերի թուրքական մի տերիտորիա երբեք չի կարող ստրուկ մնալ»⁷⁴:

Խոսելով մանդատի առաջին տարիներին Սանջաքում տիրող քաղաքական դրության մասին, Ս.Լոնգրիզը գրել է. «Անկարայի պատգամախոսները միշտ ակնարկելով Ալեքսանդրետի Սանջաքը, որպես «մեր Էլզաս-Լոթարինգիան», սիրով էին ընդունում այնտեղ թուրք տարրերի կողմից ուղարկված հանրագրերն ու պատվիրակությունները»⁷⁵:

1920-1925 թթ. անընդհատ զինված ներխուժումներ էին տեղի ունենում Թուրքիայից դեպի Սանջաք՝ Կարա-Սուի և Որոնդեսի հովիտները, որտեղ գործում էին Դելի Ահմեդի և Սուբհի Բարաքաթի ղեկավարած «չեթեները»: Ֆրանսիացիների դեմ կովելու պատրվակով, նրանք փաստորեն թալանում ու կոտորում էին շրջանի արաբ, հայ ու թուրք բնակիչներին, կտրում ճամփաները, սպանում անմեղ մարդկանց, ստեղծում խառնակ դրություն, որը նպաստում էր Թուրքիայի կողմից սահմանային խախտումներին: 1924 թ. մարտ-ապրիլ ամիսներին սահմանամերձ Հաջիլեր ավանը մի քանի անգամ ձեռքից-ձեռք անցավ: Հաջորդ երկու տարիներին նույն դրությունը ստեղծվեց Մեյդան-Էքբեզ կայարանում⁷⁶: Դրությունը համեմատաբար հանդարտվեց 1926 թ.

մայիսին, երբ Անկարայում ստորագրվեց «Բարեկամության և բարի-դրացիության» կոնվենցիան:

1926 թ. վերջերին, 1927 թ. սկզբներին «Ալեքսանդրետի Սանջաքը անկախ պետություն» հռչակելու փորձ կատարվեց՝ Անկարայի դրոմամբ ու փոխ-պատվիրակ Պ.Դյուրոյի մեղսակցությամբ: Անջատողական այս շարժումը վիժեցվեց՝ շնորհիվ Սանջաքի ու Սիրիայի հայրենասիրական ուժերի դիմադրության ու աչալրջության, ինչպես և բարձր-կոմիսարի հաշտվողական քաղաքականության⁷⁷: Քաղաքական դրությունը համեմատաբար հանդարտ էր շրջանում մինչև 1934 թ. գարունը, երբ Այնթապի վալիի Սանջաք այցելության շնորհիվ թուրք մուլիմների անջատողական գործունեությունը նոր թափ ստացավ:

Քաղաքական ու ազգամիջյան փոխհարաբերությունները Սանջաքում իրենց արտացոլումն էին գտնում շրջանի քաղաքական խմբավորումների ուղղության ու գործունեության մեջ: Ազգերի Լիգայի կողմից հանրաքվեի համար նշանակված միջազգային հանձնաժողովը 1937 թ. Սանջաքում առանձնացնում էր քաղաքական հետևյալ խմբավորումները⁷⁸. Ազգային Գործունեության Լիգա, Ազգայնական Բլոկ, Քեմալականներ (Հալք-Էվիներ), Սիրիայի Կոմկուսի Սանջաքի կազմակերպություն, Սանջաքյան Միություն և հայկական՝ հնչակյան, ռամկավար-ազատական ու դաշնակցական կազմակերպություններ: Բացի թուրք շովինիստ-ծարահեղներից, մնացած բոլոր խմբավորումները կողմնակից էին Սիրիայի հետ միասնականությունը պահպանելուն և «բացարձակապես մերժում էին Սանջաքի անկախությունը, առավել ևս՝ նրա նույնիսկ քողարկված միացումը Թուրքիային»⁷⁹:

Ազգային Գործունեության Լիգան (Սաբաթ էլ-Ամալ Քաումի), համաարաքական կողմնորոշումով, խմբավորում էր Սանջաքի հիմնականում արաբ-ալավի և որոշ չափով արաբ-սուննի ու քրիստոնյա տարրերին: Լիգան բավական մեծ ազդեցություն և ուժեղ կազմակերպություններ ուներ շրջանի արաբական խոշոր բնակավայրերում: Նա ակումբներ ուներ Անտիոք. Ալեքսանդրետ, Սուեյդիե քաղաքներում: 1930-1938 թթ. Սանջաքում Լիգայի ղեկավարն էր Ջեքի ալ-Արսուզին՝ Սորբոնի համալսարանի շրջանավարտ: Լիգան Անտիոքում 1937-1938 թթ. հրատարակում էր «Ալ-Ուրուբա» թերթը: Այն անվերապահորեն պաշտպանում էր

Սիրիայի լիակատար անկախությունը, Մանջաքը սիրիական պետության կազմում պահպանելու պահանջը: Սակայն, դրսևորելով համա-արաբական շովինիստական ձգտումներ, ալյաներժություն և որոշ գավառայնություն, Լիզան խուսափում էր բուրլայիստների, կոմունիստների և ուրիշ հայրենասիրական խմբավորումների հետ միասնական ճակատով հանդես գալուց, այդ պայքարից վանում էր քրիստոնյաներին ու հայերին³⁰, չնայած Լիզայի ղեկավարության մեջ, բացի մահմեդականներից (Արսուզի, Չախխուր, Չարքա, Ֆաուզի) կային նաև քրիստոնյաներ (Նախլե Ուարդ, Նեղիմ Ուարդ, Օղետ Աղիբ) և մեկ հայ՝ բժիշկ Գեղարդ Մաթոսյանը³¹: Տազնապալի օրերին միայն, Մանջաքի գոյությանը սպառնացող թուրքական վտանգի պայմաններում, Լիզան հարկադրված պայքարի միասնական ճակատի մեջ մտավ հայրենասիրական մյուս խմբավորումների հետ, հանուն արաբական Մանջաքի պաշտպանության³²: Լիզայի ազդեցության ենթակա էր «Հայրենիքի հետախույզներ» (Քեշշեֆ Էլ-Ուաթան) երիտ-մարզական կազմակերպությունը, որի հակակոմունիստ ղեկավար Մոհամեդ Ալի ալ-Չարքան ավելի շուտ նեղ շովինիստական, քան հայրենասիրական դաստիարակություն էր տալիս արաբ երիտասարդությանը³³:

Ազգայնական Բլոկը՝ Քուրլաթ ալ-Ուաթանիյե, (որն արտահայտում էր հիմնականում Սիրիայի կալվածատիրական ու բուրժուական վերնախավի ձգտումները և 1930-ական թվականներից սկսած գլխավորում էր ազգային-ազատագրական պայքարը Սիրիայում) Մանջաքում ուներ համեմատաբար թույլ ազդեցություն և փոքրաթիվ հետևորդներ, գլխավորապես սուննի-արաբներից³⁴: Քուրլայի թուլությունը Մանջաքում պետք է բացատրել Մանջաքի արաբական քաղաքական կյանքում Ազգային Գործունեության Լիզայի գրաված իշխող դիրքով: Արդարև, Լիզան գործնականում արտահայտում էր շրջանի արաբ բնակչության մեծամասնության շահերն ու իղձերը և հակառակ իր համաարաբական սկզբունքների, հաճախ վարում էր նեղ գավառայնության քաղաքական գիծ՝ տեղի արաբների շահերը պաշտպանելու պատրվակով հակադրվելով Դամասկոսի կամ Հալեպի իբր թե միայն սուննի արաբների շահերը պաշտպանող բուրլայիստ ղեկավարության համասիրիական քաղաքական միջոցառումներին:

«Մանջաքյան Միություն» բլոկը կազմավորվեց 1937 թ. հիմնականում շրջանի ոչ-թուրք, տարբեր համայնքների

ներկայացուցիչներից: Հիշյալ Միությունը ընդունում էր Ազգերի Լիգայի խորհրդի կողմից 1937 թ. մայիսի 27-ին հաստատված Մանջաքի նոր Ստատուսով ստեղծված դրությունը, որը շրջանին տալիս էր «առանձին քաղաքական միավորի» յուրահատուկ իրավիճակ՝ Սիրիայի կազմի մեջ:

Մանջաքի հայերի շրջանում գործում էին հնչակյան, ռամկավար-ազատական և դաշնակցական կուսակցությունների տեղական կազմակերպությունները:

Դեռ 1890 թ. հնչակյան գործիչ Աղասիի նախաձեռնությամբ Մոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության կազմակերպություններ էին ստեղծվել Մուսա-լեռան, Քեսապի, Անտիոքի ու Ալեքսանդրետի հայերի շրջանում⁵⁵: Հաջորդ տասնամյակներում առաջացան նաև դաշնակցական և ռամկավար կուսակցական կազմակերպություններ, որոնք 1921 թ. հետո ուրիշ տեղերից տեղափոխված հայերի նոր խմբերի կուսակցականներով համալրվելով՝ ծավալեցին ազգային-քաղաքական զգալի աշխատանք: Բացի մի քանի արկածախնդիր անհատ ղեկավարներից ու «աղաներից», Մանջաքի հայ ազգաբնակչության մեծամասնությունը և հայ քաղաքական-հասարակական խմբավորումները Մանջաքում ընդհանրապես տարել են սիրիական հայրենիքի հետ միասնության, Սիրիայի անկախության պայքարին համակիր քաղաքական գիծ: 1936 թ. Հալեպում ստեղծված «Սուրիահայ Ժողովրդական ճակատը» կոմիտեներ ուներ Մանջաքի բոլոր հայաբնակ վայրերում: Նույնպիսի հայրենասիրական գործունեություն էին ծավալել Մանջաքում «Հայաստանի Օգնության Կոմիտեները» (ՀՕԿ), Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղերը և նրանց ենթակա երիտասարդական-մշակութային միությունները: Մանջաքի հայության քաղաքական ճիշտ դիրքավորման մասին վկայում են նաև արաբական և օտար աղբյուրները: Այսպես, Սիրիայի ականավոր քաղաքական գործիչ՝ դոկտոր Ա.Շահբանդարը Կահիրեի հայ լրագրողներին տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է. «Ալեքսանդրետի Մանջաքի 35.000 հայերը իրենց դրսևորեցին որպես գերազանցորեն լավ սիրիացիներ: Արաբների հետ նրանց հարաբերությունները միշտ էլ եղել են հիանալի, իսկ նրանց սքանչելի դիրքավորումը Ալեքսանդրետի կոնֆլիկտի այս օրերին ավելի ամրապնդեց այդ հարաբերությունները»⁵⁶: Դամասկոսի «Էքո դը Սիրի» թերթը գրել է. «Մանջաքի հայերը հանդես եկան որպես հիանալի և լոյալ

սիրիական քաղաքացիներ: Սանջաքցի հայը համերաշխվել, միաձուլվել է արաբների հետ որպես ապացույց հավատարմության՝ հանդեպ իր նոր երկրի և ի նշան երախտագիտության՝ հանդեպ արաբների, որոնց հետ նա եղբայրացել է»⁸⁷: Դամասկոսի «Ալ-Այյամ» թերթը, դրվատելով Ալեքսանդրետի, Անտիոքի ու Հալեպի հայերի «ազնվագույն դիրքավորումը Սանջաքի պաշտպանության գործում, հայտնում է, որ Սանջաքի հայերը բողոքի հեռագիր են ուղարկել Ազգերի Լիգա՝ արտահայտելով իրենց ընդվզումը սանջաքի գործերին Թուրքիայի որևէ միջամտության դեմ, որովհետև չեն մոռացել 1915-1919 թթ. հայերի նկատմամբ թուրքերի կատարած վայրագությունները»⁸⁸: Մ.Լոնգրիզը գրում է. «Ելնելով հայ-թուրքական նախկին հարաբերություններից, հայ-արաբական համերաշխությունը Սանջաքում հաստատուն էր»⁸⁹:

Սանջաքի արաբ և հայ ամենաառաջադիմական երիտասարդությունը գտնվում էր հակախմայերիալիստական ու անկախության պայքարի առաջին գծում: Սիրիայի Կոմունիստ Կուսակցության շարքերում: Դեռևս 1925-1926 թթ. մարքսիստական երիտասարդական խմբակներ էին ստեղծվել Մուսա-լեռան Յոզուն-Օլուք գյուղում և Ալեքսանդրետում: 1928-1930 թթ. այդ խմբակները դառնում են կոմունիստական բջիջներ և կապ հաստատաում Սիրիայի կոմկուսի կենտրոնի հետ: Շարժման մեջ ընդգրկվում են նաև արաբ բանվորներ ու աշխատողներ: 1930 թ. կոմբջիջ է ստեղծվում նաև Անտիոքում: 1932 թ. սկսած եռանդուն պայքար է ծավալում Ալեքսանդրետի կազմակերպությունը: 1935-36 թթ. նոր թափ է ստանում կոմունիստների գործունեությունը Սանջաքում: Կոմունիստների և քուլալիստների համատեղ ջանքերով Սանջաքի հայրենասեր զանգվածները մասնակցում են Սիրիայի 1936 թ. հունվար-փետրվար ամիսների քաղաքական ընդհանուր գործադուլին: Ֆրանսիայում հակաֆաշիստական Ժողովրդական ճակատի հաղթանակի հետևանքով Սիրիայում ձեռք բերված դեմոկրատական զգալի ազատությունների պայմաններում՝ Կոմկուսակցությունը անցնում է բացահայտ բուռն գործունեության՝ հատկապես 1936-1939 թթ. Սիրիայի անկախության ու Սանջաքի պաշտպանության պայքարի օրերին: Նույնիսկ բուրժուական հեղինակ Լոնգրիզը խոստովանում է, որ «կոմունիստական կազմակերպությունը ցույց տվեց իր բարձր կազմակերպվածությունը և պատշաճ կերպով պայքարեց սիրիական դատի համար Ալեքսանդրետում»⁹⁰:

Մանջաքի կոմուխստների հայրենամվեր գործունեության անառարկելի ապացույցն է այն, որ զորք մտցնելով Մանջաք, Անկարայի շրջանները առաջին և ամենաուժեղ հարվածը հասցրեցին կոմունիստներին, ձերբակալելով բոլոր աչքի ընկնող գործիչներին ու փակելով նրանց ակումբը⁹¹:

Մանջաքի թուրք ազգաբնակչության շրջանում կային ծայրահեղ քեմալականների և «պրո-սիրիական ավտոնոմիստների» խմբավորումներ: Վերջիններս կողմնակից էին Մանջաքի ինքնավարությանը Սիրիայի կազմում: Նրանց ղեկավարներն էին Սիրիայի նախկին պրեզիդենտ Մուբիի բեկ Բարաքաթը, ինչպես և նրա ու Ադալիների, Քուսեյրիզադեների, Մուզարբեսների գերդաստանների երևելիները: Մանջաքի թուրքերի մեծամասնությունը համակիր էր այս խմբավորման քաղաքական գծին⁹²: Սակայն խմբավորումը չկարողացավ վճռական դեր խաղալ թուրք համայնքի քաղաքական կյանքում, որովհետև նրա վերնախավը, վարելով «թայֆայական» (գերդաստանների) նեղ շահերին համապատասխանող իրարամերժ ու երերուն քաղաքականություն, հետևաբար լինելով անկազմակերպ, չկարողացավ իր հետևից տանել շրջանի թուրք զանգվածներին:

Այս վերջինների ազգայնական զգացմունքների չարաշահման վրա էր հիմնված ծայրահեղների («Հալք-Էվի»-ների՝ «Ժողովրդի տներ») խմբավորման ողջ գործունեությունը: Թուրք ծայրահեղների գաղտնի կամ կիսալեզալ կազմակերպությունները Մանջաքում ստեղծվել էին տակավին 1920-ական թվականներից: 1930 Անտիոքում գործում էր ֆաշիստական տիպի «Երիտ-սպորտ ակումբը»: 1936 թ. Անտիոքում պաշտոնապես բացվեց «Հալք-Էվի», որը դարձավ «ահաբեկ և խառնակիչ աշխատանքի գլխավոր շտաբը» Մանջաքում⁹³: «Հալք-Էվիներ» և «Հաթայի պաշտպանության գաղտնի ընկերության» մասնաճյուղեր բացվեցին Ալեքսանդրետում, Քուսեյրում, Ամուքում և այլուր: Հալք-Էվին 1937-1938 թթ. հանրաքվե-ընտրությունների ժամանակ մանդատային իշխանության կողմից ճանաչվեց որպես Մանջաքի թուրքերի քաղաքական շահերի ներկայացուցիչ⁹⁴:

Մանջաքի թուրք ծայրահեղները պահանջում էին շրջանի անջատումը Սիրիայից կամ Մանջաքի ուղղակի կցումը Թուրքիային: Իրենց նպատակին հասնելու համար նրանք դիմում էին ամեն տեսակի միջոցների: Լավ կազմակերպված այս խմբավորման հաջողությանը սատարում էին քեմալականներին

հանգամանքները, թե՛ արտաքին գործունեքը հատկապես: Անունով «Ժողովրդահանրապետական», սակայն էությամբ շովինիստական ու պանթյուրքական լոզունգներով ու պրոպագանդով, նրանք նվաճում էին շրջանի թուրք զանգվածներին, հատկապես երիտասարդությանը: Ֆրանսիացիների կողմից անտեսված թուրք երևելիները նույնպես ծայրահեղների կողմն էին: «Անհոգ վարչությունը, - նշում է Էլի Բարբարոն, - եթե անգամ չէր քաջալերում, ապա թույլ էր տալիս ծայրահեղների գրգռիչ գործունեությունը Սանջաբում»⁵⁵: Ամեն տարի հարյուրավոր թուրքեր Թուրքիայից անարգել անցնում էին Սանջաբ զանազան պատրվակներով: Նրանցից շատերը մնում էին շրջանում և համալրում մոլի գործակալների շարքերը: Դյու Վեուն գրում է. «Ֆրանսիան ոչ մի պատասխան միջոցի չլիմեց, այլև, հաճոյանալու համար, ավելի լայնացրեց այն ուղին, որը հենց ինքն էր բացել թուրքերի համար»⁵⁶: Անտիոքի «Ենի Գյուն» թերթը ֆինանսավորում էր ոչ միայն Անկարայի, այլև Առանցքի երկրների կողմից: Թուրք առավել ազգայնամոլ հեղինակների երկերը, թուրքական թերթերը անսահմանափակ քանակությամբ ստացվում և անարգել տարածվում էին Սանջաբի թուրքերի ու ոչ-թուրքերի շրջանում: Թուրքական ռադիոյի ամենօրյա, ամենժամյա հակասիրիական, հակաֆրանսիական, հակահայկական գրգռիչ հաղորդումները անարգել տարածվում ու գիշեր-ցերեկ ունկնդրվում էին Սանջաբի բոլոր բնակավայրերի հրապարակներում, գրոսավայրերում, սրճարաններում, հավաքույթներում՝ շնորհիվ Սանջաբի ծայրահեղների ջանքերի: Իշխանությունները չէին պայքարում այդ քայքայիչ ու ազդու զենքի դեմ: Թուրքական գրավոր թե՛ բանավոր պրոպագանդի հիմնական միտքը հետևյալն էր. Սանջաբը թուրքական հող է՝ թուրք բնակչության ճնշող մեծամասնությամբ, թուրքերին այնտեղ ճնշում, հալածում են ֆրանսիացիները, արաբները... հայերը. հետևաբար «թուրքական այդ հողը թուրք արյունակից եղբայրներին պետք է վերադարձնել մայր-հայրենիքի գիրկը»⁵⁷:

Թուրք ծայրահեղների գործունեությունը Սանջաբում փաստորեն հանդիսանում էր Անկարայի կոպիտ միջամտություն հարևան երկրի ներքին գործերին: Արդարև, շովինստների ներքին քայքայիչ ու անջատողական շարժմանը զուգահեռ, Անկարայի կառավարությունը, ինչպես նշվեց, 1921 թ. համաձայնագրից հետո ևս շարունակ քաղաքական ու հողային պահանջներ էր

ներկայացնում Սանջաքի նկատմամբ: Այսպիսով, Ալեքսանդրետի Սանջաքում Ֆրանսիայի կողմից «թուրք ցեղին պատկանող բնակիչների» համար ստեղծված առանձնաշնորհյալ պայմանների նպաստավոր իրադրությունից օգտվելով՝ Թուրքիան հետևողական և սիստեմատիկ կերպով սկսել էր նախապատրաստել իր նվաճողական ծրագրերից առաջինը՝ Ալեքսանդրետի-Անտիոքի շրջանի կցումը: Վերը խոսվեց մինչև 1930-ական թվականների սկիզբը տեղի ունեցած իրադարձությունների մասին: Անկարայի քաղաքական ու դիվանագիտական գործողություններին զուգընթաց՝ թուրքական մամուլն ու ռադիոն շարունակ աղմկում էին «Թուրքական Էլզաս-Լոթարինգիայի», «բաժանված արյունակից եղբայրներին», «Միջերկրականի գոհարը մայր-հայրենիքին միացնելու» մասին²⁶:

«Ալեքսանդրետի հարցը» քաղաքական օրակարգի հարց դարձավ 1934 թ.: Նույն տարվա ապրիլի 27-ին, Այնթապի վալին (նահանգապետը) եկել էր Հալեպ՝ սահմանային հարցերի շուրջ բանակցությունների համար: Պետական անվտանգության բարձրաստիճան պաշտոնյաների կարծիքը արհամարհելով՝ թուրքասեր փոխպատվիրակ Դյուրիոն փութաց Հալեպ և վալիին հրավիրեց այցելել նաև Սանջաք: Անտիոքի թուրք ծայրահեղները և անջատողականները ծրագրված ձևով, Դյուրիոյի մեղավոր թողովությամբ, «հաղթական ընդունելություն» կազմակերպեցին վալիին. այն վերածվեց հակասիրիական, անջատողական բացահայտ ելույթի:

«Աթաթյո՛ւրք, փրկի՛ր մեզ» կոչերը հաճախ զուգորդվում էին հակաարաբական, հակահայկական բացականչություններով: Յույցը վերածվեց խառնարկության և նույնիսկ որոշ տեղերում հանգեց թուրք-արաբական արյունալի ընդհարումների: Մայիսի 5-ին ու 6-ին անջատողականների գործողությունները դատապարտող ժողովրդական հակացույցեր տեղի ունեցան մեծամասնությամբ արաբներով ու հայերով բնակեցված բոլոր քաղաքներում ու ավաններում, ինչպես նաև Հաջիլերի թուրքմենական կենտրոնում: Հաջորդ օրերին դարձյալ արյունալի ընդհարումներ տեղի ունեցան: Համաժողովրդական բողոքի շարժումը տարածվեց ամբողջ երկրով մեկ: Սիրիական մամուլն ու հասարակական կարծիքը Ֆրանսիայից պահանջեցին պարզորոշ դարձնել իր մտադրու-թյունները «Ալեքսանդրետի հարցի» նկատմամբ: Բարձր կոմիսար կոմս դը Մարտելը հարկ համարեց հրապարակել պաշտոնական

հաղորդագրություն⁹⁹, որը կտրականապես հերքում էր «Մանջաքի սահմանների փոփոխման» կամ «Թուրքիային կցելու» մասին շրջող գրույցները: Այդ հաղորդագրությունը նորից ոտքի հանեց թուրք ծայրահեղներին, որոնք Անտիոքում հաճախակի հակապետական ցույցեր ու խանոնակություններ էին ստեղծում՝ պահանջելով շրջանը միացնել Թուրքիային:

1935 թ. մարտ ամսին, Անկարայում գտնվելու առիթով, բարձր կոմիսար ղը Մարտելը դարձյալ անհրաժեշտ գտավ հայտարարություն անել թուրք-սիրիական սահմանների անձեռնմխելիության մասին: Անջատողականները վերստին գործի անցան Մանջաքում, ցույցերից հետո բողոքի հեռագիր ուղարկելով Անկարա՝ Աթաթյուրքին: Վերջապես, 1935 թ. նոյեմբերի 1-ին, թուրքական մեջլիսի իր բացման ճառում, Զ.Աթաթյուրքը հայտարարեց, որ «Անտիոքն ու Ալեքսանդրետը Թուրքիայի ազգականներն են»¹⁰⁰: Այդ հայտարարությանը հետևեց թուրքական մամուլի ու ռադիոյի հակաֆրանսիական, հակասիրիական կատաղի արշավ: Ֆրանսիային մեղադրում էին 1921 թ. և 1926 թ. պայմանագրերը չհարգելու, Մանջաքի թուրքերին «ճնշելու», «հալածելու» մեջ: Անվերջ ակնարկում էին Ալեքսանդրետի Մանջաքը բռնի ուժով գրավելու մասին: Երբ 1936 թ. սկզբներին ամբողջ Սիրիայում սկսվեց 50-օրյա քաղաքական ընդհանուր գործադուլը, Անկարան սկսեց ուշի-ուշով հետևել Սիրիայում քաղաքական դեպքերի լուրջ և գահավեժ զարգացմանը: Այն օրը, երբ ստորագրվեց ֆրանս-սիրիական դաշնագիրը (1936 թ. սեպտեմբերի 9), թուրքական կառավարությունը գտավ, որ արդեն հասել է հարմարագույն պահը՝ միջազգային դիվանագիտության սեղանին դնելու «Ալեքսանդրետի հարցը»:

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱՔԻ ՀԱՐՅԸ
ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅՈՒՄ**

(1936թ. սեպտեմբեր- 1938թ. սեպտեմբեր)

«Ալեքսանդրետի հարցը» Ազգերի Լիգայի ըննարկմանը հանձնվեց 1936թ. վերջերին, սակայն միջազգային դիվանագիտության համար այն գոյություն է ունեցել արդեն առաջին համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին: Արդարև, այդ հարցի առաջացման սաղմերը գտնվում էին 1921 թ. Անկարայի համաձայնագրի ու հետագա դիվանագիտական ակտերի հիմքում:

Ալեքսանդրետի հարցը դիվանագիտական անկատար ու թերի կարգավորումների անխուսափելի հետևանքներից է: 1921 թ. Անկարայի և 1923 թ. Լոզանի պայմանագրերը հղի էին քաղաքական կնճռոտ խնդիրներով: Դեռևս 1921 թ. նոյեմբերի սկզբին ֆրանսիացի սեմատոր Ֆրուադվոն «Լ'Ազի ֆրանսեզ» հանդեսում գրում էր. «Պարզ երևում է, որ Անկարայի համաձայնագրի միակ նպատակն է թուրքական նոր պահանջների նախապատրաստումը և Ալեքսանդրետի շրջանի լքումը Ֆրանսիայի կողմից»¹:

Անկարայի պայմանագրին նախորդել էր 1921 թ. մարտի 9-ի Լոնդոնի ֆրանս-թուրքական անջատ համաձայնագիրը, ըստ որի թուրքերի պահանջով Ալեքսանդրետի շրջանի համար, որտեղ կար բազմազգ բնակչություն, ստեղծվում էր «վարչական հատուկ ռեժիմ»²:

Անկարայի պայմանագրի 8-րդ հոդվածով Սիրիայի ու Թուրքիայի միջև սահմանագիծը հաստատվում էր հետևյալ ձևով³. «Սահմանագիծը կանցնի Ալեքսանդրետի ծոցի վրա ընտրվելիք մեկ կետից, Փայաս քաղաքից անմիջապես հարավ. այն կուղղվի աստիճանաբար դեպի Մեյդան-էքբեզ» բնակավայրն ու կայարանը թողնելով Սիրիային, հետո մինչև Քիլիս՝ թողնելով այդ քաղաքն ու Քարնաբի գյուղը Թուրքիային, այնուհետև Բաղդադի երկաթգծին զուգահեռ գնալով՝ մինչև Ջեզիրաթ-իբն-Օմար» (Տիգրիսի ափին):

Անկարայի պայմանագրի 7-րդ հոդվածը հատկապես վերաբերում է Ալեքսանդրետի շրջանին: Այդ հոդվածում ասվում է.

«Վարչական հատուկ ռեժիմ կհաստատվի Ալեքսանդրետի շրջանի համար: Այս շրջանի թուրք ցեղին պատկանող բնակիչները կվայելեն բոլոր դյուրությունները իրենց մշակույթի զարգացման համար: Թուրքերեն լեզուն այնտեղ կունենա պաշտոնական բնույթ»: Որպես այդ հողվածի լրացում, կից նամակում և արձանագրությունում խոսվում էր այն մասին, որ շրջանի «թուրքական մեծամասնությամբ գավառները ընդհանրապես կկառավարվեն թուրք ցեղին պատկանող պաշտոնատարների կողմից և այնտեղ կհիմնվեն թուրքական դպրոցներ...»:

Անկարայի համաձայնագրով նախագծված սահմանը (հոդ. 8) հաստատվեց Լոզանի դաշնագրով, որի 3-րդ հոդվածում ասվում է. «Միջերկրականից մինչև Պարսկաստան Թուրքիայի սահմանը հաստատվում է հետևյալ ձևով.

Սիրիայի հետ այն սահմանագիծը, որը հաստատված է 1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական պայմանագրով»:

Ինչ վերաբերում է նույն ակտի 7-րդ հոդվածով նախատեսված «հատուկ ռեժիմին», այդ մասին որևէ խոսք չկար, որովհետև այն արդեն ուժի մեջ էր մտել 1921 թ. հոկտեմբերի 20-ից էլ առաջ՝ բարձր-կոմիսարի 1921 թ. օգոստոսի 8-ի հրամանագրով: Ֆրանսիացի հեղինակներ Գոնթո-Բիրոնը և Լը-Ռևերանը 1924 թ. հրապարակված «Անկարայից Լոզան» գրքում գրում էին. «Շարունակ զիջելով այնպիսի մանրուքներում, որոնք ինքնին համարվում էին անարժեք կամ լոկ ինքնասիրության բավարարումներ, պարոն Ֆրանքլեն Բույոնը չէր նկատել, որ ինքը դուռ էր բացում դեպի Սիրիա թուրքական ներթափանցման շատ ճարպիկ մի ծրագրի կենսագործման համար»⁴:

Բայց մի՞թե դիվանագիտական այդ վավերաթուղթը կարող էր, իսկապես, որպես միջազգային իրավական հիմք ծառայել Ալեքսանդրետի Սանջաքի նկատմամբ Անկարայի հավակնությունների համար: Իհարկե, ո՛չ:

Ինչպես հայտնի է, 1921 թ. ֆրանս-թուրքական պայմանագիրը չէր վավերացվել ո՛չ համապատասխան պառլամենտների և ոչ էլ պետության ղեկավարների կողմից: Հետևաբար, 1921 թ. Անկարայի պայմանագիրը միջազգային իրավական որևէ ուժ չուներ: Իսկ Լոզանի դաշնագրում և Մանդատի խարտիայում որևէ ակնարկ չկա այն «հատուկ ռեժիմի» մասին, որ Անկարայի պայմանագրի 7-րդ հոդվածով նախատեսված էր Ալեքսանդրետի Սանջաքի համար: Հենց իրենք՝ թուրք հեղինակները հաստատում

են, որ այդ «հատուկ ռեժիմը» հաստատված էր 1921 թ. օգոստոսի 8-ին, ֆրանսիական բարձր կոմիսարի հրամանագրով⁵, իսկ Սանջաքի «ինքնավարությունը» փաստորեն ստեղծվել էր դեռևս 1918 թ. նոյեմբերի 27-ի ակտով: Հետևաբար, միակողմանիորեն՝ իր կողմից ստեղծված այդ «հատուկ ռեժիմը» Ֆրանսիան կարող էր և իրավունք ուներ վերացնելու ցանկացած ժամանակ, առանց միջազգային պայմանագրի խախտման:

Հակառակ այս բոլորին, Անկարայի 1921 թ. ֆրանս-թուրքական համաձայնագիրը հանդիսացավ դիվանագիտական այն միակ զենքը, որի շնորհիվ թուրքական կառավարությունը կարողացավ հետևողականորեն «հասունացնել» Ալեքսանդրետի հարցը և միջազգային դիվանագիտական քննարկման ու պայքարի առարկա դարձնել 1936-1939 թվականներին:

1936 թ. ֆրանս-սիրիական դաշնագրի կապակցությամբ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թ.Ռ.Արասը Ստամբուլում մամուլի ներկայացուցիչներին հայտարարել էր, թե թուրքական կառավարությունը սկզբունքորեն շատ գոհ է այդ դաշնագրի ստորագրումից:

Նույն օրերին պրեմիեր-մինիստր Իսմեթ Ինոնյուն առիթ է ստեղծում Սանջաքի հարցը քննարկելու Իրաքի պրեմիեր-մինիստր Նուրի Սաիդի հետ, որը Ժնևի ճանապարհին կանգառավ Ստամբուլում: Իրաքի դեսպան Նաջի Շավքաթը, որը ներկա է լինում այդ տեսակցությանը, հայտնում է, որ Ինոնյուն նախ իր ուրախությունն է արտահայտում ֆրանս-սիրիական դաշնագրի ստորագրման առթիվ, որի շնորհիվ Սիրիան շուտով կնվաճի իր անկախությունը, ինչպես այդ արդեն նվաճել է Իրաքը, հետո ավելացնում է. «Սակայն ես կցանկանայի Ձեր ուշադրությունը հրավիրել Սանջաքի պրոբլեմի վրա, որի վերջնական լուծումը պահանջում են թե՛ Սիրիայի, թե՛ Թուրքիայի շահերը: Մենք հարցը չբարձրացրինք, - ասում է նա, - ֆրանս-սիրիական բանակցությունների ժամանակ, որպեսզի այն բացասաբար չանդրադառնա դրանց ընթացքի վրա: Մենք պատրաստ ենք ուղղակի բանակցություններ վարելու Սիրիայի հետ՝ այդ հարցը լուծելու համար»⁶: Ինոնյուն ցանկություն էր հայտնել, որ սիրիական պատվիրակությունը բանակցությունների համար ժամանի Թուրքիա:

Փարիզից վերադարձող սիրիական պատվիրակությունը

առանց այն էլ որոշել էր անցնել Թուրքիայով և 1936 թ. սեպտեմբերի 22-23-ին մնալով Ստամբուլում, Արասի հետ ընդհանուր ձևով քննարկեց Ալեքսանդրետի հարցը: Թուրքերը բավարարված չէին պատվիրակության ղեկավար Հաշեմ ալ-Աթասիի լակոնիկ այն հայտարարությունից, թե «Ալեքսանդրետի թուրքերը կունենան նույն իրավունքներն ու պարտավորությունները, ինչ որ մենք»⁷:

Թուրքերը, որոնք հույս ունեին Սիրիայի հետ ուղղակի բանակցությունների միջոցով ավելի շուտ և ավելի հեշտ ի նպաստ իրենց լուծել Սանջաքի հարցը, զարմացած էին սիրիական պատվիրակության վերապահությունից ու ուղղակի բանակցություններից խուսափելուց: Պատվիրակությունը ուրիշ կերպ էլ չէր կարող վարվել, որովհետև, ինչպես նշում է Մ.Խաղոպրիին, «Սիրիական պատվիրակությունը փաստորեն ոչ մի լիազորություն չունեի բանակցելու Թուրքիայի հետ, քանի որ նրան նշանակել էին միայն ֆրանս-սիրիական դաշնագրի բանակցությունների համար: Բացի այդ, Սիրիան ղեռնս գտնվում էր ֆրանսիական մանդատի ներքո, հետևաբար Սիրիայի արտաքին հարաբերությունները գտնվում էին բացառապես մանդատային պետության՝ Ֆրանսիայի վերահսկողության տակ⁸: Ն.ալ-Արմանագին պնդելով հանդերձ, որ բոլոր դեպքերում պատվիրակությունը պետք է ծանոթանար թուրքերի կարծիքին և բանակցություններ սկսեր նրանց հետ «փոխանակ հարցը թողնելու ֆրանսիացիների և նրանց քիկունքում՝ անգլիացիների տնօրինությանը»,» մյուս կողմից, ընդունում է, որ Թուրքիան ինչ-որ «թաքուն նպատակից» մղված առաջ քաշեց Ալեքսանդրետի հարցը, երբ Սիրիան «ղեռն լրիվ կերպով չէր թոթափել ֆրանսիական գաղութակալության փոշիները», ոչ էլ ազատագրվել դրա կապանքներից: Հեղինակը եզրակացնում է, որ «Սիրիական կառավարությունը չէր կարող անկախ քաղաքականություն վարել այս լուրջ հարցի լուծման գործում... իր միջազգային (իրավական - Ա.Բ.) դիրքի պատճառով»⁹: Թուրքիայի «թաքուն նպատակն» էր, մեր կարծիքով, Սիրիայի քաղաքական թույլ դիրքից ու դիվանագիտական անփորձությունից օգտվելով, հապշտապ իրեն կցել Սանջաքը:

Փարիզից վերադարձող սիրիական պատվիրակությունը տակավին Հալեպ չէր հասել, երբ 1936 թ. սեպտեմբերի 24-ից սկսվեց թուրքական մամուլի ու ռադիոյի կատաղի հակասիրիական ու հակաֆրանսիական պայքարը¹⁰: Խոսվում էր Սանջաքում ֆրանս-սիրիական «բռնապետության», Սանջաքի «280.000 (!) թուրքերին

վիճակված դառը ճակատագրի» մասին և պահանջվում էր շրջանին տալ անկախություն կամ այն կցել Թուրքիային: Ըստ թուրքական «Այըն Թարիհի» հանդեսի, միայն 1936 թ. դեկտեմբեր ամսին թուրքական մամուլում լույս է տեսել 26 առաջնորդող հոդված՝ նվիրված «Իսթենդերունի և Անթաքիայի հարցին»¹¹: Ֆ.Կատալուչիոն թուրքական մամուլի այդ «արտակարգ արշավը» որակում է որպես «իսկական թղթային ցիկլոն, որի նպատակն էր միջազգային հասարակական կարծիքը նախապատրաստել դիվանագիտական գործողությունների համար»¹²:

«Անկարա» թերթը գրում էր. «Թուրք ազգաբնակչությունը, որը զբաղեցնում է Սանջաքը, արաբների հետ ոչ մի աղերս ու նմանություն չունի, ... նա բոլորովին տարանջատվում է ասիական տիպից (?): Անհրաժեշտ է, որ նա կարողանա հետևել թուրք ազգի վերածնունդի զուգահեռ զարգացմանը»¹³: «Թան» թերթում Ահմեդ Էմին Յալմանը պնդում էր, թե իբր «Սանջաքը, որպես ամբողջովին (?) թուրքերով բնակեցված մարզ, հանդիսանում է թուրքական ազգային տերիտորիայի մասը»... և թե՛ «280.000 թուրքերին պետք է ազատել ճնշման ռեժիմից»¹⁴: «Ուլուս» կիսապաշտոնական թերթը, շարադրելով Սանջաքի հարցի կապակցությամբ Ինոնյուի 1936 թ. դեկտեմբերի 13-ի կատարած հայտարարությունները, գրում էր. «Պրեմիեր-մինիստրը մեկ անգամ ևս պարզաբանեց, որ Սանջաքի հարցը ամենևին թուրք-սիրիական հարց չէ. Սանջաքի հարցը հանդիսանում է թուրքական մի շրջանի բախտի հետ առնչվող և փոխադարձ պայմանագրով իրար հետ կապված կառավարությունների՝ պարզապես Թուրքիայի և Ֆրանսիայի միջև գոյություն ունեցող տարածայնության հարց»¹⁵: Թուրքական պրոպագանդան համառ լուրեր էր տարածում, թե թուրքական բանակը շուտով պետք է ներխուժի Սանջաք: Սանջաքի թուրք ծայրահեղները լուրեր էին տարածում, թե իբր Սանջաքը Թուրքիային «վերադարձնելու» մասին Ֆրանսիայի և Թուրքիայի միջև գաղտնի պայմանավորվածություն գոյություն ունի՝ դեռևս 1921 թվականից:

Սիրիական ու արաբական մամուլը, բուռն կերպով բողոքելով թուրքական մամուլի սադրիչ հակասիրիական ելույթների և անհիմն պնդումների դեմ, ցույց էր տալիս, որ «եթե թուրքական փոքրամասնություն կա Սիրիայի սահմաններից ներս, ապա իրականություն է նաև տասնյակ հազարավոր արաբների ներկայությունը թուրքական տերիտորիայում. այսպես՝ 28.000 արաբներ

ապրում են Քիլիսում, 60.000՝ Կիլիկիայում, 20.000՝ Ուրֆայում, 80.000՝ Մարդին-Դիարբեքիում»¹⁶: «Լ'Ազի Ֆրանսեզ» ամսագիրը «Ալեքսանդրետի հարցը» առաջնորդող հոդվածում գրում էր. «Ալավիները... ժամանակին զբաղեցնում էին Սիրիայի ամբողջ ծովափնյա շրջանը մինչև Կիլիկիայի արևմուտքը: Հետաքրքիր կլիներ, ի միջի այլոց, Սանջաքի թուրքերի վիճակը համեմատել Կիլիկիայի դաշտավայրի ալավիների խոշոր փոքրամասնության վիճակի հետ: Հաստատվում է, որ հակառակ Անկարայի պայմանագրի 6-րդ հոդվածի դրույթների, ...այս ալավիները ենթարկվում են թուրքացման այնպիսի վճռական քաղաքականության, որ երկու ալավիներ վերջերս դատապարտվել են երեք ամսվա բանտարկության այն բանի համար, որ ...Կիլիկիայի գյուղաքաղաքներից մեկում իրար հետ վիճել են արաբերեն լեզվով»¹⁷:

Թուրքական մամուլի նախապատրաստական արշավին անմիջապես հետևեցին դիվանագիտական գործողությունները: Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Արասը 1936 թ. սեպտեմբերի 26-ին Ազգերի Լիգայի խորհրդի 93-րդ նստաշրջանում առաջին անգամ բարձրացրեց «Սանջաքի հարցը» և հույս հայտնեց, որ շրջանի ազգաբնակչությունը «կկարողանա հենց ինքը տնօրինել իր սեփական գործերը»¹⁸, իսկ դեկտեմբերի 8-ի նիստում արդարև նա պահանջեց, որպեսզի Սանջաքը ինքը որոշի իր բախտը: Ֆրանսիայի ներկայացուցիչը հայտարարեց, թե ֆրանս-սիրիական դաշնագրի կնքումով ոչինչ չի փոխվել Ալեքսանդրետի Սանջաքում գործող հատուկ ռեժիմի էության մեջ և կրկնեց ֆրանսիական կառավարության պատրաստականությունը՝ բանակցություններ սկսելու Թուրքիայի հետ՝ Սանջաքի հարցի շուրջը:

Ֆրանսիայի և Թուրքիայի միջև Սանջաքի հարցի քննարկումը դիվանագիտական բանակցությունների միջոցով սկսվեց 1936 թ. հոկտեմբերի 10-ին, երբ Փարիզում Թուրքիայի դեսպան Սուադ Դավազը ֆրանսիական կառավարությանը հանձնեց մի հուշագիր Սանջաքի հարցի վերաբերյալ: Դրանով Թուրքիան պահանջում էր, որ «Ալեքսանդրետի և Անտիոքի շրջանին տրվի անկախություն և նրա հետ կնքվի մի դաշինք», հար և նման ֆրանս-սիրիական դաշինքին»¹⁹:

Մինչ ֆրանսիական կառավարությունը կուսումնասիրեր թուրքական հուշագիրը, 1936 թ. նոյեմբերի 1-ին Քեմալ Աբաթուրբը, թուրքական Ազգային Մեծ ժողովի հինգերորդ գումարման երկրորդ

նստաշրջանի բացման իր ճառում, հատկապես կանգ առնելով Սանջաքի հարցի վրա, հայտարարեց. «Այս օրերին մեր ազգին գիշեր-ցերեկ զբաղեցնող գլխավոր խնդիրը Իսթենդերուն-Անթաքիայի ու շրջակայքի ճակատագրի հարցն է, որոնց իսկական տերը հանդիսանում է հարազատ թուրքը: Մենք հարկադրված ենք մեր ձեռքը վերցնելու այս հարցը լուրջ և հաստատական կերպով»²⁰: Թուրք ղեկավարի այս խոսքերը դաեվիճում ընդունվեցին հավանության բացականություններով, հուղընկայա ծափահարություններով:

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Իվոն Դելբուը, պատասխանելով Թուրքիայի 1936 թ. հոկտեմբերի 10-ի հուշագրին, նոյեմբերի 10-ի պատասխան հուշագրով հայտնում էր, որ ֆրանսիական դաշնագրի նման դաշնագիր կնքել Սանջաքի՝ Սիրիայի մի մասի հետ անհնար է, որովհետև այն հակասում է Մանդատի Ակտին և Ֆրանսիայի ստանձնած միջազգային պարտավորություններին: Ֆրանսիացի մինիստրը մյուս կողմից պատրաստակամություն էր հայտնում Սանջաքի վերաբերյալ ինչ-որ կարգավորման հասնելու նպատակով բանակցություններ սկսել Թուրքիայի հետ, սակայն 1921 թ. Անկարայի համաձայնագրի սահմաններում միայն²¹: 1936 թ. նոյեմբերի 17-ին թուրքական կառավարությունը Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությանը ուղարկեց մի նոր, ավելի մանրամասն հուշագիր²²: Դրանով Թուրքիան ջանում էր իրավական հիմք տալ Սանջաքի նկատմամբ իր հավակնություններին, հատկապես վկայակոչելով Սան-Ռեմոյի 1920 թ. ապրիլի 25-ի կոնֆերանսի որոշումները և 1921 թ. Անկարայի ու 1923 թ. Լոզանի պայմանագրերը, որոնց դրույթների համաձայն՝ իբր թե ֆրանսիական մանդատը չէր տարածվում Ալեքսանդրետի շրջանի վրա, որովհետև «Սիրիա» աշխարհագրական հասկացողությունը այդ ժամանակ դեռևս «ճշգրտված ու պարզորոշված չէր»: Հուշագրում մասնավորապես ասվում էր. «Քանի որ Ֆրանսիան դադարում է Սիրիայի վրա իր գերիշխանությունը գործադրելուց, Ալեքսանդրետի ու Անտիոքի շրջանների վրա Թուրքիայի կողմից պայմանականորեն Ֆրանսիային թողնված գերիշխանության միակ ժառանգորդը կարող է լինել միայն և միայն այդ շրջանների թուրք ազգաբնակչությունը»: Այնուհետև, քննադատության էին ենթարկվում Սանջաքում Ֆրանսիայի ձեռնարկած գործողությունները, ինչպես օրինակ 1930 թ. մայիսին առանց Թուրքիայի գիտության հռչակված Սանջաքի հիմնական կանոնադրությունը և

Միրիայի ու Լիբանանի վրա մանդատի ընդունումը, առանց հիշատակելու Ալեքսանդրետի Սանջաքի հատուկ գոյավիճակը: 1936 թ. նոյեմբերի 27-ին, Թուրքիայի կառավարող ժողովրդա-հանրապետական կուսակցության ղեկավարության նիստում արտաքին գործերի մինիստր Ռ.Արասը զեկուցեց Սանջաքի հարցի շուրջ ֆրանս-սիրիական բանակցությունների ընթացքի մասին: Ժողովը իր դժգոհությունը հայտնեց հարցի կարգավորման դանդաղ ընթացքից և որոշում ընդունեց առավել վճռական միջոցներ ձեռք առնել²³:

1936 թ. դեկտեմբերի 4-ին Անկարան Փարիզ է ուղարկում մի նոր հուշագիր, որով հայտնում է, թե թուրքական կառավարությունը որոշել է Սանջաքի հարցը տանել ԺՆՆ՝ Ազգերի Լիգայի խորհրդի քննարկմանը: Ֆրանսիան էլ տեսնելով, որ ուղղակի բանակցությունների միջոցով համաձայնության եզր գտնելու հիմքեր չկան, նպատակահարմար է գտնում հարցը հանձնել Ազգերի Լիգայի հայեցողությանը²⁴: Եվ 1936 թ. դեկտեմբերի 7-ին Ֆրանսիան պատասխանում է, որ «ինքը միայն օգուտ է տեսնում այն բանում, որ Ալեքսանդրետի հարցը գրանցվի Ազգերի Լիգայի խորհրդի նստաշրջանի օրակարգում²⁵: Դեկտեմբերի 8-ին, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ռ.Արասը հեռագրում է Ազգերի Լիգայի ընդհանուր քարտուղար Ավընուլին, որ թուրքական կառավարությունը, հիմնվելով Լիգայի պակտի 11-րդ և 15-րդ հոդվածների դրույթների վրա, պահանջում է Լիգայի խորհրդի արտակարգ նստաշրջանի օրակարգում մտցնել «Ալեքսանդրետ-Անտիոքի ու շրջակա տերիտորիաների ապագայի վերաբերյալ Թուրքիայի և Ֆրանսիայի միջև գոյություն ունեցող վեճը»: Նույն օրն իսկ Լիգայի ընդհանուր քարտուղարը այդ մասին տեղյակ է պահում ֆրանսիական կառավարությանը, որն իր հերթին համաձայնվում է հարցը քննարկել Լիգայի խորհրդում՝ հետևյալ վերապահությամբ. «Ֆրանսիական կառավարության կարծիքով խնդրո առարկա հարցը չի հանդիսանում ֆրանս-թուրքական ազգային շահերի հակադրությունից բխող վեճ երկու երկրների միջև, այլ պարզապես մի տարակարծություն՝ Լիգայի սկզբունքների համաձայն Լեանտի երկրներում Ֆրանսիայի կենսագործած մանդատի հիմունքների և Թուրքիայի ներկայացրած պահանջների միջև»²⁶:

Եվ այսպես, որոշվեց Ալեքսանդրետի Սանջաքի հարցի քննարկման համար անմիջապես հրավիրել Ազգերի Լիգայի խորհրդի արտակարգ նստաշրջան, որը պետք է քննարկեր նաև իսպանական հարցը:

Մինչ այդ քաղաքական իրադրությունը շիկանում էր Սանջաքի ներսում: Ինչպես նշվեց, Ալեքսանդրետի շրջանը զավթելու նպատակով Թուրքիայի խարդավանքները երբեք չէին դադարել 1923 թ. Ադանայում Քեմալի արած հայտարարությունից ի վեր:

Անկարայի մամուլի ու դիվանագիտության օրգանները ամեն կերպ ոգեշնչում էին քաղաքական հուզումները Ալեքսանդրետի շրջանի թուրք ազգաբնակչության շրջանում: Ահա թե ինչ էր գրում ֆրանսիական «Արտաքին գործեր» հանդեսը. «Այն անկարգություններն ու խռովությունները, որոնք բազմիցս ծագել են Սանջաքի տերիտորիայում, ... գրեթե միշտ հանդիսացել են արդյունքը այն պրոպագանդայի, որի աղբյուրը՝ Անկարան երբեք էլ չի կարող անգիտանալ, ոչ էլ չճանաչել իր գործակալներին»²⁷: Նույն հոդվածում ասվում էր, որ 1936 թ. սեպտեմբերին սիրիական ոստիկանությունը Անտիոքում ձերբակալել էր 25 թուրք քաղաքացիների, որոնք, չնայած իրենց օտարահպատակ լինելուն, հակասիրիական ցույցեր են կազմակերպել «Քեմալական հաղթանակի տոնի առթիվ»: «Լ'Ազի ֆրանսեզ» հանդեսը իր հերթին գրում էր. «Ապրիլ ամսվա առաջին օրերից սկսած Սանջաքի թուրքական շրջաններում շրթայագերծված շարժումը ի նպաստ Սանջաքը ... հանրաքվեի միջոցով Թուրքիային կցելու, առաջացրել է շրջանի շահերը պաշտպանելու համար մի կոմիտե կազմակերպելու ծրագիր, որը առանձին խանդավառությամբ է ընդունվել Սանջաքի թուրք երիտասարդության շրջաններում»²⁸:

Ալեքսանդրետի նկատմամբ թուրքական, գրեթե բացառապես, քաղաքական ու հողային պահանջների և այդ գործում Անկարայի ու Ստամբուլի մամուլի դերի մասին գաղափար կազմելու համար բավական է թերթել 1936 թ. վերջին ամիսների թուրքական մամուլը:

Փարիզում տեղի ունեցող ֆրանս-սիրիական բանակցություններին զուգընթաց՝ դեռևս 1936 թ. ապրիլ ամսից Սանջաքում հրահրված անջատողական շարժումը հուլիսին վերաճել էր հուզումների և «թուրք ժողովրդի և ոստիկանության միջև ընդհարումներ էին տեղի ունեցել»²⁹: Չինված ընդհարումներ տեղի ունեցան թուրք ծայրահեղների և ոստիկանության ու ժանդարմերիայի, իսկ հետո՝ նրանց և ֆրանսիական զորքերի միջև: Հուլիսի 7-ին Անտիոքում թուրքերը դաշունահարեցին քաղաքի կայագործի 5-րդ գումարտակի զինվորներին³⁰:

Ֆրանս-սիրիական դաշնագրի ստորագրումից հետո, երբ սիրիական պատվիրակությունը վերադարձավ հայրենիք, սիրիական ազգային կառավարությունը որոշեց պառլամենտի նոր ընտրություններ անցկացնել ամբողջ երկրում, ներառյալ նաև Սանջաքում: Ինչպես նախկինում, պառլամենտական ընտրությունները սիրիական հանրապետությունում³¹ պետք է տեղի ունենային անուղղակի քվեարկությամբ, երկու աստիճանի ընտրություններով, որպեսզի հնարավորություն տրվեր ապահովելու կրոնա-դավանական համայնքների համասնական ներկայացուցչությունը: Առաջին կարգի ընտրությունները պետք է տեղի ունենային ամբողջ երկրում 1936 թ. նոյեմբերի 14-ին և 15-ին, իսկ նոյեմբերի 30-ին երկրորդ կարգի ընտրողները (նոյեմբերի 14-15-ի քվեարկությամբ որոշված) իրենց հերթին պետք է ընտրեին սիրիական նոր պառլամենտի պատգամավորներին: Ինչպես հայտնի է, Անկարայի դիվանագիտական ու քաղաքական պայքարը Սանջաքի համար սկսվել էր սեպտեմբեր ամսից: Ուստի զարմանալի չէր, որ Ալեքսանդրետի-Անտիոքի շրջանի թուրքերին հրահանգվեց բոյկոտի ենթարկել սիրիական հանրապետության պառլամենտական ընտրությունները³²: Հոկտեմբերին շրջանի թուրք ծայրահեղները Անկարայի դիվանագիտական ու մամուլի գրոհներին զուգընթաց շարունակ կազմակերպում էին ցույցեր, անկարգություններ, զինված ընդհարումներ, միշտ անջատողական, պանթուրքական լոզունգներով³³: Բացի «Հալք-Էվի»-ներից ու «Երիտ-Սպորտ-Ակումբ»-ներից, ծայրահեղները կազմակերպել էին նաև «Հաթայի անկախություն» գաղտնի ընկերության մասնաճյուղեր Անտիոքում, Ալեքսանդրետում, Քուսեյրում, Օրդուում, Ամուրում, ինչպես և Թուրքիայի տարբեր քաղաքներում: Հենց այդ գաղտնի ընկերությունը շրջանի թուրքերին հրամայում էր չմասնակցել Սիրիայի պառլամենտական ընտրություններին և դրանով «ամբողջ աշխարհի առջև ապացուցել, որ բոլոր Սանջաքցիները (!) Սիրիայից բոլորովին տարբեր հավաքականություն են»³⁴: Թուրք ծայրահեղների նպատակն էր հասնել այն բանին, որ իրենց խանգարիչ գործողությունների շնորհիվ պառլամենտական ընտրությունների ժամանակ պահանջված քվորումը ձեռք չբերվի Սանջաքում, պատգամավորների ընտրությունը մնա առկախ և դրանով ապացուցվի, որ թուրքերը քաղաքական խոշոր կշիռ ունեն շրջանում: Գտնելով, որ մամուլով ու ռադիոյով պրոպագանդան անբավարար է Սանջաքի թուրք ազգաբնակչության լայն խավերին,

առավել ևս արաբ ու հայ ընտրողներին իրենց քաղաքական պլատֆորմին ենթարկելու համար, մոլիները որոշեցին ընտրությունների անմիջական նախօրյակին շրջանում ահաբեկման մթնոլորտ ստեղծել: Օգտվելով թուրքական հանրապետության տոնի առիթից, հոկտեմբերի 29-ին Անտիոքում բռնի ուժով փակել տվեցին բոլոր շուկաները, արհեստանոցները, դպրոցները:

Նոյեմբերի 6-ին Անտիոքում թուրք ահաբեկիչները սպանեցին չորս երիտասարդների, որոնք սիրիական հանրապետության հիմնը ունկնդրում էին հրապարակավ: Հաջորդ օրը ժողովրդական հուզումը տարածվեց ամբողջ Անտիոք քաղաքում ու շրջակայքում: Արաբ զոհերի հուղարկավորությունը տեղի տվեց արաբ-թուրք ընդհարումների, որոնց ընթացքում թուրք մոլիները դաշունահարեցին նույնիսկ Անտիոքի ընդհանուր դատախազին, ազգությամբ թուրք Չինչինգադե բեկին³⁵:

Սանջաքի նկատմամբ թուրքական դիվանագիտության քաղաքական ու հողային բացահայտ պահանջներին ի պատասխան՝ Սանջաքում ու ամբողջ Սիրիայում տարերայնորեն առաջացան արաբական-սիրիական «Սանջաքի պաշտպանության կոմիտեներ»³⁶: «Ալ-Ուրուբա» քաղաքական պարբերականի էջերում, որը սկսվեց հրատարակվել 1937 թ. սկզբներից³⁷, ինչպես նաև առանձին բրոշյուրներով, հիմնավորվում էին Սիրիայի պատմական արդար իրավունքները Ալեքսանդրետի Սանջաքի վրա:

«Ալեքսանդրետի պաշտպանության կոմիտեներ» ստեղծվեցին Սանջաքի ազգաբնակչության շրջաններում, շնորհիվ՝ կոմունիստների, Ազգային Գործունեության Լիգայի, Ազգային Բլոկի և հայ հայրենասիրական-քաղաքական տեղական կազմակերպությունների միացյալ ջանքերի:

«Մուրիահայ Ժողովրդական ճակատ»-ում համախմբված Սանջաքի հայ կոմունիստները, հնչակյանները, ռամկավար-ազատականները և մյուս շարքային հայրենասերները արաբական քաղաքական խմբավորումների հետ միասնական ճակատով հանդես եկան թե՛ 1936 թ. սիրիական պառլամենտական ընտրությունների, թե՛ հաջորդ տարիների քաղաքական խոշոր իրադարձությունների ժամանակ «հանուն անկախ ու միասնական Սիրիական հանրապետության հետ հավերժ միասնության» լռզուրկով³⁸: Քաղաքական այս պլատֆորմին համաձայն էին նաև Սանջաքի թուրքմենները, քրդերը, չերքեզները, ինչպես նաև թուրք ազգաբնակչության չափավորական խավերը՝ գլխավորությամբ

բարաքաթների, քուսեյրիզադենների, որոնք չէին ենթարկվում մոլի շովինիստների անջատողական, պանթուրքական քարոզչությանը:

Ընդհանուր առմամբ, Ալեքսանդրեոսի Մանջաքի բազմազգ բնակչության 80 տոկոսից ավելին դեմ էր Անկարայի ու թուրք մոլիների հակասիրիական անջատողական քաղաքականությանը³⁹:

Հասարակական կարգը պահպանելու համար, ժողովրդի պահանջով ու ճնշմամբ⁴⁰, իշխանությունների ձեռք առած նախազգուշական միջոցների շնորհիվ նոյեմբերի 14-ին առաջին աստիճանի ընտրություններն ընթացան համեմատաբար նորմալ իրադրության մեջ և ընտրողների ճնշող մեծամասնությունը մասնակցեց քվեարկությանը, Մանջաքի բոլոր ընտրական տեղամասերում (բացի Անտիոքից ու թուրքական մեծամասնություն ունեցող շրջաններից, որտեղ գերիշխում էին մոլիները): Անհրաժեշտ է ընդգծել, որ Մանջաքում ընտրության մասնակցողների տոկոսը այս անգամ շատ ավելի բարձր էր (ցուցակագրվածների մոտ Է-ը), քան նախորդ ընտրությունների ժամանակ, որովհետև ժողովուրդը պարզ գիտակցում էր, թե պառլամենտական ընտրություններին մասնակցելը փաստորեն հանդիսանում է արաբական-սիրիական Մանջաքի պաշտպանության գործ⁴¹: Ընտրությունների այս ընթացքից դժգոհ անջատողականները նոյեմբերի 15-ին բողոքի ցույց կազմակերպեցին Անտիոքում:

Մանջաքում սիրիական պառլամենտի առաջին աստիճանի ընտրություններն ընթացել էին հաջող, թուրք անջատողականների ծրագրերի տապալումով: Ընտրողների ճնշող մեծամասնությունը՝ ավելի քան 80 տոկոսը՝ բոլոր արաբները, հայերը, թուրքմենները, քրդերը, ինչպես նաև Սիրիայի հետ միասնության կողմնակից թուրքերը մասնակցել էին քվեարկություններին և սիրիական ընտրական օրենքով պահանջված քվորումը շատ ավելիով ձեռք էր բերվել⁴²:

Անկարայի և Մանջաքի ծայրահեղներին մնում էր խանգարել երկրորդ աստիճանի ընտրությունները: «Մանջաքի հարգելի բնակչությանն» ուղղված նրանց կոչում ասվում էր. «Մանջաքցիների վրա ընկնող պարտականությունները վերջ չեն գտել: Մանջաքցիները պետք է բոյկոտի ենթարկեն նաև պատգամավորների երկրորդ աստիճանի ընտրությունները»⁴³: Թուրք մոլիները դիմում էին շանտաժի, սպառնալիքների: Ընտրողներին ահաբեկելու նպատակով, նրանք համառ լուրեր էին տարածում, թե շուտով Մանջաքը գրավվելու է թուրքական զորքերի կողմից: Նույն լուրերը

ամեն օր ժամը 13-ին կրկնվում ու հաստատվում էին ինչ-որ գաղտնի ռադիոկայանի հաղորդումներով, որոնք անարգել լսվում էին Մանջաքի բոլոր հասարակական վայրերում, տներում: Հատկանշական է, որ մանդատային իշխանությունները չէին հերքում այդ գրգռիչ լուրերը, ոչ էլ մտածում էին արգելել մոլիների գործունեությունը:

1936 թ. նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ երկրորդ աստիճանի (պատգամավորների) ընտրության քվեարկությունը: Երկրորդ կարգի բոլոր ընտրողները անխտիր մասնակցեցին քվեարկությանը⁴⁴: Նույն օրը առավոտյան Անկարայի մեջլիսում բացահայտ սպառնալիքներ էին հնչել Սիրիայի հասցեին. «Եթե թուրքական Մալտակ գիրքը (Ազգերի Լիգայի թուրքական հուշագիրը՝ Մանջաքի մասին - Ա.Բ.) բավական չի հարցը լուծելու համար, թուրք ազգը պատրաստ է անհրաժեշտ արյունը տալու այդ մասին մի կարմիր գիրք գրելու համար» հայտարարել էր մի պատգամավոր⁴⁵: Թուրքասեր պարոն Դ-յուրիոյի «նրբանկատ զուշությունների» շնորհիվ, թուրք մոլիներին հաջողվեց նոյեմբերի 30-ի գիշերը, երբ հրապարակվում էին ընտրության արդյունքները, Անտիոքում հուզումներ առաջացնել: Նրանց և ոստիկանության միջև ընդհարումներ տեղի ունեցան բազմաթիվ անգամներ: Դեկտեմբերի 1-ին նրանք հարձակվեցին պատգամավոր ընտրված թուրք Ադալիի և Մուստաֆա Քուսեյրիի տների վրա: Այնուհետև զինված խռովարարները, որոնք գիտեին, որ զորքերը արգելափակված են զորանոցներում և քաղաքի փողոցներում պարեկություն անող զրահապատ մեքենաների վրա զենք ու զինամթերք չկա, հարձակվեցին անզեն զինվորների վրա: Նրանցից մեկը սպանվեց, մի քանիսը վիրավորվեցին: Այս բոլորից հետո միայն Անտիոքի կայազորի հրամանատար գնդապետ Մերսոնը, հակառակ պարոն Դ-յուրիոյի կարծիքին, կարգը պահպանելու համար զինված զորք իջեցրեց քաղաք: Քսաներեք խռովարարներ ձերբակալվեցին և հանդարտությունը վերահաստատվեց⁴⁶:

Այս բոլոր իրադարձությունները և թուրքական մամուլի «թղթային հսկայական ցիկլոնը» պետք է որպես «հիմք» ծառայեր թուրքական դիվանագիտական գրոհի համար: Այդ հիման վրա Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Արասը ժնկում իրավունք պետք է ունենար պահանջելու «պաշտպանական միջոցառումներ «Հաթայի»⁴⁷ ճնշված ու հալածված 250 հազար (sic!) թուրքերի համար»:

Միրիական հասարակական կարծիքի պահանջով, սիրիական կառավարական մի պատվիրակություն, որի կազմի մեջ էին ղոկտոր Ա.Քեյյալին, Իհսան ալ-Չաբրին և Մանջաբի ֆինանսների տնօրեն Հասան Չաբբարան, 1936 թ. դեկտեմբերի 12-ին ուղևորվեց Ժնև՝ Միրիայի շահերը պաշտպանելու համար⁴⁶:

1936 թ. դեկտեմբերի 14-ին բացվեց Ազգերի Լիգայի խորհրդի 95-րդ նստաշրջանը: Լիգայի Ընդհանուր քարտուղարը առաջարկեց օրակարգում մտցնել (Թուրքիայի կառավարության պահանջով)⁴⁷ «Ալեքսանդրետի և Անտիոքի հարցը»: Թուրքիայի ներկայացուցիչ Արասը, շարադրելով «Ալեքսանդրետի և Անտիոքի հարցի» կապակցությամբ թուրքական կառավարության տեսակետը, հիմնականում առաջ քաշեց հետևյալ մտքերը⁴⁸.

- «Երբ 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյի խորհրդաժողովում Ֆրանսիային հանձնվեց Միրիայի մանդատը, որն այդ ժամանակ աշխարհագրական, քաղաքական և իրավական տեսակետներից տակավին չճշգրտված, անորոշ հասկացություն էր, այդ մանդատը չէր ընդգրկում ֆրանսիական զորքերի փաստական գրավման տակ գտնվող բոլոր տերիտորիաները, որոնց մեջ, բացի Միրիա-Լիբանանյան արաբախոս համայնքից, մտնում էր նաև Կիլիկիայի՝ լեզվով և ցեղով թուրքական համայնքը: Ընդ որում 1921 թ. Ֆրանսիան հնարավոր գտավ «բարի դրացիական համաձայնագրով Թուրքիային վերադարձնել Կիլիկիան»: Այնուհետև, շարունակում է Արասը, երբ Ֆրանսիան ու Թուրքիան 1921 թ. հաստատեցին ռազմական սահմանագիծ, որը 1923 թ. Լոզանի դաշնագրով դարձավ քաղաքական սահման, ֆրանսիական մանդատը չէր տարածվում Մանջաբի վրա, որը «պայմանականորեն» թողնվում էր Ֆրանսիային: Մանջաբի թուրք բնակիչների համար ստեղծվեց ինքնավար ռեժիմ՝ Ֆրանսիայի գերիշխանության ներքո: Թուրքիան երբեք չի ընդունել ինչ-որ սիրիական պետական-քաղաքական միավորի գոյությունը, որի անունից Ֆրանսիան իր իշխանության տակ վերցնեք թուրքական մի համայնք: Մանդատը, որ ուժի մեջ մտավ 1923 թ., չէր կարող տարածվել Մանջաբի վրա, որը այդ թվականից առաջ և հետո «պայմանականորեն մնում էր ֆրանսիական հանրապետության գերիշխանության ներքո»: Մանդատի խարտիան, շարունակում է Արասը, որը որպես պաշտոնական լեզուներ մանդատի ենթակա տերիտորիաների

համար հաստատում էր արաբերենն ու ֆրանսերենը, չի խոսում Մանջաքի մասին: այս վերջինիս համար, որպես պաշտոնական լեզու, Ֆրանքլեն Բույոնը 1921 թ. ընդունել էր թուրքերենը: Թուրքիայի ներկայացուցիչը եզրափակելով, հայտարարում է, որ Մանջաքի թուրք ազգաբնակչությունը Թուրքիայի համար մեծագույն նշանակություն ունեցող ազգային տարր է և հետևաբար, մինչև շրջանի ապագա իրավիճակի որոշվելը, անհրաժեշտ է ձեռք առնել «պաշտոնական միջոցառումներ, որոնց ընդունումը կենսական անհրաժեշտություն է, աչքի առաջ ունենալով այն ողբալի վիճակը, որի մեջ գտնվում է Մանջաքի թուրք բնակչությունը»:

Արասի ելույթից հետո խոսք վերցրեց Ֆրանսիայի ներկայացուցիչ, արտաքին գործերի մինիստրի տեղակալ Պոլ Վիենոն, որը խորհրդից խնդրեց իրեն թույլ տալ հաջորդ նիստում շարադրել Ֆրանսիական հանրապետության կառավարության տեսակետները քննարկվող հարցի վերաբերյալ:

Հանդես գալով դեկտեմբերի 15-ի նիստում¹, Վիենոն, նախ հիմնովին մերժեց թուրքական կառավարության այն տեսակետը, թե Ալեքսանդրետի Մանջաքը «զիջվել է պայմանականորեն»: Ֆրանսիայի միջազգային իրավական դիրքը Մերձավոր Արևելքի տերիտորիաներում, ասում է Վիենոն, պարզորոշ ճշգրտված է Ազգերի Լիգայի (22-րդ հոդված) և 1920 թ. ապրիլի Սան-Ռեմոյի դիվանագիտական ակտով: Թուրքիան պաշտոնապես ընդունել է, - ասաց նա, - որ 1921 թ. հաստատված սահմանագծից հարավ ընկած երկիրը իրոք հանդիսանում է Սիրիան, ինչպես այդ պարզ կերպով եզրակացվում է Թուրքիայի ստորագրած մի շարք դիվանագիտական ակտերից: Մյուս կողմից, թուրքական կառավարությունը միշտ տեղյակ է եղել քաղաքական այն ակտերին (Ֆրանսիական հանրապետության բարձր-կոմիսարության հրամանագրերին), որոնց համաձայն Ալեքսանդրետի Մանջաքը իր վարչաֆինանսական ինքնավարությամբ միշտ մաս է կազմել Սիրիայի պետության՝ 1920 թ. նրա ստեղծումից ի վեր: Անցած 15 տարիների ընթացքում Թուրքիան որևէ բողոք չի ներկայացրել այդ փաստական իրողության դեմ, ոչ էլ Ալեքսանդրետի Մանջաքում Անկարայի համաձայնագրի դրույթների կենսագործման եղանակների դեմ: Մանջաքի ազգաբնակչությունը ոչ մի բողոք չի ներկայացրել այդ առնչությամբ ո՛չ մանդատային պետությանը, ո՛չ Ազգերի Լիգայի խորհրդին: Ինչ վերաբերում է Կիլիկիայի պարպումին, այդ փաստը ամենևին չէր նշանակում այդ

տերխորիայի վերապարձը Թուրքիային, այլ պարզապես դրանով վերջ էր դրվում Կիլիկիայի ռազմական գրավմանը Ֆրանսիայի կողմից: Շարունակելով իր ելույթը, Վիեննոն ընդգծում է, որ 1936 թ. սեպտեմբերի 9-ի Ֆրանս-սիրիական դաշնագրով վերստին հաստատվել են այն բոլոր իրավունքները, որոնք նախատեսվում էին Սանջաքի թուրք ազգաբնակչության համար 1921 թ. Անկարայի համաձայնագրով, և որոնց պահպանումը երաշխավորվում է սիրիական պետության կողմից: Ֆրանսիայի ներկայացուցիչը ընդգծում է նաև, որ երբ թուրքական կառավարությունը բարձրացրեց «Սանջաքի հարցը», Ֆրանսիան համաձայնվեց բանակցություններ սկսել երկու երկրների միջև՝ Սանջաքի հատուկ ռեժիմի պահպանման ու ամրապնդման պայմանների շուրջ: Սակայն, թուրքական կառավարությունը չընդունեց այդ առաջարկը, այլ շարունակեց պնդել Ալեքսանդրետի Սանջաքը «անկախ պետություն» դարձնելու իր տեսակետի վրա: Պարզ է, որ Ֆրանսիան չէր կարող քննարկել նման առաջարկը: Եզրափակելով, Վիեննոն մերժում է Թուրքիայի՝ ներկայացուցչի այն անհիմն պնդումները, թե իբր Սանջաքի ազգաբնակչությանը ճնշելու նպատակով վերջին ամիսներին ձեռք են առնվել «արտակարգ ռազմական միջոցներ»: Նա առաջարկում է Սանջաք ուղարկել Լիզայի կողմից նշանակված չեզոք դիտորդներ՝ տեղում տիրող իրադրության մասին ճշգրիտ տեղեկություններ քաղելու և դրանք Լիզայի խորհրդին ներկայացնելու համար:

«Ալեքսանդրետի ու Անտիոքի» հարցի մասին զեկուցող նշանակված Շվեդիայի արտաքին գործերի մինիստր Սանդերը 1936 թ. դեկտեմբերի 16-ի նիստում Լիզայի խորհրդին ներկայացրեց իր զեկուցագիրը և 8 կետից բաղկացած բանաձևի մի նախագիծ, որը վերաբերում էր ոչ թե բուն հարցին ու դրա լուծմանը, այլ Թուրքիայի ներկայացուցչի կողմից պահանջված այն «պաշտպանական միջոցառումներին», որոնք պետք է ձեռք առնվեն Սանջաքում մինչև վեճի կարգավորումը՝ ելնելով այն փաստից, որ թե՛ Ֆրանսիան, թե՛ Թուրքիան համաձայն են հարցի ըստ էության քննարկումը հետաձգել մինչև Խորհրդի հաջորդ հերթական նստաշրջանը: Բանաձևի նախագծում զույգ կառավարություններին խորհուրդ էր տրվում զեկուցողի հետ սերտ կապ պահպանելով «ոչ մի ջանք չխնայել հարցի գոհացուցիչ լուծմանը սատարելու համար»: Ֆրանսիական կառավարության առաջարկով որոշվեց Սանջաք ուղարկել երեք դիտորդներ, որոնց գործունեության առավելագույն

Ժամկետը լինելու էր մինչև 1937 թ. հունվարի վերջը: Դիտորդների հանձնաժողովի համար Վեկուցողը առաջարկում էր հետևյալ կազմը. Հանս Հոլստադ (նորվեգացի), գեներալ Լ.Մ.Մ. Կարոն (հոլանդացի) և Շառլ յու-Վաթթենվիլ (շվեյցարացի): Բանաձևի նախագծում խոսվում էր դիտորդների հանձնաժողովի քարտուղարության և այն ֆինանսական միջոցներով ապահովելու միջոցառումների մասին, շեշտվում էր, որ ներկա բանաձևի ընդունումը որևէ ձևով չի կարող խանգարել հարցի բաց քննարկմանը⁵²:

Երբ բանաձևի նախագիծը քննարկման և այնուհետև քվեարկության դրվեց, Թուրքիայի ներկայացուցիչը չմասնակցեց քվեարկությանը, որովհետև նա, ամբողջությամբ վերցրած, անբավարար էր գտնում առաջարկված «պաշտպանական միջոցառումները»: Բացի այդ, նա ցանկանում էր, որ դիտորդների հանձնաժողովի կազմին ավելացվի Թուրքիայի և Ֆրանսիայի մեկական ներկայացուցիչ: Սակայն, խորհուրդը բանաձևի նախագիծը ընդունեց առանց որևէ փոփոխության:

Ազգերի Լիգայի խորհուրդը, որտեղ գերիշխող դիրք էին գրավում Արևմուտքի իմպերիալիստական պետությունները, Սանջաքի հարցը սկսել էր քննարկել առանց դատի իսկական իրավատիրոջ՝ Սիրիայի մասնակցության, որը իրավականորեն անհրաժեշտ էր 1936 թ. ֆրանս-սիրիական դաշնագրի դրույթներով: Այնուամենայնիվ, զոնե որոշ չափով իր ձայնը լսելի դարձնելու համար Ժնև ժամանած սիրիական պատվիրակությունը հարցի քննարկման ընթացքում ամենօրյա սերտ կապ էր պահպանում Ֆրանսիայի ներկայացուցչության և անձամբ Պոլ Վիենոյի հետ: Վերջինս Խորհուրդի արտակարգ նստաշրջանի ավարտումից հետո, 1936 թ. դեկտեմբերի 19-ին Սիրիայի հանրապետության պրեզիդենտ Հաշեմ ալ-Աթասիին ուղարկեց մի նամակ՝ հարցի քննարկման արդյունքների մասին, որին կցված էր Խորհրդի արտակարգ նստաշրջանի աշխատանքների լրիվ արձանագրությունը: Վիենոն Աթասիին ուզում էր վստահեցնել, թե Ֆրանսիան արել է և կանի հնարավոր ամեն ինչ՝ Սիրիայի շահերի պաշտպանության համար: Նա հույս էր հայտնում, որ «այդ բանը կօգնի հանգստացնելու Սիրիայի ազգաբնակչությանը և կասեցնելու հասարակական կարգի խախտումները, մի բան, որը խիստ անհրաժեշտ է ներկա պայմաններում, երբ Լիգայի չեզոք դիտորդները պետք է անհապաղ ժամանեն Սանջաք»⁵³:

1936 թ. դեկտեմբերի 27-ին Սիրիայի նորընտիր պառլա-

մենտը իր առաջին նստաշրջանում միաձայն հաստատեց 1936 թ. սեպտեմբերի 9-ի ֆրանս-սիրիական դաշնագիրը: Ընդունված բանաձևում համոզմունք էր հայտնվում մաս, որ Ֆրանսիան Ազգերի Լիգայում «կպաշտպանի Սիրիայի հողային ամբողջականությունը Ալեքսանդրետի Սանջաքի հարցում»:

Ազգերի Լիգայի չեզոք դիտորդների հանձնաժողովը 1936 թ. դեկտեմբերի 27-ին մեկնելով Ժնևից, ամսի 30-ին հասավ Ստամբուլ, իսկ 31-ին Սանջաք: Հանձնաժողովը առաջին հերթին (1937 թ. հունվարի 3-ին) եղավ Կըրըկ-Խանում, որն ուներ արաբ, հայ, թուրք, թուրքմեն խառը ազգաբնակչություն: Դիտորդները տեղում հաստատեցին, որ «գժտության ոչ մի հիմք չկա և թուրքերը⁵⁴, արաբները, հայերը աշխատում և ապրում են կատարելապես համերաշխ»:
Մահմանամերձ Աքթեփե և Հաջիլեր գյուղերում, շրջանի թուրքմեն պատգամավորը հայտարարեց, որ «իբր ընտրողների ճնշող մեծամասնությունը ցանկանում է շարունակել խաղաղ ապրել... ներկա քաղաքական շրջանակում»⁵⁵: Հաջիլերի ու շրջակայքի թուրքմեն գյուղացիները խանդավառ ցույցերով ընդունելով դիտորդներին և բացահայտորեն արտահայտեցին իրենց բուռն ցանկությունը՝ «մնալ սիրիական հայրենիքի կազմում»:

Մեծամասնությամբ թուրք ազգաբնակչություն ունեցող Անտիոքում էր գտնվում ծայրահեղների գլխավոր շտաբը: Դիտորդները այնտեղ ակնհայտեցնեցին «թուրքասիրական ազդեցիկ ցույցերի»:
Դրանց ի պատասխան, հաջորդ օրը քաղաքի ու շրջակայքի արաբները, մուսալեռցի հայերը կազմակերպեցին վիթխարի ցույց՝ արտահայտելով Սիրիայի հետ իրենց միասնականության կամքը: Քաղաքի քրիստոնեական գերեզմանատանը դիտորդները հաստատեցին հայկական շիրիմների սրբապղծումը թուրքերի կողմից⁵⁶: Այսուհանդերձ նույնիսկ Անտիոքում «թուրք չափավոր տարրերը հայտարարեցին, որ իրենք չեն պահանջում Սանջաքի կցումը Թուրքիային, այլ ուզում էին միայն անկախություն»⁵⁷: Ալեքսանդրետում հազարավոր արաբներ ու հայեր, թուրքեր, թուրքմեններ արտահայտեցին Սիրիայի կազմում մնալու իրենց կամքը⁵⁸:

Լիգայի խորհրդի 96-րդ նստաշրջանում (1937 թ. հունվար) որոշվեց, Սանջաքի նոր Ստատուսի մշակման գործում փորձագետների Կոմիտեին օգնելու նպատակով, դիտորդների

հանձնաժողովի լիազորությունները երկարաձգել մինչև մարտի 15-ը՝ որպեսզի «զեկուցող Սանդլերը կարողանա անհրաժեշտ տեղեկություններ հայթայթել»: Հանձնաժողովի գործունեության աշխարհագրական շրջանակները ևս ընդլայնվեցին, ընդգրկելով Լաթաքիայի նահանգի Բահեր և Բուջաբ գյուղերը⁵⁹, որոնք 1920-1921 թթ. մտնում էին Սանջաքի սահմանների մեջ: Դիտորդները 1937 թ. փետրվարի 11-ին այցելեցին Բահեր, Բուջաբ և Բասիթ գյուղերը և հաստատեցին, որ «զավառի ազգաբնակչության երկու երրորդը արաբներ են, մնացածը՝ թուրքմեններ: ...Հանձնաժողովի կողմից հարցապնդված բոլոր անձինք հայտարարեցին, որ իրենց բոլոր զնունները կատարում են Լաթաքիա քաղաքում»⁶⁰, դրանով հաստատելով իրենց տնտեսական կապվածությունը այդ քաղաքի հետ: Անտիոքի մոլիների կողմից Բասիթում կազմակերպված թուրքանպաստ ցույցը այնքան բացահայտորեն «բնական» էր, ինչքան՝ ցնցոտիներ հագած թուրքմեն գյուղացիների եվրոպական բոլորովին նոր գլխարկները, որոնք հապշտապ բերվել էին Թուրքիայից: Հաջորդ օրը այցելելով հայկական Քեսապ ավանն ու շրջակա գյուղերը (որոնք մտնում էին Սանջաքի սահմանների մեջ), դիտորդները արձանագրեցին շրջանի հայերի կամքն ու ցանկությունը՝ «իրենց շրջանը կցել Լաթաքիայի նահանգին, որից այն կախում ունի տնտեսապես»⁶¹:

Ինչպես որոշված էր Լիզայի խորհրդի 1936 թ. դեկտեմբերի 16-ի նիստում, Ֆրանսիայի և Թուրքիայի ներկայացուցիչները 1936 թ. դեկտեմբերի 31-ին Փարիզում վերսկսեցին ուղղակի դիվանագիտական բանակցությունները Սանջաքի հարցի շուրջ: Ֆրանսիայի կողմից բանակցություններին մասնակցում էին արտաքին գործերի մինիստր Իվոն Դելբոսը և նրա տեղակալ Պոլ Վիենոն, Թուրքիայի կողմից՝ Արասը և Փարիզի թուրքական դեսպան Մուադ Դավազը. Բեռնում Շվեդիայի դեսպան Ռեստմանը ներկայացնում էր Սանջաքի հարցի գծով Լիզայի խորհրդի զեկուցող Սանդլերին: Մի քանի օր տևող բանակցությունները որևէ արդյունք չտվեցին, որովհետև Թուրքիան հրաժարվում էր փոխել իր դիրքը. Արասը շարունակ պնդում էր Սանջաքին անկախություն տալու և նրա հետ ֆրանս-սիրիականի նման դաշինք կնքելու իր առաջարկի վրա: Անկարա վերադառնալուց առաջ, Արասը տեսակցություն ունեցավ Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Լեոն Բլյումի հետ: Այդ տեսակցության ժամանակ Բլյումը ասել էր, որ «անհրաժեշտ է Սանջաքի հարցը լուծել այնպես, որ պահպանվեն լավագույն

հարաբերությունները երկու կողմերի միջև» և խոստացել՝ անձամբ զբաղվել այդ հարցով և Սանջաքի ստատուսի վերաբերյալ կազմել նոր առաջարկ, որը «կարող է բավարարել Թուրքիային»: Վերջում Ֆրանսիայի պրեմիեր-մինիստրը հայտնել էր, որ ֆրանսիական նոր նախագիծը արտաքին գործերի մինիստրության միջոցով շուտով կհանձնվի թուրքական կառավարությանը, որին «առաջարկվում է սկզբունքորեն ուսումնասիրել այն»: Արասը խոստացել էր ուսումնասիրել այդ նախագիծը առավելագույն բարի կամեցողությամբ⁶²:

Վերադառնալով Անկարա, Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը 1937 թ. հունվարի 5-ին ժողովրդա-հանրապետական կուսակցության պառլամենտական ֆրակցիային զեկուցեց Ժնևում և Փարիզում կատարած իր գործունեության և բանակցությունների մասին: Ժողովականները իրենց դժգոհությունը հայտնեցին բանակցություններում «Ֆրանսիայի որդեգրած գործելակերպի» դեմ⁶³ և պահանջեցին, որ թուրքական կառավարությունը ձեռք առնի առավել «կտրուկ ու վճռական միջոցառումներ», հաշվի առնելով նաև այն, որ Փարիզից վերադարձած ֆրանսիական դեսպանը որևէ նոր նախագիծ չէր բերել:

Միջազգային դիվանագիտությունը և դիվանագիտական հարաբերությունները նշված ժամանակաշրջանում խիստ նպաստավոր էին «ուժի դիրքերից» խոսելու և «կտրուկ ու վճռական» միջոցառումների դիմելու համար: 1936 թ. մարտի 7-ին, խախտելով Վերսալի ու Լոկառնոյի պայմանագրերը, հիտլերյան Գերմանիան իր գորքերը մտցրեց Հռենոսի ապառազմականացված գոտին, իսկ Ֆրանսիայի ու Անգլիայի կառավարությունները ոչ մի փորձ չարեցին որևէ դիմադրություն ցույց տալու նրա ագրեսիվ քայլերին: Ֆաշիստական Իտալիան արդեն 1936 թ. մայիսին ավարտել էր ամբողջ Եթովպիայի գավթումը՝ հրով ու սրով: Ազգերի Լիգայի մեծամասնությունը, հնազանդվելով Անգլիային ու Ֆրանսիային, ոչ միայն «ջանում էր անցնել ագրեսիայի այդ ակտերի կողքով», այլ իր դիվանագիտական գործերով քաջալերում էր դրանք⁶⁴:

1936 թ. հուլիսին Իտալիան ու Գերմանիան գործուն մասնակցություն ունեցան հանրապետական Իսպանիայի օրինավոր կառավարության դեմ ֆրանկոյական խռովության կազմակերպմանը, նույնիսկ զենքով բացահայտորեն հանդես եկան

Ազգերի Լիգայի անդամ Իսպանիայի հանրապետության դեմ: Լիգայում գերիշխող Անգլիան ու Ֆրանսիան այդ բոլորի դեմ «պայքարում էին» այսպես ասած «չէզոքության» զենքով⁶⁵: Հեռավոր Արևելքում, իմպերիալիստական ճապոնիան Մանջուրիայի զավթումը ավարտելուց հետո պատրաստվում էր ներխուժել բուն Չինաստան: 1937 թ. հունվարի 2-ին Հոմոնում կնքվեց Միջերկրականում “status quo”-ն պահպանելու և ծովային երթևեկության ազատության մասին անգլո-իտալական առաջին «ջենտլմենյան համաձայնագիրը», որը հանդիսանում էր ազրեստրների առջև բողոքական քաղաքականության առաջին արտահայտություններից մեկը⁶⁶:

Քաղաքական պահը նպաստավոր էր. հարկ էր առիթից օգտվել լավագույն կերպով: Եվ թուրքական կառավարությունը, Առանցքի պետությունների ներկայացուցիչների կողմից բացահայտորեն քաջալերված՝ որոշեց, դիվանագիտական ճնշմանը զուգահեռ, կատարել «ուժի ցուցադրում»: 1937 թ. հունվարի 6-ին, Քենալ Աթաթուրքը հատուկ գնացքով ճանապարհվեց Կոնիա՝ թուրքական բանակի հարավային ռազմական շրջանի սպայակույտ: Ճանապարհին, Էսկիշեհիրում, չորս ժամ տևող զադտնի խորհրդակցություն տեղի ունեցավ Աթաթուրքի, պրեմիեր-մինիստր Ի.Ինոնյուի, արտաքին գործերի մինիստր Ռ-յուշդի Արասի, ներքին գործերի մինիստր Շ.Կայայի և բանակի գլխավոր շտաբի պետ մարաշախտ Ֆեզի Չաքմաբի մասնակցությամբ⁶⁷: Հաջորդ օրը, հունվարի 7-ին, երբ Աթաթուրքը Կոնիայից անցավ Ուլու-Կըշլա, լուրեր տարածվեցին, թե թուրքական զորքեր են կենտրոնացվում Սանջաբի սահմանագծի երկայնքով: Ա.Քըլըջը հայտնում է, որ «...այդ ժամանակ դեպի Սանջաբ թուրքական ռազմական գործողություն սկսելու հնարավորություն ստեղծվեց»⁶⁸: Նույն օրերին թուրքական բոլոր թերթերը գրում էին Ալեքսանդրետի Սանջաբում կատարվելիք ինչ-որ «հեղաշրջման» մասին: Մեկնաբանելով «Ջումհուրիեթ» թերթի՝ Սանջաբի հարցին նվիրված հունվարի 6-ի առաջնորդողը, ֆրանսիացի հայտնի կին հրապարակախոս Ժընևիև Տաբուին գրում էր. «Մուստաֆա Քենալի պաշտոնական օրգանը հանդիսացող «Ջումհուրիեթ» թերթը՝ Թուրքիայի պրեմիեր-մինիստրի անձնական բարեկամը եղող իր գլխավոր խմբագրի ստորագրությամբ հրապարակել է մի հոդված, որի հիմնական բովանդակությունը հետևյալն է. «Թուրքիան որոշել է ինչ գնով էլ լինի շահել Սանջաբի դատը, և եթե նույնիսկ պատերազմ ծագի, դրա ամբողջ պատասխա-

նատվությունը պետք է կրի Ֆրանսիան»⁶⁹: «Իզվեստիայի» հատուկ քրթակից Ժաք Սադուլը Փարիզից հեռագրում էր, որ ֆրանսիական թերթերի կարծիքով Թուրքիան երկյուղ էր կրում, թե Ֆրանսիան կարող է Իտալիային հանձնել Սիրիայի մանդատը և այդ պատրվակով Թուրքիան ինքն էր ցանկանում ավելի շուտ զավթել Սանջաքը⁷⁰:

Ֆրանսիացի քաղաքական մեկնաբան Պերթինաքսը գրում էր, թե ֆրանս-բրիտանական դիվանագիտությունը ագրեսորների դեմ դիմադրություն կազմակերպելու պատասխանատվությունից խուսափելով, ամրապնդում է թուրքերի այն համոզմունքը, թե Հիտլերի ու Մուսսոլինիի մեթոդների գործադրումը առավել կտրուկ ու վճռական է: «Թուրքերը կարծում են,- գրում էր Պերթինաքսը,- որ Ֆրանսիան ու Անգլիան կփորձեն Հռոմի հետ ինչ-որ գործարք կնքել՝ ի հաշիվ Սիրիայի և, հետևաբար, նրանք (թուրքերը) հակված են մտածելու, որ անհրաժեշտ է ձեռք առնել նախազգուշական միջոցներ»⁷¹: «Յումանիտեի» արտաքին քաղաքականության բաժնի խմբագիր Գաբրիել Պերին վախ հայտնելով, որ Սանջաքը գրավելու Թուրքիայի մտադրության հետևանքով Արևմտյան Միջերկրականում (Իսպանիայում) արդեն գոյություն ունեցող պատերազմական վիճակը կարող է տարածվել նաև Արևելյան Միջերկրականի շրջանի վրա, գրում էր, թե հետևելով ֆաշիստական ագրեսորների օրինակին, «թուրքական կառավարությունը պատրաստվում է իր «փրավունքը» (?) իր ձեռքով վերցնելու»⁷²: Սանջաքի կոնֆլիկտի զարգացմանը ուշադիր և՛ մեծ շահագրգռվածությամբ հետևող Առանցքի երկրները վերջին ամիսներին քաղաքական լայն պրոպագանդա էին սկսել թե՛ Թուրքիայում, թե՛ արաբական երկրներում: Նրանք մի կողմից Թուրքիային իրենց քաղաքական ոլորտի մեջ ներգրավելու համար «խորհուրդ էին տալիս» հաշվի չառնել Ազգերի Լիգան և հետևել «կատարված փաստի» իրենց քաղաքական տակտիկային, մյուս կողմից՝ իրենց ներկայացնելով որպես «արաբական ազգերի շահերի պաշտպաններ», գրգռում էին արաբական հետադիմական շովինիստական շրջաններին, ավելի սրելով և սաստկացնելով Սանջաքի շուրջ ստեղծված ֆրանս-թուրքական հակամարտությունը: Ինչպես ճիշտ նշում էր սովետական հրապարակախոս Լիսովետսկին, «Երկու հանրապետությունների (Ֆրանսիայի ու Թուրքիայի - Ա.Բ.) միջև գոյություն ունեցող այս կոնֆլիկտը ֆաշիստական ագրեսորների «հացին յուղ է քսել», նրանք ուզում են օգուտ քաղել Ֆրանսիայի թողտվության

քաղաքականությունից: Թե՛ ֆաշիստական Իտալիան, թե՛ ֆաշիստական Գերմանիան ամեն կերպ ճգնում են սրել այդ տարակարծությունը, ցանկանալով այն օգտագործել իրենց քաղաքական ծրագրերի իրագործման համար⁷³:

Ուժի ցուցադրման տակտիկան իր անմիջական ազդեցությունն ունեցավ ֆրանսիական դիվանագիտության վրա: 1937 թ. հունվարի 7-ին, այն օրը, երբ Աթաթուրքը Կոնիայում և Ուլու-Կըշլայում ռազմաշունչ հայտարարություններ էր անում, Փարիզի թուրքական դեսպանը տեսակցություն ունեցավ Վիեննայի հետ և նորից հաստատեց թուրքական կառավարության անփոփոխ դիրքը: Միջազգային դրությունն այդ ժամանակ աննպաստ էր Ֆրանսիայի համար. Եվրոպայում զգացվում էր պատերազմի անմիջական վտանգը: Ինչպես նշում է Մ.Խաղդուրին, «Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան Միջերկրականում կարիք ունեին Թուրքիայի բարեկամությանը՝ հակակշռելու համար Մուսսոլինիի սպառնալիքները»⁷⁴: Հետևաբար, զարմանալի չէր, որ Ֆրանսիան պատրաստակամություն հայտնեց ընդառաջելու Թուրքիայի պահանջներին, իսկ վերջինս, «հաշվի առնելով Ֆրանսիայի աստիճանական թուլացումը և օգտվելով Անգլիայի աջակցությունից, ձեռք բերեց նոր գիջումներ»⁷⁵:

Ֆրանսիական դիվանագիտության դիրքորոշման շեշտակի փոփոխությունից հետո, Աթաթուրքը հունվարի 6-ին անմիջապես վերադարձավ Անկարա և նախագահեց թուրքական դաիլիճի արտակարգ նիստին, որտեղ ընդունվեց Ֆրանսիային ներկայացվելիք թուրքական նոր առաջարկների նախագիծը: 1937 թ. հունվարի 11-ին, թուրքական այդ նախագիծը, հուշագրի ձևով, Արասի կողմից ուղարկվեց Փարիզ⁷⁶: Այդ վավերաթղթով Ֆրանսիային առաջարկվում էր ստեղծել Սիրիայի, Լիբանանի և Ալեքսանդրետի Սանջաքի կոնֆեդերացիա, արտաքին հարաբերությունների և վայրուտային ու մաքսային սիստեմների ընդհանրությամբ, հատկապես նշելով, որ Սանջաքը պետք է դառնար չեզոք և ապառազմականացված պետություն: Ֆրանսիան պետք է նոր դաշինք կնքեր այդ կոնֆեդերացիայի հետ, իսկ Թուրքիան ու Ֆրանսիան առանձին դաշնագրով պետք է երաշխավորեին կոնֆեդերացիայի պաշտպանությունը⁷⁷: Ֆրանսիան մերժեց այդ նախագիծը: Լիբանանը նույնպես չէր ցանկանում ընդունել կոնֆեդերացիայի այդ նախագիծը: Ն. ալ-Արմանագին հիշատակում է, որ Լիբանանի նախկին պրեզիդենտ Էմիլ Էդդեն նույնիսկ

հայտարարել էր, թե Լիբանանը չի ցանկանում իրեն ներքաշել իր հարևանների դժվարությունների մեջ: Դիտել տալով հանդերձ, որ կոնֆեդերացիայի ծրագրի իրագործումը կարող էր առաջացնել Ֆրանսիայի ու Թուրքիայի միջամտությունը՝ «պաշտպանության և երաշխիքի դաշինքի դրույթների բերումով» ոչ միայն Սանջաքի, այլ նաև Սիրիայի ներքին գործերին, նույն հեղինակը քննադատում է սիրիական կառավարության դիրքը, որը հարկ եղած ուշադրությունը չէր նվիրել այդ «հետաքրքիր ծրագրին, որը իր թեր ու դեմ կողմերով հարկ էր հանգամանորեն ուսումնասիրել⁷⁸: Սակայն, փաստն այն էր, որ ո՛չ Թուրքիան, ո՛չ էլ նույնիսկ Ֆրանսիան հարկ չհամարեցին Սանջաքի հարցով ժնևում գտնվող սիրիական պատվիրակության կարծիքը հարցնել, ո՛չ էլ որևէ չափով ի նկատի առնել սիրիա-լիբանանյան հասարակական կարծիքի վերաբերմունքը⁷⁹:

Հաշվի առնելով կոնֆեդերացիայի թուրքական նախագծի մերժումը Ֆրանսիայի կողմից և վերջինիս առաջարկված ֆրանսթուրքական նախագիծը մշակելու համար պահանջվող ժամանակը, երկու կառավարությունների առաջարկությամբ որոշվեց Ազգերի Լիգայի խորհրդի 96-րդ հերթական նստաշրջանը սկսել ոչ թե հունվարի 18-ին, այլ 21-ին⁸⁰:

Մինչ այդ, ներքաղաքական դրությունը սրվում էր Սանջաքում: Ըստ Ա.Էսմերի, իբր թե «Թուրքիայում ժողովուրդը (Սանջաքի) հարցի նկատմամբ մեծ շահագրգռվածություն էր ցուցաբերում»⁸¹: Իրականում Անկարայի ղեկավարներն էին քաղաքական լարված մթնոլորտ պահպանում Սանջաքում՝ «հիմնավորելու» համար Փարիզում և Ժնևում տարվող իրենց դիվանագիտական տենդագին գործունեությունը: Ամեն օր, գիշեր թե ցերեկ, տասնյակ «զինված մարդիկ Թուրքիայից անցնում էին Սանջաք՝ լրացնելու համար թուրք անջատողականների և խռովարարների շարքերը»⁸²:

Գրեթե ամեն օր տեղի էին ունենում ցույցեր՝ Սանջաքը Թուրքիային կցելու պահանջով և բնականաբար արաբներն ու հայերը, ինչպես նաև Սիրիայի հետ միասնության կողմնակից թուրքերը, պատասխանում էին զանգվածային հակացույցերով՝ մանդատային իշխանություններից պահանջելով վերջ դնել անջատողականների սանձարձակություններին և պաշտպանել Սիրիայի հետ Սանջաքի միասնության անկապտելի իրավունքը⁸³:

«Իզվեստիան» հաղորդում էր, որ «Անտիոքում 2000 արաբ ցուցարարներ հայտարարել են Սանջաքի վրա Սիրիայի ունեցած արդար իրավունքը և Ֆրանսիայից պահանջել են պաշտպանել այն»⁸⁴։ Մ.Հ.Լոնգրիզը վկայում է, որ Ալեքսանդրետի հարցը կլանել էր «սիրիական քաղաքական միտքն ու հասարակայնության զգացմունքները՝ հատկապես 1937 թ. առաջին ամիսներին»։ Այս հարցը Սիրիայի բոլոր հայրենասիրական, երիտասարդական կազմակերպությունների, կոմունիստական թե՛ ազգայնական շարժումների ուշադրության կենտրոնումն էր։ Եռանդուն գործունեություն էին ծավալում Ալեքսանդրետի պաշտպանության տասնյակ կոմիտեները, որոնք վայելում էին արաբ թե՛ հայ հայրենասերների աջակցությունը։ Ազգային բլոկի կառավարությունը, - նշում է Լոնգրիզը, - հաճախ սուր քննադատության էր ենթարկվում՝ Սանջաքի պաշտպանության գործում իր ոչ եռանդուն դիրքի համար»⁸⁵։

Ոչ միայն Սիրիան, այլև ամբողջ արաբական աշխարհը մեծ հուզումով էր հետևում Սանջաքի կոնֆլիկտի զարգացման ընթացքին։ Կահիրեի «Ալ-Մուքաթթան» թերթը գրում էր. «Բաղդադից, Երուսաղեմից, Մեքքայից և արաբական տարբեր երկրներից հասնող լուրերից պարզ երևում է, որ արաբական հասարակական կարծիքը մեծ շահագրգռությամբ հետևում է Ալեքսանդրետի հարցին և խոր համակրանք է տաժում Սիրիայի նկատմամբ։ Բոլոր արաբները լիովին պաշտպանում են Սիրիայի գործողությունները Սանջաքի հարցում»։ Այնուհետև, պատասխանելով թուրքական մամուլի սանձազերծած հակասիրիական նոր արշավին, թերթը նշում էր, որ թուրքերը «իրավունքի կամ պատվի պաշտպանության» համար չէ, որ այդքան աղմուկ-աղաղակ են բարձրացնում Սանջաքի հարցի շուրջը, այլ նրանց ձգտումն է զավթել արաբական այդ տերիտորիան»⁸⁶։ Թուրքիան ձեռնարկել էր քաղաքական նոր տակտիկա արաբական երկրների նկատմամբ։ Այդ նպատակով, 1937 թ. հունվարի 16-ից Անկարայի և Ստամբուլի ռադիոկայանները սկսել էին ամենօրյա հաղորդումներ արաբերեն լեզվով՝ «ուղղված Սիրիայի, Պաղեստինի, Եգիպտոսի, Իրաքի և Հիջազի արաբական ազգերին», իբր թե՛ «փարատելու համար թուրք և արաբ ազգերի միջև եղած տարածայնությունները»⁸⁷։

Միջազգային նման իրադրության պայմաններում ֆրան-

սիական կառավարությունը, պրեմիեր-մինիստր Լեոն Բլյումի նախաձեռնությամբ մշակում էր Սանջաքի կոնֆլիկտի լուծման կոմպրոմիսային մի պլան, որը կարողանար ապահովել կողմերի շահերը: 1937 թ. հունվարի 18-ին Լ.Բլյումը Փարիզում թուրքական դեսպան Ս.Գավազին հանձնեց մի նամակ, որտեղ շարադրված էր Սանջաքի հարցի լուծման թե՛ թուրքական և թե՛ ֆրանսիական տեսակետները ընդգրկող կոմպրոմիսային մի ծրագիր: Սանջաքի հարցի կարգավորման համար մղված դիվանագիտական երկարատև ու սուր պայքարի պատմության մեջ շրջադարձային կետ պետք է համարել Բլյումի ծրագիրը, որի հիման վրա հետագայում մշակվեց և ընդունվեց Սանջաքի նոր Ստատուսը. դրա կիրառումը իր հերթին ճանապարհ հարթեց Թուրքիայի կողմից Սանջաքի գավառի համար: Ինչպես իրավացիորեն նշում են Ն. ալ-Արմանազին և Ադնան Այթան, Բլյումը Սանջաքի հարցը իրավական ամուր հիմքերից փոխադրելով միջազգային քաղաքականության ոլորտը՝ «գործը հանգեցրեց քաղաքական կարգավորման», արդարացնելու համար Ֆրանսիայի նահանջը թուրքական հավակնությունների առջև⁸⁸:

Լեոն Բլյումի նամակում շարադրված ծրագիրը հանգում էր հետևյալին⁸⁹: Չնայած որ «զուտ իրավական հողի վրա» Ֆրանսիայի տեսակետներն ու դիրքը ամբողջովին հիմնավորված ու ճիշտ են, անհրաժեշտ է փնտրել-գտնել քաղաքական բնույթի մի տարակարծության լուծումը, քանի որ փորձը ցույց է տվել, որ իրավական հողի վրա համաձայնության հասնելը դժվար է (ընդգծումը մերն է - Ա.Բ.): Այդ լուծումը պետք է տրվի Ազգերի Լիգայի խորհրդի կողմից, սակայն մենք կարող ենք, - նշում էր Բլյումը, - նախապատրաստել այժմվանից՝ աչքի առջև ունենալով երկու տարբեր հարցեր. 1. Սանջաքի վերջնական ստատուսը, սկսած այն պահից, երբ ուժի մեջ կմտնի ֆրանս-սիրիական դաշնագիրը; 2. Անցման շրջանի ռեժիմը: Վերջնական ստատուսով Սանջաքը կդառնա քաղաքական ինքնուրույն միավոր» (Entité distincte), որի պայմաններում 1921 թ. համաձայնագրի (Անկարայի) դրույթների կիրառումը կերաշխավորվի ոչ միայն սիրիական պետության, այլև Ազգերի Լիգայի կողմից: Վերջինի վերահսկողությունը ապահովվելու էր Սանջաքում մանդատի պահպանումով և այն կենսագործվելու էր ազգությամբ ֆրանսիացի բարձր-կոմիսարի միջոցով: Անցման շրջանի ռեժիմը աստիճանաբար նախապատրաստելու էր վերջնական ստատուսը՝ թուրքական ազգաբնակ-

չության և Թուրքիայի պահանջները բավարարելով՝ կառավարման, մշակութային կյանքի, շրջանի ապահովման և Ալեքսանդրեոսի նավահանգստից օգտվելու բոլոր հարցերում:

Թուրքական դիվանագիտությանը Ֆրանսիայի այս նոր գիջումների բուն դրդապատճառների մասին Բլյումը իր մամակի վերջում գրում էր հետևյալը. «Ես ունեցել եմ և ունեմ միայն մեկ մտահոգություն. քաղաքական բնույթի մեր տարակարծությունը, այդքան կնճռոտ այս հարցը դարձնել մեր երկու երկրների միջև առավել սերտ մերձեցման միջոց»: Հարկ է նշել, սակայն, որ հակառակ Բլյումի և Ինոնյուի⁹⁰ պնդումներին, Սանջաքի պրոբլեմը երբեք էլ չէր եղել բացառապես «Թուրքիայի և Ֆրանսիայի միջև գոյություն ունեցող քաղաքական մի տարակարծություն». այլ այն էապես առնչվում էր Սիրիայի տարածքային ամբողջականության ու գերիշխանության հետ և առաջին հերթին պետք է դիտվեր որպես «Սիրիայի և Ֆրանսիայի միջև կնքված միջազգային պայմանագրերի տարբեր մեկնաբանման հարց», ինչպես այդ իրավացիորեն ընդգծել է Սիրիայի պրեմիեր-մինիստր Ջամիլ Մարդամ-Բեկը⁹¹: Բլյումի նախագիծը պարզապես կոնպրոմիսային մի ծրագիր էր, թե՛ թուրքերին՝ Սանջաքում հաստատելով ինչ-որ «անկախ ռեժիմ», թե՛ Լիզային ու Ֆրանսիային, այնտեղ պահպանելով մանդատային վերահսկողությունը: Իսկ այդ կոնպրոմիսի ամենախոցելի կողմն այն էր, որ դրանում բացահայտորեն ոտնահարված էին փաստական իրավական կողմերից մեկի՝ Սիրիայի օրինական իրավունքները երկրի տարածքային ամբողջականության և Սանջաքի նկատմամբ նրա գերիշխանության հարցում:

Այս վերջին հանգամանքը շեշտում են մի շարք հեղինակներ: Մ.Օմեն գրում է. «Բլյումի ծրագիրը մի կոնպրոմիս էր, որի միջոցով ամենաթույլ երկիրը՝ Սիրիան գրեթե բոլորովին սեփականագրկվում էր, որովհետև... Ալեքսանդրետը դառնում էր Սիրիայից անջատված ու պոկված մի տերիտորիա, որը դրվում էր Ազգերի Լիգայի խնամակալության տակ»⁹²: Ժ.Պ.Ժեռարը գրում է. «Երբ Բլյումը 1937 թ. Սանջաքում թուրքերին կոնդոմինիոսի իրավունք տվեց, տվյալ պայմաններում դա անխուսափելիորեն պետք է հանգեցներ թուրքերի գերակայությանը: Իսկ այդ գերակայությունը 1938 թ. մարտին պաշտոնապես ճանաչվեց»⁹³: Ֆ.Կատալուչիոն ընդգծում է, որ Ֆրանսիայի համար ձեռնտու էր միանալ թուրքական այն տեսակետին, թե «Ալեքսանդրետը

պարզապես ֆրանս-թուրքական հարաբերությունների հարց է, որպեսզի կարողանար այն դարձնել Թուրքիայի հետ վերջնական մերձեցման գործիք»⁹⁴:

Ազգերի Լիգայի խորհրդի հերթական 96-րդ նստաշրջանը բացվեց 1937 թ. հունվարի 21-ին: Օրակարգում էր Ալեքսանդրետի կոնֆլիկտը ըստ էության քննարկելու հարցը: Բյուսի նամակում առաջադրված սկզբունքների հիման վրա Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Իվոն Դելբոսը և մինիստրի տեղակալ Պոլ Վիենոն այդ նիստում խորհրդին ներկայացրին իրենց կառավարության առաջարկները կոնֆլիկտի լուծման վերաբերյալ: Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Արասը շարադրեց իր կառավարության տեսակետը՝ ընդունելով Բյուսի նախագծի հիմնական կետերը⁹⁵: Թուրքական պատվիրակությունը վերապահություն էր ցուցաբերում հատկապես Սանջաքում շարունակվելիք մանդատի հասկացության և պարտավորությունների հարցերի նկատմամբ: Թուրքերի երկարատև տատանումներին վերջ դնելու և երկու կողմերի թեզերի մերձեցման համար անհրաժեշտ եղավ դիմել բրիտանական պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի մինիստր Անթոնի Իդենի ազդու միջնորդությանը: Անգլիան, Առանցքի պետությունների վտանգավոր առաջխաղացման պայմաններում, ուղղակիորեն շահագրգռված էր, որ իր դաշնակից Ֆրանսիայի և Թուրքիայի միջև վեճը չարվի այնքան, որ վերջինս հակվի Առանցքի կողմը: Հարցը ուսումնասիրող մի շարք հեղինակներ նույնիսկ պնդում են, որ հնարավոր եղավ ինչ-որ սկզբունքային համաձայնության հասնել՝ շնորհիվ Իդենի որոշակի ճնշման երկու կողմերի վրա⁹⁶:

Այս կնճռոտ հարցի շուրջ ձեռք բերված առաջին սկզբունքային համաձայնությունը առաջ բերեց լարվածության որոշ թուլացում, սակայն դեռևս վաղաժամ հրճվանք ժնկյան բոլոր պատվիրակությունների ու Լիգայի ղեկավարության շրջաններում, ինչպես նաև Փարիզում: Անկարան դեռ չէր հաստատում ժնկի իր պատվիրակության ընդունած տեքստը, որովհետև, ըստ բուրքերի, դեռևս համաձայնություն չէր գոյացել իրենց համար կենսական որոշ կետերի շուրջ: Հունվարի 25-ին Լիգայի խորհուրդը երկու պատվիրակություններին առաջարկեց նույն օրն իսկ բանակցություններ վարել Սանդլերի նախագահությամբ՝ լուծելու համար առկա մնացած վիճելի կետերը (մանդատի և պաշտոնական լեզվի հարցերը):

Իդենը նույնպես ներկա գտնվեց այդ բանակցություններին և ի վերջո լրիվ համաձայնություն ձեռք բերվեց Սանջաքի ապագա ռեժիմի շուրջ: Հունվարի 27-ին, Սանդլերը Լիզայի խորհրդի քննարկմանն ու հաստատմանը ներկայացրեց «Ալեքսանդրետի Սանջաքի ապագա իրավիճակի հիմնական սկզբունքների» մասին տաս կետերից բաղկացած իր զեկուցագիրը, որը հիմնված էր նախորդ օրը ձեռք բերված ֆրանս-թուրք համաձայնության վրա: Սանդլերի զեկուցագրի ընդունման օգտին ելույթներով հանդես եկան կողմերի ներկայացուցիչները, ինչպես նաև ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիայի և Ռումինիայի պատվիրակությունների ղեկավարները⁹⁷: Նույն նիստում էլ Սանդլերի ներկայացրած նախագիծը ընդունվեց Լիզայի կողմից: Այդ նախագծի հիմնական կետերը հետևյալներն էին.

1. Սանջաքը դառնում էր «առանձին քաղաքական միավոր», ինչ-որ «անկախ քաղաք պետություն», կամ Ա.Իդենի բնութագրումով՝ «Երկրորդ Դանցիզ, թեկուզ և ժամանակավոր»⁹⁸: Նա միայն անվանապես էր մնում Սիրիական պետության սահմանների մեջ, որի հետ կունենար ընդհանուր տարադրամային, մաքսային ու կապի սխտեմներ: Սիրիան պատասխանատու էր լինելու Սանջաքի արտաքին հարաբերությունների համար և Սիրիայի ու Սանջաքի պառլամենտներն իրենք պետք է կարգավորեին իրենց փոխադարձ հարաբերությունները:

2. Սանջաքը բանակ չի ունենալու, այլ միայն ոստիկանական-ժանդարմական ուժեր՝ ներքին անվտանգության պահպանման համար: Սանջաքի տարածքային ամբողջականությունը կերաշխավորվի համատեղ կերպով Ֆրանսիայի և Թուրքիայի կողմից. այդ նպատակով երկու երկրների միջև կկնքվի հատուկ պայմանագիր:

3. Թուրքերենը կլինի Սանջաքի պաշտոնական լեզուն, ուրիշ որևէ լեզվի օգտագործման բնույթն ու պայմանները կորոշվեն Լիզայի խորհրդի կողմից:

4. Սանջաքի՝ որպես «քաղաքական առանձին միավորի» համար կմշակվի նոր Ստատուս և Սահմանադրական (հիմնական) Օրենք, որոնց կիրառումը կերաշխավորվի Ազգերի Լիզայի խորհրդի անմիջական վերահսկողության (մանդատի) միջոցով. այդ վերահսկողությունը տեղում կապահովվի Լիզայի բարձր-կոմիսարի (ազգությանը ֆրանսիացի) նշանակումով:

Սանջաքի նոր Ստատուս և հիմնական Օրենքի նախագծերը մշակելու համար Լիզայի խորհրդի կողմից նշանակվեց

փորձագետների կոմիտե⁹⁰, որն իր աշխատանքներն սկսեց 1937 թ. փետրվարի 25-ին: Թուրքական և Ֆրանսիական կառավարությունները ներկայացրել էին մեկական նախագիծ, որոնց հիման վրա կոմիտեն պետք է մշակեր համապատասխան վավերագրեր, պետք է հաշվի առնվեին նաև Լիզայի կողմից տեղում կատարված ուսումնասիրությունների և դիտողությունների արդյունքները: Սակայն, Թուրքիայի ներկայացուցիչը փորձագետների կոմիտեում՝ Ն.Մենեննցիօղլուն շարունակ հրաժարվում էր էական որևէ փոփոխություն մտցնել իր ներկայացրած նախագծի տեքստի մեջ, որը գրեթե անհնար էր դարձնում Սիրիայի նույնիսկ անվանական գերիշխանության պահպանումը Սանջաքի վրա: Կոմիտեն հարկադրված որոշ ժամանակով դադարեցրեց իր աշխատանքները:

Միջազգային իրադրությունը մնում էր լարված և Առանցքի երկրների բանազնացները տենդագին գործունեություն էին ծավալում Թուրքիայում: Այդ օրերին (1937 թ. մարտի 18-ից 21-ը) Անկարայում էր գտնվում Բեռլինի ու Հռոմի «վստահելի անձ»՝ Ռուսինիայի դիկտատոր Անտոնեսկուն: Արտաքին գործերի մինիստր Ի.Ղելբոսին ուղարկված իր գաղտնի հեռագրով՝ Անկարայում Ֆրանսիայի գործերի հավատարմատարը մարտի 20-ին հայտնում էր հետևյալը. «Պ.Անտոնեսկուի հետ ունեցած իր տեսակցության ժամանակ Ք.Աքաթուրը դաժան ու խիստ ելույթ է ունեցել Ալեքսանդրեոսի գործի կապակցությամբ: «Ես շատ լուրջ մտածել եմ այդ գործի մասին, - ընդգծել է նա, - և այժմ իմ որոշումը կայացրել եմ արդեն, ես կնախընտրեի հեռանալ իշխանությունից, քան չտեսնել իմ երկրի լիակատար գոհացում ստանալը»⁹¹:

Եվ այսպես, Թուրքիայի սպառնալիքների, Առանցքի խարդավանքների և Անգլիայի «բարեկամական» ճնշման հարկադրանքի տակ՝ Ֆրանսիան դարձյալ զիջեց և Թուրքիային հաջողվեց անցկացնել իր ներկայացրած նախագիծը՝ շատ անճշան փոփոխություններով⁹²: 1937 թ. մայիսի 15-ին փորձագետների կոմիտեն ավարտված համարեց իր աշխատանքները՝ Լիզայի խորհրդին ներկայացնելով իր գեկուցագրերն ու նախագծերը: Դրանց հիման վրա Սանդլերը պատրաստեց Լիզայի խորհրդի քննարկմանն ու հաստատմանը ներկայացվելիք Սանջաքի նոր Ստատուսի և հիմնական Օրենքի նախագծերը: Սակայն, 1937 թ. մայիսի 29-ին, երբ Սանդլերը դրանք ներկայացրեց Լիզայի խորհրդին՝ դրանք չենթարկվեցին որևէ քննարկման խորհրդի անդամների կողմից, այլ պարզապես ընդունվեցին այն բանից

հետո, երբ Թուրքիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները հայտարարեցին, թե իրենց կառավարությունները հաստատում են այդ նախագծերը¹⁰¹:

Նույն օրն էլ, մայիսի 29-ին, կնքվեցին ֆրանս-թուրքական հետևյալ համաձայնագրերը¹⁰²:

1. «Մանջաբի հողային ամբողջականության երաշխիքի մասին դաշինքը», որով երկու երկրները պարտավորվում էին շրջանի ամբողջականությունը սպառնացող վտանգի դեպքում ձեռք առնել անհրաժեշտ նախագույշական և պաշտպանական միջոցներ, այդ մասին տեղյակ պահելով Լիզայի խորհրդին:

2. «Ֆրանս-թուրքական համատեղ դեկլարացիան» Սիրիայի և Լիբանանի տարածքային ամբողջականությունը հարգելու մասին, այն սահմաններում, որոնք հաստատված են 1923 թ. Լոզանի դաշնագրով:

3. «Թուրք-սիրիական սահմանագծի երաշխավորման պայմանագիրը»¹⁰³, որով Թուրքիան, որպես վերջնական սահմանագիծ, ճանաչում էր 1930 թ. մայիսի 3-ի թուրք-սիրիական արձանագրությամբ հաստատված սահմանները:

4. Այդ պայմանագրին կից արձանագրություն, որը Սիրիային իրավունք էր վերապահում, Ազգերի Լիգա ընդունվելուց հետո, օգտվել այն բոլոր պայմանագրերից ու համաձայնագրերից, որոնք Սիրիայի անունից Ֆրանսիան կնքել է Թուրքիայի հետ:

1937 թ. մայիսի 29-ին ստորագրված վավերագրերը Ֆրանսիայում առաջացրին ինչ-որ «թեթևացում», որովհետև դրանք կանխել էին հավանական զինված կոնֆլիկտը, որին հարատևորեն ձգտում էին Անկարայի կառավարողները Առանցքի երկրների դիվանագետների և «խորհրդականների» քաջալերմամբ¹⁰⁴:

Ազգերի Լիգայի խորհրդի կողմից 1937 թ. հունվարին ու մայիսին Ալեքսանդրետի հարցին տրված «լուծումը» ըստ էության կոմպրոմիսային կարգավորում էր՝ ձեռք բերված միջազգային լարված հարաբերությունների պայմաններում և ժամանակավորապես պահպանում էր խաղաղությունը Արևելյան Միջերկրականի շրջանում: Հենց այդ պատճառով այն որոշ գոհունակությամբ ընդունվեց շահագրգռված պետությունների կողմից՝ որպես միջազգային կոնֆլիկտների կոլեկտիվ քննարկման ու խաղաղ կարգավորման ուղու հաղթանակ¹⁰⁵:

Ընդունելով հանդերձ ժնկյան կոմպրոմիսի նշանակությունը միջազգային լարվածության թուլացման գործում, չի կարելի

աչքաթող անել հետևյալ կարևոր հանգամանքները, որոնք խիստ նսեմացնում են դրա նշանակությունը.

1. Այդ կոմպրոմիսը Սանջաքի հարցի արդարացի ու վերջնական լուծում չէր, այլ քաղաքական կարգավորում, որի ժամանակավոր կիրառումն իսկ պետք է հանդիպեր կյանքի հարուցած խոշոր խոչընդոտներին: Արդարև, ժնկյան ակտերի հետևանքով իր անկախության շեմին գտնվող Սիրիան փաստորեն զրկվում էր երկրի անբաժան մասը հանդիսացող Ալեքսանդրետի մարզի վրա ունեցած գերիշխանության իրավունքից, որովհետև «այդ կոմպրոմիսը Ալեքսանդրետի Սանջաքը փաստորեն դնում էր թուրք-ֆրանսիական համատեղ վերահսկողության տակ և բավարարում էր թուրքերի հիմնական պահանջները»¹⁰⁶: Մարսել Օմեն ընդգծում է, որ «այդ կոմպրոմիսով անենաթույլ երկիրը՝ Սիրիան գրեթե սեփականազրկվում էր, իսկ Թուրքիան ձեռք էր բերում շոշափելի արդյունքներ»¹⁰⁷:

2. Ժնկյան վերոհիշյալ վավերագրերում կային էական թերություններ թե՛ բովանդակության և թե՛ տեքստերի ձևակերպման մեջ: Բանը այն է, որ Սանջաքի նոր կարգավիճակի և Հիմնական Օրենքի նախագծերը, ինչպես նշվեց, որևէ քննարկման, ուղղման կամ ամենադուրյգն փոփոխության իսկ չենթարկվեցին Ազգերի Լիգայի խորհրդի կողմից: Ֆրանսիական պատվիրակությունը գրեթե անփոփոխ ընդունել էր թուրքական պատվիրակության ներկայացրած նախագծերը, որոնք ոչ թե քննարկվել ու հաստատվել, այլ ձևականորեն ընդունվել էին Լիգայի խորհրդի կողմից: Բացի այդ, նախագծի հեղինակների կողմից կանխամտածված ձևով անորոշ ու երկիմաստ թողնված այդ վավերագրերը միջազգային իրավական տեսակետից անորոշություն և քաղաքական անկայունություն էին ստեղծում այդ շրջանում: Չպետք է մոռանալ նաև, որ Լիգայի խորհրդի քննարկմանը և հաստատմանը չներկայացվեցին Սանջաքին վերաբերող այն համաձայնագրերը, որոնք կնքվել էին նույն մայիսի 29-ին Ֆրանսիայի ու Թուրքիայի միջև: Դրանք պարզապես Ազգերի Լիգայի ընդհանուր քարտուղարին հաղորդվեցին այդ երկրների ներկայացուցիչների կողմից¹⁰⁸:

Միջազգային իրավունքի տեսակետից կարևոր այս հանգամանքները գրեթե վրիպել են Ալեքսանդրետի հարցը ուսումնասիրող հեղինակների ուշադրությունից: Մինչդեռ՝ դրանցից բխող թերությունները լուրջ կերպով խախտում էին ժնկյան

կարգավորման իրավական արժեքը:

Նոր կարգավիճակի գլխավոր կետերը հետևյալներն էին.

Ալեքսանդրետի Սանջաքը դառնում էր քաղաքական «ինքնուրույն (առանձին) միավոր, որը վայելում է լիակատար անկախություն իր ներքին գործերում» (նոր Ստատուս, հոդ. 1-ա), ինչպես այդ պահանջել էր Թուրքիան: Սանջաքը ունենալու էր Սիրիայից բոլորովին անկախ և առանձին օրենսդիր իշխանություն՝ Սանջաքի ասամբլեա-պառլամենտ (հիմնական Օրենք, հոդ. 5), որին իրավունք էր վերապահվում հիմնական Օրենքում մտցնել լրացումներ ու փոփոխություններ, նույնիսկ փոխել Սանջաքի անվանումը (հոդ. 4): Սանջաքը ունենում էր ինքնուրույն գործադիր իշխանություն, հանձինս պետության ղեկավարի՝ «Սանջաքի պրեզիդենտի» և նրա կողմից նշանակված «գործադիր խորհրդի» - կառավարության (հոդ. 19-24), ինչպես նաև դատական իշխանություններ՝ գերագույն դատարան և այլ դատական մարմիններ (հոդ. 25-27): Ընդ որում, 1937 թ. նոյեմբերի 27-ին, բարձր-կոմիսարի N159 հրամանագրով, նոր կարգավիճակի ու հիմնական Օրենքի՝ ուժի մեջ մտնելու նախօրյակին, Սանջաքի դատական մարմիններին արդեն տրվել էր «սիրիականից բոլորովին անջատ՝ նոր կազմակերպություն»¹⁰⁰:

Սանջաքը՝ այդ «ինքնուրույն միավորը» անվանապես մնում էր կապված Սիրիայի հետ՝ արտաքին հարաբերությունների և մաքսային ու տարադրամային սխտեմների բնագավառներում (նոր Ստատուս, հոդ. 1-բ, 1-գ), սակայն Սիրիայի գերիշխանությունը Սանջաքի վրա գրեթե ոչնչի էր հավասարեցվում հաջորդ հոդվածների տրամադրություններով: Այսպես, «Սանջաքի կառավարությանը» իրավունք էր վերապահվում կնքել միջազգային պայմանագրեր (հոդ. 18) և ընդունել կամ մերժել Սիրիայի կողմից կնքված այն պայմանագրերը, որոնք այս կամ այն չափով կառնչվեն Սանջաքի հետ (հոդ. 15, 16): Թուրքական և ֆրանսիական կառավարություններին իրավունք էր վերապահվում միջամտելու Սանջաքի ներքին գործերին: Այս վերջին իրավունքը հաստատվում էր նաև ինչպես նշվեց, 1937 թ. մայիսի 29-ին կնքված ֆրանս-թուրքական «Սանջաքի տարածքային ամբողջականությունը երաշխավորելու մասին» դաշինքով: Եթե մի կողմից Սանջաքը մնում էր Սիրիայի հետ նույն մաքսային սխտեմում, մյուս կողմից Թուրքիային ևս Սանջաքի ու Սիրիայի կառավարություններին հավասար իրավունքներ էր տրվում Ալեքսանդրետի

նավահանգստից օգտվելու՝ բնագավառում» (հոդ. 43-53): «Սանջաքի կառավարությանը» իրավունք էր տրվում «մանր դրամ կտրել (հոդ. 4), և ներքին օգտագործման համար՝ փոստանիշներ բաց թողնել», ինչպես նաև հետագայում Սիրիայից անջատ «ընդունվել միջազգային փոստային միության և հեռահաղորդակցությունների միության մեջ» (հոդ. 54): Այս բոլորի կողքին, Սիրիային իրավունք էր տրվում միայն «Ընդհանուր շահերի գործերի համար ներկայացվել Սանջաքի կառավարության» մոտ՝ մեկ կոմիսարի միջոցով: Նույն ձևով Սանջաքը պետք է ներկայացվեր սիրիական կառավարության մոտ (հոդ. 13):

Վերը շարադրվածից հետևում է, որ Սանջաքի ներքին գործերի կառավարման բնագավառում Սիրիայի գերիշխանությունը հաստատող որևէ ռեալ իրավունք չէր նախատեսված: Ինչ վերաբերում է արտաքին հարաբերություններին, Սանջաքի ենթակայությունը Սիրիական պետությանը, ինչպես ասվեց, մնում էր լուրջ ձևական, քրթի վրա միայն: Այս կապակցությամբ Դ.Չենսոնին իրավացիորեն նշում է, որ «նոր պետության գործերը փաստորեն պետք է տնօրինվեին երրորդների՝ Ազգերի Լիգայի, Ֆրանսիայի ու Թուրքիայի կամքով, որովհետև Սանջաքի սեփական ուժը բոլորովին վերացական տվյալ է: Սակայն, բոլորից ավելի Թուրքիան է, որ թե՛ բարոյապես, թե՛ նյութապես գերիշխելու էր այնտեղ»¹⁰: Նոր կարգավիճակի կիրառումով վերջնականապես կտրվելու էին Սանջաքի առանց այն էլ թույլ կապերը Սիրիայի հետ: Դամասկոսի կառավարության ձեռքից վերցվում էին Սանջաքի մուհաֆեզ (նահանգապետ) նշանակելու, այդ շրջանի «ինքնավար բյուջեն» հաստատելու և դատական մարմիններին վերահսկելու չնչին իրավունքներն իսկ: Թուրքերենը դառնում էր Սանջաքի միակ պաշտոնական լեզուն, իսկ Լիգայի խորհուրդը հետագայում որոշելու էր «ուրիշ մեկ լեզվի գործածության բնույթն ու հանգամանքները»: Արաբերենը չէր հիշատակվում:

Ներքին և արտաքին բարդ իրադրության պայմաններում ինչպիսիքն պետք է լիներ Սանջաքի՝ քաղաքական այդ «ինքնուրույն միավորի» իրավական գոյավիճակը: Պոլ դյու Վեուհ իրավամբ նշում է, որ «Սանջաքը կոչված էր օգտվելու աննախադեպ միջազգային մի իրավիճակից»¹¹: Արդարև, պետություն համարվելու համար Սանջաքն ուներ անհրաժեշտ պայմանները. հանրային ներքին իրավունքի տեսակետից՝ հողային ամբողջականություն, ինքնուրույն պետական կառուցվածք, առանձին

քաղաքացիություն և այլն: Իսկ միջազգային իրվունքի տեսանկյունից դիտելիս՝ Սանջաքը չուներ պետության հատկանիշները. նա միջազգային ներկայացուցչության իրավունք չուներ և նրա արտաքին հարաբերությունները պետք է տնօրինվեին Սիրիայի կողմից (նոր Ստատուս, հոդ. 1, 19, 20, 21): Խոսելով Սանջաքի այս «աննախադեպ իրավիճակի» մասին, իտալացի իրավագետ Սփեթոլուտին գրում է. «Սանջաքի և Սիրիայի միասնությունը հանդիսանում է պետությունների ոչ-միջազգային միություն, որը ունի հետևյալ բնորոշ կողմը - այն կազմող պետությունները հավասար են իրար միջև և ոչ ենթակա մի երրորդի. այստեղից էլ, խնդրո առարկա կազմակերպությունը հանդիսանում է այդ տիպի միության բոլորովին յուրահատու մի ձև, բոլորովին տարբեր՝ կոնկրետ ու ծանոթ որևէ օրինակից. որովհետև անդամ պետություններից միայն մեկը միջազգային ճանաչում ունի և իր միջազգային դերով ծածկում է մյուս պետությանը, սակայն առանց որևէ չափով խանգարելու իրենց փոխադարձ անկախությանը»¹²:

Ինչպես տեսնում ենք, Ժնևյան կոմպրոմիսը ո՛չ արդարացի կարգավորում էր, ոչ էլ իրավական լուծում:

Ժնևյան կոմպրոմիսը խոր զայրույթով ընդունվեց Սիրիայի և արաբական մյուս երկրների քաղաքական շրջանների ու լայն հասարակայնության կողմից: Ինչպես ասվեց, այդ կոմպրոմիսը լրիվ անտեսում էր հիմնական շահագրգռված կողմի՝ Սիրիայի կենսական շահերը: Այս հանգամանքը ընդգծվում է հարցի գրեթե բոլոր հետազոտողների կողմից՝ բացի թուրք հեղինակներից: Ինչպես գրում է Մ.Խալոլուրիին, արաբ ժողովուրդները հաստատ համոզված էին, որ «...մանդատային իշխանությունները և նրանց դաշնակիցները Սանջաքը ծախել, գոհաբերել էին իրենց սեփական մաշկը փրկելու համար»: Նույն հեղինակը, վկայակոչելով Սանջաքի արաբների հետ ունեցած իր գրույցները, նշում է, որ հենց Սանջաքում արաբները ուժեղ դիմադրություն են ցույց տվել Ժնևի որոշմանը, հակառակ Ա.Թոյնբիի անհիմն ենթադրությանը, թե իբր «Սանջաքի արաբները համաձայնվել էին այդ կարգավորմանը»¹³:

Իրականում, թե՛ Սանջաքում, թե՛ ամբողջ Սիրիայում արաբներն ու հայերը մեծագույն հուսախաբությամբ և ընդվզումով ընդունեցին Ժնևյան կոմպրոմիսը: Ժողովրդական ընդհանուր ցասումը արտահայտվեց բողոքի ցույցերով ու գործադուլներով՝

դեռևս 1937 թ. հունվարի 25-26-ին, երբ հայտնի դարձան ժնևում ձեռք բերված «սկզբունքային համաձայնության» արդյունքները: Այդ օրերին և մինչև փետրվարի սկիզբը ընդհանուր գործադուլը տարածվեց Սիրիայի բոլոր քաղաքներում: Ջանգվածային վիթխարի ցույցեր տեղի ունեցան Հալեպում, Գամասկոսում, Ալեքսանդրետում, Անտիոքում, Գեյր-Ջորում, Համալում, Հոմսում և ուրիշ տեղերում՝ արաբների և հայերի, ազգայնականների և կոմունիստների մասնակցությամբ: Հալեպի հունվարի 26-ի ցույցին մասնակցեց շուրջ 30 հազար մարդ, որոնք անցնելով Ֆրանսիական բարձր-կոմիսարության ներկայացուցչության, անգլիական ու բուրբակյան հյուպատոսարանների առջևով, իրենց բողոքը հայտնեցին և հանձնեցին բողոքի հեռագրեր: Գամասկոսի մամուլի տվյալներով, հունվարի 25-ին 15.000 ցուցարարներ փողոց են իջել և հուշագիր են հանձնել անգլիական հյուպատոսին: Յուցարարներին միացել են նաև պրեմիեր-մինիստր Ջ.Մարդամ-Բեկը և արտաքին գործերի մինիստր Սաադալլա Ջաբրին, որոնք հայտարարել են, թե «Սիրիացիները և նրանց ղեկավարները կդիմադրեն Թուրքիային և չեն զիջի Ալեքսանդրետը, ինչպես որ անկախության համար պայքարել են Ֆրանսիայի դեմ»¹¹⁴: Հունվարի 28-ին սիրիական կառավարությունը հրապարակեց մի հաղորդագրություն, որի մեջ ժողովրդին կոչ էր արվում հանգիստ մնալ և վստահ լինել, որ կառավարությունը ամեն ինչ կանի Ալեքսանդրետի պաշտպանության համար: Բողոքի ցույցերին զուգընթաց, համաժողովրդական դժգոհություն արտահայտող հողվածներ ու ելույթներ հրապարակվեցին բոլոր թերթերում, բողոքի բազմաթիվ հեռագրեր ուղարկվեցին Բեյրութ, Փարիզ, ժնև: Սանջաքի Ազգային Գործունեության Լիգայի անունից բարձր-կոմիսարին ուղարկած իր հեռագրում Ջեբի ալ-Աբսուգին հիշեցնում էր, որ Սանջաքի կոնֆլիկտը ստեղծվել էր դեռևս այն օրվանից, երբ Կիլիկիան 1921 թ. զիջվեց բուրբերին: Նա պահանջում էր, որ արաբական Սանջաքը չզիջվի նրանց¹¹⁵: «Ալ-Այյամ» թերթը, խոսելով Սիրիայի և արաբական երկրների, հատկապես Հալեպի, Ալեքսանդրետի և Անտիոքի հայերի՝ «Սանջաքի պաշտպանության գործում ազնվագույն դիրքավորման մասին», հայտնում էր, որ Անտիոքի շրջանի հայերը 1937 թ. փետրվարի 2-ին հեռագիր են ուղարկել Ազգերի Լիգային: Այդ հեռագրում նրանք հայտարարում էին, որ «հայերը արաբների հետ կատարյալ համերաշխությամբ ապրում են սիրիական ուայրենիքում և իրենց բողոքն են հայտնում Սանջաքի գործերին Թուրքիայի որևէ

ձևի միջամտության դեմ, որովհետև չեն մոռացել 1915-1919 թվականներին հայերի հանդեպ թուրքերի կատարած վայրագությունները»¹¹⁶:

Սանջաքի պաշտպանության համար ժողովրդական ցույցերն ու ելույթները շարունակվում էին. ժողովրդական զանգվածների ընդվզումը ըմբոստության էր մոտենում: Գամասկոսում, Օմայյադ մզկիթի հրապարակում ցույցի ժամանակ, մի շարք հռետորներ ժողովրդին նույնիսկ կոչ արեցին զենք վերցնել կռվելու Սիրիայի անդամահատման դեմ¹¹⁷: Կառավարող Ազգային Բլոկ կուսակցությանն ընդհնադիր խմբավորումներն ու քաղաքական գործիչները, Բեռլինի և Հռոմի խորհուրդներով, դաժան քննադատության էին ենթարկում Ջ.Մարդան-Բեկի կառավարությունը այն բանի համար, որ նա անհրաժեշտ եռանդով ու բոլոր միջոցներով չի պաշտպանում Սանջաքը: Էմիր Շեքիբ Արսլանը Ժնևի իր ղեկավարած «Լա Նասիոն Արաբ» թերթում զգուշացնում էր, որ Սանջաքը՝ Սիրիայի նկատմամբ կիրառվող թուրքական նվաճողական քաղաքականության միայն առաջին փուլն է. հաջորդ փուլերն են՝ Հալեպը և ամբողջ Սիրիան: Թերթը պահանջում էր, որ Ազգային Բլոկը արաբ ժողովրդին ոտքի հանի Սանջաքը պաշտպանելու համար¹¹⁸: Եղավ մի պահ, երբ ազգային կառավարությունը դժվարացավ հանդարտեցնել ընդվզված զանգվածներին և պատշաճ կարգ ու կանոն պահպանել երկրում: Ալեքսանդրետի պաշտպանության կոմիտեներում գործուն աշխատանք կատարող Ազգային Գործունեության Լիգայի անդամները և դոկտոր Շահբանդարի կուսակիցները ուզում էին առիթից օգտվել՝ վարկաբեկել կառավարող կուսակցությունը և վերցնել իշխանությունը:

Ջ.Մարդան-Բեկի կառավարությունը, ինչ խոսք, պարտավոր էր զգուշ և չափավոր դիրք բռնել Փարիզի ու Ժնևի հանդեպ, որովհետև ֆրանսիական պառլամենտը դեռևս չէր հաստատել ֆրանս-սիրիական դաշնագիրը: Մխալ կլինեք, - գրում է Ֆ.Գրեյվզը, - «վտանգել Սիրիային անկախություն խոստացող դաշինքը, հախտուն ելույթներ թույլ տալով Սանջաքի պաշտպանության օգտին»¹¹⁹: Ընդ որում, 1937 թ. սկզբներին թվում էր, թե դեռ ամեն ինչ կորած չէ Սանջաքի հարցում: Բեյրութի ու Կահիրեի մամուլի հանդարտության կոչերը, զգուշության խորհուրդները նպաստեցին այն բանին, որ ընդվզած զանգվածները հանդարտվեն և ազգային կառավարությանը հնարավորություն տան ձեռնարկելու

անհրաժեշտ միջոցներ՝ Սանջաքի պաշտպանության համար: 1937 թ. փետրվարի 3-ին սիրիական կառավարական մի պատվիրակություն (որի կազմի մեջ մտնում էին պրեմիեր-մինիստր Ջ.Մարդան-Բեկը, արտաքին գործերի մինիստր Ս.Ջաբրին և պրեզիդենտի կաբինետի պետ Ն. ալ-Արմանազին), ճանապարհվեց դեպի Փարիզ ու ԺՆԼ՝ ժնկյան կոմպրոմիսի պայմանները վերանայել տալու նպատակով¹²⁰: Մինիստրների մեկնումը որոշ չափով հանդարտեցրեց ժողովրդին¹²¹:

Պատվիրակության՝ Փարիզ հասնելու և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունում Ի.Դելբոսի և Պ.Վիենոյի հետ տեսակցելու լուրերը որոշ չափով մեղմացրին ժողովրդական գայլույթի ալիքը, և գրգռվածությանը հաջորդեց սպասումի մթնոլորտը: Փարիզից հետո պատվիրակությունն անցավ ԺՆԼ, որտեղ սերտ կապ պահպանեց Սանջաքի նոր կարգավիճակի նախագիծը մշակող փորձագետների կոմիտեում Ֆրանսիայի ներկայացուցիչ Ռոբեր դը-Քելի հետ: Պատվիրակությունը այդ կոմիտեին ներկայացրեց սիրիական կառավարության դիտողությունները Սանջաքի հարցի վերաբերյալ: Սանջաքը նախկին ձևով պետք է մնար Սիրիայի կազմում, իսկ փոքրամասնություններին տրված իրավունքները կհարգվեին սիրիական կառավարության կողմից:

Քանի որ Սիրիայի արտաքին հարաբերությունների, ապա և Սանջաքի հարցի տնօրինումը դեռևս մնում էր Ֆրանսիայի ձեռքում, սիրիական պատվիրակությանը ուրիշ բան չէր մնում անել, բան վերադառնալ հայրենիք, իր հետ բերելով միայն ... խոստումներ:

Սանջաքի պաշտպանությունը արձագանք գտավ բարեկամ աֆրիկյան երկրներում: Ալեքսանդրետի պաշտպանության կոմիտեի կենտրոնական խորհրդի նախագահ Ֆախրի Բարուդիին ուղարկված իր հեռագրում, Եթովպիայի կայսր Հայլե Սելասիեն գրում էր. «Եթովպիայի ողբերգությունը ուրիշների համար դաս պետք է լինի: ... Վախենում եմ, որ Ալեքսանդրետի հարցը ևս այդպիսի դաս դառնա: Ազգերի Լիգան ընդառաջեց թուրքերի ցանկություններին, ... անամոթաբար ընդունելով թուրքերի իրավունքները այդ մարզի վրա: ... Ազգերի Լիգան պաշտպանում է ուժեղին և ոչ թե թույլին ու ճնշվածին»: Վերջում Եթովպիայի կայսրը սիրիացիներին հորդորում էր լինել միասնական ու համերաշխ՝ պատրաստ պայքարի համար: Իր պատասխանում Ֆ.Բարուդին

հույս էր հայտնում, որ սիրիական կառավարությունը կզուտի վեճի լուծման մի ձև, որը բավարարի արաբներին, հակառակ դեպքում, ասում էր նա, «մենք կկուլենք թուրքերի դեմ և կպաշտպանենք մեր սահմանները, կամ կբնաջնջվենք»¹²²:

Հաջորդ ամիսներին, մինչև մայիսի վերջերը դրությունը համեմատաբար հանդարտ էր Սիրիայում և Մանջարում, հակառակ Թուրքիայից ամեն օր Մանջաբ անցնող զինված խառնակիչների և ապագա «ընտրողների» քայքայիչ գործունեության, որի մասին ապրիլի 7-ին Անկարայի մեջլիսում զեկուցել էր Թուրքիայի ներքին գործերի մինիստրը:

Մայիսի 27-ին, երբ Մանջաբի նոր Ստատուսի լրիվ բովանդակությունը հայտնի դարձավ Սիրիայում, ժողովրդական դժգոհության ու բողոքի ալիքը հասավ իր գագաթնակետին: Մայիսի 21-ից ի վեր շարունակվող ընդհանուր գործադուլը Մանջաբում կանգնեցրել էր ամբողջ առևտուրը, տրանսպորտը, հասարակական կյանքը: Մայիսի 29-ին, ժնկյան կոմպրոմիսի և հարակից վավերագրերի ընդունման և ստորագրման օրը, Անտիոքի և շրջակայքի ժողովուրդը՝ արաբներ, հայեր, Սիրիային կողմնակից թուրքեր, մուսուլմաններ ու քրիստոնյաներ, բացի թուրք ծայրահեղներից քաղաքի կենտրոնական մզկիթում, հավաքվելով միտինգի, հայտնեցին իրենց որոշումը՝ մերժել ժնկյան կարգավորումը, որը հակառակ իրենց կամքի իրենց բաժանում էր սիրիական հայրենիքից: Արաբ, հայ, հույն-ուղղափառ, թուրք և չերքեզ համայնքների անունից բողոքի հինգ հանրագրեր ուղարկվեցին Ազգերի Լիգային, որոնցում մերժվում էր Լիգայի խորհրդի ընդունած Մանջաբի նոր կարգավիճակը¹²³: Հունիսի 2-ին սիրիական պառլամենտը հոտընկայս և միաձայն ընդունեց բողոքի բանաձև ժնկյան ակտերի դեմ, որը ուղարկվեց Լիգայի խորհրդին: Այդ բանաձևում ասվում էր. «Սիրիական պառլամենտը, ներառյալ Մանջաբի բոլոր պատգամավորները, որոնք իսկապես ներկայացնում են ժողովրդին, ... հաշվի առնելով, որ ֆրանս-սիրիական դաշնագիրը Ֆրանսիային պարտավորեցնում է պաշտպանել Սիրիայի հողային ամբողջականությունը, պաշտոնապես հայտարարում է, որ Սիրիայի գերիշխանությունից սիրիական հայրենիքի որևէ մաս պոկելու փորձը կհանդիսանա աներկբայորեն կոպիտ խախտում մի Մահմանադրության, որը հաստատվել է հենց Ազգերի Լիգայի կողմից, ինչպես նաև մի դաշնագրի, որի թանաքը դեռևս թաց է: Սիրիական ազգը... չի կարող ճանաչել որևէ լուծում,

որը խախտում է սիրիական միասնությունը և վճռել է պաշտպանվել իր հավատի ու իրավունքի բոլոր ուժերով»¹²⁴:

Նույն նիստում պառլամենտի անդամ Ֆախրի Բարուդին հայտարարեց. «Սանջաքը արաբական է և յոթանասուն միլիոն արաբներ պատրաստ են պաշտպանելու Սիրիայի արդար իրավունքները»: Հոմսի պատգամավոր Շիշաքլին ավելացրեց, որ «Սիրիան կարող է սպասել 44 և ավելի տարիներ, ետ վերցնելու համար ոչ միայն Ալեքսանդրետը, այլև ամբողջ սիրիական հողերը՝ մինչև Տավրոսի բնական սահմանները»: Հալեպի պատգամավոր Էդոն Ռաբբաթը պառլամենտից պահանջեց ամեն ինչ գործի դնել «սիրիական մայր-հայրենիքի ծոցում պահելու համար Ալեքսանդրետի Սանջաքը, որը հանդիսանում է արաբական երկրների միասնության և անկախության բանալին»¹²⁵: Սիրիական կառավարությունը հունիսի վերջերին ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությանը հղեց հանգամանակից մի հուշագիր, որտեղ ոչ միայն բողոք էր հայտնվում խորհրդի որոշման դեմ, այլև ցույց էին տրվում այն գործնական ղժվարությունները, որոնք ծագելու էին Սանջաքի նոր կարգավիճակը և հիմնական Օրենքը կյանքում կիրառելիս¹²⁶: 1937 թ. հունիսի 3-ին բողոքի ընդհանուր գործադուլը տարածվեց ամբողջ Սիրիայում: Ֆրանսիական «Թան» թերթի թղթակիցը Բեյրութից հաղորդում էր, որ տասնյակ հազարավոր ցուցարարներ Սանջաքում, Հալեպում, Համայում ու Դամասկոսում շրջում են փողոցներով՝ վանկարկելով. «Ալեքսանդրետը արաբական է»: Դամասկոսում, - հայտնում էր թղթակիցը, - պրեմիեր-մինիստրը ելույթ ունենալով ցուցարարների առջև հայտարարել է, որ «իր կառավարությունը հույս ունի հաղթահարելու ներկա ղժվարությունները և ամեն ջանք ի գործ կդնի պահպանելու Սանջաքը»¹²⁷: Անտիոքում փոխպատվիրակ Դյուրիոն խորհրդակցություն հրավիրեց արաբական, հայկական և թուրքական կուսակցությունների ղեկավարների մասնակցությամբ՝ կողմերի հաշտեցման նպատակով: Պարզ է, որ նման փորձերը կանխօրոք դատապարտված էին անլուծյան, որովհետև խառնակություններն ու ընդհարումները կրկնվում էին ոչ միայն արաբների ու թուրք անջատողականների, այլև վերջիններիս և թուրք խաղաղասեր ազգաբնակչության միջև, որը ցանկանում էր շարունակել իր խաղաղ կյանքը Սիրիայի սահմաններում¹²⁸: Սանջաքում լարված դրությունը չմեղմացավ թուրքասեր պատվիրակ Պիեռ Դյուրիոյի պաշտոնից հեռացվելով՝ 1937 թ.

հուլիսի 18-ին¹²⁹։ Խառնակ վիճակը շարունակվեց մինչև սեպտեմբեր ամիսը։ Սեպտեմբերի 8-ին բարձր-կոմիսարի նոր պատվիրակը՝ Ռոժե Գառն ստանձնեց իր պաշտոնը Մանջաբում, իսկ սեպտեմբերի կեսերին Լիզայի ընտրական հանձնաժողովը հասավ Ալեքսանդրետ։

Ժնևյան կոմսյրոմիսը Թուրքիայում ընդունվեց մեծ հրճվանքով, որպես թուրքական դիվանագիտության հաղթանակ և որպես գալիք հավանական հաղթանակների նախաքայլ, որովհետև, ինչպես նշում է Ջ.Լենցովսկին, այդ կոմսյրոմիսով Մանջաբը փաստորեն ենթարկվում էր թուրքական գերիշխանությանը և նրա «թրքականությունը» ընդունվում էր¹³⁰։ Հունիսի սկզբներին, երբ Աթաթուրքը Ստամբուլ ժամանեց, նրան դիմավորեցին խանդավառ ցույցերով և «Կեցցես, ապրես թուրքական Հաթայը փրկող» կոչերով¹³¹։ Հունիսի 14-ին Թուրքիայի մեջլիսը հաստատեց Մանջաբի նոր կարգավիճակը, հիմնական Օրենքը և հարակից ֆրանս-թուրքական պայմանագրերը։ Այդ կապակցությամբ կատարած իր ելույթում պրեմիեր-մինիստր Ի.Ինոնյուն հայտարարեց. «Ես գտնում եմ, որ Հաթայում մեր ձեռք բերած արդյունքի էական արժեքը այն համոզմունքն է, որ գոյացել է մեր մտքերում այդ լուծման լավագույն ձևով ավարտման մասին։ Հաթայի հարցը իր վերջնական կարգավորումը գտել է...»¹³²։ Մեկնաբանելով Ինոնյուի այս հայտարարությունը, Ա.Շ.Էսմերը գրում է. «Սակայն Հաթայի հարցը Ինոնյուի ասածի նման վերջ գտած լինելուց շատ հեռու էր...»¹³³։ Արդարև, ֆրանսիական դիվանագիտության շարունակական զիջումներին զուգընթաց՝ Անկարայի նվաճողական ախորժակը սրվում էր և, ինչ խոսք, միջազգային հարաբերություններն էլ շատ ձեռնտու էին Թուրքիայի ծրագրերի իրագործման համար։ Բացի այդ, Թուրքիան այդ ամիսներին հասել էր նոր նվաճումների՝ Ալեքսանդրետում բացվել էր թուրքական հյուպատոսարան, իսկ Անտիոքում՝ գլխավոր հյուպատոսարան։ Մանջաբի սահմաններին հարող երկաթգծի՝ Ֆեզիփաշա-Թոփրաքկալե-Մեյդան-Էբբեգ հատվածները, որոնք պատկանում էին ֆրանս-թուրքական խառն ընկերությանը, գնվեցին թուրքական կառավարության կողմից¹³⁴։ Սեպտեմբերին Թուրքիան անցավ նաև տնտեսական ու ֆինանսական հարձակման Մանջաբի և Հալեպի նահանգի դեմ՝ գերմանացի կամ իտալացի

«խորհրդականների» կողմից ղեկավարվող բանկային և ֆինանսական հիմնարկությունների միջոցով ջանալով սնանկության եզրին հասցնել թուրք ծայրահեղներին չենթարկվող սանջաքցիներին և թուրքական կողմնորոշումը չպաշտպանող հալեպցի առևտրականներին¹³⁵: Անկարայից ու Ստամբուլից ղեկավարվող հակասիրիական, հակաֆրանսիական պրոպագանդան շարունակվում էր: Վերջապես փակվեց թրքահպատակ ոմն Մուհիդդին Միդանիի կողմից Բեյրութում հրատարակվող, բայց թուրքական հյուպատոսարանի կողմից ֆինանսավորվող քենալական «Յըլդըզ» թերթուկը: Թուրքական «Ալ-Մուքադանեթ» պարբերականի (որը լույս էր տեսնում թուրքերեն և արաբերեն) մուտքը Սիրիա արգելվեց 1937 թ. ամռանը¹³⁶: Այդ բոլոր գործողությունները դիվերսիայի ծխով քողարկելու նպատակով է, թերևս, որ Ա.Շ.Էսմերը փորձում է հավատացնել, թե իբր «ֆրանսիական գաղութային պաշտոնատարները Հաթայում գտնվող փոքրամասնություններին զրգռում էին (Հաթայի) թուրք ժողովրդի դեմ և ... խանգարում Հաթայի անկախությանը հասնելու նրա մաքառումներին»¹³⁷: Պրոֆեսոր Էսմերը «մոռանում է» ավելացնել, թե թուրքական «մեծամասնությանը» ո՞վ էր զրգռում:

1937 թ. նոյեմբերի 1-ին թուրքական մեջլիսի բացման իր ճառում Աքաթուրքը, ակնարկելով Ժնևում ձեռք բերած համաձայնությունը, հայտարարեց. «Հաթայի ժողովուրդը անպայման կհասնի այն երջանիկ ու անկախ կառավարմանը, որին արժանի է: Հաթայի նոր ռեժիմը ուժի մեջ մտնելուն կարճ ժամանակ է մնում»¹³⁸: Այդ ժամանակից սկսած, մամուլի ու ռադիոյի արշավին զուգահեռ՝ թուրքական դիվանագիտությունը անցավ ավելի եռանդուն գործունեության: Թուրքիայի արտաքին գործերի մինիստրության պետական փոխքարտուղար Ն.Մենեմենջիօղլուն մեկնեց Բեյրութ և նոյեմբերի 10-ին մանդատային իշխանությունների քթի տակ, մամուլի ներկայացուցիչներին ինքնավստահ հայտարարեց, թե «Սանջաքի նոր կարգավիճակն ու հիմնական Օրենքը Լիզայի որոշման համաձայն ինքնաբերաբար ուժի մեջ կմտնեն նույն ամսի 29-ին»¹³⁹: Սակայն, կարգավիճակի 55-րդ հոդվածում գրված էր. «Սանջաքի նոր Ստատուսը և հիմնական Օրենքը ուժի մեջ կմտնեն 1937 թ. նոյեմբերի 29-ին, բայց Մանդատի տևողության ընթացքում, - ասվում էր այնուհետև, - դրանց կիրառումը կկատարվի հիշյալ մանդատի կենսագործման հետ համատեղելի սահմաններում միայն (ընդգծումները մերն են -

Ա.Բ.)»։ Բացի այդ, Սանդլերի 1937 թ. մայիսի 29-ի զեկուցագրում պարզորոշ ասված էր. որ այդ ակտերը ուժի մեջ կմտնեն 1937 թ. նոյեմբերի 29-ին «այն պայմանով, որ հիշյալ թվականին ֆրանս-սիրիական դաշնագիրը արդեն ուժի մեջ մտած լինի»¹⁴⁰։ Արդ, 1937 թվականին դեռևս ֆրանսիական մանդատը շարունակվում էր Սիրիայում և ֆրանս-սիրիական դաշնագիրը ուժի մեջ չէր մտել։

Հակառակ միջազգային իրավական այդ արգելքներին և խախտելով սիրիական Սահմանադրությունը, մանդատային տերությունը, Թուրքիայի պահանջին ընդառաջելով, 1937 թ. նոյեմբերի 29-ին պաշտոնապես հայտարարեց, որ Սանջաքի նոր կարգավիճակն ու հիմնական Օրենքը ուժի մեջ են մտնում¹⁴¹։ Այդ քայլով վերջ տրվեց Սանջաքի արաբ մուհաֆեզ (նահանգապետ) Հուսնի ալ-Բարազիի պաշտոնին, ամբողջ իշխանությունը ժամանակավորապես՝ մինչև Սանջաքի նոր իշխանությունների ընտրությունը, անցավ ֆրանսիայի ներկայացուցիչ Ռ.Գառոյի ձեռքը։ Սակայն Սանջաքի ներքին գործերի փաստական ղեկավարումը մնում էր մուհաֆեզության ընդհանուր քարտուղար, ազգությամբ թուրք Ալաեդդին բեկի ձեռքում¹⁴²։ Նույն օրն էլ Սանջաքի պետական հիմնարկների վրայից իջեցվեց սիրիական դրոշը և նրա տեղը, դարձյալ թուրքերի պահանջով, բարձրացվեց «Սանջաքի դրոշ»։ Որը դույզն տարբերությամբ նույն թուրքական դրոշն էր։ Քաղաքական այս նոր սխալը բարոյապես ավելի էր խորացնում Սիրիային ու սիրիացիներին հասցված վիրավորանքն ու նվաստացումը։ Արդարև, ըստ Ժնևյան կոմպրոմիսի, Սանջաքի վրա Սիրիայի գեթ անվանական գերիշխանությունն էր պահպանվում և ոչ մի հիմք չկար այնտեղից սիրիական դրոշը իջեցնելու։ Պոլ դյու Վեուս իրավամբ շեշտում է. «Մենք իրավական խախտում կատարեցինք հայտարարելով, որ նոր Ստատուսը և հիմնական Օրենքը ուժի մեջ են մտնում»¹⁴³։ Ջ.Սփերդուտին ընդգծում է, որ «1937 թ. նոյեմբերի 29-ի (նոր կարգավիճակի - Ա.Բ.) գործադրման պաշտոնական հայտարարությունը հակասահմանադրական էր և միջազգային իրավունքի խախտում, որովհետև դրանով ոտնակոխ էին արվում սիրիական Սահմանադրության 1-ին և 116-րդ հոդվածները և Մանդատի ակտի 4-րդ հոդվածը»¹⁴⁴։

Բնական է, 1937 թ. նոյեմբերի 29-ի ակտը Սանջաքում և Սիրիայում ընդունվեց դժգոհությամբ և րնդվզման նոր ալիքով, որը թե՛ Սիրիայում, թե՛ արաբական երկրներում աստիճանաբար վերածվեց հակաթուրք, հակաֆրանսիական ատելության ու

բշնամանքի: Այլևս կասկած չէր մնում, որ Մանջաքը պետք է անջատվի Սիրիայից. նոյեմբերի 29-ի ակտը հանդիսանում էր առաջին քայլը այդ ուղղությամբ: Բողոքի ցույցեր, միտինգներ տեղի ունեցան ամբողջ Սիրիայում: Մանջաքում եղան ընդհարումներ, վիրավորներ, ձերբակալություններ¹⁴⁵:

Նոր վարչությունը բոյկոտի ենթարկվեց արաբ և հայ ազգաբնակչության կողմից: Շատ աստիճանավորներ մերժեցին ծառայել նոր իշխանությանը: Արաբական քաղաքական խմբավորումներն արգելվեցին և Ազգային Գործունեության Լիգայի ղեկավար Ջեքի ալ-Արսուզին բանտարկվեց¹⁴⁶: Նոյեմբերի 30-ին սիրիական պառլամենտը նորից ընդունեց բողոքի բանաձև, որն ուղարկվեց Փարիզ և Ժնև: Սիրիան մերժում էր ճանաչել Մանջաքում նոր ռեժիմի կիրառումը: Ի պատասխան դրան, Թուրքիան չեղյալ հայտարարեց 1926 թ. մայիսի «թուրք-սիրիական բարի դրացիական դաշինքը» և գործեր կեստորոնացրեց Սիրիայի սահմանների վրա: Հասարակական կարծիքի պահանջով, սիրիական կառավարական պատվիրակությունը (նույն կազմով, ինչ որ 1937 թ. փետրվարի ուղևորության ժամանակ) մեկնեց Եվրոպա՝ իր ձայնը լսելի դարձնելու համար: Փարիզում, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունում կայացած տեսակցություններից հետո, պատվիրակության անդամ Ս.Ջաբրին հայտարարեց լրագրողներին. «Շուտով միայն սիրիական դրոշը կծածանվի Ալեքսանդրետի երկնքում»¹⁴⁷: Վերադարձին, սիրիական պատվիրակությունը Իսմեթ Ինոնյուի առաջարկով մնաց Ստամբուլում երկու օր և տեսակցություն ունեցավ Թուրքիայի պրեմիեր-մինիստրի ու պրեզիդենտի հետ Մանջաքի հարցի շուրջ: Այդ տեսակցություններից անմիջապես հետո Ջ.Մարդամ-բեկի արած հայտարարությունից կարելի էր եզրակացնել, թե «այդ այցելությունը փարատել է բոլոր այն տարակարծությունները, որոնք կարող էին գոյություն ունենալ Թուրքիայի և Սիրիայի միջև»¹⁴⁸:

Մակայն Թուրքիայի ներթափանցումը Մանջաք շարունակվում էր: Ամեն օր ապագա «ընտրողները խախտում էին սիրիական սահմանը և Թուրքիայից անցնում Մանջաք: Թուրքական մի նոր բանկ էր բացվել Անտիոքում և թուրքական շոգենավերը ավելի հաճախ էին խաբիսխ գցում Ալեքսանդրետի նավահանգստում:

Դեպքերի զարգացման այդպիսի ընթացքից օրըստօրե

ավելի էր ամրապնդվում Սանջաքում Սիրիայի հետ միասնության կողմնակիցների ճակատը, որի հետևանքով հռչակված «նոր ռեժիմի» իրագործումը այնքան էլ հեշտ ու խաղաղ չէր կարող անցնել:

Նոր կարգավիճակի 22-րդ հոդվածով և հիմնական Օրենքի 6-15-րդ հոդվածներով սահմանվում էին Սանջաքի ասամբլեայի (պառլամենտի) ընտրության սկզբունքները¹⁴⁹: Ընտրությունները պետք է տեղի ունենային ազգային-դավանական «համայնքների»¹⁵⁰ համամասնական ներկայացուցչության սկզբունքի հիման վրա, երկաստիճան ընտրություններով, գաղտնի քվեարկությամբ, որոնց մասնակցելու իրավունք ունեին 20 տարեկանից բարձր սանջաքցի տղամարդիկ: Հետևաբար, վճռական գործողությունը պետք է հանդիսանար ոչ թե քվեարկության ընթացքը, այլ (առաջին կարգի) ընտրողների արձանագրությունը ըստ «համայնքային» ցուցակների: Իսկ քանի որ համայնքների քաղաքական դիրքորոշումը արդեն կանխօրոք պարզորոշ էր, ընտրությունները Սանջաքում պետք է փաստորեն հանդիսանային մարդահամար-ժողովրդական հարցում այն մասին, թե Սանջաքի ազգաբնակչությունը, իր մեծամասնությամբ, ցանկանու՞մ է պահպանել միասնությունը Սիրիայի հետ, թե՞ ընդունելով նոր կարգավիճակը կհակվի դեպի Թուրքիան: Շրջանում արդեն երկու տարուց ի վեր տիրող ներքաղաքական լարված իրադրության և Սանջաքի հարցի շուրջ ստեղծված դիվանագիտական սուր և բարդ հարաբերությունների առկայության պայմաններում հազիվ թե կարելի կլիներ սպասել որ «ընտրական գործողությունները» տեղի կունենան ազատ և բնականոն պայմաններում և կծառայեն իրենց բուն նպատակին: Այդ ուղղությամբ որոշ երաշխիք ունենալու համար, հիմնական Օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված էր Սանջաքում առաջին ընտրությունները կազմակերպել և անցկացնել Ազգերի Լիգայի խորհրդի կողմից նշանակված միջազգային հանձնաժողովի վերահսկողության տակ: 1937 թ. հոկտեմբերի 4-ին նշանակված այդ հանձնաժողովը ուներ հետևյալ կազմը - Ժ.Լագրանժ (Բելգիա), Վան դեր-Մենդերե (Նիդերլանդներ), Թ.Ռեյդ (Անգլիա), Հ.Ռեյմերս (Նորվեգիա), Ռ.Սեկրեթան (Շվեյցարիա): Հանձնաժողովը հոկտեմբերի 11-ի իր նիստում Թ.Ռեյդին ընտրեց նախագահ, հետո մշակեց իր աշխատանքային

ծրագիրը և հոկտեմբերի 14-ին մեկնելով ժՆԼԿԳ, ճանապարհին ժամանեց Անկարա, ուր տեսակցություն ունեցավ թուրք կառավարության ներկայացուցիչների հետ, և հոկտեմբերի 20-ին հասավ Սանջաք, որտեղ մնաց մինչև նոյեմբերի 19-ը: Այդ ժամանակամիջոցում հանձնաժողովի անդամները եղան Սանջաքի տարբեր բնակավայրերում, տեսակցություններ ունեցան տարբեր համայնքների ներկայացուցիչների հետ, որոնց բացատրեցին ընտրական սխտեմի հիմնական սկզբունքները, լսեցին ազգաբնակչության ցանկություններն ու առաջարկները՝ ընտրական կանոնադրության կապակցությամբ: Կատարվեցին նաև ընտրական տեղամասերում համայնքների ներկայացուցիչների նշանակումներ և ընտրությունների բնականոն ընթացքի հետ առնչվող անհրաժեշտ միջոցառումներ: ԺՆԼ վերադառնալուց առաջ, ընտրական հանձնաժողովը եղավ Բեյրութում և Դամասկոսում, որտեղ տեսակցություն ունեցավ բարձր կոմիսարի և սիրիական կառավարության ներկայացուցիչների հետ: ԺՆԼում հանձնաժողովը մշակեց «Ալեքսանդրետի Սանջաքում կատարվելիք առաջին ընտրությունների կանոնադրությունը» տեղում կատարված ուսումնասիրությունների տվյալների և հիմնական Օրենքի դրույթների հիման վրա: 1937 թ. դեկտեմբերի 10-ին, հանձնաժողովը Լիզայի խորհրդի նախագահին ներկայացրեց այդ կանոնադրությունը, առաջին և երկրորդ աստիճանի ընտրությունների համար առաջարկելով 1938 թ. մարտի 28-ը և ապրիլի 12-ը: Խորհրդի նախագահը հաստատեց կանոնադրությունը, ընդունեց հանձնաժողովի առաջարկությունները և կարգադրեց անցնել ընտրությունների գործնական նախապատրաստմանը:

Սակայն Անկարայի դիվանագիտական միջամտությունը կասեցրեց գործի բնականոն ընթացքը: Դեկտեմբերի 15-ի իր հեռագրով Արասը բողոք էր հայտնում, թե իբր «ընտրական կանոնադրությունը չէր ենթարկվել ո՛չ իր կառավարության, ո՛չ Լիզայի խորհրդի հաստատմանը...» և հրաժարվում էր ընդունել այդ կանոնադրությունը¹⁹: Իրականում բանը նրանումն էր, որ հանձնաժողովը հանգամանորեն ուսումնասիրելով ու մեկնաբանելով հիմնական Օրենքը, հատկապես դրա 10-րդ հոդվածը, այնպիսի ճիշտ հիմունքներով էր կազմել կանոնադրությունը, որ Սանջաքում փոքրամասնություն կազմող թուրքերը ոչ մի ձևով չէին կարողանա Սանջաքի պառլամենտում «մեծամասնություն» ձևառ

բերել: Հիմնական Օրենքի 10-րդ հոդվածում ասվում էր, «Ամբողջ Մանջաքում որևէ համայնքի հատկացվելիք երկրորդ կարգի ընտրողների և պատգամավորների տեղերի քանակը կորոշվի՝ այդ նույն համայնքին պատկանող ու նրա ցուցակում արձանագրված ընտրողների թվով»: Տվյալ համայնքին պատկանելը պետք է հաստատվեր ընտրական տեղամասի նույն համայնքին պատկանող անդամների կողմից՝ ընտրողի անձնական տվյալների հիման վրա: Ավելորդ թվացող այս մանրամասնությունները միջազգային ընտրական հանձնաժողովի կողմից տեղում հանգամանորեն ուսումնասիրելուց հետո մտցվել էին կանոնադրության մեջ՝ ապահովելու համար ազատ ու անկողմնակալ ընտրությունները: Այդ եղանակով միաժամանակ կանխվում էին թուրք մոլիների կողմից ընտրողների վրա գործադրվելիք հավանական ճնշումներն և հարկադրանքի այլ միջոցները: Արասը, հենց այդ «մանրուքներից» կառչելով, դեկտեմբերի 24-ի իր երկրորդ հեռագրով արտահայտում էր «իր կառավարության բողոքը հենց գրանցման պրոցեդուրայի դեմ» և պահանջում, որ ընտրական կանոնադրությունը այնպիսի փոփոխությունների ենթարկվի, որ «ընտրողը իրավունք ունենա իր ցանկացած համայնքի ցուցակում գրանցվելու՝ անկախ ազգային-լեզվական ու դավանական պատկանելությունից»⁵²: Անկարային անհրաժեշտ էր «այդպիսի առաձգական սխտեմ՝ ուրիշ համայնքների անդամներին հարկադրելու, որ նրանք գրանցվեն որպես թուրքեր» և այդ ձևով փորձել Մանջաքում ստեղծելու «թուրքական մեծամասնություն»⁵³:

Միջազգային իրադրությունը Եվրոպայում շարունակում էր մնալ լարված, իսկ Ֆրանսիան ամենևին տրամադրված չէր ուղղակի զինված ընդհարման մեջ մտնելու Թուրքիայի հետ: Այս անգամ էլ քաղաքական գործոնների ներքո, դարձյալ Անգլիայի ուժեղ «միջնորդության» շնորհիվ, Ֆրանսիան համաձայնվեց իրավական ամուր դիրքերից նորից նահանջել Թուրքիայի ապօրինի պահանջները բավարարելու համար: Սակայն, հարկ էր հասարակական կարծիքը հանդարտեցնելու համար իրավական այդ խախտմանը «օրինական» տեսք տալ: 1938 թ. հունվարի 28-ին գումարվեց Լիզայի խորհրդի 100-րդ նստաշրջանը, որը այդ հարցի զեկուցող նշանակված Օ.Ունդենին լիազորեց ընտրական կանոնադրության մեջ մտցնել անհրաժեշտ փոփոխություններ այն հաշվով, որ բավարարվեն Թուրքիայի պահանջները⁵⁴: Հունվարի 31-ին Չեկուցողը, խորհրդին ներկայացրեց իր թուրքանպաստ

նախագիծը, որի համաձայն ընտրողին իրավունք էր վերապահվում գրանցվել իր ցանկացած համայնքի ցուցակում, այսինքն գրանցվել «թուրք համայնքի» ցուցակում, եթե թուրք էլ չէ: Ընտրությունների վերջնական կանոնադրությունը այս սկզբունքներով մշակելու համար նշանակվեց հատուկ կոմիտե՝ «Հինգի կոմիտե» Թուրքիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ կոմիտեն 1938 թ. մարտի 9-ից մինչև 19-ը մշակեց ընտրությունների «վերջնական կանոնադրությունը» Թուրքիայի ներկայացուցիչ Ն.Մենեմենջիօղլուի ներկայացրած նախագծի հիման վրա¹⁵⁵: Ընտրություններին վերահսկելու համար նշանակված հանձնաժողովը 94 հոդվածներից բաղկացած այդ երկարաշունչ կանոնադրությունը ընդունեց ի գործադրություն: Սակայն հանձնաժողովի անգլիացի նախագահ Թ.Ռեյդը հրաժարվեց իր պաշտոնից, ի նշան բողոքի այն բանի դեմ, որ «կանոնադրության մեջ մտցված փոփոխությունները ի չիք էին դարձնում ազատ և խաղաղ ընտրության հնարավորությունները և ... ոչ-ճիշտ գրանցումը շատ հավանորեն կարող էր դուռ բացել բռնության առջև»¹⁵⁶:

Հանձնաժողովի նախագահի բողոքն ու հրաժարականը ոչնչով չխանգարեցին, որ համաձայնեցված գործարքը առաջ տարվի: Ռեյդի փոխարեն հանձնաժողովի անգլիացի նոր անդամ նշանակվեց մայր Ա.Պ.Նիկոլը: Հանձնաժողովը Անտիոք ժամանեց ապրիլի 21-ին, ճանապարհին «պատահմամբ» Անկարայում հանդիպում ունենալով Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Արասի հետ: Հանձնաժողովի հետ Սանջաք ժամանեց նաև այն հատուկ դատարանի անձնակազմը, որի ստեղծումը նախատեսված էր կանոնադրության 7-րդ հոդվածով և որը պետք է պատժեր ընտրությունների ժամանակ կատարվող օրինազանցությունները: Հանձնաժողովը անցավ «ընտրական գործողությունների» անմիջական նախապատրաստմանը: Ընտրական արձանագրությունների առաջին օրը նշանակված էր 1938 թ. մայիսի 3-ը:

Ընտրությունների «կանոնադրության» այդպիսի «վերամշակումը» հենց Թուրքիայի ցանկացած ձևով անխուսափելի հետևանքը և տրամաբանական շարունակությունն էր 1937 թ. մայիսի 29-ի ժնեյան կարգավորման: Պարզ էր դառնում, որ անգլոֆրանսիական իմպերիալիստները նախապես որոշել էին Սանջաքը զիջել Թուրքիային, ինչպես այդ խոստովանել էր Լիզայի միջազգային լճտրական հանձնաժողովի բելգիացի անդամ Ժակ

Լազրանժը: Արդարև, 1937 թ. հոկտեմբերի վերջերին Ժ.Լազրանժը, Անտիոքում, գաղտնի խոսակցության ժամանակ հետևյալն է հայտարարել՝ հայ համայնքի ներկայացուցիչներից մեկին՝ Բելգիայից նոր վերադարձած ճարտարապետ Եղիա Բեդևյանին (նրան զգուշացնելով, որ իր հայտարարությունը առայժմ մնա գաղտնի). «1940 թվականից առաջ Սանջաքը կկցվի Թուրքիային, իսկ այդ կցումը անհրաժեշտ է նկատվում, որպեսզի Թուրքիան Գերմանիայի կողմը չանցնի»¹⁵⁷: Նույնպիսի հայտարարություն է արել նաև ֆրանսիական «Հավաս» հեռագրական գործակալության Մերձավոր Արևելքի բաժնի տնօրեն Էմիլ Անրի Դյուֆուրը: Նա՝ իր աշխատակից Ս.Մելիտոնյանին (բնիկ մուսալեռնցի), որը Սանջաքի հանրաքվեին մասնակցելու համար Բեյրութից իր ծննդավայրը գնալու թույլտվություն էր խնդրում, 1938 թ. մայիսին, ասել է. «Գնա՛, սակայն գնալդ իզուր է. Սանջաքը արդեն ծախված է մեր դիվանագիտության կողմից»¹⁵⁸: Շրջանի հայերը շատ էին անհանգստացած: Մուսա լեռան ժողովուրդը դառն փորձից ելնելով՝ հարկադրված մտածում էր ինքնապաշտպանության միջոցների մասին: Այս կապակցությամբ բնիկ բիթիասցի (Մուսա լեռ), մանկավարժ ու հասարակական գործիչ Թ.Խ.Ֆիլյանը հայտնում է հետևյալը. «1937 թ. ամռանը, Մուսա լեռան 1915 թ. հերոսամարտի զլխավոր ղեկավար Եսայի Յաղությանը լիազորված եկել էր Բեյրութ «ինքնապաշտպանության նպատակով զենք գնելու համար»: Որոշ քանակի զենք ձեռք է բերվում, սակայն ճանապարհին այն բռնվում է լիբանանյան ժանդարմերիայի կողմից: Ջինվորական դատարանը Յաղությանին դատապարտում է խիստ պատժի, սակայն հետո ներում՝ հաշվի առնելով նրա հերոսական անցյալը»¹⁵⁹:

Սանջաքում կատարվելիք հանրաքվե-ընտրություններին նախորդող ժամանակաշրջանը բնութագրվում է ներքաղաքական բարդ և լարված դրությամբ:

Ինչպես նշվեց 1937 թ. նոյեմբերի 29-ից սկսած նոր Ստատուսի կիրառումով, Սանջաքում ամբողջ իշխանությունը ուղղակիորեն իրագործվում էր մանդատային ներկայացուցչի կողմից: Սանջաքում սիրիական կառավարության կողմից նշանակվող մուհաֆեզի պաշտոնին վերջ տրվելով՝ կարծես միանգամից խզվել էր Սանջաքը Սիրիային միացնող առանց այն էլ

թույլ կապը: Ստեղծվել էր ինչ-որ անորոշության ու անվստահության մթնոլորտ: Ֆաշիստական ու այլ օտար գործակալների հրամաններով շարժվող արաբ ծայրահեղները (Գովմի-սուրիները) արաբական զանգվածներին զրգռում էին թե՛ ֆրանսիական իշխանությունների, թե՛ բուրքերի դեմ: Թուրք անջատողական մոլիները, գոտեպնդված «նոր կարգի» հաստատումով, որը անառարկելիորեն Անկարայի դիվանագիտության՝ ապա և իրենց հաղթանակն էր, գործում էին միանգամայն ազատ ու սանձարձակ: Իրենց տարիների երազանքը լրիվ իրականացած տեսնելու նախօրյակին գտնվելու վստահությամբ՝ նրանք չէին ուզում ենթարկվել, նույնիսկ չէին ցանկանում ճանաչել ոչ մի տեղական իշխանություն: Այդպիսի դիրքավորում նրանց ներշնչում էին Թուրքիայի հանրապետության Անտիոքի գլխավոր հյուպատոսությունը և Ալեքսանդրետի հյուպատոսությունը, որոնք իրենց պահում էին ոչ թե որպես դիվանագիտական ներկայացուցչություններ, այլ որպես մանդատային իշխանություններին համազոր տեղական կառավարման մարմիններ: Այս բոլորից ելնելով, պատահական չպետք է համարել այն, որ անցման ժամանակաշրջանի (1937 թ. դեկտեմբերից՝ 1938 թ. մայիս) ամբողջ տևողության ընթացքում քաղաքական դրությունը Մանջաքում միշտ խառնակ ու լարված էր, և ընդհարումները թուրքերի ու արաբների, ինչպես նաև իշխանությունների և ազգաբնակչության ծայրահեղ տարրերի միջև, հաճախակի երևույթներ էին: «Փոխանցման այս ժամանակաշրջանում, - ասվում էր պաշտոնական մի հաղորդագրության մեջ, - մանդատային իշխանությունների վրա դրված էր կարգի պահպանումը ապահովելու նուրբ պարտականությունը. Ֆրանսիայի ներկայացուցիչը ստիպված էր հարկադրական խիստ միջոցների դիմել թե՛ «Ազգային Գործունեության (Լիգայի) արաբ տարրերի, թե՛ մի շարք թուրք պրոպագանդիստների դեմ, որոնք իրենց փաստարկները ընդգծում էին բացահայտ սպառնալիքներով՝ ուղղված այն անձանց դեմ, որոնք չէին ցանկանում ենթարկվել իրենց»¹⁵⁹: Փակվեցին «Ալ-Ուրաբա» և «Ենի Գյուն» թերթերը: Երկու թերթերին էլ թույլատրվեց նորից լույս տեսնել ընտրական հանձնաժողովի՝ Մանջաք ժամանելու նախօրյակին, ապրիլի սկզբին¹⁶⁰:

Ընտրությունների նախօրյակին Մանջաքում կային հե-

տւյալ քաղաքական խմբավորումները: Ազգային Գործունեության Լիգա, Սիրիայի Կոմունիստական կուսակցության Մանջաքի կազմակերպություն, Ազգային Բլոկ, հայ կուսակցությունների մասնաճյուղեր և «Մանջաքյան Միություն» խմբավորումը՝ կազմված 1937 թ. վերջերին, հիմնականում ոչ-թուրք համայնքների ազգային-քաղաքական ղեկավարներից: Այս բոլոր խմբավորումներն ու կուսակցությունները կողմնակից էին Մանջաքի սիրիական հայրենիքի հետ միասնությանը և դեմ էին Մանջաքի վրա Թուրքիայի որևէ ձևի ազդեցության հաստատմանը («Մանջաքյան Միության» որոշ խմբեր ընդունում էին նոր Ստատուսով ստեղծված քաղաքական սիստեմը):

Նրանց դեմ, Մանջաքի «անկախության» և այնուհետև Թուրքիային կցման քաղաքական պլատֆորմով ընտրապայքար էին իջել թուրք անջատողականները, որոնք 1936 թ. վերջերից իշխանությունների կողմից պաշտոնապես ճանաչվում էին «Հալք-Էվի» անունով:

«Հալք-Էվի»-ն մի շարք քաղաքական գործոններից օգտվելով ընտրապայքարում իրեն դրսևորում էր որպես ամենաուժեղ, միաձույլ ու ազդեցիկ քաղաքական խմբավորում: Մանդատային իշխանության երկարամյա թողտվության հետևանքով նրանք իրենց էին ենթարկել թուրք համայնքի շովինիստ տարրերին: Բացի այդ, նրանք ղեկավարվում ու ֆինանսավորվում էին ուղղակի Անկարայի կողմից: Այդ ղեկավարումը առավել անմիջական և գործուն էր դարձել Մանջաքում թուրքական հյուպատոսությունների բացվելուց հետո: Մյուս կողմից, անջատողականների շարքերը մշտապես համալրվում էին Թուրքիայից ուղարկվող «տուրիստներով» ու «մասնագետներով»: Մրանց հոսքը դեպի Մանջաք զանգվածային բնույթ էր կրում 1937 թ. սկզբից ի վեր: Գեներալ Բրենդոնը 1938 թ. հունվարի վերջերին գրում էր, թե «արդեն 1.500 «ընտրողներ» ուղարկվել են Անկարայի կողմից Ալեքսանդրետի հանրաքվեին մասնակցելու համար, և ասում են թե 10.000 ուրիշ «ընտրողներ» պետք է ուղարկվեն հաջորդ ամիսներին»¹⁰¹: 1938 թ. փետրվարի 13-ին «Ժողովուրդի ձայն» թերթը հայտնում էր, թե «քենալական կառավարության Մանջաք մտցուցած 4000 թուրքերուն վիճակը այնքան ալ լավ չէ, ... որովհետև յուրաքանչյուրը օրական կստանա 14 սուրիական դուրուշ և անոնք կպառկին Մանջաքի թուրքերուն մոտ»¹⁰²: Դժուր վեռու վկայում է, որ 1938 թ. մայիսին Թուրքիայից ուղարկված «ընտրողների» թիվը արդեն

հասել էր 25.000-ի: Հազարավոր այս նոր «Սանջաքցիները» իհարկե չէին եկել ձեռնածայ մնալու համար: Մինչև հանրաքվե-ընտրությունների սկսվելը, նրանք պետք է «ընտրապայքարին մասնակցեին» ... ահաբեկման միջոցով իրենց պլատֆորմը պարտադրելով մոլիներին չենարկվող թուրքերին և ոչ-թուրքերին, որպեսզի վերջիններս գրանցվեն «Հալք-Էվի»-ի ցուցակում: Ահաբեկչական բազմաթիվ ակտեր, անպատիժ մնալով, կրկնվում էին նրանց կողմից: Արաբ, հայ, թուրք աշխատավոր գյուղացիների, անգեն բանվորների, կանանց, ծեղերի վրա հարձակումները սովորական երևույթ էին դարձել¹⁶³: «Թուրքական զինյալ չեքներ, - գրում է «Ժողովուրդի ձայն» թերթի թղթակիցը, - հարձակվելով Արաբ-Շարքի գյուղին վրա, սպանած են գյուղապետը և երեք ուրիշ անձեր»¹⁶⁴: 1938 թ. մայիսին «արաբական գյուղերի վրա կատարվել են բազմաթիվ զինված հարձակումներ, որոնց ոչնչով առիթ չէր տրվել»¹⁶⁵: Այս բոլոր դեպքերի մասին Սանջաքի ազգաբնակչության տարբեր խավերի ու խմբավորումների կողմից 1938 թ. բողոքի հանրագրեր են ուղարկվել Ազգերի Լիգային¹⁶⁶: «Հալք-Էվի»-ն, իհարկե, չէր բավականանում շարունակական խառնակությունների կազմակերպումով և ահաբեկման մթնոլորտի ստեղծումով: Նա հրապարակային ելույթներ էր կազմակերպում, որոնց ընթացքում կրակոտ ճառեր էին արտասանվում Սանջաքի «թրքականության» օգտին և նույնիսկ Ռ.Գառույի ներկայությամբ, սպառնում էին «արյուն թափել իրենց պահանջների իրագործմանը հասնելու համար»¹⁶⁷:

Թուրք անջատողականների՝ Սանջաքի ու սանջաքցիների ապագայի համար վտանգավոր այս գործունեությունը տեսնելով, արաբական ազգաբնակչության տարբեր խավերի ու խմբավորումների, ինչպես նաև արաբների և հայերի միջև օրըստօրե ամրապնդվում էր համերաշխությունն ու համագործակցությունը: Սիրիական Սանջաքի պաշտպանության միասնական այդ ճակատի նախաձեռնողները դեռևս 1936 թ. սկսած հանդիսացել էին Սանջաքի կոմունիստները: Պանարաբիստ Ասբափները (Ազգային Գործունեության Լիգա) թուրքական սպառնալիքի տակ միայն հաշտվեցին կոմունիստների հետ միասին պայքարելու մտքի հետ: Այս համագործակցությունը ավելի լայն չափեր ու գործնական ձև ստացավ, երբ 1938 թ. հունվարի 30-ին Անտիոքում հավաքված վերոհիշյալ կուսակցությունների, ինչպես նաև Ազգային Բյուկի և արաբ ու հայ տարբեր հայրենասիրական խմբավորումների

ներկայացուցիչները որոշեցին կազմել «Ժողովրդական-Գեմոկրատական ուժերու համախմբում»: Այդ համախմբման գործունեությունն առավել արդյունավետ ու հուսալի դարձավ, երբ 1938 թ. մարտի 13-ից 15-ը Սանջաք այցելեց Սիրիայի և Լիբանանի Կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Բեկրաշը: Նա տեսակցություններ ունեցավ Ազգային Գործունեության Լիգայի և Քուրլայի ղեկավարների, ինչպես նաև հայկական հայրենասիրական քաղաքական խմբավորումների ներկայացուցիչների հետ: Այնուհետև, կոմունիստների և այդ բոլոր խմբավորումների ներկայացուցիչների մասնակցությամբ խորհրդակցություն գումարվեց Սիրիական կառավարության Սանջաք ուղարկած արտակարգ ներկայացուցչի՝ Նաբիի Բեկ ալ-Ազմիի մոտ: Այդ խորհրդակցության ընթացքում մշակվեց և ընդունվեց համաձայնեցված գործողությունների այն ծրագիրը, որին պետք է հետևեր արաբների, հայերի և մյուս փոքրամասնությունների միասնական ճակատը ընտրապայքարի և ընտրությունների ընթացքում՝ հանուն սիրիական Սանջաքի պաշտպանության¹⁶⁸: Այդ խորհրդակցության հիմնական որոշումներից մեկը հետևյալն էր. ձեռք առնել անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի Սանջաքից դուրս ապրող բոլոր բնիկ սանջաքցիները մասնակցեն հանրաքվե-ընտրություններին: Այդ կարևոր միջոցառման մասին համատեղ առաջարկը (որը միաժամանակ առաջ քաշեցին ու պաշտպանեցին Նաբիի ալ-Ազմին՝ սիրիական կառավարության ու Քուրլայի անունից, Խալեդ Բեկրաշը՝ Սանջաքի պաշտպանության կոմիտեների կենտրոնական խորհրդի և Կոմունիստական կուսակցության անունից) ընդունվեց բոլորի կողմից: Այս կապակցությամբ մեծ և պատասխանատու պարտականություն էր դրվում հայկական կազմակերպությունների վրա, որովհետև հազարավոր բնիկ մուսալեոցի, քեսապցի, ալեքսանդրեոցի ու բեյլանցի հայեր ապրում էին Սիրիայի, Լիբանանի ու հարևան արաբական երկրների տարբեր քաղաքներում: Կային նույնպես Սանջաքից դուրս ապրող բնիկ սանջաքցի հազարավոր արաբներ: Անհրաժեշտ էր ապահովել այդ բոլոր արաբների ու հայերի մասնակցությունը հանրաքվեին, մանավանդ, որ բոլոր անջատողականների կողմից քվեարկության մասնակցելու համար Անկարան ապօրինի հազարավոր կեղծ «ընտրողների» Թուրքիայի հանրապետության քաղաքացիների ուղարկում էր Սանջաք: Ալեքսանդրեոսի պաշտպանության կոմիտեների անդամ բոլոր կազմակերպու-

քյունները, մանավանդ Քուբլան, Սիրիայի Կոմունիստական կուսակցությունը, «Սուրիահայ Ժողովրդական ճակատը», Սանջաքի «Հայ ազգային միությունը», ինչպես նաև Մուսա լեռան ու Քեսապի հայրենակցական միությունները, շնորհակալ աշխատանք կատարեցին այս ուղղությամբ¹⁷⁰: Ակտիվ կոմունիստ Հովսեփ Կրիկյանը հայտնում է, որ 1938 թ. մայիսին իր ղեկավարությամբ՝ բեյրութաբնակ շուրջ 90 մուսալեռնցիների մի խումբ հասնելով Լաթաքիա, այնտեղից առազատանավով մոտեցել է Սանջաքի ափերին, և հաղթահարելով մեծ դժվարություններ, գաղտնի քափանցել է Սանջաք և մասնակցել հանրաքվեին հայրենի Մուսա լեռան ընտրական տեղամասում: Բնիկ սանջաքցի՝ ուսուցիչ և հասարակական գործիչ Ալեքսանդր Փաշայանը հայտնել է, որ Քուբլայի տրամադրած նյութական միջոցներով, արաբ ու հայ հայրենասերների օգնությամբ, ինքը կազմակերպել է դամասկոսաբնակ շուրջ 150 սանջաքցիների փոխադրումը իրենց ծննդավայրերը՝ հանրաքվեին մասնակցելու համար: Հյուսիսային Սիրիայի շրջաններում ապրող մի քանի հարյուր սանջաքցիների տեղափոխումը կատարվեց Քուբլայի և Սուրիահայ Ժողովրդական ճակատի Հալեպի կենտրոնների կողմից: Այս գործում շնորհակալ աշխատանք կատարեցին Հալեպ-Ալեքսանդրետ-Անտիոք երթուղիներով աշխատող հայ ավտովարորդները, որոնք հոծարական ու անվճար կատարեցին հարյուրավոր սանջաքցիների փոխադրումը Հալեպից: Փոխադրման կազմակերպումը վստահված էր ալեքսանդրետցի ակտիվ կոմունիստ Փայլակ Իսրայելյանին, որը կոմկուսակցության ընդհատակյա գրականության փոխադրման գործում մեծ ավանդ ու վաստակ ուներ¹⁷¹: Այս միջոցներով, շուրջ 5000 բնիկ սանջաքցիներ (նրանցից մոտ 2000-ը հայեր) հնարավորություն ունեցան հանուն Սանջաքի պաշտպանության տարբեր տեղերից գալով, մասնակցելու հանրաքվեին: Նույնիսկ Իրաքում, Պաղեստինում, Եգիպտոսում բնակվող մի շարք մուսալեռնցիներ եկան իրենց ծննդավայրը և մասնակցեցին հանրաքվեին:

Հանրաքվե-ընտրություններին բուրբերի կողմից պահանջված գրանցման ձևի ընդունումը բնականորեն հանգեցրել էր այն քանին, որ Սանջաքի ազգաբնակչությունը բաժանվել էր երկու հակամարտ խմբավորումների՝ բուրբ անջատողականների կողմնակիցների և նրանց հակառակորդների: Իսկ ինչպիսի՞ն էր Սանջաք ուղարկված ֆրանսիական նոր պատվիրակ Ռոժե Գառոյի

դիրքորոշումը այդ հակառակորդ կողմերի նկատմամբ: Ֆրանսիական պաշտոնական գեկուցագիրը ամրապնդում է հետևյալն է ասում. «Մանդատային տերության ներկայացուցիչը ընդդիմացավ ծայրահեղ միտումների բոլոր արտահայտություններին՝ այնպիսի անկողմնակալությամբ, որ լավագույն հնարավորություններ էր ընձեռում ընտրական ժամանակաշրջանը դիմագրավելու անհրաժեշտ անդորրության և հասարակական անվտանգության մթնոլորտում»¹⁷²:

Ռոժե Գառոն հավատացած էր, որ քաղաքական տվյալ իրադրության պայմաններում նոր Ստալոուսով հաստատված սխտեմը նվազագույն չարիքն է Սանջաքը Սիրիական պետության կազմի մեջ պահելու համար, այն պայմանով, որ թուրք անջատողականներին ոչ մի դեպքում հնարավորություն չտրվի, ապօրինի և այլ ձևի ճնշումների միջոցով, գրավել տեղերի մեծամասնությունը Սանջաքի ընտրվելիք պառլամենտում: Որպես դեմոկրատ պետական գործիչ՝ (Ֆրանսիայի Ժողովրդական ճակատի կողմից ուղարկված) Ռ. Գառոն իր պատասխանատու պաշտոնը ստանձնելու առաջին օրվանից սկսած հնարավոր ամեն ինչ արեց, որպեսզի շրջանի ոչ-թուրք համայնքներին ևս հասարակական ու քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում թուրքերին հավասար իրավունքներ ու արտոնություններ տրվեն: Թուրքասեր Պիեռ Դյուրիոյի 15-ամյա ազգային խտրականության քաղաքականությունից հետո Ռ. Գառոնի իշխանության կարճ ժամանակամիջոցում աշխատավոր զանգվածները զգալի իրավունքներ նվաճեցին արհմիութենական և քաղաքական ասպարեզներում: Այդ ամիսներին Սանջաքի կոմունիստները խելացի կերպով օգտագործելով ստեղծված բարենպաստ հնարավորությունները և վարելով ճիշտ քաղաքական գիծ, իրենց կազմակերպությունը դարձրին շրջանի ամենամեծ ազդեցություն ունեցող կուսակցությունը¹⁷³: Սանջաքում սկսեցին հրատարակվել արաբական առաջին թերթերը՝ «Ալ-Ուրուբա» (Անտիոքում) և «Ալ-Լիվա» (Ալեքսանդրետում): Արաբ ու հայ նոր պաշտոնյաներ ընդունվեցին կառավարական հիմնարկներում:

Ժողովրդի տնտեսական վիճակը Սանջաքում՝ քաղաքական անկայունության և անորոշության հետևանքով օրըստօրե վատանում էր: Կենսամթերքների և հացի գների բարձրացման դեմ կազմակերպված զանգվածային ցույցերը իրենց դրական հետևանքը ունեցան: Ալեքսանդրետի նավահանգստում ամբարված

և արտահանման համար նախատեսված սիրիական ցորենի վրա պետական կալանք դրվեց և վաճառվեց տեղում¹⁷⁴։ Բացվեցին կայուն գներով, պետական վերահսկողության տակ գտնվող հացի վաճառքի կետեր։ Այդ ամիսներին աշխատավորական զանգվածները մի շարք հրապարակային ելույթներով ու միջոցառումներով ձեռք բերեցին որոշ դեմոկրատական ազատություններ¹⁷⁵։

Բնութագրելով Ռ. Գառոյի գործունեությունը Սանջաբում Ն. ալ-Արմանագին գրում է. «Թուրքերը թշնամաբար վերաբերվեցին Ռ. Գառոյին՝ նրան համարելով իրենց հակառակորդը։ Սակայն իրականում նա այդպիսին չէր, այլ միայն չկարողացավ նրանց ցանկացած արագությամբ գործել...»¹⁷⁶։ Մենք գտնում էնք, որ Ալ-Արմանագիի վերջին միտքը սուբյեկտիվ դատողության ու վերաբերմունքի հետևանք է։ Ռ. Գառոն ոչ թե «չկարողացավ գործել» թուրքերի ցանկացած արագությամբ, այլ ընդհակառակը, նա չցանկացավ ընթանալ անգլո-ֆրանսիական դիվանագիտության և թուրք մոլիների պահանջած ապօրինի ուղիով։ Հետագա քաղաքական դեպքերը ապացուցեցին Ռ. Գառոյի ազնիվ ու անկողմնակալ դիրքը։ 1938 թ. հունիսի 3-ին նա հեռացվեց պաշտոնից, որովհետև խանգարում էր անգլո-ֆրանս-թուրքական գործարքի իրականացմանը։ Ալ-Արմանագին հենց ինքը, վկայակոչելով Սանջաբի նախկին մուհաֆեզ Հուսնի ալ-Բարագիի գաղտնի մի զեկուցագիրը, մեջբերում է Ռ. Գառոյի հետևյալ խոսքերը. «Նոր Ստատուսի համաձայն իմ վրա վերցնելով ուղղակի իշխանության պարտականությունները, ես կգործադրեմ իմ ունեցած բոլոր իրավունքները, որպեսզի թույլ չտամ թուրքերին գործնականորեն միջամտել շրջանի գործերին ու զինվորական ուժեր ուղարկել Սանջաբ՝ իրենց հայրենակիցներին պաշտպանելու պատրվակով»¹⁷⁷։ Սիրիայի նկատմամբ Ֆրանսիային հանձնված մանդատի իր ազնիվ ըմբռնման և կատարման ապացույց է նաև այն փաստը, որ Ռ. Գառոն իր հրավերով կանչված արաբ ու հայ համայնքների պատվիրակություններին ուղղակի հորդորում էր, առաջարկում՝ հրապարակային ելույթներով, ցույցերով արտահայտել իրենց պահանջները, ցույց տալ իրենց ուժը և միջոցներ ձեռնարկել՝ Սանջաբից դուրս ապրող բնիկ սանջաբցիների հանրաքվեին մասնակցելը ապահովելու համար¹⁷⁸։

1938 թ. մայիսի 3-ին, Սանջաբում սկսվեցին հանրաքվե-

ընտրությունների աշխատանքները: Գրանցումները նախ սկսվեցին Ալեքսանդրետի կազայում, հաջորդ օրը՝ մայիսի 4-ին, Կրրըկ-Խանի կազայում: Հենց առաջին օրվանից գրանցման արդյունքները աննպաստ էին թուրքերի համար: Զվեարկողների 80 տոկոսից ավելին գրանցվել էր ոչ-թուրք համայնքների ցուցակներում⁷⁹: Ինչպես նշվեց, ընտրական ցուցակներում գրանցումը փաստորեն հանգում էր ժողովրդական հարցման՝ Սանջաքը Սիրիական պետության կազմում պահելու⁸⁰, թե այն Թուրքիայի գերիշխանությանը հանձնելու մասին: Ժողովուրդը քաջ գիտակցում էր, որ Սանջաքի ապագա «պառլամենտում» թուրք անջատողականների կողմից մեծամասնություն ձեռք բերելը փաստորեն կնշանակի շրջանի կցումը Թուրքիային: «Պառլամենտ»-ում տեղերը պետք է բաշխվեին համամասնորեն՝ ըստ այս կամ այն համայնքի ցուցակում գրանցված ընտրողների քանակի: Հետևաբար, հենց գրանցումների արդյունքները պետք է որոշեին Սանջաքի ապագան: Ուրեմն բնական էր, որ ընտրապայքարը զնար հենց այդ գրանցումներում մեծամասնություն շահելու շուրջ:

Անկարան նախապես հոգացել էր իր կողմնակիցների մասին, ընտրական կանոնադրությունը փոխել տալով այն հաշվով, որ ոչ-թուրքերին իրավունք տրվեր գրանցվելու թուրք համայնքի ցուցակում: «Հալթ-Էվիի» ղեկավարները հույս ունեին կաշառքի, ճնշման, ահաբեկման և այլ միջոցներով հարկադրել զգալի թվով ոչ-թուրքերի գրանցվել իրենց ցուցակում: Նրանք մեծ հույսեր էին կապում ալավիների հետ, որոնց քվեների 30 տոկոսից ավելին իրենց համար ապահովված էին համարում, սակայն միայն 2 տոկոսը գրանցվեց թուրքական ցուցակում: Հ.Գորդոնը, որ հենց այդ օրերին գտնվում էր Սանջաքում, հետևյալ վկայություններն է բերում. «Միայն մի քանի ալավիներ էին համարձակվել իրենց քեմալական հայտարարել: Նրանցից երկուսը տեղն ու տեղը սպանվեցին իրենց հայրենակիցների կողմից, իսկ Շեյխ Համիդ Իսհակը, որը գրանցվել էր «Բայ Թում-Քայա» թուրքական անունով, վախենում էր հասարակության առջև ներկայանալուց: Ուրիշ մեկի կինը լքել էր ամուսնուն, որովհետև վերջինս «թուրք» էր հայտարարել իրեն»⁸¹: Նույն հեղինակը հայտնում է նաև, որ թուրք ծայրահեղները «շշմեցուցիչ պարտություն կրեցին սահմանամերձ Հաջիլերի նահիեյում՝ հակաքեմալական թուրքմեն Քոչո աղայի ցեղախմբի և քրդերի կողմից, որոնց մտադիր էին կաշառքով իրենց կողմը գրավել: Մամուլը, արաբները և հայերը հրճվում էին անջատողականների

բացահայտ պարտությունից»¹⁸²: Սակայն, ոչ միայն ալավիները, քրդերն ու թուրքմեններն էին դեմ արտահայտվում թուրք մոլիների անջատողական քաղաքականությանը: Ջգալի թվով թուրքեր նույնպես նրանց դեմ քվեարկեցին: Այս կապակցությամբ Ֆ.Գրյվզը գրում է. «Թուրքական խմբակը, ճնշման և անարիկյան ուղիով այնպիսի ծայրահեղությունների հասավ, որ վերջ ի վերջո կորցրեց թուրք համայնքի բազմաթիվ պահպանողականների աջակցությունը»¹⁸³: Անդրե Լառուսը իր հերթին հաստատում է, որ «հակաքեմալական թուրքերի նշանակալի գանգվածը չհամաձայնվեց համակերպվել քեմալական մեծամասնության ընտրությանը»¹⁸⁴:

1938 թ. մայիսի 22-ին գրանցումները հիմնականում ավարտվել էին ընտրական տեղամասերի գերակշռող մասում ընտրողների շուրջ 60 տոկոսը¹⁸⁵ արտահայտվել էր թուրք ծայրահեղների դեմ, հակառակ վերջիններիս կողմից գործադրված ամեն տեսակ ճնշման ու օրինականության խախտումների, հակառակ Թուրքիայից (սահմանի խախտումով) Սանջաք ուղարկված 25.000 թուրքահպատակների քվեարկությանը մասնակցելուն: Արդեն ամեն ինչ պարզ էր. թուրք մոլիներին երբեք չէր հաջողվելու, նույնիսկ իրենց պարտադրած ընտրական կանոնադրության կիրառումով, ՕՐԻՆԱԿԱՆ ճանապարհով մեծամասնություն ձեռք բերել: Դյուվեուն այս կապակցությամբ գրում է. «Թուրքիայի և Ֆրանսիայի միացյալ ջանքերը ձախողվել էին: ...Սանջաքի ժողովուրդը իր 60-65 տոկոսի մեծամասնությամբ, մերժում էր միաժամանակ թե՛ Թուրքիային միացվելը, թե՛ համաձայնագիրը»¹⁸⁶ (1937 թ. մայիսի 29-ի - Ա.Բ.): Քանի որ «օրինականության» ճանապարհը փակվել էր: Անկարայի դիվանագիտությունը վերստին հարձակման անցավ:

Դեռևս մայիսի 10-ին, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ժորժ Բոննեն, Թուրքիայի դեսպան Ս.Դավազին հասկացրել էր, որ Ֆրանսիան համաձայն է Սանջաքի «պառլամենտի» 40 տեղերից 22-ը հատկացնել թուրքերին: Այդ ուղղությամբ համապատասխան աշխատանք կատարվել էր: Սակայն, ինչպես տեսանք, Սանջաքի ժողովուրդը, արտահայտելով իր անհողողող կամքը, ձախողել էր Թուրքիայի և Ֆրանսիայի համատեղ ջանքերը: Այդ պատճառով, մայիսի 21-ին, Անկարան Փարիզ հղեց վերջնագրի բովանդակություն ունեցող մի հուշագիր, որտեղ պահանջվում էր, որ «մինչև ամսվա վերջը, ինչ գնով էլ լինի, ձեռք բերվի վերջնական կարգավորում» և միաժամանակ, նախազգուշացվում էր, որ Թուրքիան ոչ մի դեպքում բույլ չի տա, որ «թուրքերի ազգային

արբազան իրավունքը ոտնակոխ արվի ընտրական ոլորապտույտ պրոցեդուրաների միջոցով»¹⁸⁷։ Նույն օրը թուրքական գորբեր կենտրոնացվեցին Սիրիայի սահմանի երկայնքով։ Թուրքական մամուլն ու ռադիոն սկսեցին կատաղի ու սպառնալից արչավ։ Կրկնում էին «Հիտլերի լեզվով» խոսելու ակտիվիզմի շտաբի մասին, հիշեցնում, թե կարող էին մաքրագործել Ամանուսյան լեռները այնպես, ինչպես ժամանակին ավելի-մաքրել էին Տավրոսյան լեռները» և այլն։ Դրանց հետևեցին արյունալի ընդհարումներ Անտիոքում և այլ վայրերում։ «Այդ պայմաններում, - գրում է Ա.Լառուսը, - թուրքական կառավարությունը համարձակորեն բացեց իր խաղաքարտերը։ ...Նա Սանջաքում ստեղծեց լուրջ միջադեպեր, որոնք կրկնվեցին և վերստին սկսեց սպառնալ ռազմական միջամտությամբ»։ Այնուհետև, նշելով, որ ֆրանսիական կառավարությունը գտնվում էր երկընտրանքի առջև՝ դիմադրել Թուրքիայի բացահայտորեն ապօրինի խաղերին, թե՞ իր ուժը ի սպաս դնել անարդարությանը, նույն հեղինակը գրում է. «Ֆրանսիական կառավարությունը ընտրեց երկրորդ ուղին»¹⁸⁸։

Սանջաքի ազգաբնակչության պարզ և աներկբայորեն արտահայտված կամքը պետք է Ֆրանսիային պարտավորեցներ շարունակել ընտրական գործողությունները, դրանք հասցնել ավարտին, լոյս կերպով հրապարակել արդյունքները, այդ մասին հաղորդել Ազգերի Լիգային ու Թուրքիային և «հարգելով ժողովրդի այդքան պարզորոշ արտահայտված դատավճիռը, հրաժարվել ժնկյան կոմպրոմիսային կարգավորումից և շարունակել արդար հիմունքների վրա»¹⁸⁹։

Սակայն, ֆրանսիական դիվանագիտության շահերը պահանջում էին հեռանալ այդ արդար հիմունքներից։ Այդպիսով Ժ.Բոննեն՝ բարձր-կոմիսարին հրահանգել էր «բոլոր միջոցներով» թուրքական մեծամասնություն ապահովել Սանջաքի ընտրական գրանցումներում։

Մինչ այդ, Ֆրանսիայի գիշողական քաղաքականության դանդաղկոտությունից դժգոհ, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Արասը, մայիսի 31-ին Մեջլիսում, մեղադրելով մանդատային իշխանության ներկայացուցիչներին, թե իբր նրանք «միջամտում են ընտրական գրանցումներին՝ թուրք համայնքի շահերին հակառակ ուղղությամբ», սպառնալից եզրակացնում էր. «Երկու երկրների (Թուրքիայի և Ֆրանսիայի - Ա.Բ.) միջև լավ հարաբերությունների շարունակումը... կախված է Ալեքսանդրետի

Սանջաքում դեպքերի զարգացումից¹⁹⁰: Նույն օրն իսկ, մայիսի 31-ին, ընտրական գրանցումները կասեցվեցին ամբողջ Սանջաքում:

Ինչպես նշվեց, մայիսի 21-ից ի վեր խառնակությունները շարունակվում էին ամբողջ շրջանում: Իսկ մայիսի 30-ին, Անտիոքում, հրապարակային միտինգից հետո, ծայրահեղները հարձակվել էին անցնող արաբների և հայերի վրա, որոնցից մի քանի մարդ սպանվել ու վիրավորվել էր: Լուրեր էին պատվում, թե թուրքերը պատրաստվում են զինված հարձակումներ գործելու արաբ և հայ գյուղերի վրա: Դրան ի պատասխան, արաբներն ու հայերը ընդհանուր գործադուլ հայտարարեցին: Մի քանի հարյուր մուսալեռնցիներ իջան Անտիոք՝ արաբների հետ մեծ ցույցի¹⁹¹: Յույցը ցրվեց բանակի կողմից և Անտիոքում հայտարարվեց պարեկային ժամ:

Հունիսի 3-ին, Ժորժ Բոննեն Փարիզում ընդունեց թուրքական դեսպան Սուադ Դավազին և պատրաստակամություն հայտնեց քննարկել Թուրքիայի նոր պահանջները: Նույն օրն իսկ Սանջաքում հայտարարվեց արտակարգ ռազմական դրություն: Ռոժե Գառոն, որը չէր ցանկացել ստանձնել նվաստացուցիչ դեր՝ իրականացնել անգլո-ֆրանս-թուրքական գաղտնի գործարքի հաջորդական փուլերը, հեռացվեց պաշտոնից¹⁹²: Նրա տեղը նշանակվեց իմպերիալիզմի մոլի ներկայացուցիչ՝ մայոր Կոլեն, որին տրվեց գնդապետի ժամանակավոր կոչում «հանգամանքների բերումով»: Այդ առթիվ բարձր-կոմիսարությունը հրապարակեց հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը. «Ալեքսանդրետի Սանջաքում ընտրությունների ժամանակ տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ, կարգն ու կանոնը և բոլոր համայնքների անդորրությունը ապահովվելու նպատակով, բարձր-կոմիսարը որոշեց հունիսի 3-ի կեսօրից սկսած զինվորական իշխանություն հայտարարել Սանջաքում: Պարոն Գառոնի իշխանությունը փոխանցվեց մայոր Կոլեին, որը այսուհետև վարելու է քաղաքացիական և զինվորական գործերը»¹⁹³:

Թուրքական մամուլի ու ռադիոյի սպառնալից արշավի ու թուրքական դիվանագիտության ճնշմանը զուգահեռ Սանջաքում ծայր առան ոչ-թուրք և առաջադիմական տարրերի հայաժամանքն ու ճնշումը: Բազմաթիվ արաբ պաշտոնյաներ հեռացվեցին իրենց պաշտոններից և փոխարինվեցին թուրքերով: Սանջաքի «ներքին գործերի տնօրեն» նշանակվեց թուրք մոլիների պարագլուխ Արդուռահիման Մելեքը: Ամբողջ վարչա-սլետական ապարատը և

Ժանդարմերիան ու ոստիկանությունը գրեթե ամբողջությամբ անցան թուրքերի ձեռքը¹⁹⁴: Թուրք բանտարկյալները ազատ արձակվեցին և նրանց փոխարեն բանտ նետվեցին ոչ-թուրք համայնքների ղեկավարները, առաջադիմական, քաղաքական, հասարակական գործիչները: Փակվեցին «Լ'Էրո դ'Ալեքսանդրետ» և արաբական «Ալ-Ռուբա», «Ալ-Լիվա» և «Ալ-Խալիջ» թերթերը: Այս կապակցությամբ «Ժողովուրդի ձայն» թերթի թղթակիցը Ալեքսանդրետից հաղորդում էր. «Կացությունը կծանրանա Սանջաքի մեջ: Հակառակ անոր, որ թուրք տարրը փոքրամասնություն է, 40-ի վրա 22 երեսփոխան ունենալու իրավունք ստացավ: ...Սանջաքի մեջ ընդհանուր հուսախաբություն կտիրե, նույնիսկ ֆրանսիացի պաշտոնյաներու մոտ: Այս կապակցության առջև խուճապի մթնոլորտ մը ստեղծվեցավ ոչ-թուրք տարրին մեջ: Կարգ մը ընտանիքներ մեկնեցան Սանջաքեն»¹⁹⁵:

Հունիսի 9-ին վերաբացվում են ընտրական տեղամասերը, որոնք գործում են կամայականության ու ապօրինի արարքների պայմաններում: Ձերբակալվում, ծեծվում կամ սպանվում են «Հալք-Էվիի» ցուցակում գրանցվել չցանկացող ընտրողները, արաբական ու հայկական գյուղիկի, քաղամասերի «մուխթարներ»-ը (լիագորները): Այս բոլոր ապօրինություններին ակնհայտես են լինում Ազգերի Լիգայի միջազգային ընտրական հանձնաժողովի անդամները և այդ մասին հեռագրում են ԺՆՆ¹⁹⁶:

Կոլեն հուսալի կերպով և արագ թափով իրագործում էր իր անգլո-ֆրանսիական տերերի մութ պլանները: Բնութագրելով նրան և վերլուծելով Սանջաքի այդ օրերի քաղաքական դրությունը, Գաբրիել Պերին գրում էր. «Սանջաքի տերն է մայրը Կոլեն, հանրաժանոթ «Քրուա դը-ֆյո»-ի¹⁹⁷ անդամ, որը ժամանակին ղեկավարել է Դամասկոսի ապստամբության ճնշումը: Նրա առաջին գործը եղավ բոլոր ղեկավար դիրքերում թուրքեր նշանակելը:

Կոլեն թեև սվիներերի ուժով պահանջում է, որ ժողովուրդը քվեարկի Թուրքիայի օգտին, այնուամենայնիվ թուրքերին չի հաջողվում մեծամասնություն շահել: Տեսնենք, թե ինչպիսի մեքենայությունների պետք է դիմի չարագուշակ Կոլեն, որպեսզի թուրքերի համար ապահովի 22 աթոռ...: Այո, Թուրքիայի բարեկամությունը թանկ է մեզ համար, սակայն Անկարայի կառավարությանը դրողներն էլ հայտնի են, նրանք գտնվում են Բեռլինում»¹⁹⁸:

Այդ ժամանակամիջոցում բանակցություններ էին տեղի ունենում Անկարայի և Փարիզի միջև: Գեռես 1937 թ. մայիսի սկզբին Թուրքիայի կառավարությունը Ֆրանսիայի կառավարությանը առաջարկել էր երկու երկրների «գլխավոր շտաբների միջև բանակցություններ վարել Սիրիայի սահմանի և Ալեքսանդրետի Սանջաքի սահմանների երաշխիքի ու ապահովության վերաբերյալ»: Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունը այդպիսի բանակցությունների նպատակահարմարության մասին բանակի գլխավոր շտաբի ու ռազմական դեպարտամենտի կարծիքն էր հարցրել: Վերջինս իր 1937 թ. մայիսի 7-ի «հույժ գաղտնի» (1727.9/EMA հեռագրով¹⁰⁰) պատասխանել էր, թե «Ֆրանսիայի և Թուրքիայի միջև որևէ զինվորական հնարավոր համաձայնությունը կախված պետք է լինի Սանջաքի հենց ստատուսի վերաբերյալ նախօրոք կնքվելիք համաձայնագրից», որովհետև Սանջաքի հարցի ժնևում ընթացող քննարկումից երևում է, որ «Անկարայի կառավարությունը հակված է Սանջաքը վերածելու թուրքական ազդեցության գոտու՝ ... ի վնաս արաբական տարրերի»: Ռազմական դեպարտամենտը գտնում էր, որ «հարկ է մնալ անհաշտ ու անըդղվելի՝ հանդեպ որևէ լուծման, որը ընդունակ է վերացնելու Սիրիայի և Սանջաքի միջև կյանքի ընդհանրությունը: Արդարև, չի կարելի ընդունել, որ այդ տերիտորիան վաղ կամ ուշ դառնա թուրքական նահանգ», որովհետև նման դեպքում «մեզ համար նյութապես անհնար կլինի գոհացուցիչ պայմաններում ապահովել Հյուսիսային Սիրիայի սահմանի պաշտպանությունը»: Միայն այդպիսի պայմաններով և եթե Թուրքիան հրաժարվի Սանջաքը իր ազդեցության գոտի դարձնելու մտքից, ռազմական դեպարտամենտը «նպաստավոր կերպով նկատի կառնեք Թուրքիայի հետ գլխավոր շտաբների բանակցությունների սկզբունքը»¹⁰¹:

Սկսվել էին Անկարայում 1937 թ. դեկտեմբերի 16-ին (Սանջաքի Նոր Ստատուսի ուժի մեջ մտնելուց հետո) ֆրանս-թուրքական զինվորական գաղտնի բանակցություններ, Սիրիայում ու Լիբանանում ֆրանսիական զինված ուժերի գերագույն հրամանատար գեներալ Հյուցենժեի գլխավորած ֆրանսիական և գեներալ Ա.Գյունդյուզի գլխավորած թուրքական պատվիրակությունների միջև¹⁰²: Վեց ամիս լարված պայմաններում շարունակված այդ բանակցությունները 1938 թ. հունիսի 13-ին փոխադրվեցին Սանջաք (Անտիոք), որտեղ, ինչպես նշվել է, դեռևս

հունիսի 3-ից մտցվել էր ռազմական արտակարգ դրություն: Թուրք զինվորականների Անտիոքում գտնվելու պատեհ առիթից օգտվելով, տեղի թուրք մոլեռանդները հունիսի 24-ին հրահրեցին արյունալի բախումներ արաբների ու հայերի հետ: Կոլեն իր գորքերին հրահանգել էր չմիջամտել...: Անսպասելիորեն Տուրքն իր խարիսխը վերադառնալու հրաման ստացավ նաև Ալեքսանդրետի ծոցում գտնվող ֆրանսիական այն նավատորմիկը, որը ամսվա սկզբին ժամանել էր այնտեղ՝ Թուրքիայի ռազմական ներխուժման սպառնալիքին հակազդելու նպատակով²⁰¹:

Ֆրանս-թուրքական բանակցությունները ոչ մի լավ բան չէին խոստանում Սանջաքի և Սիրիայի համար, որտեղ հասարակական կարծիքը կանխագույն էր ինչ-որ մութ գործարք: Սանջաքի տիրակալները, ցանկանալով լավագույն ձևով «նախապատրաստել» բնակչությանը, սկսեցին նախօրոք ձերբակալել նրանց, ովքեր հավանորեն կարող էին հանդես գալ այդ նոր գործարքի դեմ: Հետապնդումները սկսում էին կրել զանգվածային բնույթ և այս պայմաններում «ընտրական գործողությունները» դեռևս շարունակվում էին: Ազգերի Լիգայի ընտրական հանձնաժողովը դրությունը գտնելով անհամատեղելի իրեն հանձնված առաքելության կատարման հետ, 1938 թ. հունիսի 20-ին, Լիգայի ընդհանուր քարտուղարին հղեց հեռագիր, որտեղ ասված էր. «...Տեղական իշխանությունների դիրքը, մայիսի 31-ից սկսած, ընտրությունները կեղծելու վտանգ է ստեղծում՝ սպառնալով ազգաբնակչության ամենամեծ հատվածի դիրքորոշման ազատությանը»: Հեռագրում այնուհետև խոսվում էր ընտրական տեղամասերում ոչ-թուրք տարրերի, նրանց ներկայացուցիչների ձերբակալությունների մասին, ինչպես նաև այդ կապակցությամբ Ֆրանսիայի թե՛ Սանջաքում, թե՛ Բեյրութում գտնվող ներկայացուցիչներին ուղղված բողոքի անհետևանք մնալու մասին: Հանձնաժողովը եզրակացնում էր, որ «նման պայմաններում իր գործը Սանջաքում ավարտված է համարում և խնդրում է այդ մասին հայտնել Լիգայի խորհրդին»^{201a}: Հունիսի 21-ին հանձնաժողովը հեռագրեց բարձր-կոմիսարին՝ պահանջելով հրահանգել Կոլենին, որ «հնարավորություն տա ընտրական գործողությունները շարունակելու բնականոն պայմաններում»: Բարձր-կոմիսարը այդ հեռագրին պատասխանել էր, որ «Սանջաքում արտակարգ ռազմական դրություն ստեղծված լինելու հանգամանքը անհնարին է դարձնում պահանջված երաշխիքը տալ»: Հունիսի 22-ին Թուրքիայի

ներկայացուցիչը Լիգայի ընդհանուր քարտուղարին ժնևում հաղորդել էր, որ «իր կառավարությունը չի կարող այսուհետև Սանջաքում ընտրական հանձնաժողովի իրավական գոյությունը ճանաչել և պահանջում է, որ նրա գոծունեությանը վերջ տրվի հնարավորին չափ շուտ»: Հունիսի 23-ին, համանման պահանջ ներկայացրեց Ֆրանսիան: Հունիսի 26-ին Լիգայի ընտրական հանձնաժողովը Սանջաքի ազգաբնակչությանն ու համապատասխան իշխանություններին պաշտոնապես հայտարարեց, որ «ընտրական գործողությունները վերջնականապես կասեցվել են»: Ընդհատելով իր գործունեությունը, հանձնաժողովը 1938 թ. հունիսի 29-ին մեկնեց Սանջաքից²⁰¹:

Ազգերի Լիգայի խորհուրդը ոչ մի միջոցառում չձեռնարկեց և կրավորական կերպով ընդունեց իր իսկ հեղինակության և իր կողմից մշակված ու ընդունված նոր Ստատուսի և հիմնական Օրենքի կոպիտ ոտնահարման այս փաստը, ըստ էության, միջազգային իրավունքի խախտում էր: Լիգան նույնիսկ պաշտոնապես չպարսավեց անգլո-ֆրանս-թուրքական այս գաղտնի գործարքը, որը կատարվում էր իր գլխի վրայով, ի խախտումն իր որոշումների, ի վնաս փոքր՝ սիրիական ժողովրդի: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի այս բացահայտ ու կոպիտ ոտնահարումը դատապարտվեց: Ընտրական հանձնաժողովի Սանջաքից ուղարկած հեռագրերը պաշտոնապես չիրատարակվեցին որպես Լիգայի փաստաթղթեր, այլ այդ մասին ընդհանուր քարտուղարը միայն զեկուցեց Խորհրդի դռնփակ նիստում²⁰²: Այս բոլորը գալիս էին մի անգամ էլ ապացուցելու, որ «չնայած Ազգերի Լիգան խաղաղության և կոլեկտիվ անվտանգության զենք դարձնելու սովետական պատվիրակության հետևողական պայքարին՝ Լիգայի մեծամասնությունը, հնազանդվելով Անգլիային ու Ֆրանսիային, ջանում էր միշտ ագրեսիայի գործողությունների կողքովը անցնել»²⁰³:

Անտիոքում և Փարիզում շարունակվող ռազմական ու դիվանագիտական բանակցությունների շրջանակները ընդլայնվել էին՝ ընդգրկելով ընդհանրապես ֆրանս-թուրքական հարաբերությունները, ինչպես այդ առաջարկվում էր Ֆրանսիական Բանակի գլխավոր շտաբի վերոհիշյալ (1937 թ. մայիսի 7-ի N 409) «հույժ գաղտնի» փաստաթղթում: Հուլիսի 1-ին, Ժ.Բոննեի և Ս.Ղավազի միջև արդեն համաձայնություն էր կայացվել: Հուլիսի 3-ին Անտիոքում վերջացան ռազմական բանակցությունները և

ստորագրվեց «Ֆրանս-թուրքական ռազմական կոնվենցիա»:
Հուլիսի 4-ին, Անկարայում ստորագրվեց «Ֆրանս-թուրքական
բարեկամության դաշինքը»²⁰⁴: Այդ պայմանագրով կողմերից
յուրաքանչյուրը պարտավորվում էր չմտնել որևէ դաշինքի մեջ, որը
ուղղված լինի մյուսի դեմ, և ասրեսիայի ղեկավարում օգնություն ցույց
չտալ հակառակորդ կողմին: Խոսվում էր նաև Արևելյան
Միջերկրականում խաղաղության պահպանման և Սանջաքի
պաշտպանության մասին: Սակայն, Ֆրանսիական Բանակի
ղեկավարության կողմից վերոհիշյալ հեռագրում առաջարկված
սկզբունքների ոգուն հակառակ, «Ռազմական կոնվենցիայով»
Սանջաքի սահմանները բացվում էին թուրքական զորքերի առջև,
որոնք հուլիսի 5-ին մեծ շուքով մուտք գործեցին Սանջաք: Ֆրանս-
թուրքական զորքերը «համատեղ պետք է «վերահաստատեին
կարգն ու կանոնը» մարզում մինչև Սանջաքի «պառլամենտի»
ընտրվելն ու գործադիր իշխանությունների կազմվելը»: Թուրքական
զորքերի մուտքը Սանջաք փաստորեն հանդիսացավ արաբական
այդ տելիտորիան Թուրքիային կցելու առաջին փուլը և «նախօրոք
վճռեց Սանջաքի զավթումը թուրքերի կողմից»²⁰⁵:

Դիվանագիտական երկարատև պայքարի այս փուլից ևս
հաղթական էր դուրս գալիս Թուրքիան, որի պահանջների առջև
Ֆրանսիան ի վերջո տեղի տվեց, որպես նախաքայլ մյուսխեսնյան
անգլո-ֆրանսիական թողտվության ու պարտվողական քաղաքա-
կանության:

Ինչպիսի՞նք դիվանագիտական ու քաղաքական գործոններ
ստիպեցին Ֆրանսիային դիմելու այդ նոր նահանջին: Խոսքը տանք
այդ նվաստացուցիչ ակտի գլխավոր դերակատար, Ֆրանսիայի
արտաքին գործերի մինիստր Ժորժ Բոննեին: «Այդ ժամանակ մենք
լուրջ կռվի էինք բռնված գերմանացիների հետ՝ Մուղեթների շրջանի
և Չեխոսլովակիայի համար, - գրում է նա: Ժամանակը չէր ծանր,
գուցե և արյունալի բախում ունենալու Թուրքիայի հետ, որի
ռազմագիտական դիրքը Միջերկրականի ավազանում խոշոր
նշանակություն ուներ: Մենք կարողացել էինք այդ ըմբռնել 1914-
1918 թթ. պատերազմի ժամանակ: Հարկ էր ամեն գնով խուսափել
այդ սխալը կրկնելուց... Թուրքական բարեկամությունը մեզ
անհրաժեշտ էր նաև Ռուսաստանի աջակցությունը ձեռք բերելու
համար, որովհետև երկու երկրների հարաբերությունները այդ

տարիներին հիանալի էին: ...Ուրեմն, ես առաջարկեցի պարոն Ս.Դավազին Սանջաքում կարգը հաստատել միասնաբար... և բարեկամական համագործակցությունը պսակել դաշինքով ու համաձայնագրով»²⁰⁶:

Ժ.Բոննեի փաստարկները արտուցվում էին ֆրանսիական դիվանագիտության շահերը: Իսկ թե այդ փաստարկները որքանով էին հիմնավոր միջազգային իրավունքի տեսանկյունից, երևում է ֆրանսիացի հայտնի իրավագետ, Ազգերի Լիգայի իրավախորհրդատու Էմիլ Ժիռոյի հայտնած կարծիքից: Իր «Մեծ դեմոկրատիաների 1919-1939 թթ. միջազգային քաղաքականության ոչնչությունը» աշխատության նախաբանում, խոսելով պատմաքաղաքական դեպքերի մեկնաբանման մասին, նա ասում է. «Քաղաքական դեպքերը հեռվից դիտողը, որը չի տեսել դերակատարներին գործելիս, հաճախ ընդունում է արտաքնապես ճիշտ թվացող նրանց փաստարկները, որոնք, սակայն, իրականում ճիշտ չեն: Այդպիսի օրինակ մենք ունենք ի դեմս Ժորժ Բոննեի»: Այնուհետև, բացատրում է, որ Սանջաքի և Չեխոսլովակիայի հարցերում Բոննեն ուզում էր մարդկանց հավատացնել, թե «իր գլխում ունեցած լուծումը ոչ թե ինքն է ցանկացել, այլ իրեն պարտադրվել է տիրող իրադրության կողմից, մի բան, որը դեմ է պատմական ճշմարտությանը»²⁰⁷: Հետագա դեպքերը ապացուցեցին այդ:

1938 թ. հուլիսի 4-ի դաշինքը ոչ վերջնական ստորագրման արժանացավ, ո՛չ էլ վավերացվեց համապատասխան պետությունների կողմից, որովհետև 1938 թ. սեպտեմբերի 2-ին հռչակված «Հաբայի պետություն»-ը իր ձեռք առած միջոցառումներով այդ դաշինքի տրամադրություններից էլ հեռու գնաց: Բացի այդ, շարունակելով իր թողտվության քաղաքականությունը, 1939 թ. հունիսին Ֆրանսիան ստորագրեց Սանջաքը Թուրքիային կցելու պայմանագիրը, միշտ «հանուն Արևելյան Միջերկրականում ուժերի հավասարակշռության ամրապնդման»²⁰⁸:

1938 թ. հուլիսի 4-ի դաշինքին կից համատեղ հայտարարությունով Թուրքիան հրաժարվում էր շրջանի նկատմամբ հողային պահանջ ներկայացնելուց: Նույնիսկ, 1936 թ. թուրք-սիրիական «Բարեկամության և բարիդրացիական դաշնագիրը» (որը Թուրքիան չեղյալ էր հայտարարել 1937 թ. դեկտեմբերի 1-ին) Ֆրանսիայի պնդմամբ ուժի մեջ էր թողնվում 12 ամիս ևս: Ավելին՝ ծրագրվեց 1938 թ. հուլիսի ակտերը վերածել ֆրանս-թուրք-սիրիական եռակողմ դաշինքի: Այդ նպատակով էլ Անկարայում բանակցություններ

սկսվեցին հուլիսի 7-ին, Սիրիայի ներկայացուցիչների մասնակցությամբ²⁰⁹: Սակայն այդ բանակցությունները սիրիական հանրային կարծիքի ճնշման տակ ընդհատվեցին մի քանի օր չանցած: Արդարև, սիրիական ժողովուրդը չէր կարող որևէ բան սպասել այդ բանակցություններից, որովհետև քաղաքական շրջաններում արդեն խոսվում էր Հալեպի և Ջեզիրեի նկատմամբ Թուրքիայի հավակնությունների մասին:

Սանջաքի ազգաբնակչությունը, ինչպես ամբողջ սիրիացի ժողովուրդը, դատապարտում էր Ջամիլ Մարդամ-բեկի ղեկավարած Ազգային Բյուրի կառավարությանը այն բանում, որ հնարավոր բոլոր միջոցներով չէր պայքարել Սանջաքի պաշտպանության համար՝ ընդդեմ անգլո-ֆրանս-թուրքական գաղտնի գործարքի: Ամբողջ երկրով մեկ տեղի ունեցան գործադուլներ, բողոքի բազմաթիվ ցույցեր ու միտինգներ, որոնց ժամանակ ազգային կառավարությունից պահանջվում էր ամեն ինչ անել Սանջաքը փրկելու համար²¹⁰: Սանջաքի պաշտպանության կոմիտեների կոչին պատասխանելով՝ հազարավոր երիտասարդներ պատրաստակամություն հայտնեցին զինվորագրվել՝ Սանջաքը կռվով պաշտպանելու համար: Դամասկոսում մի քանի մոլեռանդներ նույնիսկ ձեռնառումը նետեցին պրեմիեր-մինիստր Ջ.Մարդամբեկի վրա, որը կառավարական շենքի պատշգամբից ելույթ էր ունենում ցուցարարների առջև²¹¹: Մինչդեռ, փաստերը վկայում են, որ սիրիական ազգային կառավարությունը իր հնարավորությունների սահմաններում արել էր ամեն ինչ երկրի անբաժան մաս հանդիսացող Ալեքսանդրետի Սանջաքի պաշտպանության համար: Իսկ նրա հնարավորությունները շատ սահմանափակ էին: Սիրիան չուներ ո՛չ ազգային բանակ, ո՛չ դիվանագիտական ներկայացուցչություն:

Հակառակ այդ բանին, ինչպես նշում է Ն. ալ-Արմանազին, փորձեր կատարվեցին Թուրքիայի հետ ուղղակի բանակցությունների միջոցով Սանջաքի բաժանման հարցում կոմպրոմիսի հասնելու: Այդ նպատակով, 1938 թ. հունիսին Անկարա ուղարկվեց սիրիական կառավարության հատուկ դիվանագիտական ներկայացուցիչ Էմիր Ադել Արսլանը: Խնդրվեց Իրաքի կառավարության միջնորդությունը կոմպրոմիսի այդ պլանը իրականացնելու համար²¹²: Անկարայում Իրաքի դեսպան Նաջի Շավկաթը հունիսի 30-ին հարցը ներկայացրեց Ռ.Արասին և համաձայնություն ստացավ հետևյալ կետերի շուրջ. 1. Սանջաքը բաժանել Սիրիայի և

Թուրքիայի միջև, պայմանով, որ Անտիոքը մնա թուրքերին, 2. Արաբ և թուրք ազգաբնակչության փոխանակում կատարել, 3. Սիրիային իրավունք վերապահել օգտվելու Ալեքսանդրետի նավահանգստից: Սիրիական կառավարությունը սկզբում մերժեց այդ պայմանները, սակայն մի քանի օր հետո, հուլիսի 4-ի ֆրանս-թուրքական դաշնագրի կնքումից հետո, երբ նա պատրաստակամություն հայտնեց ընդունել Սանջաքի բաժանման թուրքական նախագիծը, Սանջաքի մի մասը գոնե Սիրիային պահելու մտահոգությամբ, Անկարան հուլիսի 8-ին պատասխանեց, արդեն ուշ է: Արդարև տեսնելով, որ իրենց գերագույն հույսերը իրականանալու վրա են, թուրքերը կարևորություն չտվեցին այդ խնդրին (սիրիական առաջարկներին - Ա.Բ.): Երբ մենք թուրքերի հետ ուղղակի բանակցելու հակում ցուցաբերեցինք, Սանջաքի կցումը արդեն դարձել էր անխուսափելի բան», եզրակացնում է Ալ-Արմանագին²¹¹:

Հուլիսի 23-ին, Դամասկոսում կառավարող Ազգային Բուկ կուսակցության համագումարի ավարտման առթիվ կազմակերպված զանգվածային միտինգում, պրեմիեր մինիստր Ջ.Մարդամբեկը պաշտոնապես հայտարարեց. «Ֆրանկո-թուրքական համաձայնագիրը կնքված է առանց մեզի, Մենք չենք ճանչցած և չպիտի ճանչանք զայն: Պիտի գիտնանք պատրաստ ըլլալ բոլոր գոհողությանց: Կիրավիրեն ազգին բոլոր զավակները միանալ»²¹²:

Մյուս կողմից, Սանջաքում Թուրքիան ու մանդատային իշխանությունները կամայականորեն տնօրինում էին շրջանի բախտը, որովհետև արդեն ձերբազատվել էին Ազգերի Լիգայի ընտրական հանձնաժողովի վերահսկողությունից: Անկարան Ջևադ Աչըբալընին Սանջաքում իր լիազոր ներկայացուցիչ էր նշանակել ֆրանսիական պատվիրակ Կոլեին համահավասար իրավունքներով: Այսուհետև, կառավարական բոլոր ակտերը պետք է կրեին միաժամանակ երկու պատվիրակների ստորագրությունները, սակայն փաստորեն թուրքերն էին միահեծած տիրություն անում Սանջաքում²¹³: Հարյուրավոր թուրքեր ամեն օր անարգել Թուրքիայից անցնում էին Սանջաք և հաստատվում այնտեղ, իսկ հայերը, արաբները գաղթում էին: Դեռևս իրենց պաշտոններում մնացած արաբ ու հայ աստիճանավորները հեռացվեցին՝ փոխարինվելով նորեկ թուրքերով:

Ազգերի Լիգայի ընտրական հանձնաժողովի գործունեությունը և հանրաքվեի արդյունքները չեղյալ հայտարարվեցին: Նշանակվեց 3 թուրքերից և 1 ֆրանսիացուց բաղկացած նոր

հանձնաժողով: Հուլիսի 22-ին սկսվեցին նոր «ընտրական գործողություններ», որոնք վերջացան հուլիսի 31-ին: Բոլոր արաբներն ու հայերը բոյկոտի ենթարկեցին այդ «ընտրությունները»²¹⁶: Հաշվի չառնելով ժողովրդի ճնշող մեծամասնության ձեռնպահ մնալը, օգոստոսի 30-ին հրապարակվեցին ընտրական արձանագրությունների նոր ցուցակները: Կարծես «դիպվածով» ազգաբնակչության միայն 23 տոկոսը ներկայացնող «թուրք համայնքի» (Հալբ-Էվիի) ցուցակում գրանցվել էին ընտրողների 63 տոկոսը: Բացահայտորեն խարդախված այս «ընտրական գործողությունների» արդյունքները որպես «օրինական հիմք» ծառայեցին Սանջաքի «պառլամենտ»-ում թուրքերի պահանջած 22 պոռոները նրանց հատկացնելու համար: Իսկ Սանջաքի ազգաբնակչության շուրջ 75 տոկոսը կազմող արաբներին, հայերին և այլ խմբերին տրվեց ընդամենը 18 տեղ²¹⁷:

Այս ձևով ավարտվեց Սանջաքում թուրք-ֆրանսիական «կոնդոմինիումի» պայմաններում կատարված ընտրական արձանագրությունների կատակերգությունը: Ահա թե ինչ է գրում այդ մասին Ադնան Այթան. «Առաջին և երկրորդ կարգի ընտրությունները տեղի ունեցան թղթի վրա: Քանի որ ոչ ոք չէր ներկայացել Հալբ-Էվիի ցուցակում արձանագրված պաշտոնական թեկնածությունների դեմ, երկու պատվիրակները ընտրված հայտարարեցին նրանց, առանց ընտրողների քվեատուփերի մոտ ներկայանալուն»²¹⁸: Անընդունելի է Ջ.Լենցովսկու այն պնդումը, թե «ընտրական ցուցակները ցույց տվեցին (!?) 63 տոկոսի թուրքական մեծամասնություն Սանջաքում»: Նույն ձևով Ա.Քըլլըջը հավակնում է, թե «ընտրություններ կատարվեցին և թուրքերը մեծամասնություն շահեցին Ասամբլեայում»²¹⁹: Հարցը ուսումնասիրող բոլոր հեղինակները²²⁰ ընդգծում են, որ թուրք-ֆրանսիական սվիմների պաշտպանության տակ «ընտրությունները» Սանջաքում իսկապես որ խարդախված էին ու բեմադրված անպատկառորեն և իրոք դրանք տեղի ունեցան թղթի վրա, որովհետև, ինչպես նշվեց, «թուրքական գորբերի մուտքը Սանջաք նախօրոք վճռել էր ընտրությունների ելքը»: Այս երկարատև բեմադրության ավարտից հետո, Աչըբալընը և Կոլեն 1938 թ. սեպտեմբերի 2-ին Անտիոքի շենքում հրավիրեցին «Սանջաքի Ասամբլեայի» առաջին գումարումը: Հենց առաջին նիստում, ժողովը սիրիական Ալեքսանդրետի Սանջաքը (մուհաֆազան) վերանվանեց «Հաթայի պետություն»:

Այսպիսով, ուղիղ երկու տարի տևող դիվանագիտական ու

քաղաքական սուր պայքարից հետո, Ալեքսանդրետի Սանջաքի վեճը «ուժովեց» Անկարայի կառավարության ցանկացած ձևով: Հնտորեն օգտվելով Առանցքի պետությունների վտանգավոր առաջխաղացման հետևանքով անգլո-ֆրանսիական դիվանագիտության ցուցարկած բողոքության քաղաքականությունից, քուրքական դիվանագիտությանը հաջողվեց «Ալեքսանդրետի հարցի» կարգավորումը դուրս բերել նույնիսկ այն ձևական վերահսկողությունից, որ Լիզայի խորհուրդը դեռևս կատարում էր. և Ազգերի Լիգայի զլխի վրայով գործ ստցնել Սանջաք, հռչակել «Հաթայի պետություն», մի քայլ, որը հանդիսացավ սիրիական այդ շրջանը Թուրքիային կցելու ողբերգության առաջին գործողությունը:

«ՀԱԹԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Սիրիական հանրապետության անբաժան մասի՝ Ալեքսանդրետի Մանջաքի տերիտորիայում 1938 թ. սեպտեմբերի 2-ին՝ «Հաթայի պետության» հռչակումը հանդիսանում է միջազգային իրավունքի խախտում:

Մանջաքի «Ասամրլեան» իր առաջին նիստը գումարեց 1938 թ. սեպտեմբերի 2-ին, ուրբաթ օրը: Ժողովում բոլոր ելույթները միայն թուրքերենով էին: Բոլոր «պատգամավորներն» անխտիր այդ լեզվով «հիմնական Օրենքին» հավատարմության երդում տվեցին և հարկադրաբար «փառաբանող ճառեր արտասանեցին, որոնցում նրանք իրենց երախտագիտությունն էին հայտնում թուրքական հանրապետության պրեզիդենտին և կառավարությանը՝ Մանջաքի (Հաթայի) անկախությանը հասնելու գործում ցույց տրված աջակցության համար»¹: Այնուհետև, ժողովը անցավ «պառլամենտ»-ի նախագահի ընտրությանը: Կանխօրոք այդ պաշտոնի համար նշանակված թեկնածուն՝ Աբդուլղանի Թյուրքմենը «ընտրվեց» միաձայն: Նա Անտոքի Հալք-էփիի նախագահն էր և 1918 թ. առաջ օսմանյան պառլամենտում եղել էր Անտիոքի երեսփոխան: Պետք էր «ընտրել» նաև «Հաթայի պրեզիդենտ»: Աբաթուրքը, դեռևս օգոստոսի 25-ին, այդ պաշտոնը գրավելու համար Անկարայից Անտիոք էր ուղարկել «իր անձնական բարեկամ Թալֆուր Սյոքմենին, որը վերջին տարիներին Ադալիայի պատգամավորն էր Քամուրթյում»²: Հենց նրան էլ «ընտրեցին» պետության ղեկավար: Ինչպես նշում է Ա.Թյոյնքին, «Ասամրլեայի թուրքականության բնույթը շեշտող վերջին արտահայտությունը հանդիսացավ այն, որ Ալեքսանդրետի մուհաֆազային տրվեց թուրքական նոր անուն և հռչակվեց «Հաթայի պետություն»:³ Այսպիսին պետք է լիներ շրջանի պաշտոնական անվանումը մինչև նրա կցումը Թուրքիային: Անտիոք քաղաքը, որտեղ բնակվում էր թուրքական մեծամասնություն, դարձավ Հաթայի կենտրոնն ու մայրաքաղաքը՝ Ալեքսանդրետի փոխարեն: Կազմվեց նաև «Հաթայի կառավարություն», որի ղեկավարությունը հանձնվեց,

ինչպես պետք էր սպասել, նույնպես մի թուրքի՝ Աբդուրրահման Մելեքին, որը դեռևս հունիսի 3-ին Կոլեի կողմից նշանակված էր «Սանջաքի ներքին գործերի տնօրեն»։ «Կառավարության» բոլոր հինգ անդամներն էլ թուրք էին։ «Պառլամենտն» իր հաջորդ նիստում, սեպտեմբերի 7-ին, միաձայն հաստատեց Սանջաքի նոր Ստատուտը, ինչպես նաև հիմնական Օրենքը, չնայած այդ ակտերը հաստատող «ասամբլեան» կազմվել էր հենց այդ վավերագրերի բոլոր դրույթների բացահայտ ոտնահարման միջոցով։ Ինչպես նշվեց, ժնկյան այդ փաստաթղթերը Սանջաքը հանձնում էին գործնականում Թուրքիայի փաստական գերիշխանությանը։ Նույն նիստումն էլ, Սանջաքի «թուրքականությունը» ավելի ևս շեշտելու համար, թուրքական դրոշը ընդունվեց որպես Հաթայի դրոշ, այն չնչին տարբերությամբ, որ սպիտակ աստղի կենտրոնում ավելացվում էր կարմիր շրջանակ։ Թուրքական հիմնը դարձավ Հաթայի հիմն և եվրոպական գլխարկը ընդունվեց որպես պարտադիր «ազգային գլխանոց» արաբական «թարբուշ»-ի (ֆեսի) փոխարեն։ Այսպիսով, «Հաթայի պետության» գոյության առաջին օրերից սկսած, Անկարան ու Սանջաքի թուրք անջատողականները, որոնց բացարձակ ղեկավարության տակ էր գտնվում Հաթայի «կառավարությունը», «սկսեցին վարել Սանջաքի աստիճանական թուրքացման քաղաքականություն»¹։ Այդ թուրքացման հաջորդական փուլերը և շրջանի սոցիալ-քաղաքական վիճակը քննելուց առաջ քննենք «Հաթայի պետության» հռչակման և իրավական գոյավիճակի հարցերը՝ հանրային իրավունքի և միջազգային իրավունքի տեսանկյունից։

«Հաթայի պետության» հռչակումը հակասահմանադրական մի քայլ էր և հանրային իրավունքի խախտում առաջին հերթին այն պատճառով, որ այդ հռչակող ժողովը ներկայացուցչական բնույթ չուներ, չէր ընտրված Սանջաքի ազգաբնակչության կողմից ղեմնկրատական ազատ ընտրությունների և քվեարկության միջոցով, այն նշանակված էր, այն էլ օտար պետությունների ներկայացուցիչների կողմից։ Հաթայի «պառլամենտը» չէր կարող ներկայացուցչական համարվել նաև այն պատճառով, որ այնտեղ աթոռների 55 տոկոսը (40-ից 22-ը) տրված էր Սանջաքի ամբողջ բնակչության 23 տոկոսը կազմող թուրք համայնքին։ Իսկ դա հակասահմանադրական քայլ էր, որովհետև դրանով խախտվում էր ընդհանրապես ղեմնկրատական ներկայացուցչության սկզբունքը և Սիբիական հանրապետության Սահմանադրությամբ հաստատված սիբիական

ընտրական օրենքը, ինչպես նաև Լիգայի կողմից Սանջաքի համար ընդունված հիմնական Օրենքը (հոդ. 6-ից 14) ու ընտրական կանոնադրությունը: Այդ «պառլամենտ»-ը կղիտվեր հակասահմանադրական և ոչ-ներկայացուցչական՝ ելնելով միայն վերոհիշյալ օրինական խախտումներից, եթե նույնիսկ ընտրությունները կատարված լինեին ազատ ու բնականոն պայմաններում: Մինչդեռ, ինչպես տեսանք, տեղի ունեցան «ընտրություններ թղթի վրա»: Բացի այդ, թուրք-ֆրանսիական սվինների պաշտպանության տակ անցկացված ընտրական վերջին գրանցումներից ձեռնպահ մնաց Սանջաքի ամբողջ ազգաբնակչության 80 տոկոսը: Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ այդ «պետության» հռչակումը հանդիսանում էր ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի ոտնահարում:

«Հաթայի պետության» հռչակումը հանդիսանում էր միաժամանակ միջազգային իրավունքի խախտում: Արդարև, այն կատարվեց Սիրիայի ժողովրդի ու պետության կամքին հակառակ՝ այդ պետության իրավական ու փաստական գերիշխանությանը ենթակա տերիտորիայում, օտար պետությունների ներկայացուցիչների կողմից: Սիրիայի կառավարությունը երբեք չի ընդունել Լիգայի կողմից Սանջաքին տրված նոր Ստատուսը, երբեք չի ճանաչել «Հաթայի պետության» հռչակումն ու գոյությունը: Մանդատային տերության Ֆրանսիական հանրապետության ո՛չ պառլամենտը, ո՛չ պետության ղեկավարը երբեք չեն հաստատել ո՛չ Սանջաքի նոր Ստատուսը, ո՛չ էլ «Հաթայի պետության» հռչակումը: Միայն Թուրքիան է, որ հասկանալի պատճառներով, ինչպես նշվեց, շտապ կերպով, 1937 թ. հունիսի 14-ին, մեջլիսի նիստում հաստատել էր Ժնևյան վավերագրերը: Իսկ «Հաթայի պետությունը» պաշտոնապես ճանաչելու կարիքն իսկ չզգացվեց Անկարայում, որովհետև այնտեղ համոզված էին, թե «ներկայիս փոխանցման շրջանը երազի ման կմտնի անցյալի գիրկը», ինչպես հայտարարել էր «Հաթայի պրեզիդենտ» Թայֆուր Սյոքմենը 1939 թ. մայիսին Անտիոքում, Թուրքիա կատարած այցելությունից հետո՝:

«Հաթայի պետության» հռչակումը միջազգային իրավունքի խախտում էր նաև այն պատճառով, որ այն կատարվեց մանդատի ենթակա երկրի տերիտորիայում, Ազգերի Լիգայի գլխի վրայով, Սիրիայի և Սանջաքի վերաբերյալ Լիգայի ընդունած բոլոր պաշտոնական որոշումների կոպիտ ոտնահարման միջոցով: Չհաշված Մանդատի Ակտը, սիրիական Սահմանադրությունը և Ալեքսանդրե-

տի Սանջաքի Մահմանադրական կանոնադրությունը (1930 թ. մայիս) և մանդատային պետության կողմից ընդունված զանազան ակտերը (որոնք Ազգերի Լիգայի կողմից հաստատվելով միջազգային իրավական ուժ էին ստացել), այդ «պետության» հռչակումը խախտում էր նաև Լիգայի խորհրդի կողմից Սանջաքին տրված նոր Ստատուսը և հիմնական Օրենքը: Դեռևս չենք խոսում այն մասին, որ վերջին ակտերը Թուրքիայի կողմից պարտադրված և անգլո-ֆրանս-թուրքական գործարքի արգասիք հանդիսացող վավերագրեր էին: «Հաթայի պետությունը» հռչակող «պառլամենտը» կազմվել էր Ալըբալընի և Կոլեի ջանքերով այն բանից հետո, երբ Լիգայի միջազգային ընտրական հանձնաժողովի վերահսկողության ներքո կատարված հանրաքվե-ընտրությունների գրանցումների առաջին արդյունքները մեկ անգամ ևս ապացուցել էին, որ Ալեքսանդրետի Սանջաքում ամենևին էլ գոյություն չունի թուրքական ինչ-որ երևակայական «մեծամասնություն»: Դրանից հետո, ինչպես հայտնի է, անգլո-ֆրանս-թուրքական դիվանագիտության գործիչները արդեն որոշել էին բացել իրենց խաղաթղթերը, սկսված գործարքը մինչև վերջ հասցնելու համար: Հանրաքվեի գրանցումները չեղյալ հայտարարվեցին, հանձնաժողովը հեռացվեց Սանջաքից: Լիգայի խորհուրդը միջազգային իրավունքի և իր իսկ որոշումների ու հեղինակության այս կոպիտ խախտման կողքով անցավ: Դրանից քաջալերված անգլո-ֆրանս-թուրքական դիվանագիտությունը կատարեց միջազգային իրավական նոր խախտում՝ Ազգերի Լիգայի մանդատին ենթակա Սիրիայի տերիտորիան թուրքական զորքեր մտցվեցին: Իրավախախտման և Ազրեսիայի այդ քայլը հայտնի է, որ կատարվեց առանց Ազգերի Լիգայի համաձայնության և նրա գլխի վրայով: Այս անգամ ևս Լիգայի խորհուրդը մեղսակից լուծություն պահպանեց և միջազգային իրավունքը, Մանդատի ակտը և Սիրիայի գերիշխանությունը ոտնահարող այդ քայլի դեմ որևէ որոշում չընդունեց, զրատապարտեց այդ իրավախախտումը:

«Հաթայի պետությունը» անխուսափելի հետևանքն էր այն առաջին իրավախախտման, ինչպիսին հանդիսանում էր Սանջաքի նոր Ստատուսը 1937 թ. նոյեմբերի 29-ից պաշտոնապես կիրառելու ապօրինի ակտը: Բացի այդ, Սանջաքի նոր Ստատուսի և հիմնական Օրենքի իրավականորեն անընդունելի տեքստերը առանց որևէ քննարկման ընդունել տալով Լիգայի խորհրդում, անգլո-ֆրանս-թուրքական դիվանագետները հենց այդ քայլով

նախապատրաստում էին «Հաթայի պետության» հռչակումը: Արդարև, այդ ակտերի կիրառումով Մանջարում պետք է ստեղծվեր միջազգային իրավական քաղաքական անորոշություն և անկայունություն: Ջ.Սփերդուտին նշում է. «Հաթայի պետության ստեղծումը միջազգային իրավական որևէ հիմքից զուրկ է, առաջին հերթին հենց այն պատճառով, որ Մանջաքի վերածումը անկախ պետության մանդատային պետության իրավասությունների սահմաններից դուրս է և բացահայտորեն խախտում է «A» տիպի մանդատների հիմնական սկզբունքներն ու Մանդատի խարտիայի 4-րդ հոդվածի դրույթները»: Ինչպես հայտնի է, այդ հոդվածը Ֆրանսիային պարտավորեցնում էր ապահովել Սիրիայի տարածքային ամբողջականությունը: Իսկ «Հաթայի պետության» ստեղծումը Սիրիային փաստորեն զրկում էր Ալեքսանդրետի Մանջաքի վրա ունեցած գերիշխանությունից: Շեշտելով այս կարևոր հանգամանքը, Ադման Այթան գրում է. «Քաղաքական մի շարք կոնսպրոմիսների շնորհիվ, Թուրքիային հաջողվեց իրագործել առաջին փուլը մի ծրագրի, որը կանխօրոք մշակվել էր Մանջաքը զավթելու համար: Այժմ Թուրքիան արդեն պառլամենտում ունի մեծամասնություն, վերահսկում է գործադիր իշխանությանը և, որ կարևոր գործոն է, նրա գործերը գրավում են Մանջաքի տերիտորիան»: Այս վերջին հանգամանքի վճռական լինելը խոստովանում է հենց ինքը՝ Հաթայի «պրեզիդենտ» Թայֆուր Սյոքմենը, որը 1939 թ. մայիսի 3-ին թուրքական «Անկարա» և «Ջումհուրիեթ» թերթի համար արված հայտարարության մեջ ասում էր. «Ես հատկապես պետք է նշեմ, որ Հաթայում թուրքական բանակի ներկայությունը ... հանդիսացել է մեր հաջողության գլխավոր պայմանը»:

Վերլուծելով «Հաթայի պետության» միջազգային իրավական գոյավիճակը, Ա.Թոյնքին գրում է. «Անվանապես մեկ պետության սահմանների մեջ, սակայն փաստորեն մեկ այլ պետության վերահսկողության տակ գտնվող Հաթայի դրությունը իրականում տարբեր չէր Բոսնիա-Հերցեգովինայի 1878-1908 թթ. իրավիճակից: Ինքնավար հանրապետությունը՝ Հաթայը դեռևս մնում էր ֆրանսիական մանդատի ներքո, ինչպես և սիրիական վայրտային ու տարիֆային սիստեմի մեջ: Սակայն նրա պառլամենտը 1939 թ. հունվարին ընդունեց թուրքական քաղաքացիական ու քրեական օրենսդրությունները»: Նույն հեղինակը հայտնում է, որ թուրք պաշտոնատարներ պետք է ուղարկվեն

Հաթայ հարկային սիստեմը վերակազմակերպելու համար և Թուրքիայի և Հաթայի միջև սահմանի վերացումը հյուսիսային Սիրիայի քարտեզի վրա ավելի ևս շեշտվեց 1939 թ. մարտին, երբ Թ.Սյոքմենը և Ա.Մելեքը Ադալիայի և Այնթապի իրենց նահանգներում նորից քննարկեցին որպես բուրքական մեջլիսի պատգամավորները:

«Հաթայի պետության» իրավական գոյավիճակի հատկանշական կողմերից մեկը և նրա «անկախության» բնութագրումը շատ պատկերավոր տրված է Հաթայի «պրեզիդենտ» Թ.Սյոքմենի՝ բուրքական թերթերի համար արված հայտարարության մեջ. «Մեր արտաքին քաղաքականությունը կատարյալ ձեռնհասությամբ ղեկավարվում է Թուրքիայի լիազոր-ներկայացուցիչ Ջևադ Աչքբալընի կողմից: Մեր հպատակների իրավունքները վստահված են գլխավոր հյուպատոս Ֆետիհ Դենլիի և հյուպատոս Ահմեդի բարեխիղճ խնամքին»¹⁰: Սրանից ավելի բացահայտ չէր կարելի ոտնահարել Սանջաքի նոր Ստատուսը, որի առաջին հոդվածում բառացի գրված էր. «Սանջաքի արտաքին գործերը տնօրինվում են Սիրիայի պետության կողմից»: Խոսելով Աքաթուրքի կողմից Թայֆուր Սյոքմենին «Հաթայի պետության» ղեկավար նշանակելու փաստի մասին, Պ.ոյու Վեուն եզրակացնում է. «Նրա նշանակումը օտար պետության ղեկավարի կողմից իրավական ոչ մի ուժ չունի: ... Նա մահվան էր դատապարտված (ֆրանսիական-Ա.Բ.) ռազմական առյանի կողմից. բացի այդ, պ.Աքաթուրքը նրան դարձրել էր Անկարայի պառլամենտի պատգամավոր: Համենայն դեպս, մենք նրան պետության ղեկավար հռչակեցինք և պաշտոնի չկոչեցինք Սանջաքի ազգությամբ ֆրանսիացի բարձր-կոմիսարին, ինչպես այդ նախատեսված էր նոր Ստատուսով»¹¹: Հենց Թ.Սյոքմենը խոստովանում է, որ ինքը նշանակված է Աքաթուրքի կողմից և հանդիսանում է օտար պետության ղեկավարների ցանկությունները կատարող պաշտոնատար սիրիական հողում: Նա բուրքական թերթերին 1939 թ. մայիսին հայտարարում է. «... Ձևական տեսակետից հանդիսանում են «Հաթայի պետության» ղեկավարը, իրականում ես միայն մի պաշտոնատար եմ, որին հանձնարարված է այստեղ կիրառել և գործադրել անմահ ղեկավար Աքաթուրքի և ազգային ղեկավար Իսմեթ Ինճնյուլի կամքը»¹²:

Վերջապես «Հաթայի պետությունը» հանդիսանում էր հենց 1938 թ. հուլիսի ֆրանս-բուրքական համաձայնագրերի խախտումը: Ըստ այդ ակտերի Սանջաքում պետք է հաստատվեր ֆրանս-բուրքական «կոնդոմինիում»: Այս կապակցությամբ էլի Բարբարոն

գրում է. «1938 թ. դաշնագիրը նախատեսում էր ֆրանս-թուրքական կոնդոմինիում Սանջարում: Սակայն, Կոլեի քաղաքականությունը թուրք գործակալներին թույլ տվեց շարժվել իրենց ցանկացած ձևով: ...Կոնդոմինիումը չիրագործվեց, որովհետև ասամբլեայում «մեծամասնություն» ձեռք բերած լիներով քեմալականները ամենատարագ կերպով առաջ տարան Թուրքիայի կողմից Սանջարի կլանումը»¹¹: Պոլ դյու Վեուն նույնպես հաստատում է այդ իրողությունը. «Սանջարում մենք (Ֆրանսիան - Ա.Բ.) չենք հաստատել ինչ-որ ձևի կոնդոմինիում, ինչպես ոմանք ներկայացնում են այդ: ...Մենք Սանջարը լքում ենք թուրքական միահեծան իշխանությանը»¹²: Թուրք պաշտոնական անձիք ևս չեն քաբցնում, որ Սանջարու դրության բացարձակ տերերը իրենք են և չեն ուզում ուրիշ կերպ պատկերացնել այդ, որովհետև Թ.Սյոքմենի բնութագրումով «Հաթայը՝ թուրքական հայրենիքի և ազգի անբաժան մասն է հանդիսանում: ...Հաթայը՝ անմահ ղեկավար Աթաթուրքի կողմից Ազգին շնորհված վերջին նվերն է»: Այս խոսքերը նա արտասանել է Անտիոքում, 1939 թ. մայիսի 24-ի իր ելույթում, դեռևս Սանջարը պաշտոնապես Թուրքիային կցելուց մեկ ամիս առաջ: Նույն ելույթում Թ.Սյոքմենը արդեն նախօրոք հայտարարում էր առանց այլևայլի, թե «Հաթայը գտնվում է ամենագոր մայր-հայրենիքի գրկում» և իր ելույթը վերջացնում էր հետևյալ խոսքերով. «Ես խոնարհվում եմ անմահ, մեծ ղեկավարի բարոյական կերպարի առջև և հարգալից համբուրում ազգային ղեկավար Ինոնյուի ձեռքերը»¹³: Ավելի պարզորոշ և աներկբայորեն հնարավոր չէր արտահայտել «Հաթայի պետության» իսկական իրավական գոյավիճակը և նրա «անկախությունը»:

Սիրիայում ու Լիբանանում Ֆրանսիայի բարձր-կոմիսար Գաբրիել Պյուն նույնպես խոստովանում է, որ 1938 թ. հուլիսի ֆրանս-թուրքական գործարքի հետևանքով թուրքական գործերի մուտքը Սանջար և «ընտրությունների հարցի քաղաքական կարգավորումը (sic!)... գործնականում Սանջարի լքումն էր Թուրքիային ժամանակի ֆրանսիական կառավարության կողմից, որը արհամարհեց ժողովրդի ձայնը»¹⁴: Գ. Պյուն պարզ ասում է, որ «Հաթայի պետության բախտը որոշված էր կանխօրոք և, երբ 1939 թ. հունվարի սկզբին իր պաշտոնն էր ստանձնում Բեյրութում, այդ «պետության զիջումը Թուրքիային գործնականորեն ընդունված փաստ էր, ինքը կոչված էր միայն այդ գործի հաշվեհարդարը կատարելու»¹⁵: Ֆրանսիացի սենատոր Հենրի Հեյը 1939 թ. մարտին

իր դժգոհությունն էր հայտնում այդ առթիվ. «Երբ աչքի առջև ունենանք փաստական իրողությունը, պետք է ասենք, որ Ալեքսանդրեանի Սանջաքը լրիվ ընկել է թուրքերի գերիշխանության տակ: Թուրքերը այնտեղ վարում են այնպիսի քաղաքականություն, որի նպատակն է իշխանությունից հեռացնել բոլոր ֆրանսիացիներին և ընդլայնել իրենց սահմանները»¹⁸:

Այսպիսով «Հաթայի պետության» հռչակումը միջազգային իրավունքի ու հանրային իրավունքի կոպիտ խախտում էր, իսկ այդ «պետության» իրավական գոյավիճակը անորոշ ու անկայուն էր:

«Հաթայի պետության» հռչակումից վեց-յոթ ամիս անց, ինչպես ցույց տրվեց վերևում, թուրքերը արդեն միահեծան տիրում էին Սանջաքին: Դեռևս 1936 թ. դեկտեմբերին «Լ'Ազի Ֆրանսեզ» ամսագիրը կանխատեսում էր, որ Արասի կողմից ձևակերպված պահանջների հետին նպատակն է «Սանջաքի սխտեմատիկ թուրքացումը և մարզի հետագա կցումը Թուրքիային»¹⁹: Այդ «թուրքացումը» սկսվել էր առաջին օրվանից և առաջ տարվեց շատ արագ թափով:

Ֆրանսիական քաղաքացիական և զինվորական աստիճանավորները վտարվում էին իրենց պաշտոններից, կամ լրիվ անտեսվում թուրք պաշտոնակիցների կողմից: Թուրքերը չէին քաշվում բացեիքաց հայտարարելու, որ իրենք հարկադրված չեն ցուցումներ ընդունելու ոչ ոքից, բացի Անկարայի կառավարությունից: Ս. Լոնգրիզը իրավացիորեն նշում է, որ «1939 թ. հունվարին Սանջաքի վարչական կլանումը Թուրքիայի կողմից արդեն գործնականում ավարտված էր»²⁰: Անկարայի հրամանով սիրիական Սանջաքում սկսեցին կիրառել թուրքական զանազան օրենսդրությունները: Ա.Թոյնթին գրում է, որ «Հաթայի արդարադատության մարմինների թուրքացումը սկսվեց 1939 թ. հունվարից, երբ ընդունվեցին թուրքական քրեական և քաղաքացիական օրենսդրությունները»²¹: Իրականում այդ սկսվել էր ավելի վաղ, 1938 թ. նոյեմբերի 22-ից, երբ Ջ.Աչըբալընի հրամանով Սանջաքից հեռացվեցին ֆրանսիացի այն չորս իրավագետները, որոնք Փարիզից ուղարկվել էին Սանջաքի արդարադատության օրգանները ըստ նոր Ստատուսի կազմակերպելու համար: «Հաթայի արդարադատության մինիստրը» հայտարարել է նրանց, որ թուրքական բոլոր օրենքները աստիճանաբար պետք է ընդունվեն

Հաքայում:

Եվ այսպես, առանց որևէ փոփոխության Մանջաքում ընդունվեցին և կիրառվեցին թուրքական բոլոր «օրենսդրությունները»²²: Կղերականներին ստիպեցին հազնել աշխարհականի տարագ, տղամարդկանց արգելվեց արաբական «թարրուշ» կրել, ֆրանսերենի դասավանդումը և նույնիսկ օգտագործումը արգելվեց: Հաքայի դատարաններին արգելվեց ի կատար ածել սիրիական դատարանների տված դատական վճիռները, Հաքայի «մինիստր»-ները իրենց զգում էին այնպես, ինչպես Թուրքիայում: Հունվար ամսից արդեն շրջանում սկսեցին օգտագործել նախ սիրիական նամականիշեր, որոնց վրա Ջ.Աչըքալընի հրամանով սև շրջանակ և Աթաթուրքի մահվան թվականն էր (8.11.1938) վերատպված. այս ձևով «Սիրիա» բառը ծածկվում էր: Այնուհետև, հրապարակ հանվեցին ուղղակի «Հաքայի պետություն» մակագրությունը կրող թուրքական նամականիշեր՝ Աթաթուրքի դիմանկարով: Սիրիայի մյուս շրջաններն ուղարկվող նամակներն ու ծանրոցները ենթարկվեցին արտասահմանյան տարիֆին, իսկ Թուրքիա ուղարկվողները՝ ներքին տարիֆին: Դրությունը այսպես շարունակվեց հակառակ բարձր-կոմիսար Գ.Պյուռյի ձեռք առած հակամիջոցների ու բողոքների, հակառակ այն հանգամանքին, որ նոր Ստատուսի դրույթներով շրջանը պետք է մնար Սիրիայի փոստային ու կապի սխտեմում:

Մանջաքի «թուրքացումը», Անկարայի բացարձակ գերիշխանության հաստատումը և ֆրանսիացիների քաղաքական ու զինվորական ազդեցության վերացումը այնտեղից արդեն կատարված փաստ էր դեռևս 1939 թ. հունվարից: Սիրիայի ու Լիբանանի ֆրանսիական գորամասերում ծառայող արաբներին, հայերին հարկադրել էին մինչև 1938 թ. հոկտեմբերի 15-ը հեռանալ Մանջաքից²³: 1938 թ. հուլիսի ֆրանս-թուրքական համաձայնագրով նախատեսված ֆրանսիական 2500 զորքից Մանջաքում մնացել էր միայն 830 զինծառայող: Մինչդեռ թուրքերը, որոնք նույն պայմանագրով պետք է ունենային նույնպես 2500 զինվոր, 1939 թ. սկզբներին Մանջաքում փաստորեն ունեին ավելի քան 12.000 զինծառայող: Դյու Վեուև վկայակոչելով Կուլեի աշխատակիցներից մեկի՝ ֆրանսիացի մի սպայի գաղտնի տեղեկագիրը, գրում է. «Մանջաքյան միլիցիա» կոչվածը (1500 մարդ - Ա.Բ.) բաղկացած է բացառապես թուրքերից և ղեկավարվում է թուրքերի կողմից: Վերջերս 8000 զինծառայողներ ժամանեցին Թուրքիայից՝

քաղաքացիական հագուստ հագած: Նրանք տեղավորված են ոչ թե գորանոցներում, այլ մասնավոր տներում, որտեղ պահվում են նրանց զենքերն ու համազգեստները»²⁴:

Նոր Ստատուսի տրամադրությունների համաձայն (հոդ. 22) Սանջաքը պետք է սպառազնակսուսացվեր: Սակայն, բուրքական կառավարությունը այնտեղ մեծ քանակությամբ զորքեր կենտրոնացնելուց բացի, ռազմական շինարարություն էր ձեռնարկել: «Չորանոցները, - գրում է Դյու Վեուն, - որոնց նախագծերը կանխօրոք ուսումնասիրվել էին, գետնի տակից դուրս են գալիս: Լույս աշխարհ են հանվում բետոնապատ հրապարակներ, կազեմատներ»²⁵: Դա պատահական չէր, այլ պլանավորված: Փաստորեն արդեն Սանջաքի տեր դարձած Թուրքիան աչք ուներ Հալեպի, Չեզիրեի, ամբողջ Սիրիայի վրա: Սանջաքում կենտրոնացված նրա զորքերը գիշեր-ցերեկ վարժություններ էին կատարում, երգելով՝

*«Կանգնած՝ Հաքայում,
Մեկ աչքս դեպի Դամասկոս,
Մյուսը՝ դեպի Հալեպ,*

Սիրոս բարախում է Չեզիրեի համար»:

... «Եկել ենք արյուն քափելու...

*Հուր ու կրակ ցանելու...»*²⁶:

Թուրք զինվորները արյուն էին քափում ոչ միայն երգերում, այլ գործնականում: 1938 թ. սեպտեմբերի 25-ին Անտոնիքում, օրը ցերեկով մի թուրք սերժանտ առանց որևէ պատճառի սպանում է ֆրանսիացի գեներալի որդի և Կոլեի աշխատակից լեյտենանտ Շաբոյին: Ոճրագործը մնում է անպատիժ: Թուրք զինվորները սպանում են հայ, արաբ, անմեղ մարդկանց²⁷:

Թուրք համազգեստավոր ոճրագործների կողմից Սանջաքի ազգաբնակչության ահաբեկումը սխտեմատիկ կերպով շարունակվում էր ու միշտ մնում անպատիժ, որովհետև Հաթայի «Հասարակական կարգի» պահպանությունը նույնպես արդեն լրիվ անցել էր թուրք մոլիների ու շովինիստների ձեռքը: Ի դեպ, Սանջաքի մասին հետևյալն էր ասված Բ.Աթաթուրքի 1938 թ. թուրքական մեջլիսի բացման ճառում (նոյեմբերի 1-ին)²⁸. «Անկախ Հաթայի պետությունը այսօր հասարակական կարգի ուժերը կազմակերպելու և երկրի ներքին անվտանգությունը նույնպես իր միջոցներով

ապահովելու գործով է զբաղված: Վստահ ենք, որ մտ- ժամանակներս այդ գործը ևս հաջողությամբ կապակվի»²⁹: Թուրք ղեկավարի այդ ցանկությունը հաջողությամբ իրագործվում էր նրա մահից հետո: Ինչպես գրում է Ա.Շաքերը, «Թուրքիան արդեն կացության տերն է այնտեղ, չնայած ֆրանսիական զորքեր դեռևս կան շրջանում: Մնում է միայն փաստական դրությանը տալ պաշտոնական ճանաչում»³⁰: Իրականում՝ Հաթայում ամեն ինչ թուրքական էր սկսած պետության ղեկավարից, գերագույն դատարանից, պաշտոնական լեզվից մինչև դրոշը, օրենսդրությունը, դրամական սիստեմը, դրոշմանիշները³¹:

1939 թ. գարնանը Ալեքսանդրետի Սանջաքում թուրքացման քաղաքականության նվաճումները այնպիսի մի կետի էր հասել, որ ո՛չ նոր Ստատուսը, ո՛չ էլ 1938 թ. հուլիսի ֆրանս-թուրքական համաձայնագրերը հնարավոր չէր այլևս կյանքում կիրառել: Արդարև, շրջանի արտակարգ արագ թուրքացումը շատ առաջ էր անցել այդ ակտերի սահմաններից՝ հեղեղելով դրանք: Հարկ էր գտնել նոր «ֆորմուլա» և այդ նպատակով էլ սկսվեցին ֆրանս-թուրքական նոր բանակցություններ, որպեսզի փաստական այդ գոյավիճակին երկկողմանի պաշտոնական ճանաչում տրվի:

«Հաթայի կառավարությունը» ներքին քաղաքականության բնագավառում որդեգրեց հետադիմական և բռնատիրական ընթացք, ինչպես այդ բնականորեն սպասելի էր, ելնելով նրա ստեղծման հակասահմանադրական, ապօրինի հիմքերից:

«Հաթայ»-ի ռեժիմը Ալեքսանդրետի Սանջաքում սկսվեց քաղաքական սանձարձակ ահաբեկման պայմաններում, որը հատկապես ուղղված էր կոմունիստների և առաջադիմական տարրերի, արաբների ու հայերի դեմ: Արգելվեցին բոլոր ոչ-թուրքական թերթերը, կոմունիստական կուսակցությունը, արաբ և հայ քաղաքական ու հասարակական բոլոր հայրենասիրական կազմակերպությունները³²: Նոր իշխանությունների կողմից հրատարակվող «Հաթայ», «Քուրթուլան Յուրտ», «Հալք» և «Աթա Յուլու» նոր թերթերը իրենից ամենօրյա գրգռիչ ու ահաբեկիչ քարոզչությամբ խոր ատելություն էին սերմանում ոչ-թուրքերի դեմ: Նրանք էժանագին ու անհիմն լուտանք էին թափում «Դամասկոսի և Մանդատի տիրապետության շրջանի անարխիստական կարգերի» դեմ և փառաբանում «Հաթայի քեմալական կարգերը», նոր

«դեմոկրատական ռեժիմը»: Այդ նոր «դեմոկրատական» կարգերում կամայականությունն ու ձերբակալությունները, ազգային խտրականությունն ու սպանությունները, անասելի ոճիրները սովորական երևույթներ էին դարձել»: Ալեքսանդրետից «Ժողովուրդի ձայն» թերթին ուղարկված «Խուճապային, հուսահատական մթնոլորտ» վերտառությամբ թղթակցության մեջ կարդում ենք. «Կացությունը Սանջաքի մեջ վատեն վատրաբազույնը կընթանա ամեն օր...: ...Կառավարական ճնշումի միջոցները և ամենօրյա հալածանքները կյանքն անտանելի կդարձնեն ոչ-թուրքերուն համար: Առանց պաշտոնապես Թուրքիո կցված հռչակվելու, գործնականորեն սակայն Սանջաքի տերն ու տիրականը Անկարան է: Կառավարական պաշտոնատուները կվխտան Թուրքիայեն նոր եկած պաշտոնյաներով և գաղտնի ոստիկաններով: Ոստիկանության բնահաճ սանձարձակությունները, հայ աղջիկներու և կանանց հասցեին նետված լախիշ խոսքերը սովորական դեպքեր են»³⁴:

«Հաթայ»-ի նոր կարգերի իշխանավորների մոլուցքի ամենակատաղի ալիքը ուղղված էր կոմունիստների դեմ: Ձերբակալվեցին կոմունիստ ղեկավարներ Քասեմ Ռ-ղվանը, Սամա'անը և ուրիշներ. ազատ մնացածներին հետապնդում, նրանց տները խուզարկում էին: Փակվեց Ալեքսանդրետի կոմունիստական ակումբը: Այս կապակցությամբ կազմակերպվեց բողոքի միտինգ, որը արյան մեջ խեղդվեց նոր իշխանավորների կողմից:

«Հաթայ»-ի կառավարողների քաղաքականությունը բնութագրվում է նաև հատկապես հակաարաբական ու հակահայկական ճնշումներով, հալածանքներով ու խտրականությամբ: Այսպես, Հաթայի կառավարական մարմիններում ոչ մի իրավունք և պաշտոն չստացան Սանջաքի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող արաբները և հայերը՝ հակառակ Անկարայի տարիներից ի վեր շեփորված «հանրապետական» կամ «ժողովրդական» սկզբունքներին: Պատասխանատու դիրքեր գրավող մի քանի արաբները ևս պաշտոններից հեռացվեցին: Սանջաքի վրայով հակաարաբական ալիք անցավ: Հայերի հանդեպ, Անկարայի ներքին հատուկ կարգադրությամբ, դեռևս վարվում էր «մասնավոր քաղաքականություն»: Հարկ էր, առայժմ, սիրաշահել «հայախոս հայրենակիցներին», նրանց հակադրելու համար իրենց դարավոր բախտակից եղբայրներին՝ արաբներին³⁵: Սակայն հայերը կյանքի փորձով հիմք ունեին չհավատալու փաղաքշանքներին: Սանջաքում տիրող խառնակ և անստույգ դրությունից

հայերը անհանգստացած էին: Կոլեն հարկ է համարում Հայոց Առաջնորդարան ուղարկել իր ներկայացուցիչ մայրը Կանսելին, որպեսզի հայերին վստահեցնի, թե Ֆրանսիան տեր է Սանջաքում: Իսկ «Հաթայում» հայերը անհանգստանալու հիմքեր շատ ունեին: Ֆարթըսը հայկական գյուղում մի թուրք սպանում է մի հայ գյուղացու. ոճրագործը միայն 3-4 օր է մնում բանտում: Ալեքսանդրետում հայ մատուցողին վայրագորեն ծեծում են թուրք զինվորները: Մեղավորները մնում են անպատիժ: Հայ կանայք բռնաբարվում են թուրքերի կողմից: Ուրիշ մի հայ սպանվում է Աթիկի ճանապարհի վրա: Մի հայ երիտասարդի հուղարկավորության քափորը ցրվում է ոստիկանության կողմից և նույնիսկ արգելվում է դազաղը եկեղեցի տանել: Քեսապի և Մուսա-լեռան հայկական բոլոր գյուղերում ստեղծվում են ժանդարմական կետեր: Հայ մի քանի պաշտոնյաներ նույնպես պաշտոնազրկվում են³⁶:

Բնութագրելով քաղաքական ներքին դրությունը «Հաթայի պետությունում», Ֆրանսիական սենատի արտաքին գործերի հանձնաժողովի Միջերկրականի կոմիտեի նախագահ սենատոր Գյուստավ Գոթթրոն Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ժորժ Բոննեին 1938 թ. հոկտեմբերի 16-ին ուղղված իր բաց նամակում գրում էր, թե Սանջաքում երկար ամիսներից ի վեր Ֆրանսիայի լավագույն բարեկամները զոհ են դառնում հակառակորդներին, որոնցից սարսափելու բոլոր հիմքերը նրանք ունեն, ինչպես այդ ապացուցել են «Կիլիկիայում կատարած վայրագությունները և ավելի նորագույն սխրագործությունները...: Ծրագրվում է այնտեղ իրագործել մի նոր «Անշլյուս», որը դատապարտվում է թե՛ շրջանի ազգաբնակչության ստույգ մեծամասնության, թե՛ սիրիական պետության հանդեպ Ֆրանսիայի ստանձնած պարտավորությունների կողմից»³⁷: Նույն սենատորը երկու ուրիշ պաշտոնակիցների հետ տեղում տիրող իրական դրությունը ուսումնասիրելու նպատակով 1939 թ. ապրիլի 14-17-ը լինում է Սանջաքում: Վերադառնալուց հետո Գ.Գոթթրոն մինիստր Ժ.Բոննեին հղում է նոր նամակ, կից տեղեկագրով³⁸, որտեղ «ականատես վկաներից քաղած թարմ ու ճշգրիտ տվյալներով, ...անհերքելի իրողություններով» ապացուցվում է, հակառակ պարոն մինիստրի պաշտոնական պնդումներին, որ Ալեքսանդրետի Սանջաքում դրությունը շատ՝ հեռու է նորմալ լինելուց: Ընդհակառակը՝ քաղաքական ահաբեկման ու հալածանքի պայմաններում շրջանի թուրքացումը այն աստիճան առաջ էր տարվել Ֆրանսիայի

մեղսակցությամբ, որ այլևս անհնար էր շրջանը արդեն պաշտոնապես Թուրքիային կցելու առաջն առնել:

Պետք է նշել նաև, որ միաժամանակ Անկարայի կողմից առաջ էր տարվում շրջանի սոցիալ-տնտեսական թուրքացումը, ինչպես նաև ազգաբնակչության «թուրքացումը» հալսի ու արաբների հարկադրված արտագաղթով և Բալկաններից բերված թուրքերին Սանջաքում վերաբնակեցնելով¹: Այդպիսին էր Ալեքսանդրետի Սանջաքի ներքաղաքական դրությունը «Հաթայի պետության» ժամանակաշրջանում (1938 թ. սեպտեմբեր - 1939 թ. հունիս):

Ալեքսանդրետի Սանջաքի կոնֆլիկտի շուրջ մղված դիվանագիտական ու քաղաքական երկար ու սուր պայքարի ամբողջ տևողության ընթացքում շարունակվող միջազգային լարված հարաբերությունները Եվրոպայում ու Միջերկրականի ավազանում՝ անչափ նպաստավոր էին Թուրքիայի համար: Անկարան կարողացավ լավագույն ձևով իր շահերին ի նպաստ օգտագործել օրըստօրե խորացող այն հակամարտությունները, որոնք գոյություն ունեին մի կողմից՝ Առանցքի տերությունների և մյուս կողմից՝ Ֆրանսիայի ու Անգլիայի միջև:

Ինչպիսիք էին Ալեքսանդրետի կոնֆլիկտի ժամանակաշրջանում տիրող միջազգային հարաբերությունները և շահագրգռված պետությունների որդեգրած դիրքն ու խաղացած դերը Ալեքսանդրետի հարցի «կարգավորման» մեջ:

1936-1939 թվականները բնութագրվում են Առանցքի երկրների ագրեսիվ գործողությունների առջև անգլո-ֆրանսիական դիվանագիտության թողտվության քաղաքականության սկզբնավորությամբ և հետզհետե ավելի խորացումով: Անգլո-ֆրանսիական դիվանագիտության որդեգրած «չմիջամտելու» տխրահռչակ քաղաքականությունը հասցրեց այն բանին, որ 1938թ. այն արդեն վերածվեց ագրեսիայի առջև լրիվ թողտվության քաղաքականության: 1938 թ. հուլիսին թուրքական զորքերի մուտքը Սանջաք անգլո-ֆրանսիական դիվանագիտության մյունխենյան կուրսի նախաքայլն էր՝ նրանց «Արևելյան Մյունխենը»: Նույն տարվա սեպտեմբեր ամսին տեղի ունեցան թե «Հաթայ»-ի հռչակումը, թե Մյունխենն ու Սուդեթների շրջանի գրավումը: Երբ 1939 թ. գարնանը (Չեխոսլովակիայի ու Ալբանիայի գավթումից հետո) բացահայտ

դարձավ անգլո-ֆրանսիական մյուսխենյան քաղաքականության սնանկացումը, տենդազին կերպով դաշնակիցներ փնտրող անգլո-ֆրանսիական դիվանագիտության առջև Անկարան դրեց իր «բարեկամության» առաջին պայմանը՝ Ալեքսանդրետի Սանջաքը (Հաթայը) պաշտոնապես կցել Թուրքիային: Այսպիսով, Աթաթուրքի կառավարությանը հաջողվեց իր արտաքին քաղաքականության հարատև տատանումների և դիվանագիտական ու քաղաքական բազմապիսի մանևրների շնորհիվ շահավետ ծախել իր «բարեկամությունը» անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորմանը: Այս բնորոշ հանգամանքը շեշտվում է Ալեքսանդրետի հարցը ուսումնասիրող բոլոր հեղինակների կողմից:

Առաջին հերթին, թուրք հեղինակներն ու պետական գործիչներն են խոստովանում այդ պահի վճռական լինելը: Այսպես, Ա.Շ. Էսմերը գրում է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ Անգլիան ու Ֆրանսիան ստեղծում էին ռազմական խմբավորում, «այդ ճակատի մեջ Թուրքիայի հետ տեղի ունեցող բանակցություններում Հաթայի հարցը հանդիսանում էր այդ բանակցությունների մի կողմը»⁴⁰: Ֆրանսիական ռազմական իշխանությունները ևս գտնում էին, որ «շատ ցանկալի կլինի Թուրքիայի հետ ինչ-որ համաձայնություն զինվորական բնագավառում՝ ելնելով այն բանից, որ կոնֆլիկտի դեպքում Ֆրանսիան կկարողանա օգտվել նեղուցներից՝ Խորհրդային Միության, Ռումինիայի և Լեհաստանի հետ իր կապերը ապահովելու նպատակով»^{40ա}:

1938 թ. նոյեմբերի 1-ին, թուրքական մեջլիսի բացման իր ճառում Աթաթուրքը շեշտում էր, որ «Հաթայի գործում ձեռք բերված արդյունքների հաստատումը կծառայի որպես հիմք՝ թուրք-ֆրանսիական բարեկամության զարգացման ու բյուրեղացման համար»⁴¹:

Արաբ հեղինակներն էլ են ընդգծում, որ Ֆրանսիայի կողմից Սանջաքը «զոհվեց» թուրքական «բարեկամությունը ապահովելու» համար միայն: Նաջիբ ալ-Արմանազին գրում է, որ երբ 1939 թ. հունվարին Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Սարաջօղլուն ֆրանսիական դեսպան Մասիգլիին հայտնեց, թե «Հաթայի կատակերգությանը վերջ դնելու ժամը հասել է, Ֆրանսիայի դեսպանը աճապարեց արագ կերպով համաձայնության գալ, քանի դեռ ուշ չէր Թուրքիայի բարեկամությունը ապահովելու համար»⁴²: Ալ-Հաթեն Դարուազան գտնում էր, որ «միջազգային այն

իրադրությունը, որի առկայության պայմաններում կատարվեց Մանջաքի խման ոճիրը, անչափ ձեռնառու էր հնարավորին չափ անադմուկ հասնել այդ ոճրի իրագործմանը»⁴¹: Հայտնի է, որ Մյունխենից հետո Թուրքիան, սարսափելով հանդերձ առանցքի երկրների ծավալումից, այնուամենայնիվ, Մանջաքի գավրման գործում «... հետևեց գրեթե նույն տակտիկային, ինչ Գերմանիան. որովհետև Ֆրանսիան կարիք ուներ Թուրքիայի հետ իր բարեկամությունը ամրապնդելու, Մյունխենի համաձայնությունից հետո շատ մտաճոգված լինելով Արևելյան Միջերկրականում իր դիրքի համար»⁴²:

Եվրոպայում ֆաշիզմի ու ռևանշիզմի գլուխ բարձրացնելուց ի վեր, Թուրքիայի կառավարող շրջանները ձգտում էին Գերմանիայի հետ սերտ մերձեցման միջոցով իրենց երկիրը մղել քաղաքական ու ռազմական համանման արկածախնդրությունների: Իսկ Բեռլինն ու Հռոմը, Ալեքսանդրետի հարցի արժարժման առաջին օրերից սկսած, ինչպես նշվեց, Անկարային շարունակ մղում էին հետևել «կատարված փաստի» առջև դնելու ֆաշիստական ավագակային մեթոդին՝ Մանջաքի կոնֆլիկտի «արմատական լուծմանը» հասնելու համար: «Հետաքրքրական է նշել, - գրում է Վ.Յեյլը, - որ, ճիշտ այնպես ինչպես ճապոնացիք 1932-1933 թթ. գավթեցին Մանջուրիան և Իտալիան՝ Եթովպիան (1936 թ.), նույն մեթոդով, սակայն առանց արյուն թափելու..., թուրքերը գավթեցին Հաթայի պետությունը, որը հենց այդ նպատակի համար էր ստեղծվել»⁴³: Այս կապակցությամբ «Իզվեստիա» թերթը գրում է. «Գաղտնիք չէ, որ Գերմանիան ու Իտալիան «բարեկամաբար Թուրքիային մղում էին զինված ուժով գավթելու Մանջաքը, որպեսզի ամբողջ աշխարհը և առաջին հերթին Ֆրանսիան դրվի կատարված փաստի առջև: Այդ ուղղությամբ առանձնապես մեծ ջանք թափեցին գերմանական «խորհրդականները»՝ առաջ քաշելով հիտլերյան գորբերի կայսիզ Հռենոսի շրջանի գրավումը»⁴⁴: Ռ.Դավոսը շեշտում է, որ Մանջաքի հարցում ֆաշիստական պետությունները Թուրքիային բացահայտ կերպով մղեցին արկածախնդրության և «ամեն կերպ ջանացին հրդեհ բորբոքել և գործը հասցնել նույնիսկ մինչև արյունահեղության՝ Թուրքիայի ու Սիրիայի միջև»⁴⁵: Իսկ 1938 թ. գարնանը «թուրքական պրոպագանդայից վառողի հոտ էր գալիս և Բեռլին-Հռոմ առանցքի ագրեսիվ գործողությունների պլաններում ընդգրկված էին նաև Սիրիան, Լիբանանը և հատկապես Թուրքիան»⁴⁶: Վերջինս Գեբբելսի կողմից ընտրված էր

որպես ֆաշիզմի պրոպագանդայի կենտրոն Մերձավոր Արևելքում: Արդարև, տիրապետող դիրք գրավելով Թուրքիայի արտաքին առևտրի ասպարեզում, տնտեսական դիրքերը ամրապնդելուն զուգընթաց Գերմանիան ուժեղացնում էր նաև իր քաղաքական ուզղեցությունը այդ երկրի վրա: Իր համար գործակալներ հավաքագրելով թուրքական կառավարող շրջաններում, ինչպես գրում է Ն. Դոդանը, Հիտլերին հաջողվել էր Մերձավոր Արևելքում իր «պրոպագանդայի օրգաններ դարձնել Ստամբուլի ֆաշիստական «Բեյօղլու», «Թյուրքիշե Փոստ» և պրոֆաշիստական «Ջում-հուրիեթ» և «Ռեայյուբլիկ» թուրքական թերթերը»⁴⁸: Դեռևս 1937 թ. «Ջումհուրիեթ» թերթը գրում էր, թե «Բավարարել Գերմանիայի պահանջները՝ ճշանակում է ծառայել ընդհանուր խաղաղության գործին»⁴⁹: Ավստրիայի «Անշլյուս»-ից հետո, «Թյուրքիշե Փոստ» թերթը գրում էր. «Թուրքիայի տեղը տոտալիտար տերությունների խմբավորման մեջ է»⁵⁰: Առանցքի երկրները, բնական է, ամեն կերպ ճգնում էին շահագործել թուրք ղեկավարների տրամադրությունները և Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ արտահայտվող տատանումները: Թուրքիան Ֆրանսիայի գլխին միշտ որպես դամոկլյան սուր ճոճել է Առանցքի երկրների հետ իր հարաբերությունները ավելի ևս սերտացնելու և նույնիսկ՝ լրիվ «տոտալիտար երկրների կողմը անցնելու» հնարավորությունը⁵¹: Վ.Մ.Ալեքսեևը և Մ.Ա.Քերիմովը նույնպես ընդգծում են, որ «Թուրքիայի մերձեցումը ֆաշիստական երկրների հետ գնալով ավելի ցայտուն արտահայտվեց նրա կառավարության արտաքին քաղաքականության մեջ: Գերմանիայի և Իտալիայի ագրեսիվ պլանները սպառնալիքի տակ էին դնում անզու-ֆրանսիական շահերը Մերձավոր Արևելքում, իսկ Թուրքիան, օգտվելով Գերմանիայի ագրեսիվ գործողությունների կապակցությամբ ստեղծված միջազգային հարաբերությունների սրումից, որոշեց իրեն ենթարկել Ալեքսանդրետի Սանջաքը»⁵²: Սանջաքի նկատմամբ Թուրքիայի հավակնությունները միշտ արդարացվել են գերմանական մամուլում: Այսպես, «Բեռլիներ Մոնաթսհեֆտե» ամսագրում Ուալտեր Յեյլինը գրում էր, որ Սանջաքի (Հաթայի) կոնֆլիկտի «կարգավորումով Թուրքիան իր համար ապահովել է միայն այն իրավունքները և դիրքը, որոնք իրավամբ հասնում են իրեն, որովհետև... Ալեքսանդրետի Սանջաքը, ազգային հիմունքներից ելնելով, Սիրիային չի պատկանում»: Հեղինակը այնուհետև Թուրքիային «ի ճիշտությամբ» է տալիս ձեռքից բաց չթողնել սվաճված

հաջողությունները և, ի հարկին, դրանք պաշտպանել «բոլոր
 հնարավոր միջոցներով»⁵³։ Չնայած նույն հանդեսի այն պնդմանը,
 թե Սանջաքի հարցը Գերմանիայի համար ուղղակի շահագրգռու-
 քյուն չի ներկայացնում, այնուամենայնիվ Սանջաքի կոնֆլիկտի
 տարիներին հիտլերյան պլաննագիտությունը գործում էր
 տենդագին։ 1937 թ. մայիսի 12-ին Բեռլինում Ֆրանսիայի գործերի
 հավատարամատարը հեռագրում էր արտաքին գործերի մինստր
 Ի.Գելբոսին, թե Սանջաքի վերաբերյալ թուրք-ֆրանսիական
 բանակցությունները «խորը անհանգստություն են առաջացրել
 Բեռլինում», որտեղ գտնում են, որ «խնդրո առարկա է ոչ միայն
 Ալեքսանդրետի հարցը, այլ նաև ընդհանուր քաղաքականության
 պրոբլեմները»⁵⁴։ Այնուհետև, 1937 թ. դեկտեմբերին, Հիտլերը
 Անկարա ուղարկեց Բալդուր ֆոն Շիրախին՝ նացիստական
 երիտասարդության «ֆյուրերին»։ Նրա այցելությունից անմիջապես
 հետո, Սանջաքում նոր Ստալուսի կիրառման հետ կապված
 դեպքերի առիթից օգտվելով, թուրքական մամուլը շովինիստական
 կատաղի արշավ սկսեց Ազգերի Լիգայի, Ֆրանսիայի, ինչպես նաև
 Սիրիայի արաբների ու հայերի դեմ։ «Չունհուրիեթ» թերթը
 սպառնազին գոչում էր. «Թուրքիան ստիպված կլինի Ֆրանսիայի
 հետ խոսել այնպես, ինչպես խոսում է Գերմանիան, որովհետև այդ
 երկիրը միայն Հիտլերի լեզուն է հասկանում»⁵⁵։ Ֆոն Շիրախը
 ցանկանում էր «այցելել» նաև Սանջաք, սակայն Լիգայի
 դիտորդների ներկայությունը խանգարեց նրա ծրագրերի
 իրականացմանը։ Նա ժամանեց Դամասկոս ու իջևանեց «Օրիան
 Պալաս» հյուրանոցում, որտեղ անմիջապես կազմակերպեց
 մամուլի կոնֆերանս և հրապարակեց Սիրիայում գերմանական
 “Kultürkampf”-ի (մշակութային արշավի) ծավալուն մի ծրագիր,
 սիրիական իշխանությունների գլխի վրայով, մանդատային
 իշխանությունների քթի տակ։ Այս կապակցությամբ Դամասկոսի
 «Լե գ'Էրո դը Սիրի» թերթը գրեց. «Այն օրվանից, երբ պարոն
 Բալդուր ֆոն Շիրախի ստվերը ուրվագծվեց մեր մայրաքաղաքում,
 ...գերմանական գործակալները մակոկի նման գնում-գալիս են
 Բեռլինի և Դամասկոսի միջև»⁵⁶։ Այդ օրերին, ինչպես նշում է Պոլ
 դյու Վեուն, գերմանական ու իտալական գործակալները Հալեպի
 թուրքական հյուպատոսի միջոցով Անկարայի հետ կապ
 հաստատելով, «ուսումնասիրում են Սիրիայում և Սանջաքում
 ֆրանս-բրիտանական քաղաքական գործունեությունը խանգա-
 րելու միջոցները», դրանով իսկ ցանկալով Թուրքիային իրենց

հետևից տանել⁵⁶։ Իտալա-գերմանական ու թուրքական դիվանագիտության խարդավանքները Միրիայում ու Մանջաքում հաճախ իրար հետ զուգորդվում ու խաչաձևվում էին։ Թուրքական զորքերի Մանջաք մուտքից անմիջապես հետո, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ն.Մենենենջիօղլուն զննում է Մյունխենի 1938 թ. հուլիսի 13-ին Բեռլինի թուրքական դեսպանի հետ նա ընդունվում է Հիտլերի կողմից։ «Նրանք քննարկում են այն հարցը, թե ինչպես կարելի է լավագույն ձևով օգտագործել այս նոր իրադրությունը. քննարկվում է նաև Գերմանիայի և Անկարայի կառավարության հարաբերությունների վրա վերջին համաձայնագրերի թողնելիք ազդեցությունը»⁵⁷։

Մուսսոլինին ու Հիտլերը, նվաճողական նպատակներով Միրիան ու արաբական մյուս երկրները պատել էին իրենց լրտեսական ցանցերով։ Այս կապակցությամբ Ա.Դյուպոնը գրում է. «Միրիայում և արաբական մյուս երկրներում կենտրոնացված են իտալական հետախուզության և գեստապոյի լրտեսական կադրեր, որոնք մասնագիտացված են արաբական ազգաբնակչության շրջանում լրտեսական և քայքայիչ աշխատանքի համար։ Վերջերս այնտեղ հայտնաբերվեց իտալա-գերմանական խոշոր լրտեսական կենտրոն»⁵⁸։ Բացի այդ, Ալեքսանդրետի իտալական հյուպատոսարանի միջոցներով ու հնարավորությամբ գործող արաբ ֆաշիստ «Լովմի-սուրի» խառնակիչները Մանջաքում տանում էին սանձարձակ պրո-իտալական և հակասիրիական, հակաֆրանսիական ու հակահայկական քարոզչություն ու խառնակչություն։ Իտալական դրամով ու զենքով նրանք ահաբեկում էին արաբ թե հայ առաջադիմական տարրերին։ Նրանք համառ լուրեր էին տարածում այն մասին, թե թուրքական զորքերի Մանջաք ներխուժման դեպքում Մուսսոլինին զենքով կմիջամտի։ Անցնելով գործնական նախաձեռնության, Մանջաքի իտալական գործակալները 1939 թ. զարնանը շրջանի արկածախնդիրներին խոստացան ռազմական հանդերձանք, զենք ու ռազմամթերք «կռվելու համար միաժամանակ թե՛ ֆրանսիացիների, թե՛ թուրքերի դեմ»⁵⁹։ Այս վերջին փաստը հաստատում է նաև Պոլ դյու Վեուս, որը 1939 թ. ապրիլին Մանջաք կատարած ուղևորության ճանապարհին նկատում է, որ «Երկու զինվորներ, Թարթուսի մայր տաճարի բարձունքից հսկում են ծովի վրա, թե երբ կգան իտալացիները...»⁶⁰։ Իտալական «Դիվանագիտական և հյուպատոսական կուրիեր» հանդեսի խմբագիր Ալեսանդրո Աուսիելլոն ևս հաստատում է այդ փաստը։ Արդարև,

թուրքական զորքերի մուտքից հետո Սանջաքը Թուրքիային զիջելու սիրիացիների երկյուղների մասին խոսելիս, նա գրում է. «Երբ այդ լուրը հասավ սիրիացիներին, նրանք հայտարարեցին, թե օգնություն և պաշտպանություն կխնդրեն Իտալիայից»⁶¹: Իրոք որ Իտալիայի կողմից Ալեքսանդրետի շրջանում ներխուժում կատարվելու հավանականությունը դեռևս 1937 թ. լուրջ կերպով մտահոգել է Ֆրանսիայի զինվորական շրջաններին, որոնք գտնում էին, թե այդ «շրջանը կարող է հարձակման ենթարկվել ամենից առաջ ծովի կողմից և ... ավիանումը կկատարվի Ալեքսանդրետից հարավ»^{61a}:

Սանջաքի պրոբլեմի նկատմամբ ֆաշիստական Իտալիայի դիվանագիտության ընդգծված «շահագրգռվածությունը» արտահայտվել է նաև մեկ ուրիշ հատկանշական երևույթով: Տարիներ շարունակ այդ պրոբլեմը զբաղեցրել է ոչ միայն իտալական պարբերական մամուլը, այլ նաև միջազգային հարաբերությունների մի շարք իտալացի խոշոր մասնագետների, ինչպիսիք են Նավա Սանթին, Ա.Ֆոլկին, Ա.Աուսիելլոն, Ջ.Սփերդուտին, Դ.Չենսոնին և Ֆ.Կատալուչչիոն, որոնք այդ պրոբլեմին նվիրել են մեծածավալ հոդվածներ և առանձին աշխատություններ: Նրանք բոլորն էլ, խոսելով Ալեքսանդրետի Սանջաքի հարցի, Թուրքիայի հավակնությունների, «արաբական նացիոնալիզմի» իրավունքների և հարակից հարցերի մասին, շատ էին ճամարտակուս «միջազգային իրավունքի», «ժողովուրդների ինքնորոշման իրավունքի», «սահմանադրական սկզբունքների» և այլնի մասին: Սակայն իտալացի գիտնականները «մոռանում էին», որ հենց իրենց երկիրը՝ ֆաշիստական Իտալիան դեռ նոր էր արյան ու հրի մեջ խեղդել այդ իրավունքներն ու սկզբունքները Եթովպիայում ու Ալբանիայում: Այդ հեղինակները որպես փաստարկ՝ առաջ էին քաշում Իտալիայի «շահագրգռվածությունը» Միջերկրականի ավազանում կատարվող իրադարձություններում: Այսպես. Ա.Աուսիելլոն հայտարարում է. «Այն, ինչ տեղի է ունենում Միջերկրականում, էապես շահագրգռում է մեր երկիրը: Իտալիան իրավունք ունի պահանջելու և պահանջում է, որ Սիրիան ու Լիբանանը չդառնան փաստորեն ֆրանսիական երկու խնամակալություններ, որոնց այս օրերին կցվում է թուրքական մի տիրապետություն...»⁶²: Սանջաքի հարցով ֆաշիստական Իտալիայի «էապես շահագրգռված» լինելը և այդ շրջանի ու ընդհանրապես Սիրիայի նկատմամբ Իտալիայի նվաճողական ձգտումները բացահայտում է հիտլերյան «Բեռլիներ

Մոնատսհեֆթե» ամսագիրը, որը «Հաքայի պետության» ստեղծման կապակցությամբ գրում է. «Երկու վնաս կրողների՝ Սիրիայի և Ազգերի Լիգայի կողքին պետք է հիշատակել նաև մեկ երրորդը, որը քեև (Սանջաքի հարցի - Ա.Բ.) կարգավորման ծախսերին չմասնակցեց, սակայն որի դեմ ամբողջովին ուղղված էր ֆրանս-բուրբալկան համաձայնությունը ընդհանրապես, և Սանջաքի հարցի կարգավորումը մասնավորապես: Այդ պետությունը Իտալիան էր»⁶¹: Սիրիայի, հետևաբար Ալեքսանդրետի շրջանի նկատմամբ Իտալիայի հավակնությունները Մուսսոլինիի մեծապետական նվաճողական ծրագրերի մասն էին կազմում, ուստի ֆաշիստական Իտալիայի դիվանագիտությունը մեծ շահագրգռվածությամբ էր հետևում Սանջաքի հարցի ընթացքին: Ինչպես հայտնի է, այդ երկիրը հռոմեական կայսրության վաղեմի հզորությունը Միջերկրականի ավազանում վերականգնելու երազներ էր փայփայում և հանդես էր գալիս արաբական ժողովուրդների «պաշտպանի» դերում՝ ընդդեմ անգլո-ֆրանսիական գաղութարարների: Այս առնչությամբ Ռ.Դավոսը գրում է. «Մուսսոլինին, որ երազում է «Մեծ հռոմեական կայսրության» մասին, ցանկանում է ամբողջ Միջերկրականի առափնյա մասը, դրան հարող երկրները և ճանապարհները տեսնել Իտալիայի վերահսկողության տակ: ...Նա ցանկանում է զավթել ամբողջ հյուսիսային Աֆրիկան, Սիրիան, Թուրքիայի մի մասը»⁶²: Արդարև, 1938 թ. ամռանը, Հռոմում Հիտլեր-Մուսսոլինի հանդիպման ժամանակ երկու դիկտատորների առջև փռված էին «մեծ կայսրությունների» քարտեզներ, որոնց համաձայն, այլ երկրների հետ, ամբողջ Սիրիան, ներառյալ Սանջաքը և հարավային Թուրքիան պետք է մտնեին «հռոմեական մեծ կայսրության» մեջ⁶³: Ակնարկելով Իտալիայի այդ նվաճողական ձգտումները, Պոլ Վիենոն 1939 թ. մարտին հայտարարել է. «Իտալիան որոշակի հավակնություններ ունի՞ արդյոք Սիրիայի նկատմամբ: Շատ է խոսվում այդ մասին... Իտալիայի նպատակն է, ըստ երևույթին, օգտագործել մեր դժվարությունները Արևելքում՝ մեզ բուլացնելու համար: Այս տեսակետից շատ բնորոշ է իտալական Ռադիո-Բառիի կողմից արաբերեն լեզվով տարվող պրոպագանդան, որը լայնորեն օգտագործում է ֆրանս-բրիտանական կարծեցյալ տարածայնությունները Մերձավոր Արևելքում. այդ պրոպագանդան շատ է հենվում բուրբալկան հավակնությունների վրա»⁶⁴:

Իտալիայի դիվանագիտությունը իրոք որ պաշտոնապես ու

անմիջականորեն զբաղվել է Ալեքսանդրետի հարցի միջազգային անդրադարձումներով: Պատահական չէր, որ Մոսկվայի իտալական դեսպանությունը 1939 թ. մայիսին զաղտնի հեռագրով⁶⁷ տեղեկացնում էր իր կառավարությանը, թե Սանջաքի հարցի կարգավորման կապակցությամբ ծրագրվում է ֆրանս-թուրք-խորհրդային մերձեցում: 1939 թ. հունիսի 20-ին Փարիզի իտալական դեսպանությունը շտապ հաղորդում էր Հռոմ^{67ա}, թե Ֆրանսիան Ալեքսանդրետի շրջանը վերջնականապես հանձնել է Թուրքիային», ուստի անհրաժեշտ է ձեռք առնել համապատասխան միջոցներ: Երբ հունիսի 23-ին հրապարակվեց Սանջաքը Թուրքիային կցելու վերաբերյալ ֆրանս-թուրքական համաձայնագիրը, Իտալիան բողոքի հուշագիր հղեց Փարիզ (հուլիսի 10-ին), որտեղ հատկապես նշված էր. «Իտալիայի քաղաքական կառավարությունը որպես Սան-Ռեմոյում Սիրիայի ու Լիբանանի մանդատը Ֆրանսիային հանձնող դաշնակից մեծ տերություններից մեկը, ամենայն վերապահությամբ է ի գիտություն ընդունում (վերոհիշյալ) համաձայնագրի բովանդակությունը, որը կնքվել է առանց իր գիտության»⁶⁸: Սիրիայի, ներառյալ Սանջաքի, նկատմամբ Իտալիայի կոնկրետ հավակնությունների ապա-ցույց է այն փաստը, որ 1940 թ. Ֆրանսիայի պարտությունից հետո, Վիշիի համաձայնությամբ, Սիրիայում մանդատային իշխանությունների վրա վերահսկողություն հաստատելու նպատակով այնտեղ ժամանեց իտալական (և ոչ գերմանական) «զինադադարի հանձնաժողովը»^{68ա}:

Հիտլերյան Գերմանիան նույնպես ուղղակի շահագրքոված էր Սանջաքի կոնֆլիկտի «կարգավորումով»: Գերմանական դիվանագիտությունը իր համար բացահայտ պարտություն էր համարում այն փաստը, որ հակառակ Թուրքիայում գերմանական տնտեսական ու քաղաքական գերակշիռ ազդեցությանը, թուրքական կառավարող շրջանները Սանջաքի հարցի կապակցությամբ «շարունակում էին քաղաքականորեն հակվել դեպի ԱՄՆ-ը, Անգլիան ու Ֆրանսիան»: Այսպես, 1939 թ. գարնանը գերմանական «Դոյչե Դիպլոմատիշե-Պոլիտիշե Կորրեսպոնդենտ» թերթը Թուրքիայից բացեիքաց պահանջում էր հարաբերությունը խզել Անգլիայի ու Ֆրանսիայի հետ այն ժամանակ, երբ Անկարան արդեն վճռել էր իր բախտը կապել անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորման հետ ու այդ միջոցով վերջնականապես հոգուտ իրեն «լուծել» Սանջաքի կոնֆլիկտը⁶⁹: Թուրքիան այդ եզրակացության էր հանգել, երբ զգացել էր, որ Առանցքի երկրների կողմից եկող

վտանգը արդեն սպառնում է իրեն: Հիտլերի կողմից Չեխոսլովակիայի լրիվ կլանումը և Մուսսոլինիի կողմից Ալբանիայի զավթումը Առանցքի ագրեսիվ գործողությունների դաշտը փոխադրել էր Բալկանները: Հակառակ Բեռլինի ջանքերին, անգլո-ֆրանսիական դիվանագիտությանը հաջողվել էր ամրապնդել իր կապերը Թուրքիայի հետ, որովհետև, ինչպես խոստովանում է Գ.Պյուն, արդեն 1939 թ. սկզբներին «Ֆրանսիան Սանջաքը Թուրքիային զիջելու որոշումն ընդունել էր»⁷⁰:

Երբ 1939 թ. մայիսի 12-ին կնքվեց անգլո-թուրքական փոխօգնության համաձայնագիրը, «Ֆրանսիայում լուրջ ափսոսանք արտահայտվեց, որ հնարավոր չէր եղել այդ համաձայնությունը ընդլայնել և դարձնել եռակողմ մի դաշինք»⁷¹: Դրա ճանապարհին կանգնել էր միայն Սանջաքի խոչնդոտը: Ֆրանսիական կառավարող շրջանները կարծում էին, որ Սանջաքը թուրքերին զիջելով Ֆրանսիան պատերազմի նեղ օրերին Նեղուցներով անցնելու իրավունք կստանա: Ֆրանսիական հետադիմական շրջանների պատգամախոս Լեոն Կայլան, խոսելով «Սանջաքը թուրքական հանրապետությանը ետ վերադարձնելու (?!?) անիրաժեշտության մասին, եզրակացնում է. «Մնում է միայն հրճվանքով և պաշտոնապես հաստատել, որ այդ միջոցով մենք նպաստել ենք ֆրանս-թուրքական մերձեցման գործին»⁷²:

Թուրքիան նույնպես ձգտում էր այդպիսի մերձեցման և այդ մասին առաջարկ էր ներկայացրել ֆրանսիական գեներալ Հյուցենժեին դեո՝ 1937-1938 թթ. ֆրանս-թուրքական գլխավոր շտաբների բանակցությունների ժամանակ⁷³: Այս կապակցությամբ Պ.Ա.Բուրժեն⁷⁴ իր «Բեյրութից Բորդո» աշխատության մեջ տալիս է հետևյալ շահեկան տեղեկությունները: Վկայակոչելով Ֆրանսիայի պաշտպանության գերագույն խորհրդի 1939 թ. հուլիսի 11-ի գաղտնի նիստը, Պ.Բուրժեն հայտնում է, որ այնտեղ որոշվեց գեներալ Հյուցենժեին ուղարկել Անկարա՝ որպես ամենահարմար անձնավորությունը «ֆրանս-թուրքական այն պաշտպանական դաշինքի հիմքերը դնելու համար», որին պետք է միանար նաև Անգլիան: Նույն հեղինակը նշում է, որ այդ ընտրությունը կատարվեց այն պատճառով, որ «գեներալ Հյուցենժեին եղել էր Սանջաքի վերաբերյալ ֆրանս-թուրքական ռազմական պայմանագրերը կնքողը»: Ավելին, նա էր, որ 1937 թ. դեկտեմբերին Անկարայում ընդունել և Ֆրանսիայի դեսպան Պոնտյի միջոցով ֆրանսիական կառավարությանն էր հաղորդել Թուրքիայի արտաքին գործերի մինիստր

Ռ.Արասի առաջին առաջարկությունը հետևյալ բովանդակությամբ. «Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն բարենպաստ արդյունքների վրա, որոնք Աքաթուրքի կառավարությունը անպայման կգործեր, եթե Սանջաքի հարցը լուծվեր իր հայեցողության համապատասխան ձևով, այն է՝ Ֆրանսիայի հետ կնքել համընդհանուր մի համաձայնություն միջազգային հարաբերությունների բնագավառում»⁷⁵:

Իտալացի մի շարք հեղինակներ նույնպես ընդգծում են, որ Ֆրանսիան Սանջաքի հարցում ամեն զիջում կատարել է թուրքական բարեկամությունը ապահովելու համար: Այսպես, Ֆ.Կատալուչչիոն գրում է. «Սանջաքի հարցում Ֆրանսիայի դիրքորոշումը բացահայտում է Արևելքում Քե-դ'Օրսեի քաղաքականության այժմյան ուղղությունը, իսկ Քե-դ'Օրսեն այսօր խաղում է թուրքական խաղաքարտով»⁷⁶: Ա.Աուսիելլոն այդ կապակցությամբ գրում է. «Պարզ է, որ Ֆրանսիան իրեն ետ կպահի այնպիսի երկրի հետ թշնամանալուց, որը Մերձավոր Արևելքում հավասարակշռության պահպանման գործում ունի ոչ-արհամարհելի կշիռ»: Խոսելով 1939 թ. կեսերից Սանջաքում թուրքերին տրված գերիշխող դիրքի մասին, հեղինակը եզրակացնում է. «Սիրիայի մարմնի մեջ խրված թուրքական սեպը վերջ ի վերջո Ալեքսանդրետը լրիվ կանջատի Սիրիայից»⁷⁷:

Նաջիբ ալ-Արմանագին գտնում է, որ «Ֆրանսիան չկարողացավ ո՛չ իրեն, ո՛չ էլ Սիրիայի համար պահպանել Ալեքսանդրետի նավահանգիստը և շրջանը», և այդ ձևով ֆրանսիացիները չխանգարեցին թուրքերին գործադրելու Աքաթուրքի այն սպառնալիքը, որ «եթե հարկ լինի, Թուրքիան բռնի ուժով կգրավի Հաթայը»: Նա այնուհետև նշում է, որ «Անգլիան գոհացավ ու հանգստացավ առանց ընդհարման ձեռք բերված այդ արդյունքներից, որովհետև Անգլիան մտածում էր, որ գերմանացիների դեմ մղվելիք պատերազմում թե իր, թե իր դաշնակից Ֆրանսիայի համար նախընտրելի է, որ Թուրքիան չլինի իրենց թշնամիների կողմը, թեկուզ գենրով հանդես չգա իրենց կողքին»⁷⁸: Սիրիացի գործչի այս վկայությունը մի անգամ էլ գալիս է ապացուցելու, որ Անգլիայի միջնորդությունը և ճնշումը խոշոր դեր խաղացին Սանջաքի կոնֆլիկտի հայտնի «կարգավորման» գործում:

Արդարև, եթե Սանջաքի կոնֆլիկտը ի նպաստ Թուրքիային կարգավորելու գործում Արևմուտքի գլխավոր երկրները (Ազգերի լիգայի շրջանում, թե նրանից դուրս) իրենց քաղաքական ու

դիվանագիտական գործողություններով այս կամ այն չափով նպաստել են Թուրքիայի դիվանագիտական այդ հաջողությանը, ապա այդ բոլոր երկրներից ամենավճռական դերը փաստորեն խաղաց Մեծ Բրիտանիան: Այդ բանը հաստատվում է սույն աշխատության մեջ արդեն հիշատակված համապատասխան փաստերով և հետևյալ վկայություններով: Դոմենիկո Չենտոնին իր «Ֆրանսիայի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում» աշխատության մեջ ընդգծում է, որ «Անգլիայի դիրքավորումը անկասկած Ֆրանսիային սղել էր հասնել կարգավորման: Այդ ժամանակ անդր-լամանշյան ազգի համար, միջազգային մթազնող հորիզոնի տակ, առաջնահերթ խնդիր էր ապահովել Փարիզի և Անկարայի քաղաքական աջակցությունը, իսկ այդ բանը հնարավոր չէր, քանի դեռ՝ գոյություն ուներ Ալեքսանդրետի կռվախնձորը: ...Սանջաքի հարցը ի նպաստ Թուրքիային լուծելը... արտահայտում է անդր-լամանշյան ազգի շահերը»⁷⁹: Ֆ.Կատալուչչիոն պնդում է, որ Արևելքում ֆրանսիական քաղաքականությունը գտնվում էր բրիտանական ազդեցության ճնշման տակ, իսկ Սիրիան, որպես ֆրանսիական տիրապետություն, քաղաքական, ռազմագիտական և տնտեսական բնագավառներում ավելի շատ գտնվում էր Լոնդոնի քնահանույքին ենթակա դրության մեջ: Վկայակոչելով ֆրանսիացի հեղինակ Դը Ֆալսի այն խոսքերը, թե «մենք այնտեղ (Սիրիայում - Ա.Բ.) ժամապահություն ենք անում ուրիշի օգտին», Կատալուչչիոն եզրակացնում է. «Սանջաքի զիջումը առաջին զոհաբերությունը չէ, որ Ֆրանսիան կատարում է բրիտանական բարեկամության զոհասեղանի վրա»⁸⁰: Խորհրդային աղբյուրները ևս հաստատում են, որ Սանջաքի հարցի կարգավորման հաջորդական փուլերը միշտ ի նպաստ Թուրքիայի իրագործվել են Անգլիայի ճնշմամբ կամ «բարեկամական միջնորդությամբ»: Այսպես, «Ժամանակակից Սիրիա» աշխատության մեջ կարդում ենք. «Ֆրանսիական կառավարությունը մոտեցող համաշխարային երկրորդ պատերազմի և Անգլիայի ճնշման պայմաններում՝ Թուրքիային անում էր զիջում զիջման ետևից»⁸¹: Մի այլ աշխատության մեջ նշվում է, որ Ֆրանսիական կառավարությունը Անգլիայի ճնշման տակ ստիպված զիջեց Թուրքիային⁸²: Բ.Դանցիզը նույնպես հաստատում է, որ «տեղի տալով Անգլիայի ճնշման առջև, Ֆրանսիան Ալեքսանդրետի Սանջաքը հանձնեց Թուրքիային: Այդ ակտը հանդիսացավ կանխավճար Թուրքիային՝ անգլո-ֆրանսիական ռազմական բլոկին միանալու համար»⁸³:

Արաբական աղբյուրները նույնպես շեշտում են անգլիական դիվանագիտության վճռական, բայց Սիրիայի համար վնասակար դերը Մանջաքի կոնֆլիկտի կարգավորման պրոցեսում: Հաքեմ Դարուազան գրում է, որ Մեծ Բրիտանիայի համար նույնպես շատ կարևոր էր գոհացնել Թուրքիային: Նա այդ ոճիքը (Մանջաքի գոհաբերումը - Ա.Բ.) որպես «աս» (ուղ) օգտագործեց Ֆրանսիայի և Թուրքիայի դեմ, որոնք միշտ առաջ էին քաշում Մոսուլի և հյուսիսային Իրաքի բրիտանական ինպերիալիզմի ազդեցության տակ մնալու վիճելի լինելը⁵⁴: Էմիլ Թուման նույնպես շեշտում է, որ Մանջաքը զոհ գնաց բրիտանական ինպերիալիզմի ճնշմանն ու շահերին: Իր «Արաբները և պատմական զարգացումը Միջին Արևելքում» աշխատության մեջ, վկայակոչելով Մանջաքի հարցի մասին հրապարակված բրիտանական պաշտոնական մի հայտարարություն, է. Թուման գրում է: «Այդ շրջանը» (Մանջաքը - Ա.Բ.) կցվեց Թուրքիային՝ որպես նախաբան երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին կնքված անգլո-ֆրանս-թուրքական փոխօգնության դաշինքի»⁵⁵:

Ֆրանսիական բանակի գլխավոր շտաբը դեռևս 1937 թ. գտնում էր, որ Ալեքսանդրետի վերաբերյալ Թուրքիայի հետ մի համաձայնագրի կնքումը «ընդունակ կլիներ լրիվ հանգստացնելու Անգլիային՝ Սուեզի ջրանցքի անվտանգության հարցում»⁵⁶: Արդ, Մանջաքի կոնֆլիկտի շուրջ ստեղծված դիվանագիտական սուր պայքարի ընթացքում բրիտանական դիվանագիտության գործադրած «բարեկամական ճնշմանը» իրենց ենթարկվելը ընդունում են նաև ֆրանսիացի այն պետական գործիչները, որոնք հանդիսացել են այդ կոնֆլիկտի կարգավորման գլխավոր դերակատարները՝ ինչպիսիք են Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ժորժ Բոննեն, նրա տեղակալ Պոլ Վիենոն, բարձր-կոմիսար Գաբրիել Պյուտոն և Ֆրանսիայի Անկարայում դեսպան Ռոնե Մասիգլին⁵⁶: Դառնությամբ խոստովանելով Անգլիայի ճնշմանը Ֆրանսիայի ենթարկվելը, Գ. Պյուտոն փորձում է չքմեղանալ, թե «Մանջաքի գավաթման հաջորդական փուլերում թուրք դիկտատորը վարպետորեն խաղաց Ազգերի Լիգայի մեխանիզմի հետ, վստահ լինելով բրիտանական կառավարության աջակցության վրա: ...Անգլիան վախենում էր, որ շնորհիվ մանդատի շարունակման, Ալեքսանդրետը կդառնա ֆրանսիական ռազմա-ծովային խարիսխ Կիպրոսի դեմ-հանդիման: Նա նախընտրում էր անկասկած այնտեղ տեսնել թուրքերին, որովհետև այդ ժամանակվանից Անգլիան վճռել

եր նրանց իր դաշնակիցը դարձնել»⁸⁷:

Անգլիացի առանձին հեղինակներ նույնպես խոստովանում են, որ բրիտանական դիվանագիտությունը դրդել է Ֆրանսիային դեպի «բարեկամական կարգավորում»: Լոնգրիզը խոստովանում է, որ Դամասկոսում սիրիացի մինիստրները համոզված էին, որ Սանջաքի տագնապի հարցում Անգլիան խաղում է շատ տխուր, բայց վճռական դեր⁸⁸: Ա.Թոյնթին նույնպես խոստովանում է, որ իր երկիրը տխուր դեր է խաղացել Սանջաքի հարցի կարգավորման գործում և գրում է. «Եվրոպական մամուլի շրջաններում ընդհանրապես հասկացվում էր, որ բրիտանական կառավարությունը քաջալերել է իր դաշնակցին (Ֆրանսիային), որպեսզի նա հասնի բարեկամական կարգավորման Հաթայում»: Թոյնթին խոստովանում է նաև, որ «այս կապակցությամբ շատ կարևոր էր» այն փաստը, որ «Անգլիան արդեն 1939 թ. մայիսի 12-ին Թուրքիայի հետ կնքել էր փոխօգնության դաշինք և նրան տրամադրել 16 միլիոն ֆունտ ստերլինգի վարկ՝ Թուրքիայի վերազինման և արդյունաբերության զարգացման համար»⁸⁹:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ թե՛ Առանցքի պետությունները, թե՛ անգլո-ֆրանսիական խմբավորումը իրենց դիվանագիտական գործողությունները Ալեքսանդրետի հարցի շուրջ ծավալել էին այն հաշվով, որ Ալեքսանդրետի «խաղաքարտը» կարողանան ծառայեցնել իրենց քաղաքական նպատակներին: Տեսանք, որ անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորմանը ի վերջո հաջողվեց ձեռք բերել դիվանագիտական ու քաղաքական խոշոր նվաճում, զոհաբերելով փոքր ու թույլ երկրի՝ իր անկախության շեմին գտնվող Սիրիայի շահերը:

Խորհրդային Միության կառավարությունը առաջին իսկ օրվանից առանձին ուշադրությամբ հետևեց Ալեքսանդրետի Սանջաքի շուրջ ստեղծված կոնֆլիկտին և իր ամբողջ հեղինակությունը օգտագործեց Ազգերի Լիգայում և միջազգային դիվանագիտական ասպարեզում, որպեսզի այն չսրվի: չվերածվի ագրեսիայի ակտի և չձառայի ինպերիալիստական նպատակների: ԽՍՀՄ-ը միշտ կոնֆլիկտների խաղաղ կարգավորման և կոլեկտիվ անվտանգության պահպանման սկզբունքների կողմնակից և պաշտպանն է եղել: Հենց այդ սկզբունքներից ելնելով ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մ.Լիտվինովը 1937 թ. հունվարի 27-ին Ազգերի Լիգայի խորհրդում ողջունեց Ալեքսանդրետի Սանջաքի հարցի խաղաղ կարգավորման ուղղությամբ ձեռք

բերված սկզբունքային նախնական համաձայնությունը⁹⁰։ Խորհրդային մամուլը իր հերթին ողջունեց այդ կոնֆլիկտի բարեկամական կարգավորումը, կոնֆլիկտ, որի զինված ընդհարման վերածվելու համար ոչ մի ջանք չխնայեցին Բեռլինն ու Հռոմը⁹¹։ «Սաութ աշ-Շաաբ» թերթը ճիշտ գնահատելով ԽՍՀՄ-ի դիրքը, գրում էր. «Ֆրանսիայի ու Թուրքիայի կապիտալիստական ու ինվերիալիստական այդ երկու պետությունների հետ Խորհրդային Միությունը իր հարաբերություններում ձգտում է միշտ խաղաղության գործին օգուտ տալ միայն։ ...Երբ Սանջաբի կոնֆլիկտի շուրջ համաձայնություն կայացավ, խորհրդային մամուլը գոհունակություն հայտնեց, որ Սանջաբի հարցը չվերածվեց ինվերիալիստական համաշխարհային չարաղետ պատերազմի, ինչպես այդ սպասում էին Գերմանիան և Իտալիան, որոնք Թուրքիային գրգռում էին այդ ուղղությամբ»⁹²։ Սակայն Թուրքիան, հետևելով Առանցքի երկրների օրինակին ու «խորհուրդներին», իր գորքերը մտցրեց Սանջաբ, օգտվելով անգլո-ֆրանսիական խմբավորման թողտվությունից։ Թուրքական կառավարող շրջանները հաշվի չառան խորհրդային, սիրիական և աշխարհի առաջավոր հասարակայնության և մամուլի լուրջ նախազգուշացումները⁹³, որովհետև 1938 թ. ֆրանս-թուրքական համաձայնագրերի կնքումով Թուրքիան արդեն ներքաշվել էր անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորման մեջ։ Ուստի, այդ ձևով Անգլիան ու Ֆրանսիան «գնեցին Թուրքիայի չեզոքությունը մոտեցող պատերազմում՝ ի հաշիվ Սիրիայի ազգային շահերի ունահարման»⁹⁴։

Խոսելով Սանջաբի կցումից ու անգլո-ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումից հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության մասին, ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը 1939 թ. հոկտեմբերի 31-ին հայտարարել է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանում հետևյալը. «Թուրքիայի քաղաքականության մեջ մեզ համար այժմ շատ բան շատ ավելի պարզորոշ է դարձել, ինչպես Մոսկվայի բանակցությունների հետևանքով, այնպես էլ Թուրքիայի կառավարության արտաքին քաղաքականության վերջին գործողությունների հետևանքով։ Ինչպես հայտնի է, Թուրքիան գերադասեց իր բախտը կապել պատերազմի մասնակից եվրոպական տերությունների որոշակի խմբավորման հետ։ Նա փոխադարձ օգնության պակտ կնքեց Անգլիայի ու Ֆրանսիայի հետ...։ Դրանով իսկ Թուրքիան վերջնա-

կանապես դեն շարտեց չեզոքության զգուշավոր քաղաքականությունը և իրեն նետեց Եվրոպայում ծավալվող պատերազմի հորձանուտի մեջ»⁹⁵: Եվ իրոք Թուրքիայի զինակցությունը ապահովեց Սանջաքը Թուրքիային զիջելու գնով:

Այդ կապակցությամբ 1939 թ. դեկտեմբերի 14-ին «Իզվեստիայում» հրապարակվեց հաղորդում այն մասին, որ վերոհիշյալ ռազմական դաշինքի գաղտնի դրույթների համաձայն Մերձավոր Արևելքում անհապաղ պետք է կազմվեր անգլո-ֆրանս-թուրքական շուրջ մեկ միլիոնանոց բանակ, որի ուղիղ կեսը պետք է կազմեին Թուրքիայի զինված ուժերը⁹⁶: Հակառակ այդպիսի փաստերի, Ա.Ֆ.Միլլերը, շրջանցելով ժամանակակից Թուրքիայի իսկապես ծավալապաշտական նկրտումները, «Սանջաքը անեքսիայի ենթարկելու վերաբերյալ Թուրքիայի շահագրգռվածությունը» ուզում է բացատրել միայն «բրիտանական դիվանագիտության կողմից թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու» հետևանքով և Ֆրանսիայի թողտվության քաղաքականությամբ⁹⁷: Մինչդեռ, Թուրքիան պաշտոնապես միացավ անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորմանը հապշտապ կերպով՝ Ալեքսանդրետի Սանջաքը կցելուց չորս ամիս էլ չանցած, երբ 1939 թ. հոկտեմբերի 19-ին Անկարայում կնքվեց «Անգլո-ֆրանս-թուրքական փոխադարձ օգնության պայմանագիրը»: Ընդ որում, թուրքական կառավարությունը շտապել էր ստորագրել այդ ակտը, երբ իր արտաքին գործերի մինիստր Շ.Սարաջոդլուն դեռևս գտնվում էր Մոսկվայից Անկարա վերադարձի ճանապարհին:

1947 թ. հոկտեմբերին Խորհրդային Տեղեկատու Բյուրոյի «Թուրքիայի կողմից բռնագրավված Սանջաքը պետք է վերադարձվի Սիրիային» վերնագրված հայտարարության մեջ ասված է. «Սիրիայի ժողովուրդն է, որ վճարեց դիվանագիտական այս գործարքի (1939 թ. անգլո-ֆրանս-թուրքական փոխադարձ համաձայնագրերի - Ա.Բ.) գինը: ...Ալեքսանդրետի Սանջաքը հափշտակվեց Սիրիայի ձեռքից հակառակ Սանջաքի բնակչության ճնշող մեծամասնության կամքի, իմպերիալիստական շահերի այդ եսասեր կոնյունկտուրայի հետևանքով»: Այնուհետև, նույն հայտարարության մեջ ընդգծվում է, որ համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում Թուրքիան չհարգեց նույնիսկ այն պարտավորությունները «որոնց դիմաց նա նվեր էր ստացել Ալեքսանդրետի Սանջաքը». Անգլիային ու Ֆրանսիային իր խոստացած օգնությունը ցույց տալու փոխարեն Թուրքիան օգնեց

հիտլերականներին, «որպեսզի նրանք մղեն իրենց ավազակային պատերազմը»: Հայտարարության վերջում եզրակացվում է, որ «նախապատերազմյան խռովյալ շրջանում կատարված անարդարությունը պետք է դարձանվի և Սանջաքը պետք է վերադարձվի իր իրավատերերին՝ սիրիացիներին»⁹⁷:

Միջազգային հարաբերությունների և ներքաղաքական բարդ իրադրության պայմաններում «Հաթայի կառավարությունը» արագ թափով առաջ էր տարել Ալեքսանդրետի Սանջաքի «թուրքացումը»: Շրջանի կցումը Թուրքիային հուսալի կերպով նախապատրաստվել էր արդեն: Մնում էր այն պաշտոնապես, դիվանագիտական ակտերով «օրինականացնել»:

Այս կապակցությամբ բարձր կոմիսար Գ.Պյոտոն գրում է. «Անկարայում գտնում էին արդեն, որ Հաթայի «կատակերգությունը» չափազանց երկար է տևում և ֆրանսիական զորքերի ներկայությունը թուրքերին անհաճո է: ...1939 թ. հունվարին պարոն Սարաջօղլուն գտավ, որ Սանջաքի կցման հարցը դնելու ժամանակը հասել է: Նա այդ մասին արտահայտվեց բավական ցինիկ անկեղծությամբ մեր դեսպան պարոն Մասիգլիին, որը հենց նոր էր իր պաշտոնը ստանձնել Անկարայում: Թուրքիան, - ասում էր պ. Սարաջօղլուն, - պատրաստ է Ֆրանսիային ժամանակ տալու, որպեսզի սիրիական հանրային կարծիքը նախապատրաստի, սակայն, նա ոչինչ չի զիջի «շահված հողից»⁹⁸: Այնուհետև, Սարաջօղլուն հասկացնել էր տալիս, որ Թուրքիան դեռևս մտադիր չէ Ֆրանսիայի վրա ճնշում գործադրելու «տոտալիտար երկրների կողմն անցնելով», այլ ցանկանում է կցումը կատարել «բարեկամական եղանակով»: «Կցումը անխուսափելի էր, - ասում է Գ.Պյոտոն, - որովհետև «...Չեխոսլովակյան տագնապի հետևանքով մենք գիտակցում էինք եվրոպական հավասարակշռության խախտու լինելը: Անհրաժեշտ էր, այն էլ առանց հապաղելու. Թուրքիային մեր կողմը ներքաշել: Գործնականում Հաթայը արդեն կորած էր: ...Նախընտրելի էր անմիջապես վճարել Թուրքիայի դաշնակցության գինը»⁹⁹:

Սակայն, «Թուրքիայի դաշնակցության գինը» ֆրանսիացիները վճարում էին ոչ թե Ֆրանսիայի, այլ ժամանակավորապես իրենց հովանավորությանը հանձնված փոքր երկրի՝ Սիրիայի հաշվին: Ֆրանսիական դիվանագիտությունը շատ թույլ դիմա-

դրությունն ցույց տվեց թուրքերի վճռական պահանջներին, որովհետև առանց այն էլ, ինչպես նշում է Լոնգրիգը, «թուրքերը ֆրանսիացիների հավակնություններին վերաբերվում էին նվազագույն հարգանքով»¹⁰⁰: Իրենց պահանջները օր առաջ բավարարված տեսնելու ձգտումով, թուրքերը դարձյալ դիմեցին շանտաժի: Նրանք հենց Սանջաքում ու նրա սահմանների մոտ կազմակերպեցին մեծ զորախաղեր: Ֆրանսիացիները ևս դիմեցին պատասխան միջոցի և մեկ ռազմանավ ուղարկեցին Ալեքսանդրետի ծոցը: Որևէ ընդհարում տեղի չունեցավ, սակայն Անկարան գործի լծեց Հաթայի իր դրածոներին, և Հաթայի «պառլամենտը» արտակարգ նստաշրջանում ընդունված բանաձևով Անկարայից (և ոչ թե Ազգերի Լիգայից) պահանջեց հռչակել Սանջաքի իրավական միացումը Թուրքիային:

Այս առնչությամբ, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ժ.Բոնենեն 1939 թ. հունիսի 9-ին Մենատի արտաքին գործերի հանձնաժողովի առջև հայտարարում էր. «Նոր սխտեմի» («Հաթայի պետության» - Ա.Բ.) փորձարկումը ի հայտ բերեց այնպիսի դժվարություններ, որոնք գնալով ավելի լուրջ արտահայտություն ստացան 1938 թ. ընթացքում: Այդ պայմաններում է, որ Թուրքիան պահանջեց տերիտորիայի կցումը: Մենք գտանք, որ Սիրիայի շահերը պահանջում են վերջ տալ այն խառնակ ու անստույգ վիճակին, որը թունավորում էր երկու երկրների հարաբերությունները»¹⁰¹: Պարզ է, որ «Սիրիայի շահերը» ոչ մի դեպքում չէին կարող պահանջել Սանջաքի «նվիրումը» Թուրքիային: Եվ այսպես, Սանջաքի կցման շուրջ բանակցությունները շարունակվեցին հանուն միջազգային հարաբերություններում ֆրանսիական դիվանագիտության շահերի ապահովման:

Անկարայի և Փարիզի միջև չորս ամիս տևող բանակցություններից հետո, 1939 թ. հունիսի 23-ին Փարիզում ստորագրվեց ֆրանս-թուրքական «Փոխադարձ օգնության համատեղ դեկլարացիան»: Նույն օրը Անկարայում ստորագրվեց «Թուրքիայի և Սիրիայի միջև տերիտորիալ հարցերի վերջնական կարգավորման մասին համաձայնագիր» կից արձանագրությամբ և երկու նամակներով¹⁰²: Սույն ակտերով Ֆրանսիան Ալեքսանդրետի Սանջաքը հանձնում էր Թուրքիային, սիրիական Ալեքսանդրետի վճարումով ապահովելով Թուրքիայի մասնակցությունը անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորմանը¹⁰³:

Ֆրանս-թուրքական պայմանագրի կնքման հաջորդ օրը՝

1939 թ. հունիսի 24-ին Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունը մամուլում հրապարակեց մի երկարաշունչ հաղորդագրություն, որտեղ առաջ էին քաշվում ինչ-որ նկատառումներ, սիրիական հասարակական կարծիքը հանգստացնելու նպատակով¹⁰⁴։ Այդ հաղորդագրության համաձայն, Թուրքիան Սիրիայի նոր սահմանը ընդունում էր որպես վերջնական և միակողմանիորեն պարտավորվում էր հարգել Սիրիայի անկախությունը։ Այս պարտավորությունները, Ֆրանսիայի կարծիքով, վերջ էին դնում Հալեպի և Ջեզիրեի շրջանների նկատմամբ Անկարայի նվաճողական ծրագրին։ Այդ մասին հաղորդագրության մեջ ասված էր. «Այդ պարտավորությունները իրենց նշանակությամբ Սիրիային ազատում են բարոյական և նյութական մի սպառնալիքից, որը ծանրացել էր նրա քաղաքական կյանքի վրա։ ... Անառարկելիորեն բարձր գնով վճարված քաղաքական մթնոլորտի այս առողջացումը Սիրիային ձերբազատում է ծանր մտահոգությունից»։ Այդ հաղորդագրության մեջ ընդգծված հաջորդ նկատառումը հետևյալն էր. համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներով «Հաթայի քաղաքացիներին» իրավունք էր վերապահվում վեց ամսվա ընթացքում «ընտրություն կատարել և ընդունել սիրիական կամ լիբանանյան քաղաքացիություն», բնակություն հաստատել Սիրիայում կամ Լիբանանում և 18 ամսվա ընթացքում տնօրինել իրենց շարժական կամ անշարժ ունեցվածքի սեփականության հետ կապված հարցերը։

«Կերոհիշյալ իրավունքները» որևէ օրինական և իրավական նշանակություն կամ արժեք չէին ներկայացնում իհարկե։ Արդարև, «Հաթայի քաղաքացիները» “de jure” շարունակում էին պահել իրենց սիրիական քաղաքացիությունը և ո՛չ մի իրավական ակտով նրանց ո՛չ ոք չէր զրկել այդ քաղաքացիությունից։ Բացի այդ, սանջաքցիների գույքի և ունեցվածքի սեփականության երաշխավորման մասին տրված հավաստիացումները կեղծ էին, ոչ-իրական, որովհետև Թուրքիան այդպիսի «պարտավորություններ» չատ էր վերցրել քրիստոնյաների ու հայերի նկատմամբ և ինչպես նշվել է, «Հաթայի կառավարությունը» արդեն մեկ տարուց ի վեր Մանջաքում կիրառում էր երիտթուրքերի ճիվաղային հյուսումը հանդիսացող «լքյալ գույքերի օրենքը»։ Մանջաքից հեռացող տասնյակ հազարավոր հայերից կամ արաբներից ո՛չ մեկին իրավունք չտրվեց փաստորեն ո՛չ իր հետ տանել իր արժեքավոր գույքն ու հարստությունը, ո՛չ էլ ծախել իր անշարժ գույքը կամ

փոխհատուցում ստանալ դրանց համար:

Ինչ վերաբերում է Սիրիայի ու Թուրքիայի միջև սահմանի հարգմանը, լավ հարաբերություններին և «քաղաքական մթնոլորտի առողջացման» հավաստիացումներին՝ դրանք նույնպես իրավական արժեքից զուրկ էին: Արդարև, այդ համաձայնագրերի տակ Սիրիան չէր ստորագրել, ընդհակառակը, նա բողոքել էր նրանց դեմ: Բացի այդ, Թուրքիան 1926 թ. ի վեր Ֆրանսիայի հետ Սիրիայի վերաբերյալ շուրջ տասը այդպիսի «բարեկամական պայմանագիր» էր կնքել, որոնցից ոչ մեկն էլ նա չէր հարգել: Սիրիացիները իրավունք ունեին չհավատալու այս վերջին «հավաստիացումներին» նույնպես: 1939 թ. հունիսի 23-ի պայմանագրով ձեռք բերված միակ «նվաճումն» այն էր, որ հայերի պահանջով և հասարակական կարծիքի ու Ֆրանսիացի քաղաքական գործիչների ճնշման տակ (սենատոր Գ.Գոթբոռ, Պոլ դյու Վեու և ուրիշներ) ֆրանսիական կողմին հաջողվեց թուրքերի ձեռքից պոկել և Սիրիայի հետ վերամիավորել Քեսապի շրջանը¹⁰⁵: Ոչ մի կերպ հնարավոր չեղավ փրկել Մուսա-լեռան շրջանը, որի համար շրջանի ժողովուրդը պահանջ էր ներկայացրել Փարիզ, Ժնև և հատուկ պատվիրակություն ուղարկել Կոլեի և բարձր-կոմիսար Գ. Պյուռոյի մոտ¹⁰⁶:

Վերոհիշյալ հաղորդագրության հրապարակումով Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունը փորձում էր ինչ-որ չափով քողարկել Սանջաքի զոհաբերումով ֆրանսիական դիվանագիտության ձեռք բերած օգուտը: Դա արտահայտված էր հունիսի 23-ի ֆրանս-թուրքական «փոխօգնության դեկլարացիայի» և Ժոզֆ Բոննեի ստորագրությամբ հրապարակված այն հայտարարության մեջ, որ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունը նույն օրը հղեց Ազգերի Լիգայի ընդհանուր քարտուղարին՝ Լիգայի անդամների շրջանում տարածելու համար: Հայտարարության մեջ ասված էր. «Հանրապետության (ֆրանսիական) կառավարությունը հայտարարում է, որ Ֆրանսիան ամենևին մտադիր չէր հօգուտ մի երրորդի հրաժարվելու Սիրիայում և Լիբանանում ունեցած իր միսիայից»¹⁰⁷: Մեկնաբանելով այս հայտարարությունը և ֆրանս-թուրքական «փոխօգնության դեկլարացիան» ու հունիսի 24-ի հաղորդագրությունը, Ադման Այթան գրում է. «Ֆրանսիան, որպես մանդատային պետություն, Թուրքիայի հետ փոխօգնության դաշինք կնքելով և ֆրանսիական տերիտորիայից որևէ մասնիկ չկորցնելով համաձայնվել է

տերիտորիալ մի կարգավորման, որն իրեն բերում է որոշակի ու առանձնահատուկ օգուտներ համաշխարհային քաղաքականության ասպարեզում»¹⁰⁸: Հաստատելով Ա.Այթայի տեսակետը, Ա.Թոյնքին ընդգծում է միաժամանակ, որ Սանջաքի լքումով «Սիրիական երիտասարդ պետությունը մեծ Տերությունների դիվանագիտական շահերի պահանջների բերումով ներքաշվեց ուժերի հավասարակշռման եվրոպական խառնաշփոթ ցանցի մեջ: ...Սանջաքի կորուստով Մանդատի ակտի 4-րդ հոդվածը խախտվեց ու դրա հետևանքով իրավական հիմքից զրկվեց Թոգլենդի և Կամերունի ենթամանդատային տերիտորիաների նկատմամբ Գերմանիայի պահանջների մերժումը»¹⁰⁹:

Այդ հանգամանքը արժանացավ նաև Լիգայի Մանդատների մշտական հանձնաժողովի ուշադրությանը, որը Սանջաքի կցումը կենսագործող ֆրանս-թուրքական պայմանագրի ստորագրման հենց նույն օրը՝ 1939 թ. հունիսի 23-ին, քննարկեց Սանջաքը Թուրքիային զիջելու հարցը: Ուշագրավ էր հանձնաժողովի անդամ Ռապպարդի ելույթը, որտեղ ասված էր. «Մանդատային տերության կողմից սանջաքի զիջումը միթե՞ աղաղակող հակասության մեջ չի գտնվում Մանդատի ակտի 4-րդ հոդվածի հետ: Խնամակալը, ելնելով իր սեփական շահերից, լքել է մի երրորդի՝ խնամարկյալի սեփականության մի մասը, որի պաշտպանությունը վստահվել էր իրեն»: Ֆրանսիայի՝ Լիգայում հավատարմագրված ներկայացուցիչ Ռոբեր դը Քեն կրկնելով թուրքական անհիմն փաստարկները, հայտարարեց, թե իբր «սիրիական տերիտորիայի սահմանները երբեք ճշգրիտ չեն եղել», կամ թե «զիջումը կատարվել է Սիրիայի անվտանգության շահերից ելնելով»: Մյուս բոլոր ելույթ ունեցողները դատապարտեցին ֆրանս-թուրքական գործարքը՝ որպես Մանդատի ակտի իրավախախտում, որից հետո Ռ.դը Քեն հարկադրված խոստովանեց և ընդունեց, որ «Սանջաքի զիջումը կատարվել է քաղաքական հանգամանքների ճնշման տակ» (ընդգծումը մերն է - Ա.Բ.): Այսուհանդերձ, Ֆրանսիայի ներկայացուցիչը պնդեց, որ հարցի հետագա քննարկումը կասեցվի, «Քանի որ Սանջաքի իրավական գոյավիճակը արդեն դուրս էր եկել հանձնաժողովի վերահսկողության սահմաններից»¹¹⁰: Հանձնաժողովը ենթարկվեց Ֆրանսիայի ներկայացուցչի պահանջին և Սանջաքի կոնֆլիկտը միջազգային իրավական տեսակետից մնաց չլուծված և առկախ:

Սանջաքի կորստի կապակցությամբ Մաջիդ Խադդուրին

գրում է. «Ալեքսանդրետի վեճի կարգավորման վերջին փուլը իրագործվեց ոչ միայն իրավականի փոխարեն քաղաքական հիմքերի վրա, այլ նաև այն կատարվեց Ազգերի Լիգայի խորհրդից դուրս ու նրա գլխի վրայով (ընդգծումը մերն է - Ա.Բ.), Ֆրանսիայի ու Թուրքիայի միջև ուղղակի համաձայնությամբ»¹¹: Այս կարևոր հանգամանքը վրիպել կամ անտեսվել է Սանջաքի հարցը ուսումնասիրող մի շարք հեղինակների կողմից, որոնք հակառակ պատմական փաստերին, պնդում են, թե իբր Սանջաքի զիջումը Թուրքիային կատարվեց Լիգայի համաձայնությամբ¹²: Մենք մտադիր չենք որևէ չափով մեղմացնելու Լիգայի խորհրդի մեղքն ու գլխավոր պատասխանատվությունը Ալեքսանդրետի Սանջաքի կոնֆլիկտի կոմպրոմիսային կարգավորումը հանդիսացող նոր Ստատուսի և հարակից փաստաթղթերի ընդունման և հաստատման գործում: Ճիշտ է նաև, որ այդ կոմպրոմիսային կարգավորման հետևանքով ստեղծված անորոշ և խառնաշփոթ գոյավիճակից օգտվելով, անգլո-ֆրանս-թուրքական իմպերիալիստները կարողացան հաջողացնել իրենց գործարքը: Այդ բոլորը ընդունելի են: Սակայն, մյուս կողմից Սանջաքը Միրիայից անջատելու ակտի՝ միջազգային իրավական որևէ հիմքից զուրկ լինելը մի անգամ ընդմիշտ հաստատելու համար անհրաժեշտ ենք գտնում շեշտել, որ Սանջաքի լքումը Թուրքիային կատարվեց առանց Ազգերի Լիգայի խորհրդի համաձայնության, Լիգայից դուրս ու նրա գլխի վրայով, այնպես ինչպես մեկ տարի առաջ, նույնպես Լիգայի գլխի վրայով, թուրքական գորքեր էին մտել Սանջաք և ապա «թղթի վրա ընտրություններից» հետո հռչակվել էր «Հաթայի պետություն»:

Սանջաքը Թուրքիային միացնելու ակտի ապօրինի և իրավական որևէ հիմքից զուրկ լինելը ընդգծում են մի շարք հեղինակներ: Ջ.Սփերդոտին ապացուցելով, որ 1939 թ. հունիսի 23-ի ֆրանս-թուրքական համաձայնագիրը միջազգային իրավունքի տեսակետից բոլորովին զուրկ է որևէ արժեքից, եզրակացնում է. «Թուրքիան որևէ իրավունք ձեռք չբերեց խնդրո առարկա տերիտորիայի նկատմամբ՝ տրված լինելով, որ իրավական հիմքից զուրկ համաձայնագրի հետևանքով ստեղծված փաստական ապօրինի դրությունը ոչնչով չի փոփոխել գոյություն ունեցող իրավական գոյավիճակը»¹³: Արդարև, միջազգային իրավունքի հանրահայտ և բոլորի կողմից ընդունված նորմերի համաձայն, որևէ պետության կողմից ուրիշ պետության տերիտորիայի փաստական գրավումը, որը չի արդարացված տվյալ տերիտորիայի զիջման

մասին համապատասխան օրինական ակտով, երբեք գրավող այդ պետությանը գերիշխանության որևէ իրավունք չի ստալիս տվյալ տերիտորիայի վրա, որը իրավականորեն մնում է միշտ նախկին պետության գերիշխանությանը՝ նախկա: Խորհրդային հեղինակներ Յու.Վ.Մարունովը և Յու.Վ. Պոտյոմկինը ընդգծելով հանդերձ, թե Սիրիան չի ճանաչել Սանջաբի անեքսիան, ընկնում են թյուրիմացության մեջ, երբ գրում են, թե «Ալեքսանդրետի Սանջաբի պետական պատկանելիության հարցը (ընդգծումը մերն է - Ա.Բ.) հանդիսանում է Թուրքիայի և Սիրիայի միջև վատ հարաբերությունների հիմնական պատճառներից մեկը»¹¹⁴: Սանջաբի «պետական պատկանելիության» հարց գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ, որովհետև գոյություն չունի միջազգային վավերական ու իրավական որևէ ակտ, որը Սիրիային գրկած լինի Սանջաբի վրա ունեցած իր օրինական գերիշխանությունից:

1939 թ. համաձայնագրով Թուրքիան ոչ մի իրավունք չի ստանում Սանջաբի վրա, որովհետև իրավականորեն անվավեր մի համաձայնագիր չի կարող ստեղծել կողմերի ցանկացած արդյունքները: Բացի այդ, 1939 թ. ակտերով կատարված բարոյական և միջազգային իրավական նորմերի կոպիտ խախտումների համար Ֆրանսիան և Թուրքիան պատասխանատու են տվյալ կոնֆլիկտի հետ ուղղակիորեն առնչվող կողմերի՝ Սիրիայի և Ազգերի Լիգային փոխարինող միջազգային կազմակերպության՝ ՄԱԿ-ի առջև¹¹⁵:

Սիրիայի ժողովուրդն ու ազգային կառավարությունը, ամբողջ արաբական աշխարհի հասարակական կարծիքը խոր ընկվզումով և զայրությով ընդունեցին սիրիական Սանջաբի՝ Թուրքիային «նվիրումը» պաշտոնականացնող 1939 թ. հունիսի 23-ի ակտը: Սիրիական պառլամենտի հունիսի 31-ի նիստն ամբողջովին նվիրված էր Սանջաբի խլման հարցին: Այդ փոթորկալի ժողովում ելույթ ունեցող պատգամավորները խստորեն քննադատում էին ֆրանսիական ու անգլիական իմպերիալիստներին, որոնք «արաբական Սանջաբը ծախել էին իրենց մաշկը փրկելու համար»: Նրանք Թուրքիային մեղադրում էին պանթուրանական նվաճողական ծրագրերի և «հարևան եղբայրական երկրի դեմ նենգ դավաճանության մեջ»¹¹⁶: Շատ սուր քննադատության ենթարկվեց նաև ազգային կառավարությունը (որին Ջ.Մարդամ-Բեկի հրաժարումից հետո ղեկավարում է Նասուհի ալ-Բուխարին),

որը չէր կարողացել պահպանել Սիրիական հանրապետության հողային ամբողջականությունը: Կառավարությունը իր հրաժարականը ներկայացրեց: Կառավարական և քաղաքական այս ճգնաժամի պայմաններում պառլամենտը ընդունեց բողոքի բանաձև, որը կառավարության բողոքի հուշագրի հետ ուղարկվեց Փարիզ և ԺՆԿ¹¹⁷: Այդ փաստաթղթերում հայտարարվում էր, որ «Ալեքսանդրետի մուհաֆազայի փոխանցումը Թուրքիայի գերիշխանությանը՝ ապօրինի է և իրավական հիմքից զուրկ, իսկ Սիրիական հանրապետությունը պահպանում է գերիշխանության իր իրավունքը» այդ տերիտորիայի նկատմամբ: Հուշագրում առանձնապես ընդգծվում էր Սանջաքի կենսականորեն խոշոր նշանակությունը Սիրիայի համար և դրա զիջումը Թուրքիային գնահատում որպես միջազգային համաձայնագրերի կոպիտ խախտում և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ոտնահարում: Հիշատակվում էին նաև Սիրիայի սահմանները հաստատող միջազգային մի շարք պայմանագրերը, որոնք բոլորն էլ ենթարկվել էին Ազգերի Լիգայի վավերացմանը և որոնց խախտման ամբողջ պատասխանատվությունը ընկնում էր Թուրքիայի և Ֆրանսիայի կառավարությունների վրա: Հուշագրի վերջում նորից ընդգծվում էր, որ Սիրիան չի ճանաչում և երբեք չի կարող ճանաչել «առանց իր համաձայնության, առանց իր մասնակցության կնքված անվավեր մի համաձայնագիր, որը իրենից խլում է Ալեքսանդրետի մուհաֆազան»: Մի քանի օր անց, Սիրիայի հանրապետության պրեզիդենտ Հաշեմ ալ-Աթասին հրաժարվեց իր պաշտոնից՝ որպես բողոք ընդդեմ «Սանջաքի խլումով Սիրիայի դեմ կատարված ոճրի»: Այս կապակցությամբ պրեզիդենտ Աթասին բողոքի նամակներ հղեց Ֆրանսիայի հանրապետության պրեզիդենտին և կառավարության ղեկավարին, որտեղ նորից ընդգծվում էր, որ Ֆրանսիան «ղավաճանեց մանդատային պետության իր պարտավորությունների և իր ազատագրական սկզբունքներին»¹¹⁸: Որոշ ժամանակ անց հրաժարական տվեց նաև սիրիական կառավարությունը և իշխանությունն անցավ ուղղակի մանդատային տերության ներկայացուցիչների ձեռքը¹¹⁹:

Սիրիայի ժողովուրդը հունիսի 23-ի պայմանագրի մասին իր վերաբերմունքը արտահայտեց բողոքի զանգվածային ցույցերով, ընդհանուր գործադուլով և մամուլի սաստիկ կամպանիայով՝ Սիրիայի իրավունքները ոտնահարելու համար»¹²⁰:

Ինչպես գրում է Ա.Հ.Հաուրանին, «իրենց գլխի վրայով

կատարված այս գործը խորապես հուզում և ընդվզեցնում էր սիրիացիներին»¹²¹: Ն.Ջիադեն Թուրքիայի կողմից Սանջաքի զավթումը կապելով Սիրիայի 1939 թ. քաղաքական և կառավարական ճգնաժամի հետ, գտնում է, որ ամբողջ երկրի քաղաքական հավասարակշռությունը խախտող բողոքի ժողովրդական շարժումների հետևանքով «Սիրիական հանրապետության պրեզիդենտը հրաժարվեց և պառլամենտական ինստիտուտները վերացվեցին երկրում»¹²²: Հալեպի «Ան-Նագիր» թերթը գրում էր այդ կապակցությամբ. «Թող Փարիզում իմանան, որ Սանջաքը թուրքերին զիջելու հետևանքով բոլոր արաբների սրտում առաջացած դառնության խորությունը կարելի է ըմբռնել միայն այն դեպքում, երբ այն համեմատվի 1870 թ. Էլզաս-Լոթարինգիայի կորուստով Ֆրանսիացիների զգացած դառնության հետ»¹²³: Սանջաքի կորստյան առթիվ սիրիական հայտնի քաղաքական գործիչ՝ դոկտոր Ա.Շահբանդարը հրապարակեց մի մանիֆեստ: Այնտեղ ապացուցվում էր, թե Սիրիան իրեն ոչնչով կապված չի զգում մի համաձայնագրի հետ, որի կնքման գործում ոչ մի դեր չի կատարել ինքը: Դր.Շահբանդարը այնուհետև ժողովրդին կոչ է անում «ամեն տարի հունիսի 23-ը նշել որպես ազգային սգի օր, մինչև Սանջաքի վերամիավորումը»¹²⁴:

Հակառակ այս բոլոր օրինական բողոքներին և հիմնավորված պահանջներին, 1939 թ. հուլիսի 13-ին Փարիզում՝ Քեդ'Օբսեյում փոխանակվեցին 1939 թ. հունիսի 23-ի Անկարայի համաձայնագրերի՝ երկու կառավարությունների կողմից ստորագրված տեքստերը: Մինչ այդ, հունիսի 29-ին «Հաթայի պառլամենտը» վերջին անգամ նիստ գումարելով «հռչակել էր Հաթայի միացումը Թուրքիային»: Թուրքիայի 63-րդ վիլայեթը դարձած Հաթայի կենտրոն Անտիոքում իր պաշտոնն էր ստանձնել արդեն նոր վալին (նահանգապետը):

1939 թ. հուլիսի 23-ին Անտիոքում ֆրանսիական գորանոցի վրայից իջեցվեց ֆրանսիական դրոշը, և «Արևելքի գորամասերի» ֆրանսիական վերջին զինվորները իրենց հրամանատար գեներալ Մոլեի հետ դուրս եկան Սանջաքից: Այսպիսով Ալեքսանդրետի Սանջաքի երեք տարի տևող ողբերգության պաշտոնական ու հանդիսավոր մասի վրա իջեցվեց վարագույրը:

Այդ ողբերգությունը շարունակվեց Սանջաքի ազգաբնակչության համար ավելի դաժան կերպով: Հունիսի սկզբից արտագաղթը ընդունել էր խուճապային բնույթ: Անկարայի համաձայնա-

գրերի դեմ ժողովուրդը իր բողոքն էր արտահայտում, զանգվածային կերպով հեռանալով իր դարավոր բնօրրանից: Արտագաղթը սկսվել էր դեռևս 1938 թ. ամռանը, թուրքական զորքերի մուտքից անմիջապես հետո: Գաղթում էին ոչ միայն հայերը, այլև հազարավոր արաբներ, նույնիսկ թուրքեր: Այս մասին Պոլ դյու Վեուն գրում է. «Ամուքցի 6000 արաբ ֆելլահներ դեռևս (1938 թ.) օգոստոսի 8-ին անցել էին Հարիմի և Իդլիբի շրջանները: Անտիոքի լճի արևելյան ափի արաբական նստակյաց բնակչության կեսը մեկնել է. բոլորը վերջ ի վերջո կգաղթեն»¹²⁵: 1938 թ. աշնանը արտագաղթը, որպես ժողովրդի բնական հակազդեցությունը Սանջաքի բացահայտ թուրքացման դեմ, տազնապալի չափեր էր ընդունել. «Արտագաղթը մեծ չափով կշարունակվի. կգաղթեն արաբ թե հայ, - գրում էր «Ժողովուրդի ձայն»-ը: Ալեքսանդրետի, Կըրըկ-խանի և Ռ-իհանիեի հայերու 70 տոկոսը արդեն գաղթած է. Սվեդիո հայ գյուղացիներն ալ կպատրաստվին լքել իրենց տունն ու տեղը...: Ահա հետևանքը այն ոճրագործ քաղաքականության, որուն զոհը դարձավ Սանջաքը»¹²⁶: Արդարև, 1939 թ. գարնանը արտագաղթը դարձել էր զանգվածային: Սկսել էին գաղթել Մուսա-լեռան հայերը: Ալեքսանդրետը, 1939 թ. ապրիլին, գրեթե ամբողջությամբ ամայացել էր: «8000 արաբներ, թուրքեր, չերքեզներ գաղթել են, - գրում է Դյու Վեուն, - քաղաքի 8200 հայերից մնացել է 500 հոգի: Հաստատ կարելի է ասել, որ 6000-ից ավելի ժողովուրդ, քրիստոնյա թե մուսուլման, կհեռանա Սանջաքից»¹²⁷: Մինչև 1939 թ. սեպտեմբերը, Սանջաքի շուրջ 40000 հայերը ամբողջությամբ և ավելի քան 20000 արաբներ, թուրքեր, չերքեզներ հեռացան Սանջաքից և անցան Սիրիա ու Լիբանան¹²⁸: Մուսա-լեռան և մյուս գավառների հայ գյուղացիներին մանդատային իշխանությունները տեղավորեցին Լիբանանում՝ Այն-Ջար և Ռաս-ուլ-Այն վայրերում: Նրանց մի մասը ապաստանել էր Քեսապի շրջանում, որը ինչպես նշվեց, մնաց Սիրիայի սահմանների մեջ¹²⁹:

Սանջաքի նախաբնիկները՝ հայերն ու արաբները մի անգամ ևս զոհ դարձան միջազգային դիվանագիտության նենգ խաղի: Նրանք լքեցին իրենց հողն ու բույնը, որպեսզի շնչեն ազատ: Այս բոլորից հետո «Ջումհուրիեթ» թերթի թղթակիցը. կոկորդիլոսի արցունքներ թափելով, Սանջաքից գրում էր. «Մուսա-Դաղը մեկ օրում դատարկվել է. կրակի վրա թողնված կաթսաները, կես մնացած ճաշի ափսեներ, ամայացած տների զարդն են կազմում: ...Մուսա-Դաղը մեկ ակնթարթում տեղից է շարժվել ինչ-որ վախից

մղված... Ո՞վ է այս ահարկու վախը տարածողը»¹⁰¹: Այդ հարցի պատասխանը տալիս է հենց ինքը «Ջումհուրիեթ» թերթը, մի քանի օր հետո հրատարակելով հակահայկական ու հակասիրիական գրգռիչ ու նենգ «չարամիտ առասպել մը»: Ըստ «Ջումհուրիեթ»-ի, իբր թե Լիբանանի Չահլե և Բիքֆայա քաղաքներում ժողով գումարելով, հայերը որոշել են «հայկական պետություն ստեղծել սուրիական հողերու մեկ մասի վրա»¹⁰²:

Մեծի Տանն Կիլիկիո (Անթիլիասի) ծերունագարդ Սահակ Բ. Կաթողիկոսը անհրաժեշտ է համարում տեղական և օտար մամուլին հանձնել պաշտոնական հերքում այդ նենգ գրգռության կապակցությամբ: Հերքման մեջ ասված էր. «Պաշտոնապես կհայտարարենք, թե մնան ժողով մը երբեք և որևէ տեղ չենք ունեցած, ոչ ալ միտք ունեցած ենք երբևիցե Սուրիա-Լիբանանի և արաբական երկրներու մեջ որևէ քաղաքական նպատակ հետապնդելու: ...Ինչ անուն տալ թշնամական այս նենգության՝ այսպիսի օրերուն, երբ հայ ժողովուրդը խորապես ցավի մատնված է Սանջաքի ամբողջ հայության կսկծալի արտագաղթովը»¹⁰²:

Սանջաքի ազգաբնակչության շուրջ 25 տոկոսի հարկադրված արտագաղթը իր բնօրրանից և դրա հետևանքով պատճառված նյութական ու բարոյական անսահման վնասները զալիս են մեկ անգամ ևս ապացուցելու, թե որքան ահավոր էր Սանջաքի զոհաբերումով իրականացված անգլո-ֆրանս-թուրքական իմպերիալիստական գործարքը, որը մարդկային ու միջազգային իրավունքի խայտառակ ոտնահարում էր:

Ալեքսանդրետի Սանջաքի հարցի շուրջ ծավալված բարդ ու երկարատև դիվանագիտական պայքարի ուսումնասիրությունը մեզ հանգեցրել է հետևյալ եզրակացության.

Թուրքիայի կառավարության կողմից արիեստականորեն ստեղծված «Ալեքսանդրետի հարցի» շուրջ երեք տարի շարունակ սուր և լարված դիվանագիտական պայքար մղվեց Անկարայի ու Փարիզի միջև: Այդ հարցով երեք տարի շարունակ զբաղվեցին նաև Ազգերի Լիգան և հատկապես անգլիական, իտալական ու գերմանական դիվանագիտությունները: Սակայն, հարցը իրավական արդարացի լուծում չգտավ, այլ ավարտվեց քաղաքական կոմպրոմիսային «կարգավորումով», որն անխուսափելիորեն հանգեցրեց շրջանի զավթմանը Թուրքիայի կողմից:

Ալեքսանդրետի հարցի նման վախճան գտնելուն մեծապես պատասխանատու էր Ազգերի Լիգայի խորհուրդը, որը պարտավոր էր ըստ էության իրավական վեճ հանդիսացող այդ հարցը հանձնել Հաագայի միջազգային դատարանի արբիտրաժին: Իրավական այդ տարակարծության մասին միջազգային դատարանի արբիտրաժի վրա հիմնվելով է, որ Լիգայի խորհուրդը պետք է հարցի բննարկումը հանձներ Լիգայի պլենարի հանձնաժողովին, որը միակ իրավասու մարմինն էր Ալեքսանդրետի հարցի մասին վճիռ կայացնելու:

Հարցի երկարամյա բննարկումը չհասցրեց ճիշտ ու արդարացի լուծման, որովհետև, մի կողմից՝ թուրքական դիվանագիտությունը հետապնդում էր ծավալապաշտական նպատակներ հարևան երկրի նկատմամբ. մյուս կողմից՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիայի ուժեղ ճնշման պայմաններում, ելնելով անգլո-ֆրանսիական դիվանագիտության ընդհանուր շահերից, կոնֆլիկտը իրավական ամուր հիմքերից փոխադրեց քաղաքական հիմքի վրա¹³: Մանդատային տերությունը՝ Ֆրանսիան, հարցի բննարկմանը մասնակից չդարձրեց Սիրիային, որին մոտալուտ անկախություն էր խոստացել: Թուրքիային սիրաշահելու և Մանջաքի գոհաբերման գնով նրան անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորման մեջ ներգրավելու նպատակով հղացված ու կազմակերպված ինպերիալիստական այս գործարքը սկսվեց Ազգերի Լիգայի հովանու տակ: Սակայն, երբ լիովին բացահայտվեց այդ գործարքի ինպերիալիստական բնույթը, անգլո-ֆրանս-թուրքական դիվանագիտությունը այն առաջ տարավ Լիգայի խորհրդի գլխի վրայով՝ Լիգայի ներկայացուցիչների, ինչպես նաև Մանջաքի ու Սիրիայի ազգաբնակչության և կառավարության բողոքներն ու կամքը ըստահարելով:

Ազգերի ազատ ինքնորոշման և միջազգային իրավունքի ու մի շարք միջազգային պայմանագրերի բացահայտ խախտում հանդիսացող ազդեցիվ այդ ակտը Սիրիայի նկատմամբ՝ Մանջաքի բռնի գավթուսը Թուրքիայի կողմից երբեք չի ընդունվել և մինչև օրս էլ չի ճանաչվում սիրիական ժողովրդի ու կառավարության կողմից¹⁴:

Մույն աշխատության մեջ բերված բազմաթիվ փաստերը հաստատում են մեր եզրակացությունը, որ Ալեքսանդրետի Մանջաքը միջազգային իրավունքով մնում է Սիրիական հանրապետության գերիշխանությանը ենթակա շրջան, Սիրիայի

անբաժան մասը, թեև այն ժամանակավորապես գրավված է Թուրքիայի կողմից:

1939 թ. հունիսի 23-ի ակտը իրավական ոչ մի արժեք չի ներկայացնում, որովհետև այդ փաստաթուղթը չի ստորագրվել և չի հաստատվել Սիրիայի կառավարության ու պառլամենտի կողմից: Այդ ակտը պաշտոնապես չի հաստատվել նույնպես Ֆրանսիայի կողմից, որովհետև այն չի վավերացվել նրա պառլամենտի, ոչ էլ պրեզիդենտի կողմից: Մակայն այդպիսի վավերացման դեպքում նույնիսկ այդ ակտը իրավական ուժ չէր ներկայացնի, եթե այն հաստատված չլիներ հետագայում նաև Ազգերի Լիգայի և համաժողովի կողմից, որովհետև մանդատային տերության կնքած միջազգային ակտերը իրավական ուժ կարող էին ստանալ Լիգայի կողմից հաստատվելուց հետո միայն:

Այսպիսով, մեր ամբողջ շարանդրանքից պարզ հետևում է, որ Ալեքսանդրետի Սանջաքի հարցը ժամանակին ոչ-իրավական, անարդար և անօրինական «լուծում» է ստացել և շրջանը միջազգային իրավունքով մնում է Սիրիայի գերիշխանությանը ենթակա տերիտորիա:

ՎԵՐՉԱԲԱՆ

Ալեքսանդրետի Սանջաքը Թուրքիային կցելուց շուրջ վաթսուն տարի անց հարցը տակավին մնում է Մերձավոր Արևելքի երկրների հասարակայնության, քաղաքական շրջանների և պետական գործիչների մտահոգության առարկան: Ո՛չ Սիրիան, ո՛չ էլ արաբական որևէ երկիր չի ճանաչել և չի կարող ճանաչել հարցին տրված միակողմանի և կամայական «լուծումը»: Սիրիական հանրապետության քաղաքական կյանքում այսօր ևս Սանջաքի հարցը մնում է առաջնահերթ խնդիր, որովհետև իրավականորեն այն մնացել է չլուծված և առկախ:

Օրինական և իրավական այսպիսի ամուր հիմքերից ելնելով է, որ Ադնան Ալթան գրում է: «Այսօր Սիրիան չի ճանաչում փաստական այն դրությունը, որն ստեղծվել է 1938 թ. ի վեր Ալեքսանդրետի Սանջաքում, որը նա միշտ համարում է սիրիական տերիտորիայի մի մասը: Սիրիան սպասում է հարմար ժամանակի, որպեսզի հարցը բարձրացնի Ազգերի Լիգայի ժառանգորդ միջազգային կազմակերպության առջև»¹: Ամին Շաքերը այս կապակցությամբ գրում է. «Ալեքսանդրետի հարցը չի լուծվել, այլ փոխադրվել է մի կողմից մյուս կողմը: Եվ այդ հիման վրա Սիրիան այսօր էլ պահանջում է, որ Ալեքսանդրետի Սանջաքը վերադարձվի իրեն, որովհետև այն Սիրիայի անբաժան մասն է, և ոչ Ֆրանսիայի կամ Թուրքիայի»²: Մինչև օրս սիրիական բոլոր պաշտոնական հրատարակությունները Սանջաքը դիտում են որպես Սիրիայի անբաժան մաս և բոլոր պատմա-աշխարհագրական աշխատություններում ընդգրկում են Սիրիայի քարտեզի, Սիրիայի սահմանների մեջ: Դամասկոսում հրապարակվող «Ալ-Մեջելեթ ալ-Ասկարիե» և «Մեջելեթ ալ-Ջունդի» հանդեսները 1963 և 1964 թթ. համարներում հաճախ հոդվածներ են նվիրել «Խլված Սանջաքին», «Չոհաբերված Սանջաքին», եզրակացնելով, որ զոհաբերված Սանջաքը պետք է միավորվի Սիրիական հանրապետության հետ: Այսպես, Մ. Մուսթաֆան գրում է. «Մեր սիրելի Լիուա'ի (Սանջաքի - Ա.Բ.) խլումը կատարվել է հակառակ ազգերի «շարիաթի» (օրենսդրության) և ընդդեմ արդարության իրավունքի: ...Այս

մարզը Սիրիայի անբաժանելի մասն է հանդիսանում և ...արաբական մեծ հայրենիքի սրբազան մասնիկը»¹: Սիրիայում ամեն տարի Ալեքսանդրետի Սանջաքը Թուրքիային կցելու օրը նշվում է որպես ազգային սուգի օր: Մամուլը և հասարակական կարծիքը պահանջում են, որ կառավարությունը անհրաժեշտ դիվանագիտական գործողություններ ձեռնարկի Արաբական երկրների Լիգայում կամ Միացյալ Ազգերի կազմակերպությունում՝ «Սիրիայից պոկված Սանջաքը մայր-հայրենիքի գիրկը վերադարձնելու համար»⁴: Բացի այդ, Սիրիայի տարբեր վայրերում վերաբնակված սանջաքցիները (արաբ թե հայ) համառ կերպով պահանջում են, որ «իրենց մուհաֆազան իր ներկայացուցիչները ունենա սիրիական պառլամենտում այնպես, ինչպես Էլզաս-Լոթարինգիան 1870 թ. հետո Ֆրանսիական պառլամենտում»⁵: «Սանջաքի ազատագրման Սիրիա-Լիբանանյան Կոմիտեն» 1959 թ. դեկտեմբերի 10-11-ը Բեյրութում հրավիրեց իր երկրորդ համագումարը և համապատասխան որոշում ընդունեց Սանջաքը մայր-հայրենիքին վերամիավորելու պահանջի և միջոցների մասին⁶:

Սանջաքի ազգաբնակչությունը նույնպես բոլոր հնարավոր միջոցներով արտահայտում է սիրիական մայրերկրի գիրկը վերադառնալու իր տենչանքը: Ժողովրդի զայրույթը երբեմն ծնունդ է տալիս ծայրահեղ քայլերի⁷: Նույնիսկ թուրքական թերթերը հարկադրված արձագանքում են Սանջաքի և Սիրիայի ժողովրդի բողոքներին ու Սանջաքի վերամիավորման պահանջներին⁸: 1964 թ. սեպտեմբերի 1-ին Բեյրութի «Չարթունք» թերթը, հիմնելով «Ձումհուրիեթ» թերթի տեղեկությունների վրա, հայտնում էր, որ օգոստոս ամսվա վերջին օրերին Սանջաքի բոլոր բնակավայրերում արաբերեն և թուրքերեն լեզուներով՝ Սանջաքը Սիրիայի հետ վերամիավորելու պահանջ ներկայացնող թռուցիկներ են հրապարակվել և տարածվել ազգաբնակչության մեջ⁹:

Սիրիական «Տեղեկատու Գլխավոր Վարչության» տեղեկագրում խոսվում է Սանջաքի կորուստով Սիրիային ու հատկապես Հալեպի նահանգին հասցված մարդկային, նյութական ու բարոյական վնասների մասին, որովհետև «Սիրիան կորցրեց 250.000 շատ ակտիվ ազգաբնակչություն,

...Հալեայ քաղաքը՝ իր բնական նավահանգիստը և նահանգային կենսական տարածությունը», ապա եզրակացվում է, որ Մանջաքը պետք է վերամիավորվի Սիրիային¹⁰: Նույն տեղեկագրի տարբեր տարիների պրակներում գտնվող քարտեզներում Մանջաքը միշտ ընդգրկված է Սիրիայի սահմանների մեջ¹¹: Մ.Բ.Շոեյթան իր «Սիրիայի էկոնոմիկան» աշխատության մեջ Մանջաքի զավթման մասին խոսելիս գրում է. «Ալեքսանդրետի Մանջաքը Սիրիայի մի մասն է, որը շարունակ պահանջվում է (վերամիավորել) Սիրիայի ժողովրդի կողմից¹²: Սիրիացի ուրիշ մի հեղինակ՝ Մաամուն Շալլահը իր «Սիրիայի տնտեսական զարգացումը» աշխատության մեջ բոլոր հարցերի կապակցությամբ ընդգրկում և ուսումնասիրում է նաև Մանջաքի շրջանը որպես Սիրիայի մասը¹³: «Մեջեյլեթ ալ-Ջունդի» հանդեսում Ադիբ Բադը «Խսքենդերունը՝ մեր խլված Մանջաքը» հոդվածում գրում է. «Լիուան (Մանջաքը) ունի տնտեսա-առևտրական մեծ նշանակություն. Ալեքսանդրետը բնական նավահանգիստն է ամբողջ Հյուսիսային Սիրիայի, հատկապես Հալեայի, որն իր արտաքին առևտրի գերակշռող մասը կատարում էր այդ նավահանգստով: ...Մանջաքը նրան մատակարարում էր միրգ, բանջարեղեն, մետաքս, վառելափայտ, փայտածուխ, տախտակ»¹⁴: Ե.Ֆ.Լուոշուվեյդը, ընդգծելով Սիրիայի տնտեսա-աշխարհագրական անխզելի կապը Մանջաքի հետ, գրում է. «Մինչև այժմ Հաթայը քիչ է կապված Թուրքիայի հետ»: ...«Չնայած այն բոլոր միջոցառումներին, որ իշխանությունները ձեռնարկում են երկրամասը (Հաթայը) թուրքացնելու և այն Թուրքիայի մնացած մասի հետ տնտեսական սերտ կապերի մեջ ներգրավելու համար, Հաթայի մարզը առաջվա նման տնտեսապես հարում է Սիրիային: Այժմ Անթաքիան տնտեսապես Սիրիային հարող տեղական առևտրական կենտրոններից մեկն է»¹⁵: Հաքեմ Դարուազան իրավամբ շեշտում է, որ «Թուրքիան ցանկանում էր զավթել արաբական այս երկրամասը ոչ միայն իր խոշոր բնական հարստությունների, այլ հատկապես ռազմագիտական արտակարգ նշանակության պատճառով»¹⁶: Այդ բանը խոստովանում է թուրք դիվանագետ Ալթեմուր Քըլըջը, որը ջանալով ապացուցել Թուրքիայի «անվտանգության» համար

Ալեքսանդրեոսի «կենսական անհրաժեշտությունը», գրում է. «Թշնամական մի նավատորմ կամ նավատորմներ, գործելով Ալեքսանդրեոսի հիասքանչ նավահանգստից, կկարողանային վերահսկել Թուրքիայի ամբողջ հարավային մատույցները: Նույն նկատառումները վերաբերում են նաև Կիպրոս կղզուն»: Այնուհետև, բացահայտելով իր երկրի նվաճողական նպատակները, նա ավելացնում է, որ իր վերահսկողությանը ենթարկելով Հաթայի շրջանը, Թուրքիան ձեռք բերեց հիանալի ռազմածովային խարիսխ, որը բաց է իր դաշնակիցների կողմից թուրքական բանակին ցույց տրվելիք հավանական օգնության համար»¹⁷: Ահմեդ Էմին Յալմանը նույնպես հաստատում է Ալեքսանդրեոսի ռազմագիտական առաջնակարգ նշանակությունը, և դրա հետ կապված Թուրքիայի նվաճողական ծրագրերը, երբ հայտարարում է, որ «կոնֆլիկտի դեպքում Թուրքիայի և իր դաշնակիցների ուժերը կմիանան Իսթենդերունի (Ալեքսանդրեոսի) թուրքական այժմյան ռազմածովային կենտրոնում, որը 45 մղոնի նույն կարճ տարածության վրա է գտնվում Կիպրոսից և Ադանայի ռազմա-օդային խարիսխից»¹⁸:

Վերջին տարիների քաղաքական դեպքերը ապացուցեցին Թուրքիայի հետադիմական շրջանների համար Ալեքսանդրեոսի «կենսական անհրաժեշտությունը»: Կիպրոսի տագնապի հետ կապված 1964 թ. քաղաքական ու ռազմական իրադարձությունները մեկ անգամ ևս բացահայտեցին Ալեքսանդրեոսի ու Կիպրոսի ռազմագիտական կապվածությունը և Անկարայի նվաճողական նոր ծրագրերը: Եթե Կիլիկիայի պարպումը նախադեպ հանդիսացավ Սանջաքի զավթման համար, վերջինս իր հերթին այսօր ծառայում է որպես տխուր նախադեպ՝ Կիպրոսի նկատմամբ Թուրքիայի հավակնություն-ներլի համար: Թուրքիան իր հետագա նվաճողական ծրագրերի համար շատ նպատակադրված կերպով է օգտագործում Ալեքսանդրեոսի շրջանը: Այդ մասին են վկայում սիրիական մամուլի հաղորդումները, որոնց համաձայն Թուրքիան Սանջաքում ռազմագիտական ճանապարհներ և ամրություններ է կառուցել¹⁹: Փաստ է նաև, որ զավթելով Սանջաքը, Անկարան այն դրեց Պենտագոնի և ամերիկյան մոնոպոլիաների տրամադրության տակ, որոնք այնտեղ կառուցել են արդիական բոլոր

սարքավորումներով ու մեքենայացումներով հագեցված խոշոր առևտրական նավահանգիստ և ռազմա-ծովային խարխիսներ. դրանք ամբողջովին դրված են Հյուսիս-Ատլանտյան պակտի տրամադրության տակ²⁰:

Վերոհիշյալ բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ Թուրքիան այժմ ոչ մի մտադրություն չունի Սիրիային վերադարձնելու նրա անբաժան մասը կազմող Սանջաքը, նույնիսկ ի վնաս Սիրիայի և արաբական երկրների հետ իր համագործակցությանն ու բարեկամական հարաբերություններին: Արաբական երկրները իբրև Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների հաստատման նախապայմաններից մեկը դնում են Ալեքսանդրետի Սանջաքը Սիրիային վերադարձնելու հարցը:

Ամերիկացի հեղինակ Վ.Ջ.Լակյորը գտնում է, որ «սիրիական նացիոնալիստների պահանջները թուրքական (!?) Հաթայ նահանգի նկատմամբ ռոմանտիկական են...»²¹: Սակայն, Միջին Արևելքում ժամանակակից միջազգային հարաբերությունները ուսումնասիրող բոլոր հեղինակները հարկադրված ընդունում են, որ Սանջաքի չլուծված պրոբլեմը հանդիսանում է աշխարհի այդ շրջանի առկախ և կնճռոտ հարցերից մեկը և թուրք-արաբական ու թուրք-սիրիական բարեկամական հարաբերությունների հաստատման գլխավոր խոչընդոտը: «Սիրիական պետությունը իր ներկա սահմաններով, - գրում է Ռ.Բուլլարդը, - արհեստական մի բան է: ...Հենց այս փաստն է, որ բացատրում է Սիրիայի լարված հարաբերությունները Թուրքիայի հետ»²²: Համանման տեսակետ են պաշտպանում և Սանջաքը մայր-երկրի հետ վերամիավորելու մասին սիրիացիների հարատև պահանջներն են ընդգծում մի շարք այլ հեղինակներ, ինչպես Մ.Հ.Լոնգրիզը, Կիրկ Ջորջը, Ս.Մ.Վուդհաուզը, Ա.Հ.Հաուրանին, Ն.Ջիադեդը²³:

Հ.Բ.Շարաբին նշում է, որ «իր քաղաքական ազդեցությամբ ու նշանակությամբ Ալեքսանդրետի Սանջաքի կորուստը շատ կողմերով կարելի է համեմատել մեկ տասնամյակ հետո տեղի ունեցած Պաղեստինի կորստի հետ»²⁴: Եվ, իրոք, Ալեքսանդրետի Սանջաքի ողբերգության նման Պաղեստինի ողբերգությունը նույնպես տխուր հետևանքն է

Մերձավոր Արևելքի երկրների կնճռոտ հարցերին իմպերիալիստական պետությունների շահադիտական միջամտության: Պաղեստինի կնճիռը «կարգավորելու» իրենց փորձերի ընթացքում, ինչպես Ալեքսանդրետի հարցի «լուծման» ժամանակ, նույն շրջանները ձգտում են սրել իրադրությունը՝ իրենց իմպերիալիստական շահերին ծառայեցնելու նպատակով:

Պատասխանելով Սանջաքի վերամիավորման մասին սիրիական արդարացի պահանջների հետևանքով թուրքական մամուլի ու քաղաքական շրջանների գայրույթի ելույթներին²⁵ և արտահայտելով արաբական հասարակայնության կարծիքը սիրիական «Ալ-Ուահդա» թերթը գրել է. «Արաբական աշխարհը չի կարող լինել Թուրքիայի բարեկամը, ավելի ևս չի կարող մտնել Թուրքիայի հետ որևէ բանակցության կամ համաձայնության մեջ, քանի դեռ Թուրքիան չի վերադարձրել Ալեքսանդրետի արաբական տերիտորիաները»²⁶:

Արաբական երկրների այդ արդար պահանջը այսօր արդեն գտել է համընդհանուր ճանաչում և պաշտպանություն միջազգային այնպիսի հեղինակավոր կազմակերպության կողմից, ինչպիսին Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության կազմակերպության խորհուրդն է, որը 1964 թ. մարտի 22-ից 27-ը Ալժիր քաղաքում կայացած իր 6-րդ նստաշրջանում զբաղվեց Ալեքսանդրետի Սանջաքի հարցով: Արտահայտելով Ասիայի ու Աֆրիկայի հարյուր միլիոնավոր մարդկանց, ինչպես նաև խորհրդային ամբողջ հասարակայնության կարծիքը, համաժողովը այդ հարցի կապակցությամբ ընդունեց բանաձև, որտեղ ասված է. «Ալեքսանդրետի մոտեֆազան (նահանգը) հանդիսանում է արաբական շրջան և մաս է կազմում արաբական աշխարհի: Անհիշելի ժամանակներից ի վեր..., ինչպես և այժմ, այդ տերիտորիան հանդիսանում է Սիրիայի մասը: ... Ոչ-արաբական մի երկրի կողմից այդ տերիտորիայի գրավման շարունակումը... մշտապես սպառնում է այդ շրջանում անվտանգության և կայունության պահպանմանը: ... Ահա թե ինչու արաբական ժողովուրդը գտնում է, որ արաբական այդ շրջանը իր օրինական տիրոջը վերադարձնելը հանդիսանում է տվյալ շրջանի անվտանգության և բարգավաճման համար կենսականորեն անհրաժեշտ պայմանը:

Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության խորհրդի 6-րդ նստաշրջանը Ալեքսանդրետը համարելով սիրիական (արաբական) տերիտորիայի անբաժան մաս, ընդունում է և վճռականորեն պաշտպանում է Սիրիական պետության այդ մասը հնարավոր բոլոր միջոցներով իր օրինական տիրոջը վերադարձնելու պահանջը»²⁷:

Ալեքսանդրետի Սանջաքի կնճիռը այսօր ևս մնում է ժամանակակից Մերձավոր Արևելքի չլուծված և իր արդարացի լուծմանը սպասող հրատապ հարցերից մեկը: Այն հանդիսանում է Թուրքիայի և Սիրիայի ու արաբական երկրների բարեկամական հարաբերությունները խոչընդոտող արգելքներից մեկը, որը կարող է խախտել անվտանգությունն ու խաղաղությունը այդ շրջանում: Միջազգային համապատասխան կազմակերպությունները պետք է մտածեն Ալեքսանդրետի Սանջաքի հարցին իրավական և արդարացի լուծում տալու մասին՝ ի շարս Մերձավոր ու Միջին Արևելքի առկախ մնացած տերիտորիալ-քաղաքական այլ հարցերի ու խնդիրների:

LA QUESTION DU SANDJAK D'ALEXANDRETTE ET LA DIPLOMATIE INTERNATIONALE

(1936-1939)

RÉSUMÉ

La région d'Alexandrette et d'Antioche, comme toute la Syrie, se trouvait sous la domination ottomane jusqu'en 1918; elle fut partie intégrante de la Syrie jusqu'en 1939 où elle fut annexée à la Turquie. La "Question d'Alexandrette" a occupé les milieux diplomatiques internationaux dès les années 1920; aujourd'hui aussi les milieux politiques et l'opinion publique du Moyen-Orient s'en inquiètent. Il n'existe pas dans l'historiographie soviétique, ni arabe ou occidentale, de monographie spéciale englobant tous les aspects du problème d'Alexandrette. Pourtant, une telle étude est indispensable pour donner une juste interprétation d'une série de faits importants de l'histoire contemporaine de la Syrie, ainsi que des relations arabo-turques et anglo-franco-syriennes.

Dans le présent ouvrage une analyse scientifique détaillée du statut juridique spécial du "Sandjak Autonome d'Alexandrette", ainsi que de la situation politique y régnant est donnée, comme l'un des principaux facteurs générateurs du conflit d'Alexandrette. La longue lutte diplomatique autour du problème d'Alexandrette, menée directement entre les principales puissances intéressées et dans le cadre de la Société des Nations, a été l'objet fondamental de notre étude. Une analyse critique de la valeur juridique de la proclamation de l' "État du Hatay" et de l'annexion d'Alexandrette à la Turquie, ainsi que de l'attitude des puissances intéressées y est donnée aussi. Parallèlement, une revue et une appréciation comme de juste de la lutte du peuple et du gouvernement syriens contre cette transaction impérialiste a trouvé sa place méritée dans notre ouvrage.

Les auteurs qui se sont intéressés au problème d'Alexandrette en ont étudié unilatéralement tel ou tel aspect, ou bien ils ont négligé certaines questions essentielles y attenantes. Ainsi, la lutte et les efforts déployés par les différents groupements politiques, sociaux ou confessionnels du Sandjak, de toute la Syrie, et par le gouvernement syrien pour garder Alexandrette dans le cadre de l'Etat Syrien n'ont pas été réflétés dans les monographies suivantes: A.Aïta, "Le Conflit d'Alexandrette et la Société des Nations"; I.Jabry, "La Question d'Alexandrette dans le Cadre du Mandat Syrien";

N.Santi, "La Questionne del Hatay /Alexandretta/ e la sua Soluzione"; G.Sperduti, "Aspetti Giuridici della Questionne del Sangiaccato di Alessandretta"; Elie Barbaro J., "La Question du Sandjak d'Alexandrette"; A.Toynbee, "The Cession to Turkey of the Sanjak of Alexandretta" ("Survey of International Affairs - 1938"); J.J.Morgan, "La Fin du Mandat Français en Syrie et au Liban" (Le Problème du Sandjak d'Alexandrette). Cette lutte de tout un peuple, qui constitue le principal acte d'accusation contre le compromis politico-diplomatique proféré à la dispute juridique d'Alexandrette, a été réflétée en partie, mais n'a pas trouvé son appréciation "ad hoc" dans les ouvrages solides de Paul du Véou: "Le Désastre d'Alexandrette - 1934-1938", "Les Chrétiens en Péril au Moussa-Dagh", ainsi que dans la profonde étude du prof. M.Khadduri: "The Alexandretta Dispute" ("American Journal of International Law", Vol. 39, N 3, 1945) et les parties concernant le problème d'Alexandrette des "Conférences sur la Syrie" de N.al-Armanazi, des "Questions Nationales et l'Attitude des Partis" de Zéki al-Arsouzi, ainsi que dans les ouvrages respectifs de H.Darouaza, M.A.al-Zarka, N.Ward, S.H.Longrigg et d'autres. Le conflit d'Alexandrette et son règlement sont interprétés ou du point de vue étroitement nationaliste, ou bien en partant des positions de la défense des intérêts de la puissance impérialiste concernée par les auteurs précités. Quelques auteurs seulement, comme l'historien soviétique P.K.Tarassov, les auteurs arabes E.Touma, N.Ziadeh, A.Chaker, H.Darouaza, M.A.al-Zarka, S.Ayyoub et les orientalistes français P. du Véou, M.Homet, A.Alexandre et le Haut-Commissaire G.Puaux révèlent et soulignent dans une certaine mesure que le "règlement" du conflit d'Alexandrette par une transaction impérialiste était une triste conséquence de la conjoncture politique internationale des années 1936-1939. De rares chercheurs, comme A.Aïta, M.Khadduri, G.Sperduti et d'autres affirment et démontrent sans conteste que la cession du Sandjak à la Turquie était une violation flagrante du droit commun et du droit international; donc, juridiquement nul. Quant aux auteurs turcs, ils essayent de déformer les faits et vérités historiques universellement admis en désirant les "conformer" à la conjoncture politique et diplomatique. Ainsi, A.F.Türkmen dans son "Histoire Détaillée du Hatay", le prof. A.S.Esmer dans son "Histoire Diplomatique 1919-1939" et A.Kilic, A.E.Yalman et d'autres dans leurs ouvrages respectifs, en faisant semblant d'ignorer la politique expansionniste de leur gouvernement, ne font que répéter les thèses officielles de la diplomatie turque en s'évertuant à "démontrer" que le Sandjak d'Alexandrette n'était convoité par la Turquie que pour des motifs nationaux et démographiques. Remâchant sans fin l'hypothèse pseudo-scientifique selon laquelle les Turcs du Sandjak, comme

ceux de l'Anatolie, seraient... des "aborigènes", des descendants des... Hittites, et que même les Arabes alaouites seraient des... "Turcs arabophones", ces auteurs désirent prouver l'existence d'une "majorité" turque au Sandjak; et naturellement Ankara désirepait libérer cette "majorité" de "l'opression" des Arabes. Mais, il arrive aussi que, en oubliant ces postulats fabriqués de toutes pièces, ces mêmes auteurs avouent qu' Alexandrette était convoité par la Turquie rien que pour l'importance stratégique de la région (Voir A.Kilic, Turkey and the World, Washington, 1959, p.64).

Les préliminaires politiques et diplomatiques du conflit d'Alexandrette sont l'Accord franco-turc d'Ankara de 1921 (Art. 7 et lettres et protocoles joints), le Traité de Lausanne de 1923 (Art. 3) et la Convention turco-syrienne (française) "d'amitié et de bon voisinage" de 1926. Quant aux préliminaires purement politiques, ce sont d'une part la politique expansionniste de la Turquie, d'autre part la politique impérialiste menée au Proche-Orient par la France depuis la fin de la première guerre mondiale. Cette politique partait du principe de "Divide et imperes", allant à l'encontre des intérêts nationaux des Arabes et de leur unification; elle tendait en même temps à courtiser les Turcs de la région, et partant, le gouvernement d'Ankara. C'est ainsi que bien avant la création de l'Etat syrien, les autorités militaires françaises créèrent, le 27 novembre 1918, le "Sandjak Autonome d'Alexandrette (Voir "L'Asie Française", N 13, 1930, supplément, p.17). Depuis, le régime spécial et le statut juridique du Sandjak Autonome furent approuvés et précisés comme par les actes diplomatiques ci-haut mentionés, de même par les Arrêtés NN 330, 987, 1459, 2980, 3017, et 3112 des années 1920-1930 du Haut-Commissaire de la République Française au Levant. Le dernier arrêté conférait au Sandjak un Règlement Organique qui, par de faibles remaniements, réaffirmait "le régime spécial administratif et financier du Sandjak d'Alexandrette dans l'Etat de Syrie".

Ce régime spécial était caractérisé par l'administration directe appliquée sans intermédiaire (différemment du régime des Etats de Damas ou d'Alep/, directement par le Délégué-Adjoint du Haut Commissaire. Avec ses conseillers et inspecteurs civils et militaires, il exerçait effectivement toutes les fonctions du pouvoir d'Etat dans le Sandjak et y dirigeait la vie dans tous les domaines: économique, social, politique. Les organes du pouvoir local du Sandjak ne relevaient pas directement des ministères respectifs de Damas, mais par l'intermédiaire du "Conseil Administratif" du Sandjak. Cet organisme, fonctionnant nominalement sous la présidence du Moutessarif du Sandjak, se trouvait en fait sous le contrôle direct du Délégué-Adjoint qui était considéré le "conseiller" du Moutessarif. Sans l'approbation ou la paraphe du conseiller français tout acte ou décision du

magistrat local était considéré non légal. Le Conseil Administratif, dont les membres étaient en partie nommés, en partie élus parmi les représentants des communautés locales, n'avait pas de prérogatives de pouvoir exécutif ou législatif, mais rien que "le droit d'examiner et de voter les projets du budget (spécial), des emprunts ou des concessions du Sandjak" (Régl. Organq. Art. 6-7). Les magistrats locaux étaient nommés par le Moutessarif sur proposition de ce Conseil. Seulement les services des P. et T. et les organes de justice relevaient directement des services centraux de Damas ou d'Alep. Par conséquent, l'autonomie administrative-financière du Sandjak ne conférait nullement à celui-ci le statut spécial d'une entité politique distincte en dehors de l'Etat Syrien, comme le prétendaient les séparatistes de la région et la diplomatie turque. Au contraire, le Sandjak d'Alexandrette se trouvait de jure et de facto dans le cadre de la République Syrienne et pour les affaires extérieures et intérieures, et pour la justice et les télécommunications, et pour le commerce extérieur et le système financier-monnaire. Le Moutessarif du Sandjak était nommé par le Chef de l'Etat Syrien et, comme les autres régions syriennes, le Sandjak aussi envoyait au Parlement de Damas ses députés représentant les diverses communautés nationales-confessionnelles du Sandjak.

L'autre caractéristique du régime spécial d'Alexandrette consistait en ce que dans ce Sandjak à majorité arabe la plus grande part (65%) des fonctions d'Etat était détenue par des Turcs qui ne représentaient que 23% de la population locale (V.M.Homet, Syrie - Terre Irrédente, p.243). Etaient des Turcs: le Moutessarif, son secrétaire général, les 7 membres sur 12 du Conseil Administratif, tous les 3 caïmacams, l'écrasante majorité des moudirs, des juges et procureurs, du personnel de la police et de la gendarmerie (Vn Rapport à la S.D.N. - 1936, p.102; Col.P.Jacquot, Antioche, 1^e Partie, p.33). Le turc était langue officielle au Sandjak au même titre que l'arabe et le français. Mais, pratiquement le turc était la langue la plus usitée dans les services publics du Sandjak, étant donné que la majorité des magistrats et fonctionnaires étaient des Turcs, souvent d'anciens magistrats ottomans!

Cette politique discriminatoire pro-turque des autorités mandataires au Sandjak s'exprimait aussi dans le domaine scolaire et culturel (Voir-Rapport à S.D.N. - 1936, p.135-136), comme dans le fait de maintenir la division de la population en communautés nationales-confessionnelles, sous couvert de "protéger" les intérêts des minorités. En y perpétuant (comme dans toute la Syrie) le système anachronique et féodal, hérité de l'Empire Ottoman, du statut juridique des "millet"s, la France faisait artificiellement du "millet" turc la communauté relativement la plus nombreuse

du Sandjak. Et ceci grâce aux manipulations suivantes: en dehors des vrais Turcs-Osmanlis, étaient considérés des Turcs (dans les statistiques officielles): tous les Arabes, Kurdes ou Tcherkesses turcophones ou turquisés et tous les Turcomans (environ 20.000); par contre, les Arabes, les Arméniens étaient fractionnés en de multiples "millet"s: sunnite, alaouite, orthodoxe, catholique, grégorien, protestant et autres.

La France prétendait fonder sa politique pro-turque au Sandjak, allant à l'encontre des intérêts des Arabes et des Arméniens, par les clauses de l'Accord d'Ankara qui promettait aux "habitants de race turque" de la région des privilèges linguistiques et culturels. Mais, il est bien notoire dans les milieux diplomatiques que cet acte ne saurait servir de fondement juridique à une telle politique pour la simple raison que l'Accord d'Ankara n'a jamais été ratifié ni par la Chambre française, ni par le Président de la République Française, ni par la Turquie non plus. Le "régime spécial" du Sandjak n'a jamais été soumis à la ratification de la S.D.N; par surcroît, ce régime n'a jamais été demandé ni accepté, ni par les populations du Sandjak, ni par le peuple ou les gouvernements syriens. Conséquemment, cet acte et ce régime étaient juridiquement nuls.

Cette politique, réactionnaire de par son essence, poursuivait les buts impérialistes suivants: d'une part, arriver à la "perennité" de la domination française au Levant en contrariant les efforts d'unification et d'indépendance du peuple syrien; d'autre part, gagner la sympathie des dirigeants de la Turquie républicaine en vue d'obtenir leur collaboration avec l'impérialisme français pour la solution des problèmes cruciaux de l'Orient. Les principaux facteurs-mobiles de la politique de capitulation de la diplomatie française devant la Turquie républicaine commencée des les années 1920 /par l'évacuation de la Cilicie/ étaient: l'intention de Sauvegarder des intérêts économiques et financiers français en Turquie les profondes contradictions franco-britanniques au sujet des problèmes du Moyen-Orient, ainsi que le désir des dirigeants du Quai d'Orsay de contrarier les rapprochements turco-soviétiques et en arriver à attirer la Turquie dans le bloc anti-soviétique.

C'est par tout cela qu'on doit expliquer la politique menée par la puissance mandataire au Sandjak /et en général au Levant/, politique qui aboutit vers 1935, à ce qu'il était déjà impossible pour la France de freiner ou de contrôler le mouvement des séparatistes turcs et de prendre les devants des prétentions ouvertes de la Turquie d'annexer le Sandjak d'Alexandrette.

C'est dans ces conditions que la Turquie, juste après la signature du Traité franco-syrien en septembre 1936, mit devant la diplomatie inter-

nationale la "Question d'Alexandrette et d'Antioche".

